

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Փ Ի Ր

№ 12 1890 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1890 № 12

ՆՐԿՐՈՐԳ ՏԱՐԻ

| | Կրես | |
|-------------------------------|------|-----------------------------|
| 1 ԽՄԲ. | 1631 | Հրակր բաժանորդագրութեան: |
| 2 ՍԱԳՍԵԱՆՑ, Լ. | 1636 | Էժանագին զրադարանի փորձը: |
| 3 ՏՈՒԷՆ, ՄԱՐԿ. | 1645 | Տիկին Աւիլեամար և կաջձակը: |
| 4 ՄԻԹԱՐԵԱՆՑ, ԱՐՇԱԼՈՅՍ | 1654 | Բարի ճանապարհ (բանաստեղծ.): |
| 5 ՏԻՐ ՄԻՐԱՔԱՆ, Յ. | 1655 | Զմիսնիալից՝ Ալեքսանդրապուր: |
| 6 ՂԱՐԱԿԵՑՁԵԱՆՑ, ՅԱՐՈՒԹԻԻՆ. | 1682 | Սև լեռնցիք: |
| 7 ԱՆԳՐԷՆԻՅ ԲԱԼՈՒԿԱՆ, Զ. | 1700 | *** (բանաստեղծութիւն): |
| 8 ԲԱԼԱՆԹԱՐ, ԱՆՈՒՆ. | 1701 | Պանդխտութիւնը մեղանում, II: |
| 9 ԱՂԱՅԵԱՆՑ, Ղ. | 1713 | Սաբր լեզու, II: |
| 10 ՏԻՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ, ԳՐԳ (Գ.Զ.). | 1722 | Կոխի պիտաը թորախտի դէմ: |
| 11 ԲԱՐԵԼԵԱՆ, Ա. | 1731 | Կոխի հրատարակութիւնը: |
| 12 ԲԱՐԵԼԵԱՆ, Ա. | 1739 | Պրաֆեսոր Բարեբա Կոխ: |
| 13 Ե., ՔԷ. Ե*. | 1742 | Գրախօսութիւն: |
| 14 ԼՈՒՍԻՆԻ. | 1750 | Ամուսն քրոնիկ: |
| 15 ՅՈՂԱՆՆԻՍԵԱՆ, ՏԻԳՐԱՆ. | 1758 | Նամակներ Առտաստանից, II: |
| 16 ԹՂԱԿԵՅ | 1768 | Թղթակցութիւն Արտաստանանից: |
| 17 Շ. | 1774 | Քաղ. Տեսութիւն: |
| 18 ԸՆԹԵՐՅՈՂ. | 1789 | Նամակ խմբագրին: |
| 19 ԽՄԲ. | 1793 | Խմբագրութեան կազմից: |


ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Թ Ի Յ Լ Ի Ս

Մ. Գ. ՌՕՏԻՆԵՍՆՅԻ ՏՊԱՐԱՆ

Типография М. Д. Ротшианца, на Гол. просп. соб. д. № 41.

1890



Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 12 1890

Դ Ե Կ Տ Ե Մ Բ Ե Ր

1890 № 12

ԵՐԿՐՈՐԳ ՏԱՐԻ

Թ Ի Ֆ Լ Ի Ս
ՏՊԱՐԱՆ Մ. Գ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ
1890

საქართველოს

საგარეო საზღვარების დაცვის

სახელმწიფო

Дозволено цензурою, Тифлисъ, 16 Ноября 1890 г.

Типографія М. Д. Ротиніанца, на Голов. просп. соб. д. № 41.

III ՏԱՐԻ „ՄՈՒՐՃ“ III ՏԱՐԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

1891

ԹԻՎԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԲԱՑԻԱԾ Է

«ՄՈՒՐՃ» ամսագիրը կը հրատարակուի 1891 թվականին նոյն ծրագրով որպէս և նախկին տարիներում:

«ՄՈՒՐՃ»-ը կը հրատարակուի ամէն ամիս 8-11 թերթ մեծութեամբ:

«ՄՈՒՐՃ»-ի ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԸ ձրի կը ստանան ՏԻԿԻՆ Մ. ՄԱՐԻՍԵԱՆԻ «ՀԵՂԻՆԷ» վէպի 1890 թվականի «Մուրճ»-ում տպւած բոլոր գլուխները, այն է՝ վէպի առաջին հատորը, բաղկացած մօտ 200 մեծադիր երեսներից: «Հեղինէ» վէպի շարունակութիւնը կ'սկսուի 1891 թ. յունւարի գրքում:

«ՄՈՒՐՃ»-ի նոր բաժանորդները, բացի դորանից, արտօնութիւն կ'ունենան ստանալու «Մուրճ» ամսագրի 1889 և 1890 թվականների բոլոր 24 համարները 14 բուբլիով, մինչդեռ ոչ-բաժանորդներին կը ծախուի նոյնը 24 բուբլիով:

«ՄՈՒՐՃ»-ի գրականական մասը ապահովուած է մասնակցութեամբ բազմաթիւ աշխատակիցների, որոնց թիւը մինչ այժմ անդադար անձամ է:

«ՄՈՒՐՃ»-ի մէջ 1890 թվականին լոյս տեսած գրածքները, ըստ բաժինների, արուած է ստորեւ իւր ներկայ Ք-ի վերջում հրատարակուած է նաև ամբողջ տարւայ բովանդակութիւնը՝ ամիսների կարգով:

«ՄՈՒՐՃ»-ի վիպակիւն բաժինը՝ «Մուրճ»-ը 1889 թվականին

տալիս էր կանոնադրապէս ամեն Ք-ում մի վէպ, ներկայ
1890 թւականին «Մուրճ»-ը տեղ ամեն ամիս երկու-
երկու ինքնուրոյն վէպեր, 1891 թւականին «Մուրճ»-ը,
ամեն ամիս, երկու ինքնուրոյն վէպերից զուրս՝ տալու է
կանոնադրապէս նաև մի թարգմանական վէպ կամ
պատմածք: Այնպէս որ սովորապէս ամեն համարում
«Մուրճ»-ը տալու է երկու ինքնուրոյն հայկական վէպեր
և մի թարգմանական վէպ կամ պատմածք:

«ՄՈՒՐՃ»-ի ցայժմեայ բաժանորդները խնդրում են որ, վե-
րանորոգելով իրանց բաժանորդագրութիւնը, նոր բաժա-
նորդ գրելել ցանկացողներին աշխատեն ծանո-
թացնել «Մուրճ»-ի բովանդակութեան հետ, որ հրատա-
րակում է ներկայ Ք-ում: Նորա խնդրում են
նաև բաժանորդագրական ծրարները իրանց ծանօթ շրջան-
ներում ցրել:

«ՄՈՒՐՃ»-ի բաժանորդագրինն է տարեկան 10 բուբլի, որ
կարելի է վճարել նաև մաս-մաս, ստորագրելիս առ-
նւազն 5 բուբլի և մինչ յունիսի 1-ը ամբողջը վճարելու
պայմանով:

Ուսուցիչները և ուսանողները վճարում են 8 բուբլի, ստորագրելիս
առնւազը 3 բուբլի և մինչ յունիսի 1-ը ամբողջը վճարելու
պայմանով:

ԹԻՖԼԻՍՈՒՄ գրում են բաժանորդ «Մուրճ»-ին՝

1) «Մուրճ»-ի խմբագրատանը:

2) Կենտրոնական գրավաճառանոցում, Գոլովինսկի պրոսպեկտ,
տուն Միրիմանովի:

3) Խիդեկելի պաւլիսոնում, Ալեքսանդրեան այգու և Բարիա-
տինսկի փողոցի վերին անկիւն:

4) Մակար Չմշկեանի գրավաճառանոցում՝ Վելիամինեան փողոց,
քաղաքային տանը և Վորոնցովի արձանի մօտ:

5) Եւանդուլովի «Городекая справочная контора» ում, Գոլովինսկի
պրոսպեկտ:

6) Սափարեանի ծխախոտի խանութում, պ. Յովհ. Ստեփա-
նեանցի մօտ, Սիօնի փողոց, Անանովի քարանսարայում:

Ներկայ 1890 թ.-ին „ՄՈՒՐՃ“ ամսագիրը տւեց
հետևեալ յօդուածները և գրուածքները:

1) Հասարակական և ընդհանուր խնդիրներ:—Գործերի զրութիւնը (№ 1, յօդուած Ա. Արասխանեանցի), Թիւ և Ոյժ (№ 5, նոյնը), Պանդխտութեան խնդիրը (յօդուած Երկրորդ, № 6, նոյն հեղինակ), Հողային խնդիրը Անդրկովկասում (յօդուած 2-րդ և երրորդ, № 7 և 9, նոյն հեղ.), Ժողովուրդը որպէս քաղաքակրթական ոյժ (№ 11, նոյն հեղ.), Աղքատների խնամատարութիւնը (երկու յօդուած, Գր. Վարդանեանցի, № 4 և 10), Էժանագին գրադարանի առաջին փորձը մեզանում (Լ. Սարգսեանցի, № 12):

2) Հետազոտական:—Համայնական հողատիրութիւնը Երևանի նահանգում (Յ. Սաղաթելեանցի, №№ 5, 7 և 10):—Կարսի բանւորների զրութիւնը (Եր. Ղազարեանցի, № 1):—Պանդխտութիւնը մեզանում (Անուշ. Քալանթարի, № 11 և 12):

3) Վէպեր և կեանքի պատկերներ:—Բղլէ (մեծ վէպ Պ. Պոստեանի, №№ 1—6 և № 8):—Հայ գիւղացու Սև օրը (վէպ Ս. Մելիք-Նահապարեանցի, №№ 3—5):—Հեղինէ (մեծ վէպ Տիկին Մ. Մարխեանի, առաջին մասն, №№ 6, 7, 9, 10 և 11):—Խաթ-Սարա (հայ բոշաների կեանքից, Վ. Փափաղեանի, № 9 և 10):—Ապաղայ Աղան (№ 1), Օրիորդ Նւարդ (№ 2), Արանեանի մօտ (№ 3), Զրազաց (№ 4), Հարևաններ (№ 11)—Ալ. Նամալեանի:—Նկարիչներ (Վ. Գարշինի № 8):—Ուիլեամս ամուսինների վրդովմունքը (Մարկ Տուէնի, № 11), Ուիլեամս ամուսինները և կայծակը (Մ. Տուէնի, № 12):

4) Նկարագրական:—Վանայ լիճը (Տ. Փիրումեանցի, № 3):

5) Հայկական կեանքից:—Հայ ընտանիքը (Լէօի, №№ 1, 2, 3, 7):

6) Բանաստեղծութիւն:—1. Մանուէլեանցի (№№ 1, 2, 7, 10):—Արշալոյս Միլիթարեանի (№ 2, 4, 5, 6, 7, 8, 11, 12), Արծիւեանի (№№ 1, 2, 3, 5, 9, 10), 2. Բալուղեանի (№ 1, 11), Կրասիկիկեանի (№ 6), Հայնէ, Լոնգֆիելօ, Պոս, Էլիօտ, Մուր, Լէօպարդի, Պուշկին՝ Անդրէլ՝ Թարգմանութեամբ Արծիւեանի, Բալուղեանի և Կրասիկիկեանի (№№ 4, 6, 8, 9):

7) Ճանապարհորդական:—Այց Թիւրքաց Հայաստանին (Լ.

Սարգսեանցի, № 1 և 2):—Ճանապարհորդի չիշատակարանից՝ Ալիշանի մօտ (Մ. Սիրունի, № 8):—Զմուռնիայից-Ալեքսանդրապոլ (Յ. Տէր-միրաքեանի, № 12):

8) Քաղաքական—Ներսիս 1890 թ.-ի շէմքում (№ 1), Վիլհէլմ II-ի հրովարտականքը բանուր դասակարգի մասին (№ 2), Բիսմարկի հրաժարականը (№ 3), Համա-ամերիկական միութեան գործը (№ 4), Գերմանիայի զինուորական օրինագիծը, Ֆրանսիայի ներքին գործերը (№ 5), Ներսիս և Աֆրիկայի բաժանումը (№ 7), Աֆրիկայի բաժանումը և ընդհանուր քաղաքականութիւնը (№ 9), Առևտրական դաշինքների խնդիրը Ներսիսում (№ 11) Պարլամենտ. ընտրութիւնները Իտալիայում և Հիւս. Ամերիկայում, կարդինալ Լաւիժըրի, Պարնել և Գլադստոն (№ 12):

9) Տնտեսական—Բամբակի մշակութիւնը Անդրկովկասում (Վ. Տարաօինով, № 6), Անտառները Անդրկովկասում (Ա. Արասի, № 11):

10) Ժողովրդագրական—Բոչաները ըստ Ա. Կոլչիի (Ա. Արասիանեանցի № 10): Սև Լեռնցիք (Յ. Ղարազեօղեանի, № 12):

11) Գիտական—Հոսանքներ բնագիտական ֆիլոսոֆիայութեան մէջ (Ա. Բարեյեանի, № 10), Արեղակի ազդեցութիւնը բուսականութեան վերայ Անդրկովկասում (Ալեք. Քալանթարի, № 11), Կոխի գիւղը սուբերկուլոզի դէմ (դ-ր Գր. Տէր-Գրիգորեանցի Ղալարցու), (Կոխի հրատարակութիւնը Ա. Բարեյեանի № 12):

12) Թատրոն և Գեղարվեստ—Թիֆլիսի Պատկերահանդէսը (օտարն), Ա. Արասի., № 2), Նկարչի Նամակները (Գ. Բաշինջաղեանի, № 11), «Ամուսիններ» (Լուսինի, № 4) «Վարժուհի» (Լուսինի, № 4):

13) Կենսագրական—Վիլիամ Գլադստոն (№ 1), Լուսինյ Ֆոն Ետայն, (№ 6, Ա. Արասի.), Բոբերա Կոխ (№ 12, Ա. Բարեյեանի):

14) Դպրոցական—Գերմանական դպրոցների դրութիւնը (Արշ. Տէր-Միքելեանի, №№ 5, 6, 8), Գերմանական համալսարանների ողին (Յ. Բարխուղարեանցի, № 5), Կարինի դպրոցական խնդիրները (Վ. Ասքանաղեանի (№№ 3, 5):

15) Լեզուագիտական—Սուրբ Լեզու (Ղ. Աղաջեանցի, № 11 և 12):

16) Քննադատական—Ամուսիններ, կոմ. Գ. Սունդուկեանցի (Լուսինի, № 2, Վարժուհի, կոմ. Զմիկեանի (Լուսինի, № 5):—Մանկական ընթերցանութիւն և Ղ. Աղաջեանց (Նր. Ղազարեանի,

№ 3), Գաստիարակչական մոլորութիւններ (Ե. Ղազարեանի, № 9):
Ազգային վէպ (Մ. Աբեղեանի, № 1 և 2):

17) Ընդդիմախօսական:—Քննադատներին (№ 4, Եղ. Մաղաթ.), «Արձագանք»-ը և ուսանողութիւնը (Տ. Յովհաննիս., № 5), Գրական. աչքակապութիւն (Ե. Մաղաթ., № 6), «Արձագանք»-ի ճշմարտախօսութիւնը (Ե. Մաղաթ., № 8), Բանաստեղծութիւնը և «Մուրճ»-ը (Ընթերցող, № 12):

18) Արտասահմանեան թղթակցութիւններ:—Գլադատոնի յոբելեանը (№ 1), Անգլիայի ժողովրդական զպրոցները (№ 3), Մանկավարժական—բուժական վարժարան (№ 5), Բանւորները Անգլիայում (№ 5), Ստեղծչ և Էմիլի փաշան (№ 8), Ֆրանսիայի պետական ծախքերը 1870 թւականից դէս (№ 11): Կոխի զիւտի մասին վկայութիւններ (№ 12):

19) Ներքին Տեսութիւն:—Ամսուայ քրոնիկ (Լուսինի) —Ամուսիններէ ներկայացումը (№ 2), Արժրունու գործունէութիւնը տօնելու խնդիրը, Պատկերազարդ թերթեր, Ներսիսիան զպրոցի տարեկան ակար, Հայոց ընկերութիւնների ընդհանուր ժողովները (№ 3), «Ղարժուհու» ներկայացումը (№ 4), Արժրունու 25-ամեայ գործուն. յոբելեանը, ժողովրդական ընթերցանութեան գործը (№ 5), Ռոսիին Քիֆլիսում (№ 6), Ուսուցչական ուժիկներ (№ 7), Հայոց ներքին կեանքի զարգացման պայմանները, Խորէն Նար-Բէյ արքեպ. մեզ մտ, Պատրիարքական ընտրութիւններ և Պոլսում, թեմական տեսչութիւնների վերականգումը (№ 10). Խրիմեան և Նար-Բէյ որպէս պատրիարքացուներ, Քիֆլիսի առաջին կարգի տնասէրերը, Ռաուլ Կոչալսկի և նորա կոնցերտները (№ 11). Քիֆլիսի քաղաքային ինքնավարութեան ընտրութիւնները: Հայոց թատերասէրների ներկայացումները (№ 12):

Բաքուի մարդաս. Ընկ. Ընդհ. ժողովը (Զլիցեանի, № 2), Ներսիսեան զպրոցի տնտես. զրութիւնը (№ 3), Կոնդակ կոպարների մասին (№ 6):

20) Գրախօսութիւն:—Տարւայ ընթացքում գրախօսւած են նոր լոյս տեսած 40-ից աւելի հրատարակութեաններ, զլիսաւոր աշխատակցութեամբ Ա. Արասխանեանցի, Ալ. Քալանթարի, Լ. Լոն Սարգսեանցի, որպէս նաև մասնակցութեամբ այլ գրական ոյժերի:

ԷԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՓՈՐՁԸ ՄԵԶԱՆՈՒՄ

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆՅԻ

Փողովուրդի անտեսական դրութեան բարեօրոճը բարդ ու դժւար լուծելի խնդիր է և համեմատաբար աւելի դիւրին է համարուում ժողովրդի մտաւոր խաւարում իմացականութեան ճառագայթներ ցրանելը: Փողովրդական ուսումնարանների բազմութիւնից է մեծապէս կախած մասսայի լուսաւորութեան գործը, սակայն ներկայ սահմանափակ թւով և կրճատած ծրագրով, նոքա հասարակ զբաղիտութիւնից աւելի ոչինչ չեն կարող տարածել, այն էլ ոչ ամեն տեղ: Փողովրդի լուսաւորութեան գործով հետաքրքրող հասարակութիւններում, անգրագէտների թիւը պակասեցնելու նպատակով, բացուում են չքաւոր դասի համար կիրակնօրեայ ձրի ուսումնարաններ: Այսպէս օրինակ՝ ուսուցիչներին վաղուց չէ որ հասկացել է այդ տեսակ համակրելի հիմնարկութիւնների օգուտը և այժմ Ռուսաստանում 30-ից աւելի կիրակնօրեայ ուսումնարաններ են բացել, բոլորը մասնաւոր անձանց նախաձեռնութեամբ: Թիֆլիսում կայ այդ տեսակ 2 ուսումնարան, որոնցից մինն է մի հայ օրիորդի նախաձեռնութեամբ բացւածը՝ ուսաց, վրաց և հայոց բաժանմունքներով: Այս վերջին բաժ. պահպանուում է միմիայն մի հայ օրիորդի եւանդի շնորհիւ, բայց սովորող մանուկների թիւը այդտեղ դեռ շատ չնչին է—9 հոգի: Նթէ հայոց բաժնում պարսպող օրիորդը ունենար մի օգնական՝ գուցէ նորա գործը աւելի թեթեւանար և կիրակնօրեայ ուսումնարան յաճախող հայերի թիւը շատանար: Այժմ ուրեմն հայերիս մօտ, կարելի է ասել, որ կիրակնօրեայ ուսումնարանի դադարը դեռ մանրադիտական ծաւալով է իրագործուում և ծխական ուսումնարանները մնում են գրագիտութեան համարեա միակ

տարածողները: Սակայն հասարակ գրագիտութիւնը ինքն ըստ ինքեան մեծ արժէք չունի, եթէ նա գործ չի անում իբրև միջոց ինքնագրագացման և աշխարհայեցողութիւնը լայնացնելու համար: Կարգալիմանալը առաջացնում է, եթէ կարելի է այսպէս ասել, ընթերցանութեան ակտիվացում, մտաւոր սնունդի պահանջ, որին պէտք է գոհացում տալ: Ինչքան և մեր ազգի մտաւոր ստեղծագործութիւնը, նորա կեանքի բոլոր միւս կողմերի նման, զուրկ լինելով գրագացման համար անհրաժեշտ պայմաններից, թոյլ և աղքատիկ կերպով արտայայտւած լինի և ոչ այն ոյժով ու ճոխութեամբ որ սպասել է տալիս հայի բնածին ընդունակութիւնները—այնու ամենայնիւ այդ գրականութեան մէջ եղածով էլ օգուելու համար պէտք են զիւրացուցիչ միջոցներ, որոնցից զլիւսուորն է էժանագին Գրադարանը:

Աղքատ դասի մտաւոր սնունդի հայթայթումն էլ հանդիպում է նոյն արգելքներին, ինչպէս և ասորուստի. նա միջոց չունի սեպհական գրադարաններ ունենալ և էժանագին հրատարակութիւնները թէև յայտնի չափով հեշտացնում են մի քանի գրքեր ձեռք բերելը, բայց նախ որ նշին է այդ պաշարը և յետոյ մեծ հեղինակների ստեղծագործութիւնները, իրանց համեմատաբար մեծ գնի շնորհիւ, անմատչելի են մնում, ինչպէս և պարբերական հրատարակութիւնները: Բացի այդ՝ միևնույն ժամանակ մի յայտնի զուժար և ձեռք բերելով մի քանի գրքեր, որոնք կարդացելուց այլ ևս պէտք չեն, չքաւոր ընթերցողը ստիպւած պէտք է լինի, միջոցների սղութեան պատճառով, սահմանափակել իւր ցանկութիւնը ուրիշ գրքեր ևս կարդալու, մինչդեռ երբեք էժանագին Գրադարան նա կարող է ամսական 10 կամ 20 կոպէկով ստանալ իւր մայրենի գրականութեան համարեա բոլոր արտադրութիւնները. մի խօսքով—նշին վճարով ունենալ շատ առատ մտաւոր սնունդ: Էժանագին Գրադարանը այսպիսով հանդիսանում է ոչ միայն իբրև օժանդակ հիմնարկութիւն մեր դպրոցների համար, այլ և առհասարակ իբրև ժողովրդի լուսաւորութեան առատ և հանրամատչելի աղբիւր:

Թիֆլիսում այժմ կան երկու էժանագին Գրադարան և մի էժանագին Գրադարան-Ընթերցարան: Ամենից առաջ բացւել է օր. Կայրանովայի էժանագին Գրադարանը, որ զանուում է Միքայելեան փողոցում և բողկացած է բացառապէս ռուսաց գրքերից: 1889 թւի դեկտեմբերի 18-ից բացւեց այդ տեղ հայկական գրքե-

րից կազմեաձ մի բաժին, որ այժմ իբրև արդէն առանձին գրադարան գտնուում է Միքայէլեան կամուրջի վերայ: Իսկ Էժանագին Գրադարան-Ննթերցարանը այս երկուսից յետոյ բացւեց օր. Ս. Արղութեանի նստածեւոնութեամբ Հայոց Բազարի փողոցում. սա կազմեաձ է գլխաւորապէս ուսօրէն գրքերից, թէև բաւականաչափ վրաց ու հայոց գրքեր էլ կան: Այս գրադարանի ընթերցարանում օրեկան 2 կուէկով կարելի է կարդալ մի քանի ուսաց, վրաց և հայոց պարբերական հրատարակութիւններ: Գրադարան-Ննթերցարանի բացւելուց յետոյ հայոց Էժանագին Գրադարանի (Միքայէլեան կամուրջի վերայ), բաժանորդների մի մասը անցաւ սորան և բաժանորդների ընդհանուր թիւը, որ զեկտեմբերի 18-ից մինչև յունիսի 8-ը 332 էր, իջաւ յետոյ 244-ի:

Մենք այս յօդուածում ուզում ենք խօսել միայն հայոց Էժանագին Գրադարանի մասին, որ գտնուում է Միքայէլեան կամուրջի վերայ և կազմեաձ է բացառապէս հայերէն գրքերից:

Որովհետև վիճակազրական տեղեկութիւնները կանոնաւոր կերպով հաւաքեաձ են միայն յունիսի 18-ից, այդ պատճառով մեր յօդուածի մէջ ներկայացրեաձ է Էժանագին-Գրադարանի ընդհանուր պատկերը միայն այդ օրից սկսած մինչև նոյեմբ. 18-ը:

Էժանագին-Գրադարանում այժմ կայ 670 անուն հայերէն զիրք: Պարբերական հրատարակութիւններից ստացուում են. «Մշակ», «Մուրճ», «Աղբիւր», «Ծարագ», «Հանդէս պատմական և գրականական», «Արաքս» և «Արձագանք»: Յիշած ժամանակամիջոցում Էժանագին-Գրադարանից վերցրել են գրքեր 244 հոգի, որոնցից աւելի քան կէսը գուառացիք են: Բաժանորդների մեծ մասը, այսինքն՝ 179 հոգի արական սեռից են և 65 հոգի իգական:

Հետաքրքրական է այդ բաժանորդների աւելի մանրամասն ցուցակը:

Ա Ր Ա Կ Ա Ն Ս Ն Ռ

| | | | |
|----------------------------------|-------|---------------------|------|
| Աշակերտներ | 87 հ. | Պաշտօնեայ | 3 հ. |
| Գործակ. ու հաշւապահ | 32 » | Ուսանող | 3 » |
| Վաճառական | 16 » | Մշակ | 3 » |
| Արհեստաւոր | 15 » | Կառապան | 2 » |
| Հայոց դպր. ուսուցիչներ | 13 » | Զինւոր | 1 » |
| Մտաւայ | 4 » | | |

Ի Գ Ա Կ Ա Ն Ս Ե Ռ

| | | | |
|------------------------|-------|--------------------|------|
| Աշակերտուհիք | 26 հ. | Տիկին | 9 հ. |
| Օրիորդներ | 22 » | Վարժուհի | 8 » |

Այս թւերից մենք տեսնում ենք, որ ծառաների, մշակների, կառավարանների և զինւորների մէջ ընթերցանութիւնը շատ քիչ է տարածւած. նոքա բոլորը միասին առած կազմում են արական սեռից յաճախորդների $5\frac{1}{2}\%$: Մի քիչ աւել է ընթերցողների թիւը արհեստաւորներից՝ 8% : Այս փաստը, երևի, մեկնուած է նորանով որ անցրագէտների ահագին մեծամասնութիւնը պատկանում է չիշած խաւերին, որովհետև ենթադրել որ այդ մարդիկ ընթերցանութեան համար բոլորովին ժամանակ չունին, չափազանցութիւն է, (մանաւանդ մշակների և զինւորների նկատմամբ) մինչդեռ առաւելապէս այդ դասակարգերից ցանկալի է շատ ընթերցողներ տեսնել: Վաճառականները, գործակատարները ու հաշւապահները արական սեռի յաճախողների բաւական մեծ պրօցենտ են կազմում, համարեա 27% , որ շատ մխիթարական է: Աշակերտները և աշակերտուհիք կազմում են բաժանորդների ամենամեծ կոնսիդերնտը. բոլոր յաճախողների 46% :

Աշակերտների և աշակերտուհիների մանրամասն թիւը այն եզրակացութիւնն է անել տալիս, որ տէրունական ուսումնարաններից համարեա յաճախողներ չը կան, այլ նոցա ահագին մեծամասնութիւնը հայոց ուսումնարաններից են, կամ թէ այն ուսումնարաններից, որտեղ հայերին հայոց լեզուով են աւանդում դասերը: Այս փաստը եթէ մի կողմից ցաւալի է, սակայն միւս կողմից շատ մխիթարական է, որովհետև հայոց դպրոցներում սովորողների ահագին մեծամասնութիւնը պատկանում է չքաւոր դասին, որ աւելի կարօտութիւն ունի մտաւոր սննդի էփան մատակարարութեան:

Ահա աշակերտների և աշակերտուհիների մանրամասն թիւը:

Ա Շ Ա Կ Ե Ր Տ Ն Ե Ր

| | | | |
|------------------------------------|----|-----------------------------------|---|
| Ներսիսեան դպրոց | 42 | Փելքչերական ուսումնարան | 4 |
| Հայոց ծխ. ուսումնարաններ | 13 | Սոււարական կուրս. | 3 |
| Քաղաքային հայոց ուսումն | 9 | Արական զիննապիւններ | 1 |
| Արհեստաւորաց ուսումնար. | 9 | Բէալական ուսումնարան | 1 |
| Այգեպանական ուսումնար. | 4 | Տիւնիկական ուսումնարան | 1 |

ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐ

| | | | | |
|-----------------------------|----|--|---------------|-------------|
| Հայոց ծխ. ուսումնարաններ | 23 | | Իգական զինազ. | 1 |
| Պրոֆեսիօնալ. ուսումնարան... | 2 | | | |

Բացի այս բոլորից, Եժանագին Գրադարանի վիճակագրական տեղեկութիւնները զազափար են տալիս և նորա մասին թէ ո՞ր զրքերն են առաւելագէս կարգացել այս ժամանակամիջոցում: Եթէ լինէին հրատարակած ընթերցանութեան զրքերի այնպիսի ցուցակներ, ուր բացի զրքի անունից լինէր և զբաժնի մասին գրախօսական կարգին ընդհանրա՛ այն ժամանակ աւելի անկախ կերպով կատարած կը լինէին մեծ բաժանորդների կողմից զրքերի ընտրութիւնները, թէև առհասարակ դժւար է ենթադրել որ հեաաքքրական զբաժնիքը աննկատելի մնայ. ընթերցողները մէկ մէկուց կը լսեն: Իսկ երեխաներին ընթերցանութեան համար զրքեր բաժանելիս զրադարանապետուհին միշտ աշխատում է նոցա հասակին ու զարգացման համեմատ զրքեր տալ: Ի հարկէ զրքի շատ կամ քիչ անգամ կարգաւելը կախած է յայտնի չափով նոյնպէս այն հանգամանքից թէ յայտնի զրքից քանի օրինակ է գտնուում զրադարանում, որովհետեւ եթէ մի զրքի մեծ պահանջ կայ, իսկ նորանից միմիայն զրադարանում մի օրինակ է՝ աւելի քիչ բաժանորդներին նա կը գոհացնէ, քան եթէ նոյն զրքից երկու կամ աւել օրինակ լինէր: Սակայն, ինչպէս երևում է ներքև բերած թւերից, այդ հանգամանքը շատ էլ մեծ նշանակութիւն չունի:

Ահա ինչ գիրք ո՞րքան անգամ է վերցրած կարգալու համար, յունիսի 18-ից սկսած մինչև նոյեմբերի 18-ը: Նախ տեսնենք մանկական, այսինքն այն զրքերը, որոնց ընթերցողների ահագին մեծամասնութիւնը երեխաներ են կամ որ առհասարակ կարելի է տալ երեխաներին:

| | | | |
|-----------|---------------------------|--------------|---------------|
| Սղայեան՝ | (4 օր.) Արեգնագան. | 42 | անգամ է վերց. |
| Վուչեաիչ՝ | (2) Կարմիր Լապտեր. | 32 | " |
| Նմիգո՝ | (2) Ֆրիդօլին. | 31 | " |
| Լակիրէ՝ | (4) Երրորդ Ոսկի | 30 | " |
| Աղայեան՝ | (2) Անահիտ. | 29 | " |
| ? | (3) Հորացիոս. | 29 | " |

| | | |
|---------------|---|---|
| Հօֆման՝ | (3) Հաւատարմութիւնը ամեն արդէլք չաղթում է 27 անամ է վերց. | |
| Շամխորեան՝ | (2) Լուսանման 24 | » |
| Անդերսէն՝ | (4) Անդամարտ 24 | » |
| Աւենարիուս՝ | (4) Թաւամաղ մեղու 23 | » |
| » | (4) Հսկայ մրջիւն 23 | » |
| Վուչետիչ՝ | (3) Երկու տօնածառ 23 | » |
| ? | (2) Զօրժ Ստեֆենսօն 22 | » |
| Հօֆման՝ | (4) Գէորգ Ռօլլէստօն 22 | » |
| Ալֆօնս Գօլէ՝ | (3) Թզուկ 20 | » |
| ? | (2) Խաչակիր մանուկներ 20 | » |
| ? | (4) Փան Բապտիստ Լիւլի 19 | » |
| Բաուէր՝ | (5) Փայլուն կոպէկ 18 | » |
| Սարիտտօն՝ | (4) Փոքրիկ մէզը և նորա մանկիկը 16 | » |
| ? | (3) Արեւելեան վիպաշխարհ 16 | » |
| Լուսկեվիչ՝ | (4) Պատիկ է բայց շատիկ է 16 | » |
| Բիչէր Ստօու՝ | (4) Թոմաս աղբօր տնակը 15 | » |
| ? | (4) Բօբինզօն 15 | » |
| Դէ Ամիչիս՝ | (2) Սիրտ 14 | » |
| Հօֆման՝ | (3) Բարեկամութեան զոհեր 14 | » |
| » | (2) Թաչնորս 14 | » |
| Սուզան Կօրնա՝ | (2) Երեխաններ և նոցա բարեկամները 13 | » |
| ? | (2) Ինչ է խօսում սենեակը 12 | » |
| Սարգսրեան՝ | (2) Զարածճի Արամի արկածները 12 | » |
| Աղայեան՝ | (6) Ֆրիդօֆ Գիւցաղն 11 | » |
| » | (3) Տօրք Անգղ 11 | » |
| Շուպպեա՝ | (2) Երկու բարեկամ 11 | » |
| Անկերացի՝ | (1) Արքայադուստր Վարդենի 11 | » |
| Հօֆման՝ | (3) Գէորգ Վաշինգտօն 11 | » |
| ? | (3) Զորս առակ 11 | » |
| Փօրժ Սանտա՝ | (2) Խօսող կաղնի 11 | » |

| | | | |
|------------|--|----|---------------|
| ? | (2) Պօլուխմակերիալ | 10 | անգամ է վերց. |
| ? | (2) Փայտաշէն խրճիթից մինչև սպիտակ տունը | 10 | » |
| ? | (3) Ով է հնար, երկաթուղին | 10 | » |
| Նմիդա՝ | (3) Գառնուկ և Լուսատարիկ | 9 | » |
| » | (3) Բենեամին Ծրանկլին | 8 | » |
| Սերվանտէս՝ | (2) Դօնքիշուս | 7 | » |
| Մունթէ՝ | (4) Աբրահամ Լինկոլն | 7 | » |
| Էդգար Պօ՝ | (2) Ոսկէ բզէզ | 7 | » |
| Պուշկին՝ | (5) Ոսկէ ձկնիկ | 7 | » |
| Լալայեան՝ | (3) Ահմէդի տոպրակը | 7 | » |
| Ներիտցի՝ | (1) Գուստաւ Վազա | 7 | » |

Աւելի քիչ կարդացած գրքերը, որոց մէջ նաև ժխլի-վերն, չենք թւում: Այս ցուցակը հետաքրքրական է նաև այն կողմից, որ ցոյց է տալիս՝ նախ մեր մանկական գրականութեան աղքատութիւնը, իսկ յետոյ — որ նա համարեա ամբողջապէս թարգմանական է: Սեր մանկ. գրականութեան մէջ միակ ինքնորոյն գրողը դեռ պ. Ղ. Աղայեանն է: Գալով մեծերի ընթերցանութեան գրքերին գտնում ենք հետևեալ թւերը: Նոյն ժամանակամիջոցում վերցրած են.

| | | | |
|------------|--------------------------------------|----|-------|
| Բաֆֆի՝ | (4 օր.) Կայծեր | 47 | անգամ |
| » | (3) Զալալէդդէն | 41 | » |
| » | (2) Հայ կինը և հայ երիտասարդը | 30 | » |
| » | (2) Խաչագողի չիշատակարանը | 29 | » |
| Սարգսեանց՝ | (2) Այց թիւրքաց Հայաստանին | 28 | » |
| ? | (4) Սարկաւազ | 27 | » |
| Բաֆֆի՝ | (3) Դաւիթ բէզ | 26 | » |
| Պուշեանց՝ | (3) Յեցեր | 24 | » |
| Բաֆֆի՝ | (2) Ոսկի աքաղաղ | 22 | » |
| » | (4) Ղարաբաղի ասողազէտը | 21 | » |
| Լէօ՝ | (3) Արնաղին | 21 | » |
| Բայազէդցի՝ | (7) Թասիբ | 19 | » |
| Բաֆֆի՝ | (2) Սամուէլ | 17 | » |
| Էժէն Սիու՝ | (1) Թափառական հրէայ | 17 | » |
| Բաֆֆի՝ | (2) Խենթը | 16 | » |

| | | |
|---|----|-------|
| Զախեր Մազօխ (Թ. Բաֆֆի) (2) Կայէնի կտակը | 14 | անդամ |
| Բաֆֆի՝ (2) Փունջ | 14 | » |
| Սմալլս (Թ. Փ. Վարդան.) (2) Բնաւորութիւն | 14 | » |
| Շիրվանդադէ՝ (2) Գործակատարի յիշատակարանից | 14 | » |
| Պուօշեան՝ (2) Շահէն | 13 | » |
| Հիւզօ՝ (1) Թշւառներ | 13 | » |
| Շիրվանդադէ՝ (2) Զուր սոյսեր | 13 | » |
| Շիլլեր (Թ. Փ. Վարդան.) (2) Աւազակներ | 13 | » |
| Մերենց՝ (1) Թէոդորոս Ռշտունի | 12 | » |
| « (1) Թորոս Լևոնի | 12 | » |
| « (1) Երկունք | 12 | » |
| Փափազեան՝ (10) Ենիչերի | 12 | » |
| Հաուֆ՝ (3) Ուխտաւորք | 12 | » |
| Շիրվանդադէ՝ (2) Խնամատար | 12 | » |
| Պուօշեանց՝ (2) Սօս և Վարդիթեր | 10 | » |
| Լէօ՝ (2) Կորածներ | 10 | » |
| Շիրվանդադէ՝ (2) Նամուս | 10 | » |
| Բաֆֆի՝ (2) Ճանապարհ. Թիֆլ. մինչև Ազուլիս | 10 | » |
| Նաւասարդեան (I 2, III 1, IV 5, V 5) Փողովըր- դական հէջիաթներ | 10 | » |
| Արծրունի՝ (2) Այտեղ և այտեղ | 9 | » |
| Մովսէս Խորենացի (1) Պատմ. հայոց Թ. Խ. Ժ. վ. Ս. | 9 | » |
| Պուօշեանց՝ (2) Կուուածաղիկ | 9 | » |
| » (3) Հացի խնդիր | 9 | » |
| Հիւզօ՝ (2) Մահապարտի վերջին օրը | 8 | » |
| Շիրվանդադէ՝ (1) Արամբին | 7 | » |
| Սիւլիւկ՝ (3) Տիկին և նաժիշտ | 7 | » |
| Աղայեան՝ (1) Արութիւն և Մանուէլ | 6 | » |
| Շիլլեր՝ (Թ. Գ. Բարխ.) (1) Դոն Կարլոս | 6 | » |
| » (1) (Թ. Բարխ.) Օրէկանի կոյսը | 4 | » |
| » (3) Վիլհելմ Թէլլ | 6 | » |
| Նեքսպիր՝ (Թ. Մալլս.) (1) Արքայ Լիր | 6 | » |
| » (Թ. Սուլլս) (1) Օտելլօ | 6 | » |
| » (Թ. Ս. Արծր.) (1) Համլէտ | 6 | » |

| | | |
|------------------------|--------------------------------|----------|
| Գեօթէ՛ | (1) Վէրթէր | 6 անգամ՝ |
| Արփիարեան՝ | (1) Ապուշը | 6 » |
| « | (1) Կեանքի պատկերներ | 4 » |
| Լեսսինգ՝ (Թ. Գ. Բարխ.) | (1) Նաթան իմաստուն | 5 » |
| Տիւսաբ՝ | (2) Արաքսիա | 4 « |
| » | (1) Սիրանոյշ | 4 » |
| » | (1) Մայտա | 3 « |

Աւելի քիչ անգամ կարդացած գրքերը չենք նշանակում:

Անաչառ թւերը ապացուցանում են մի շատ տարածւած կարծիք մեր մէջ, որ Բաֆֆին հայերիս ամենաժողովրդական գրողն է: Այս ցուցակի մէջ մտնում է մեր գրականութեան համարեա բոլոր բելլետրիստիկան, և մենք կարող ենք տեսնել թէ որչափ նա աղքատ է ոչ միայն ինքնուրոյն ստեղծագործութիւններով, այլ նոյն իսկ եւրոպական առաջնակարգ գրողների թարգմանութիւններով: Ի հարկէ զօռով գրականական տաղանդներ չի կարելի ստեղծել, որովհետև տաղանդների զարգացման համար էլ, ինչպէս և գրականութեան, պահանջուում են յայտնի միջնավայր ու պայմաններ. մութ և խոնաւ մասաններում անգոյն և թույլ ծիլեր են արձակում նոյն սերմերը, որոնք բաց, ազատ օդում և անխափան լոյսի առատ ճառագայթների տակ տալիս են զուարթ, կանաչ և ճոխ տունկեր... Բայց և այնպէս, աւելի կենդանութիւն կարող էին ստանալ թէ մեր գրականութիւնը և թէ մեր ինքնօգնութեան նպաստող զանազան հասարակական հիմնարկութիւնները, եթէ լիակատար անտարբերութիւնը, ինդիֆերենտիզմը, որ հոգու հիւանդոտ թմրութեան և անշարժութեան ապացոյց է՝ մեր հասարակութեան բնատրոյ գիծը չը լինէր: Արքան և ոյժ ու եռանդ ունենան մի քանի անհատներ, նոցա թէ ոյժը և թէ եռանդը կարող են թուլանալ և ջախջախել խիւղիղ անտարբերութեան հաստ ու ստան պատին... Մենք տեսնում ենք Էժանագին Գրադարանների գոյութեան անհրաժեշտութիւնը մեզ համար. ուրեմն նոքա պէտք է լինեն ոչ միայն Թիֆլիսում, այլ նաև շահախնդիր Բաքուում, թմրած երևանում, հայաշատ Ալեքսանդրապոլում և ուրիշ քաղաքներում: Իբրև նոր փորձ՝ այդ տեսակ հիմնարկութիւնները պահանջում են ինտելիգենտ երիտասարդութեան կողմից եռանդ դէպի գործը ու սէր դէպի ժողովուրդը, իսկ հասարակութեան կողմից՝ բուռն համակրութիւն և ամեն տեսակ օգնութիւն: Անտարբերութիւնը և այս դէպքում սպանիչ դեր կա՞րող է կատարել:

ՏԻԿԻՆ ՈՒՒԼԵԱՄԱՐ ԵՒ ԿԱՅԾԱԿԸ

ՄԱՐԿ ՏՈՒՔՆԵՆԻ

Պարոն Աւիլեամսը՝ շարունակ խօսակցութեան մէջ՝ պատմեց հետեւեալը.

Այո, պատուելիս, կայծակից վախենալը— մարդկային ամենացաւալի թուլութիւններից մէկն է: Այդ թուլութիւնը աւելի պատահում է կանանց շրջանում, երբեմնապէս զոնուում է փոքրիկ շնիկների մէջ և շատ սակաւ տղամարդերի դատում: Այդ թուլութիւնը այն պատճառով է նամանաւանդ աւելի, որ նա մարդուն այն ատիճան ուժից զցում է, որչափ չէ կարող տկարացնել ոչ մի ուրիշ երկիւղ. և մարդ չէ կարող ոչ ստոն դատել նորա մասին, ոչ էլ այդ երկիւղից յետ կենալ, թէկուզ ամօթահարելուց: Այն կինը, ոյ քաջութեամբ կը տանէր դէի կամ մինի ներկայութիւնը, կորցնում է իւր վստահութիւնը և ջուր է կորում կայծակի խզբզանքից: Մարդ խղճում է տեսնելով կայծակից սարսափած կնոջը: Պատմեմ գլխիս եկած դէպքը:

Մի անգամ ամառը, զիւղում, մեր կալածքում, իմ հանգիստ քնի ժամանակ լսեցի մի խեղդաւած խուլ ձայն, որ ինձ զարթեցրեց.

— Այ մա՛րդ, ա՛յ մարդ, վեր կաց, կանչում էր հեկեկալով կինս իմ ականջտակին:

Սկսեցի միտքս ինձ ժողովել, տեղիցս բարձրացայ և հարցրի.

— Սիրելիս, այդ զո՞ւ ես: Ի՞նչ է պատահել: Ո՞րտեղ ես դու:

— Վերկաց պահարանը փակիր: Ամօթ չե՞ս քաշում, քեզ համար հանգիստ պատկել ես մի այնպիսի ժամանակ, երբ սկսել է սարսափելի փոթորիկ և որոտմունք:

—Լաւ, քնած ժամանակ ինչպէ՞ս կարող էի ես ամաչել: Այ կին, խելքդ որտե՞ղ է. մարդս քնած ժամանակ չէ կարող ամաչել:

—Էհ, դու երբէք չես ամաչում, ա մարդ. դու ինքդ չը գիտե՞ս, որ միշտ այդպէս ես:

Եւ կինս սկսեց կրկին հեկեկալ խուլ ձայնով: Հեկեկանքի ձայնը սառցրեց իմ լեզուն, որ պատրաստել էր մի սուր պատասխան և ես խօսքս շուռ տուի:

—Սիրելիս, հոգեակս, շատ ցաւում եմ, որ այդպէս է եղել. հաւատացիր, որ կամաւ չեմ արել:

—Այ մա՛րդ:

—Տէր Աստուած. ի՞նչ ես ասում, հոգի ջան:

—Դու դեռ անկողնում պառկած ե՞ս:

—Ի հարկէ: Աբա ի՞նչ անեմ:

—Դո՛ւրս, դուրս եկ անկողնիցդ: Եթէ քո կեանքը քեզ համար թանկ չէ, զոնէ փոքր ինչ էլ է նորան պահպանիր ինձ համար, երեսաներիդ համար:

—Դէ, սիրելիս...

—Մի խօսիր, լսել չեմ ուզում: Դու լաւ գիտես, որ այսպիսի որոտմունքների ժամանակ մահճակալից աւելի վտանգաւոր տեղ չը կայ. բոլոր զրքերում այդպէս են զրում: Իսկ դու պառկել ես և կամաւ անձդ վտանգի ես ենթարկում, ով գիտէ ինչ դիտումով միայն թէ ասածդ անես, հակառակես, հակառակես և...

—Ա՛ կի՛ն, խելքի ե՛կ. ի՞նչ է, պէտք է քեզ համար երդւեմ, որ ես մահճակալումը չե՛մ:

Դեռ խօսքս չէի վերջացրել, որ սաստիկ կայծակ տւեց: Տիկինս երկիւղից սարսափելի ճիչ արձակեց. որոտմունքը, գոռոցը ականջս խլացրեց:

—Տեսնում ես, այ մարդ, մեղքերիդ հետևանքը: Ինչպէ՞ս ես դու կարող անում այդքան փշանալ, որ այսպիսի ժամանակ երդւում ես:

—Ես չ՛երդւեցի և կայծակը ամենևին երդւելուցը չէր: Միևնոյնը կը լինէր, եթէ ես ոչ մի ծպտուն էլ հանած չը լինէի, այդ ինքդ էլ լաւ գիտես, հոգեակս. զոնէ պէտք է գիտենայիր, որ երբ որ ողը, մթնոլորտը ելեքորականութիւնով լքցւած է...

—Հա, այդ է՞ր սլակաս մնացել: Ապացուցիր, ապացուցիր, ապացուցիր: Տօ, ի՞նչ ես դուրս տալիս գլխիցդ, երբ որ լաւ գիտես, որ մենք շանթարգել չ'ունենք և քո խեղճ կինը ու զաւակները գոնուում են նախախնամութեան ձեռքին: Այդ էլի ի՞նչ ես անում: Այսպէս ժամանակ լուցկի ե՞ս վառում: Խելքդ կորցրել ե՞ս, ի՞նչ է:

—Տէր ողորմեա՛, այ յիմար կինարմատ, որտեղ է կրակը, որ աչքիդ երևում է...

—Հանդցրո՛ւ, հանդցրու այս բոպէին: Թէ դու մեզ բոլորիս զօհել ե՞ս ուզում: Գու լաւ գիտես, որ ոչ մի բան այնպէս չէ քաշում կայծակը, ինչպէս կրակը: (Վզզ-դռռ-շախկ-շրախկ—կայծակի փայլ և զուռոց): Հը տեսա՞ր, սիրող հովաքա՞ւ: Հիմի տեսա՞ր քո արածը:

—Ոչինչ չեմ տեսնում: Լուցկին շատ-շատ՝ իրան կը քաշի կայծակը. բայց հօ նա չէ՞ կայծակ ծնողը, կայծակի պատճառը: Այն էլ որ ատում եմ կը քաշի, շատ սակաւ դէպքում. հարէւր անգամից մէկումն էլ չի պատահիլ: Եթէ լուցկի վառելովս կայծակ կարողանայի քաշել, դա կը նշանակէր, որ որսորդն էլ միլիօն հարւածներում միշտ նշան խփած կը լինէր առանց սայլթաքելու: Որսորդների ընկերութիւնը, զորօրինակ...

—Ամօթ է, ա մարդ, ամօթ քեզ համար: Մենք այստեղ կանգնած ենք մահի առաջ, իսկ դու մի այսպիսի խորհրդաւոր բոպէում կարողանում ես այդ տեսակ լեզուով խօսել: Եթէ դու ցանկութիւն չ'ունես... այ մա՛րդ, լսի՛ր մէկ:

—Հը՞:

—Նրեկոյեան պառկելուց առաջ ազօթք արի՞ր:

—Ես, ես... ուզում էի, բայց զբաղւած լինելով տասներկուսը տասներեքի վերայ բազմապատկելով...

(Վզզ, դռռ, շախկ, շրախկ):

—Է՛հ, կորել ենք, անպատճառ կորել, մենք անօդնական խեղճերս: Ախր ինչպէ՞ս էիր դու կարող արհամարհել այդպիսի մի բան այս տեսակ երկիւղալի ժամանակ:

—Պառկելուց առաջ «այս տեսակ երկիւղալի ժամանակ» չէր: Նրկնքում ամպի կտոր էլ չը կար: Ո՛վ կը կարծէր, որ իմ մի փոքրիկ զանցառութիւնիցս կարող է այսպէս աղմուկ ու վտանդ ծագել: Ես կարծում եմ, որ դու առհասարակ այդ տեսակ ձեւականութեանը

շատ ես մեծ, չափազանցրած նշանակութիւն տալիս. դու լաւ գիտես, որ դա սակաւ պատահող մի բան է: Ես աղօթելը չէի մոռանում այն օրից, որ պատահեց մեզանում մի երկրաշարժ սորանից շորս տարի առաջ:

— Իսկ միւսը, ա՛ մարդ, մոռացա՞ր. դեղնատենդ հիւանդութիւնը:

— Հոգեակս, դու միշտ օրինակ ես բերում դեղնատենդը. բայց ես համաձայն չեմ քեզ հետ: Այստեղից մինչև դեղնատենդ երևեցած տեղը այնքան հեռու է, որ հեռագիրն անգամ չէ կարելի անմիջապէս ուղարկել առանց միջանկեալ կաշարանների. այդ ինչպէ՞ս իմ մի փոքրիկ սխալը, իմ մի երեկոց աղօթք շանելը այնտեղ ազդեց այդպէս յանկարծակի: Դեռ երկրաշարժի մասին կարող եմ այդտեսակ ենթադրութիւն թողլ տալ, որովհետև նա մեզ մօտ պատահեց. բայց թէ ես ինձ պատասխանատու համարեմ ամեն մի անիծւած... (Վզզ, գռռ, շախիշրախի):

— Ախ, սիրելիս, ախ, սիրելիս: Ես հաւատացած եմ, որ կայծակը մի բանի դիպաւ: Մենք էլ արեգակի լոյս չենք տեսնելու: Հը՞. ի՞նչ է. դու ուրախ կը լինե՞ս մեր անհետանալուց յետոյ՞ քո սուկալի խօսքերը մտաբերել:

— Յետո՞յ: Ելի բան ունե՞ս:

— Քո ձայնը, ա՛յ մարդ, կարծես թէ... Տէր Ասուած, միթէ՞ դու բաց վառարանի առաջն ես կանգնած:

— Այո, այդ ոճրագործութիւնով եմ զբաղւած:

— Հեռացի՛ր այս բոլէին: Դու երևի մոքումդ դրել ես մեզ բոլորիս կորցնելու: Միթէ՞ դու չը գիտես, որ վառարանը ամենալաւ կաջծակ քաշողներին է: Հիմի էլ դու որտեղ գնացի՞ր:

— Ես այստեղ եմ, լուսամուտի մօտ:

— Օհ, Տէր ողորմես, ի՞նչ է եղել քեզ. հօ զժւել չե՞ս: Այս բոլէին այդ տեղից քաշւի՛ր: Ծծկեր երեխաներն անգամ գիտեն, որ կաջծակի ժամանակ վտանգաւոր է լուսամուտի մօտ կանգնելը: Ախ, սիրելիս, ես համոզւած եմ, որ զիշերս չեմ լուսացնելու... Ա՛, մա՛րդ, սիրելի՛ս.

— Ի՞նչ է:

— Այն ինչ է խշխշում:

— Ես եմ:

—Դու ի՞նչ ես անում:

—Զգեստիս ծայրն եմ որոնում:

—Դէն պցի՛ր շուտով: Ինքդ լաւ զիտես, որ բոլոր ուսումնականներին կարծիքով բրդէ ճոթը կայծակ քաշող է, ու հանգիստ և հանդարտ շոր ե՞ս հագնում: Օ՛հ, սիրելիս, բաւական չէ, որ բնական պատճառներից վտանգի է ենթարկել մեր կեանքը, դու աւելի էլ մեծացնում ես վտանգը: Ի սէր Աստուծոյ մի երդիլ, մի երգիլ: Ախր միտքդ ի՞նչ է:

—Լա՛ւ, երգից ի՞նչ վտանգ կարող է լինել:

—Ա՛ մա՛րդ, ես քեզ հարիւր անգամ ասել եմ, որ երգից օղջ շարժում է և այցպիսով կտրում է ելեքտրական հոսանքը, որ... Այս ի՞նչ ես արել, ինչո՞ւ ես բացել իմ պահարանի դուռը:

—Օ՛հ, խելագար, դորանից ի՞նչ վնաս կարող է լինել:

—Ի՞նչ վնաս: Դորանից -կարող է լինել մահ: Ամեն մի տխմարն էլ, որ փոքր ինչ դիտել է, գիտէ, որ ընդմիջող քամով կարող է կայծակ բերել: Դե՛, կէսն էլ չես փակել, փակիր դուռը ամուր. շուտ արա, շտապիր. թէ չէ մենք կը կորչենք, Ախ, ի՞նչ տանջանք է, որ ես կրում եմ՝ մի խելքըպակասի հետ միասին փակւած այս սենեակում: Ա՛ մա՛րդ, այդ ի՞նչ ես անում:

—Ա՛ ինչ: Զուր եմ ածում: Սենեակի օղջ տաք է և խեղդող: Աւզում եմ ձեռքերս ու երեսս լւանամ:

—Դու, երեխ, վերջին խելքդ էլ տանուլ ես աւել: Եթէ ցամաք տեղում կայծակը խփի մի անգամ, ջրին կը խփի չիտւն անգամ: Թափիր ջուրը: Ախ, սիրելիս, էլ չոցս կորեցի, թէ մենք ապրելու ենք: Ես կարծում եմ, որ... Ա՛ մարդ, էլի այդ ի՞նչ նոր բան է...

—Թո՛ւ, գրողը... ձեռքս կտաւ պատկերին...

—Աւրեմն, դու պատի մօտին ե՞ս: Այդպէ՛ս էլ անզուշութ ինն: Դու միթէ՞ չը գիտես, որ պատով կայծակը շատ հեշտ կ'անցնի... Հեռացի՛ր այդտեղից: Դեռ քիչ է մնացել, որ չիշոց էլ տաս: Ինչպէ՞ս ես զօրում այդպէս անբարոյական լինել մի այնպիսի ժամանակ, երբ ընտանիքդ ակներև վտանգի մէջ է: Ա՛ մա՛րդ, քեզ ասել էի, որ փտրադոչակ զցել տայիր անկողնիդ տակը:

—Մտացայ այդ բանը:

—Մուացա՛ր: Իսկ կեանքդ որ կորչի՞: Փտրադոչակ ունենալիք,

կարող էիր նորան սենեակի մէջ տեղում գետնին փռել և նորա վերան պառկել: Դէ եկ, մտի՛ր պահարանը, ինձ մօտ, դէ շուտ, քանի որ մի նոր օջին չես հանել մեր գլխին:

Ես փորձեցի մոնել պահարանը. բայց սա երկու մարդ միասին տեղաւորելու անկարող էր, այն էլ փակած դռներով և խեղդած օդով: Փոքր ինչ համբերեցի, բայց շուտով դուրս թռայ մէջիցը:

— Սիրելիս, ասաց կինս, մի բան դարձեալ պէտք է անենք քո ասպահովութեան համար: Մէկ տուր ինձ վառարանի վերայ դրած գերմանական գիրքը և մոմը. չէ՛, չէ՛, չէ, ինքզ մի վառիլ, բեր այստեղ, ես ինքս կը վառեմ: Այդ գրքումը կայծակի մասին տեղեկութիւններ կան և գրած են խրատներ...

Գիրքը առնելը թանգ նստեց. ձեռքս դիպաւ սկիհին (վազ) և միւս զիւրաբեկ իրերին և նոքա վաչր ընկան: Կինս առաւ գիրքը և ճրագը ու ինքը փակեց պահարանում:

— Ա՛ մարդ, այն ինչ ձայն է, որ լսում եմ.

— Աչինչ, կատուն ներս թռաւ:

— Կատուն: Վա՛յ մեզ: Բռնիր նորան և լացարանում

թաքցրու: Շուտ, սիրելիս, շուտ արա. կատուները ելեքարականութիւնով լիքն են: Օ՛հ, այս գիշերուայ տանջանքներից իմ մագերը, հաւատացնում եմ, սպիտակելու են:

Եթէ կնոջս հառաչները չը շարունակէին, ես գուցէ չընկնէի կատուի ետեից այնպիսի մութ ժամանակ. բայց ի՛նչ արած: Աթոսների և ուրիշ իրերի վերայով ցատկելով, թռչկոտելով, վերջապէս բռնեցի կատուին և կոխեցի կոմոդը, որտեղ չետոյ բանից երևաց, որ մի չորս հարիւր գոլլարի արժողութեան զարդաիրեր են կոտրատւած:

Ինձ սթափեցրեց կնոջս ձայնը.

— Ա՛ մարդ, այս գրքի մէջ գրած է, որ ամենաապահով դրութեան մէջ լինելու համար պէտք է սենեակի մէջ մի աթոռ դնել, որի ոտները կզգիացրած լինեն վատ հաղորդիչներով և կանգնել այդ աթոռի վերայ: Ուրեմն, դու պէտք է աթոռի ոտները դնես սպակեաց բաժակների վերայ: (Վզզ, տրախկ, շրախկ): Օ՛հ, լսում ե՞ս, տեսնում ե՞ս: Դէ շուտ արա, շուտ, քանի քեզ կայծակը չի սպանել:

Ես մի կերպ գտայ բաժակները և շարմարեցրի նորանց աթոռի

տոների տակ, ըստ որում բացի այդ շորսից՝ միւս բոլոր բաժակները շարդեցի իմ փորձերով: Եւ սկսեցի սպասել նոր կարգադրութիւններին:

—Ա՛յ, ա՛յ, այս գերմանական գրքում ասած է հետևեալը:

1) „Während eines Gewitters entferne man Metalle, wie zum B. Ringe, Uhren, Schlüssel, etc. von sich, und halte sich auch nicht an solchen Stellen auf, wo viele Metalle bei einander liegen, oder mit anderen Koerpern verbunden sind, wie an Herden, Oefen, Eisengittern und dgl.“ Հիմի սա ինչպէս պէտք է հասկանանք, արդեօ՞ք մեզ պէտք է մետաղներով շրջապատենք, թէ նորանց մեզանից հեռացնենք:

—Ես էլ լաւ չեմ հասկանում: Այդ տեղը փոքր ինչ մութ է: Իւրաքանչիւր գերմանական խորհուրդ փոքր ինչ մութն է լինում: Ես կարծում եմ, որ այս պարբերութիւնը կազմած է զլխաւորապէս տրական հոլովից, որին աւելացրած են՝ յամենայն դէպս՝ փոքր ինչ սեռականից և հայցականից: Ուստի ես կարծում եմ, որ այդ նախադասութիւնը ուզում է ասել՝ թէ պէտք է շրջապատենք մեզ մետաղներով:

—Հէնց այդպէս է լինելու: Այդպէս շատ խելացի է դուրս գալիս: Ի՞նչ լաւ գիտես, որ շանթարգելներ շինելու համար մետաղ էլ է դործ ածուում: Ի՞նչ զլխիդ քո այն զգակը, որ հրդէհի ժամանակ դնում ես, նա կարգին մետաղոտ է:

Ի՞նչ պէտք է անէի: Պտուեցի հրդէհագրակը և դրի զլխիս: Բրակը ծանր էր և անտանելի՝ այնպիսի տաք և խեղդող օդում, որ աննեակումն էր: Առանց այն էլ գիշերւայ զգեստն աւելի տաք էր, քան հարկաւոր էր:

—Ա՛ մարդ, այժմ յոյս ունեմ, որ զլուխդ բոլորովին ապահով դրութեան մէջ է: Բայց ասում եմ, թուրդ էլ հէնց կապես:

Այդ էլ կատարեցի:

Այժմ, սիրելի ամուսին, շարունակում էր կինս, պէտք է մի

1) Թարգմանութիւնը սա է. որոտմունքի ժամանակ պէտք է քեղահից հեռացնես մետաղները, մատանիները, ժամացույցը, բանալիքները և այլն. և ինքդ չը մնաս այնպիսի տեղերում, ուրտեղ շատ մետաղներ են կուտակւած, կամ ուրիշ մարմինների հետ միացրած են, ինչպէս են հնոցները, վառարանները, երկաթեայ ցանկատաւները և այլն.

բան զանես սոսներդ պաշտպանելու: Ի՞նչ կայ, սիրելիս, ժանիքները (շպորները) կպցրու կռչկիցդ:

Լուսթեամբ և անվրդով համբերութեամբ այդ էլ արի:

—Մէկ ականջ դի՛ր թէ զրքում էլի ինչ է գրած. ¹⁾ „Das Gewitter ist sehr gefaehrlich, weil die Glocke selbst, sowie der durch das Laeuten veranlasste Luftzug und die Hoehe des Thurmes den Blitz anziehen koennten“. Մի՞թէ՞ այնպէս չը պէտք է հասկանանք, թէ որոտմունքի ժամանակ զանգակ չը խփելը վտանգաւոր է:

—Այո՛, այդպէս է երևում, եթէ միայն դա եզակի ուղղականի ընդունելութեան անցեալ ժամանակն է. իմ հաշուով հէնց այդպէս է դուրս գալիս: Ինձ թւում է, որ այդ նախադասութեան միտքը սա է. զանգակատան բարձրութեան և Luftzug՝ի (օդի հոսանքի) բացակայութեան պատճառով շատ վտանգաւոր է (sehr gefaehrlich) զանգակ չը թակելը որոտմունքի ժամանակ և բացի այդ, զբարձրութեան շարժումը...

—Դէ լաւ, բաւական է. ա՛յ մա՛րդ, ժամանակ մի կորցնիլ գատարկախօսութիւնով: Թակիր մեր մեծ զանգակը. ահա պատշաճ բունն է, աջ կողմումը. դէ շուտ, սիրելիս, վտանգը անցնելու վերայ է: Սիրելիս, այժմ հաւատում եմ, որ մենք վերջապէս կարող ենք փրկել:

Մեր ամառուայ փոքրիկ տունը շինւած է մի շարք բլուրներից ամենաբարձրի վերայ՝ հովտի գլխին: Մեզ հարևան՝ զտնում են մի քանի տնակներ, որոնցից ամենամօռը երեք չորս հարիւր կանգուն (եարդ) մեզանից հեռու է:

Երբ ես, աթոռի վերայ բարձրանալով, սկսեցի զանգահարել հօթն ութ րոպէ շարունակ մեծ զանգակը, մէկ էլ տեսնենք, մեր լուսամտի փեղիերը զրսից ջանկարձ բացեցին, մի լապտեր մօտիկացալուսամտին և մի ձայն կոպիտ կերպով հարցրեց:

—Ի՞նչ է պատահել այստեղ:

²⁾ Որոտմունքը շատ վտանգաւոր է, որովհետեւ թէ զանգակը ինքը և թէ զանգահարութիւնից առաջացած օդի հոսանքը և զանգակատան բարձրութիւնը կարող են կալծակը քաշել:

Լուսամուտի մօտ ժողովւած էին տղամարդիկ, իսկ նոցա աչքերը զարմացմամբ չուած էին իմ զգեստի վերայ:

—Նա բաց թողի զանդակի չւանը, վրդովւած վայր իջաց աթոռից և ասացի:

—Բարեկամներ, ոչինչ չը կայ, մենք փոքր ինչ անհանգստացանք որոտմունքի պատճառով: Նա աշխատում էի կայծակը կանգնեցնել...

—Որոտմունք: Կայծա՞կ: Ի՞նչ էք ասում պարոն Ուիլեամս, Տօ՛ խելագարեղ չէ՞ք: Գուրսը հրաշալի ատողազարդ գիշեր է և ոչ մի որոտմունք չէ եղիլ:

Նա նայեցի լուսամուտից և այնպէս զարմացած էի, որ մի բոպէ լեզուս սառեց բերանումս: Վերջապէս՝ խելքս հաւաքելով ասացի.

—Բան չեմ հասկանում ախր: Մենք լուսամուտի փեղկերի միջով տեսնում էինք կայծակը և լսում էինք զոռոցը:

Լուսամուտի մօտ կանգնած մարդիկը ջանկարծ մի ծիծաղ սկսեցին, մի ծիծաղ, որից նոքա կոտորում էին, գետին էին թափում. իսկ երկուսը կողքի ծակոցից մինչև անգամ մեռան: Կենդանի մնացածներին մէկը նկատեց:

—Ափսոս, որ ձեր խելքին մէկ չեկաւ, որ փեղկերը բանաչիք և նայէիք այն բարձր բլրի զլուսը: Սցն ինչ որ դուք լսել էք—նա թնդանօթների ձայն է եղել. իսկ ինչ որ տեսել էք—նորա կրակը: Բանն այն է, որ գիշերուայ կէսին հեռագիր եկաւ, որ Հարթիլդը նախադաս է ընտրւած և ահա ինչօ՛ւ. թնդանօթներ են դատարկում:

Պատմողը, այսինքն պարոն Ուիլեամսը, վերջացրեց իւր խօսքը այսպէս.

—Այո՛, պարոն Տուէն, ինչպէս ասացի, կայծակից պաշապանւելու կանոնները այնքան կատարեալ են և բազմաթիւ, որ ես չեմ կարողանում հասկանալ թէ ինչպէս են դեռ գտնւում այնպիսի խելառներ, որ իրանց սպանել են տալիս կայծակից:

Այս խօսքերից յետոյ ձանապարհորդակիցս վեր առաւ իւր ուղեւորը ու հովանեակը և դուրս եկաւ երկաթուղու կառքից, որովհետեւ հասանք նորա քաղաքի կայարանին:

ԲԱՐԻ՝ ՃԱՆԱՊԱՐՀ

ԱՐՇԱԼՈՅՍ ՄԻԻԹԱՐԵԱՆԻ

Անցնում է ուրախ երանն այլ աշխարհ.
Ա՛խ, երանք՝ ձեզ, ազատ թռչուններ,
Լայն և ընդարձակ օդում ձեզ համար
Չը կան ոչ սահման և ոչ արգելքներ:
Բարի՛ ճանապարհ, շուտով այլ երկրում,
Ուր նոր են բացում ծառեր ու ծաղիկ,
Նոր բոյն կը շինէք կանաչ անտառում
Ու կը մոռանաք դուք հին հայրենիք:

Անցնում է այլ խումբ... վաստակած, անձայն
Հաղիւ փոխում է նա դանդաղ քայլեր,
Նորա առաջին կանգնում է սահմանն,
Կանգնում են ձիւնոտ սարեր ու ձորեր.
Եւ նա իւր ծերուկ հին հայրենիքում
Չի գրտնիլ մի ծառ, մի թուփ կանաչով,
Ու բոյն կը հիւսէ, գուցէ սառն հողում,
Բայց նա էլ, նա էլ գընայ թող բարով...

ԶՄԻՒՆԻԱՅԻՑ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼ

ՓՇՐԱՆՔ ՌԻԶԵԻՈՐԻ ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Յ. ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆԻ

Առաջին անգամը չէր, որ ես Տաճկաստանից դէպի Կովկաս էի ճանապարհորդում: Սորանից երկու և կէս տարի առաջ ես Սերոպալից Բալկանեան թերակղզու վերայով հայրենիք վերադարձալ: Այս անգամ, երբ ես հայրենիք այցելութիւն էի գնում, ամենեւին զիտաւորութիւն չ'ունէի ստացած տպաւորութիւններս հրատարակելու, սակայն դարձեալ իմ գրասեղանի առաջ նստելով՝ նրանք շարան-շարան լիչողութեանս մէջ եկան՝ կարծես միմեանց հետ համեմատել ու չափել կամենալով: Միւս կողմից ուղեորութեանս միջոցին ես տեսալ որ իմ տպաւորութիւններին համեմատական նկարազիրը հետաքրքրութեամբ և մասամբ զարմացմամբ լսում է. ուստի և աւելորդ չը համարեցի ստացածս տպաւորութիւններից մի քանինը գրի անցնել:

Այս անգամ ուղեորութեանս առաջին կաշարանը չը գիտեմ եւրոպացան թէ ասիական ասեմ, Չմիւռնիա քաղաքն էր: Այն անգամ տաճկական քաղաքներից իմ ստացածս տպաւորութիւնները թուուցիկ էին, այս անգամ այնքան հիմնաւոր, որքան հնարաւոր է զպրոցական ասպարիլում գործողին մի տարում աչսպիսի մի քաղաքի կեանքն ուսումնասիրել:

Ծովափնեայ գիւրքը բաւականին գեղեցիկ է. Չմիւռնիան կարող էր գեղեցկագոյն տպաւորութիւն թողնել ծովից, եթէ նորա լաւ շինութիւնները տափարակի վերայ չը լինէին, մինչդեռ այժմ հեռուից միայն տաճկական թաղերն են, որ աչքի են ընկնում: Աւելի գեղեցիկ են շրջակայ բլուրների վերայ սփռած արուարձաներն ու գիւղերը, որոնք հետդհետէ տարածւելով՝ միացել են և միանում են բուն քաղաքի հետ: Այս գիւղերն ընդհանրապէս աւելի գեղեցիկ են, որովհետեւ նոր ժամանակներում կարողատէր մարդկանց ձեռքով շինւած լինելով՝ եւրոպական կիտաքաղաքների կերպարանք են կրում: Ինչպէս Սերոպալի կենտրոններում՝ Նոյնպէս էլ

Զմբուռնիալում, Անաստլիալի այս ամենավաճառաչան քաղաքում, զբամա-
 գլուխն հեաղհեաէ կենտրոնանալով անհատների և ընկերութիւնների ձեռ-
 քերում՝ չքաւորութիւնը հեաղհեաէ տարածուած է հասարակ գոտի մէջ, որ
 քանի դնում՝ աւելի և աւելի ճնշում է տնտեսական սպաքարի տակ և
 անկարող լինում նաև իւր սեպհական բնակարանն ունենալու: Կերողա-
 կան մեծ քաղաքներում բանւորի, մշակի, արհեստաւորի, աշխատաւորի
 բնակարաններն են մութ և խոնաւ նկուղներն, իսկ Զմբուռնիալում խոնկն
 ու աւերականման տնակները: Բայց թողենք դեռ այս խեղճերին: Այս
 քաղաքի պարծանքն է հուշակաւոր Քարափը, որ մի սալալատակ փողոց է:
 Նորա դարդն է համարեա ծալրէ ի ծալր բազմաթիւ զեղեցիկ սրճարան-
 ների շարքը, որ տեղ առ տեղ ընդհատուած է զեղեցիկ տներով ու երբեմն
 մտրմարոնեալ ապարաններով: Հիանալի է այս քարափը, երբ նա ամա-
 րալին գիշերները ելեքարականութեամբ լուսաւորուած է և հիւրընկալում է
 հաղարաւոր չաճախորդների նստոտած կամ շարժուն բազմագոյն խմբերը:
 Իսկ երբ բացօդեալ թատերական ներկայացումներ են լինում այս քարա-
 փում, մարդս առ ժամանակ մուսանում է որ ժամանակակից Զմբուռնիա-
 լումն է, ալ երեակալում է իրան հելլենական աշխարհը տեղափոխ-
 ւած: Այս տպաւորութեան տակ դուք շարունակում էք ձեր ճանապարհը
 գեպի քաղաք, անցնում էք մի քանի գեղեցիկ փողոցներից և վետո՛
 մտնում էք քաղաքի աջն մասը, որ ոչ եւրոպական է և ոչ ասիական:
 Անցնում էք մի քանի նեղլիկ և սլորապատու փողոցներ, որոնք սակազն
 կեղատտ չեն և երբեմն մինչև անգամ սալալատակ և անա հասնում էք հի-
 նաւուրց «հայնոցը», որ վերջին հրդեհից վետո՛ վերանորոգւելալ՝ կանոնա-
 ւոր քառանկիւնի թաղերի է վերածւել: Քարափներից և նորա դուզահե-
 ոտկան մի երկուսից վետո՛ հայնոցը, կարելի է ասել, չալանի տեղն է բըռ-
 նում իւր գեղեցիկութեամբ, եթէ միայն այս նեղլիկ փողոցներին կարելի
 լինէր զեղեցիկ բառը վերադրել: Նրանք աջնքան նեղ են, որ երկու կառք
 պտարութեամբ են գիմադէմ անցնում, աջնպէս որ զեղեցիկ տներն հազիւ
 կը կարողանալին իրանց արժանաւորութիւններն ի յոյց հանել: Նրեի այս
 պատճառով է, որ Զմբուռնիային իւր տան արտաքինի վերալ շատ ուշա-
 դրութիւն չի դարձնում: Նրանք արտաքուստ աւելի քան պարզ են, միակ
 դարդն է՝ նրանց փոքրիկ պատշգամբները (նման սլուսական «տղաններին»),
 որ մանաւանդ նստակեաց հայրենիների չարմարաւոր գիտանոցներն են: Այն,
 այս հայրենիները համեմատելով դրացի սլլ կանոնց հետ՝ ամենից շատ
 նստակեացն են և կարծեմ՝ ամենալատաաւողջները, որի միակ պատճառը
 չէ այս երեւութը: Եթէ ուղիորը մի քիչ միակողմանի գիտող լինէր, նա կը
 կարծէր թէ Զմբուռնիալի հալ կիւնն ու օրիորդը միայն նստել ու բամբասել
 գիտեն, բայց ոչ, այլ շատ խիտտ կը լինէր, մենք պիտի տեսնենք, որ նրանք
 ունին նաև արժանաւորութիւններ ու խօսակցութեանն ալ նիւթեր և չը
 պիտի մուսանք նրանց հետ լիչեղ և ալ պակասութիւնները, ի հարկէ

միայն զգուշաւորութեամբ և խնայողութեամբ, որովհետև Պոլսում հրատարակած ձեռնարկի մէկը գրում է. «երբ ուզէ ոք կանանց վերայ գրել, պարտի ցօղոյ մէջ թաթախել իւր գրիչն և եօթներփեան աղեղին գունովք ներկել իւր սճն»¹⁾։

Գառնաք կրկին հաշնոցի նկարագրութեանը։ Բնութեանը հակառակ չը գործելու համար՝ առարկաների նկարագրութեանը կցենք նաև շարժական կեանքը։ Նաև ընտանեկան կեանքի պատկերն աչտեղ աւելի երեկոներին է հետաքրքրական։ Գոներից հետաքրքիր ուղիորը ներս է նաչում և ինչ է տեսնում. փոխանակ սովորական բակերի՝ ընդարձակ մարմարոնեալ շատակներով սրահներ. սրանք զմիւռնիացու ընդունարաններն են և միանգամայն ամբարալին նստաւալերը։ Այս ընդունարանի պատերը զարդարած են գեղեցիկ հալելներով ու պատկերներով և չորս կողմը կահաւորւած գահաւորակներով, բաղկաթոռներով, ծաղիկներով և այլն։ Այս տները ընդունարանի շտապ երևում են նաև արևելեան բնութեան չափով ճոխ պարտէզներ ունիներով, նարնջիներով, և ալտաքօղեալ գեղեցիկ ծառերով, որոնց շատերը մշտադալար են։ Այս տեսարաններն աւելի քան մի ալ բան լիչեցնում են ինչ հելլենական կեանքը իւր կարգ ու սարքով։ Ասում են մինչև անդամ Աթէնքում ալ ևս չեն տեսնում այն երեւոյթները, մինչդեռ այնքան ակենացիք, որոնք չափազանց սիրում են իրանց ինչ գրականութիւններն ու հնութիւնները, աւելի պէտք է պահպանած լինէին այն չքնաղ սովորութիւնները։ Զմիւռնեացի որ ազգութեան թաղերից ուղում էք անցէք, երեկոյեան ժամանակ, ձեր աչքին ակամայ կ'ընկնեն նրանց բնակիչների ընտանեկան կեանքի բաղմաթիւ հետաքրքրաշարժ պատկերները. միայն բացառութիւն են կազմում տաճիկները, որոնց աները արդէն հեշտութեամբ կարելի է ձանաչել պատուհանների խիտ փայտեալ վանդակներից, որոնք, ընդհակառակը, միայն ներսից դուրս տեսնելն են թույլ տալիս Քրիստոնեալ ազգութիւնների և հրէաների բակերում (ընդունարաններում) դուր կը տեսնեք ամբողջ ընտանիքը նստաւած եւրոպական ճաշակի աթոռների, բաղկաթոռների վերայ, որոնց շատը նաև օրօրելու համար են շինած։ Կէ, ճշմարիտ, այս մարդիկը, ընթերցանութեան շատ գլուխ չունենալով, այնքան օրօրում ու խօսում են, մինչև որ կը թմրին ու քնանալու կ'երթան։ Ենչպէս երևում է, գրել-կարդալը թէ հալերի և թէ օտար աղբերի մէջ աւելի քան մի ալ տաճկական քաղաքում տարածւած է, սակայն սրանց ուսումնարաններն ու կեանքը մեծ մասամբ վիպասէր և լրագրասէր սերունդ են պատրաստում։ Սակայն չը մոռանանք որ այս քաղաքում եղել են և կան լաւ ճաշակի տէր զարգացած անձնատուրութիւններ, որոնք պահպանել են լրագրութիւն և բաղմաթիւ թարգմա-

¹⁾ Եւ դիտես ընթերցող, որքան այսպիսի դանձեր են պարունակում այդ մանկավարժների դասագրքերը...

նութիւններ արել: Ահոսս որ վերջիններս միայն վիպասանական գրականութիւնն են տեսել և երբեմն բաներ թարգմանել որ աւելնորդ են: Զմիւռնիացի հալը առանձին հաճութեամբ է կարդում նաև կուսակցական գրածքները, որոնց ոչ տպողն է հաւատում և ոչ ընթերցողը: Այս քաղաքներում ոչ միայն բարձր կրթութիւն ստացած հազ կանայք և օրիորդներ չը կան, այլ և երիտասարդները հազազրուտ են: Միայն երևում են մի շանի իրաւաբաններ ու բժիշկներ Պոլսում կամ Պարիզում ուսած: Այն գիտութիւնները, որոնք անմիջական կապ չ'ունին վաճառականութեան հետ, համարեա թէ անմիտ բաներ են երևում Զմիւռնիացի հային: Նրբ երբեմն պատմում եմ, որ մենք ոչ միայն բազմաթիւ ու բազմապիսի ուսանողներ ունենք, այլ և ուսանողուհիներ, սարաֆի զարմացմանը չափ չէ լինում. «մթթէ հնարաւոր է, որ օրիորդմը օտար աշխարհ երթաչ առանց ծնողաց»: Այո, գնացել են և գնում են աւելի ու աւելի, որովհետև ծնողներն ու ընտանիքները նրանց առհասարակ սուրբ և ազնիւ հայրենիք վերադարձած են տեսնում: Բայց զգուշանաք չափազանցութիւններէ, որպէսզի միակողմանի զաղափար չը տանք մեր կովկասեցի հազ օրիորդների մասին: Աղալիսի աստիճանների համնում են իսկապէս համեմատաբար քչերը, թէև բարձր կրթութեան ձգտողները բազմաթիւ են: Հազկական ուսումնարաններում տարիներ առաջ, երբ հազ վարժարաններն աւելի զարգացած էին սաներն էլ ընթերցասէր և առհասարակ ազնիւ ճաշակ ունէին, թէև շատերն էլ մոռանում էին թէ ուսում և թէ ընթերցանութիւն: Այժմ երեւոյող օրիորդներն ուսաց ուսումնարաններում են, որոնց քչերը քիչ թէ շատ կանոնաւոր հայերէն գիտեն: Զմիւռնիացիք ընդհանրապէս խօսում են հայերէն որ շատ զնահատելի է, մանաւանդ որ հայերն աջտեղի ազգաբնակութեան շատ աննշան մասն են կազմում, մինչդեռ պոլսեցիք շատ անգամ հեռու չեն օտարախօսութիւնից: Զմիւռնիացի հայերէն շատերը, որոնք նորաձեւութեան այնքան հետամուտ են, այլ լեզու չէ, բայց ֆրանսերէն կարծեմ կը խօսէին, և թէ երես հանելու չափ գիտենային: Խօսքը պատահամբ օրիորդաց վերաչ բացեաց, լեզուի վերաբերմամբ երկու կողմի այս մարդիկն էլ նոյն դիրքն են բռնած, միայն կովկասեան և նոյն իսկ Թիֆլիսի այդ մարդիկ աւելի աւելի բռնող են մալրենի լեզուի և այս կողմից աւելի աչքի են ընկնում և իրանց տիկիւններէ ու աղջիկներէից շատ տարբերում, վասն զի հակառակ հազ կնոջ սովորութեան՝ սրանք սիրում են մի երկու լեզուով կոտրատել, և թէ մինչև անգամ մէկի կամ միւսի մէջ վարժ էլ չը լինէին: Գալով Զմիւռնիացիները բարբառին, երբ խօսում են իրանց թրքախառն լեզուով՝ ինձ լիչեցնում են մեր այլ հեռաւոր ազգակիցները, նոր նախիջևանցիները, թէև զմիւռնիացիների լեզուն աւելի պարզ ու մաքուր է ¹⁾:

¹⁾ Իերենք այստեղ մի քանի օրինակներ, որոնք առհասարակ լուում են: Աւելի աչքի են ընկնում ազգականութեան վերաբերեալ տաճկերէն խօսքերը: Այս օրէ

Գեղարևատներին միայն դաշնամուրն է, որ գրաւել է նաև մեր զմիւռնիացիների համարեա բացառապէս միայն դասերց ուշադրութիւնը, վասն զի հիմա աշխարհումս ամենուրեք դաշնամուր ամէլ օրիորդին ամենաընտիր փալլ տուղ զարդերից մէկն է. համաճարակ հիւանդութիւն կամ նորաձեւութիւն՝ ինչ ուղումէք ասացէք, երկուան էլ ընդունելի է, ընդունակութիւն կամ նիւթական՝ կարողութիւն կալ թէ չը կալ, միևնոյնն է, պէտք է ածել...

Ինչ վերաբերում է երգեցողութեանը, ալդ հօ 'ի սկզբանն է անտի աւելորդ բան է համարւած նաև մեր երկսեռ վարժարանների համար. այսպիսի հանգամանքներում աւելնորդ է ասել, որ անհնարին է կովկասեան օրիորդների և երիտասարդների պէս մասնագէտ երգիչներ ունենալ, որոնք աւելի և աւելի գրաւում են եւրոպական երգեցողութեան արւեստանոցների ուշադրութիւնը: Այս գեղարևատի ջառաջադիմութեանը կովկասում աւելի նպաստամատոց են եղել տեղական հանգամանքները. բոլոր հալ ուսումնարաններում ձայնադրական երգեցողութիւնը պարտադիր սահմանելուց յետո՛ւ՝ աւելի աչքի ընկան մեր երգիչները, որոնք միւս կողմից աւելի դիւրութիւն ունէին Ռուսիայի մայրաքաղաքներում ուսանելու և Եւրոպայում կատարելագործւելու:

Նաև թատերական գործը բացակայ է Ջմիւռնիայի հայերի կեանքից. 'ի հարկէ խօսքը մշտական բեմի մասին չէ, զի այս գաղթական հայերն այնքան սակաւաթիւ են (8000), որ անհնարին էր ալդպէս բան սպասելը: Այստեղ եղել է մի օպերայի թատրոն, ուր գլխաւորապէս ֆրանսերէն են եղել ներկայացումները. այլուրուց յետո՛ւ այս բազմաբարբառ հասարակութեան մէջ ալ իս համաձայնութիւն չէ եղել նորը կառուցանելու: Բայց մենք օտար լինելով՝ կարող էինք մտածել որ այս գաղթական հայերը, որոնք արտաքուստ եւրոպական ճաշակով են ապրում, անշուշտ պէտք է ունենան իրանց թատերասիրաց խումբը. օ՛հ, ալդ թէն էք ասում, կը պատասխանեն մեզ զարմացած զմիւռնիացիք, միթէ՛ ալդ մտածելու բան է, որ հալ երիտասարդն օրիորդի հետ բեմ ելնեն և ներկայացնեն: Եւ վրաւի, եթէ մի օրիորդ այս քաջութիւն անէր, այնուհետ լաւիտեանս պէտք է են:

Նակննելի բառերից շատերը հայերէնը, ի հարկէ՛ պիտեն, բայց չեն գործածում: «Առգեին սեւթն աղւոր եօջաս կէչէին»: «Լեբն մէկ թարաֆը արևսըդ է»: Հայէ տիկէներուն տունակաները: «Ինչ տոր է, ուխտի՞ էք»: «Ազկէկ զաւուսներ ու զարվուզներ»: Իմ թային (մօրեղբայր) պալտէզին (քենի) տեյզէն (մօրաքրոջ որդի): ամ-ճայիս (հօրեղբայր), հալան (հօրաքոյր):

1) Բայց է՞նչ են այս տեսակները, համեմատելով այն քարոզի հետ որ ես լսեցի երկու օրս Մանիսայում պատարագից քահանայի բերանից, որ սուրբ խաչի տօնի առթիւս խօսեց. «Երեւի Ասուր խաչն խօրթուսի մը—բեարակ օլտուն»: Արթատի գիւն հաստախանէյըն հանդերձ օլաճակ, միւշդեւո ինչպէս տեղեկացայ մանիսացիք լաւ հայախօսեն:

թարիւէր հասարակաց կարծեաց կամ աւելի ուղիղ է ասել՝ անվերջ բամբասանքներին: Երկար ժամանակ այս հալ գաղթականների կեանքը չվերլուծ օտար տարրերի հետ՝ մեզ բոլորովին անհասկանալի երևութներ է ներկայացնում: Երբ մի կողմից տեսնում ես սրանց պարահանդէսներն ու դիմականանդէսները եւրոպական վերջին կատարելագործութեամբ և պարագաներով, միւս կողմից այն անբացատրելի դիրքը գէպի բեմը, եթէ օտար ես՝ ապշած կը մնաս: Չը նախելով, որ ինչպէս ասում են և երևում է, հազերը, բարոյական տեսակետից, բոլոր տեղական ազգութիւններից բարձր են, (բացի տաճիկներից, որոնց ընտանեկան կեանքն այլ պայմաններ ունի), այնուամենայնիւ նոյն իսկ հալ երիտասարդների խօսքով կան ոչ սակաւ դատապարտելի և անփտահելի անձնաւորութիւններ: Թէև այս կողմերը թատերական զործ չը կալ, այնուամենայնիւ դարձողական ներկայացումներին 9—10 ամեալ փոքրիկ գերասաններն ու գերասահունները հիացնում են մարդու, մանաւանդ վերջինները, որոնք կարծես մի մի փոքրագիր Աստղիկներ, Սիրանուշներ ու Գարագաշներ են. ես ոչ կովկասում, ոչ Ռուսաստանում և ոչ Գերմանիայում եմ տեսել այսպիսի բան. նոյն իսկ մանկական պարտէզում այնպիսի մանկիկներ կան, որոնց բնական բազմակողմանի ընդունակութիւնների մասին դաղափար տալու համար՝ հարկաւոր էր ամբողջ թատերական յննադատութիւններ գրել, որ նոյն իսկ հոգեբանական տեսակետից վերին աստիճանի հետաքրքրաշարժ կարող էր լինել: Որքան մեծ էր լինէր թատերասիրաց խմբի աջողութիւնը այս քաղաքում, որի թէ բարոյական ազդեցութիւնը և թէ նրաթակաւնը շատ կարեւոր են: Մի այսպիսի քաղաքում անհրաժեշտ է դաղափարի համար կուտը կովկասեցի հալուհին:

Եթէ գմբաւիացի հալերը թատրոն չ'ունին, սորա փոխարէն նոքա ի վաղուց անտի ունին բաղմամբիւ բարեկրօնական և կրթական ընկերութիւններ, թէ կանանց և թէ արանց, ընկերութիւններ, սրտնք ոչ թէ մեր կովկասեան շատ ընկերութիւնների պէս՝ անունով գոյութիւն ունին. նրանք դործում են բաւականին և արդիւնք են ցոյց տալիս: Հասարակական կեանքում չը կալ համարեա կարիք, որի համար զատ ընկերութիւն կալ մեւծ չը լինէր. հիւանդանոց, չքաւորներին դեղ բաժանող և բժիշկ հասուցանող ընկերութիւն, հոգատար ընկերութիւն կանանց (չքաւոր աշակիր տուհիներին խնամող), կրթասէր ընկերութիւն՝ օրիորդների մտնկական պարտէզ դեկաւարող, ընկերութիւններ չքաւոր տղաներ և աղջիկներ մանկական պարտէզում որդեգրող, ընթերցատուն, ընթերցասիրաց ընկերութիւն և այլն:

Գալով Զմիւռնիայի հալոց պարսպմունքներին՝ նրանք գլխաւորապէս վաճառական են, ալսինքն՝ այս կողմից են աւելի աչքի ընկնում. կան և ոչ սակաւ արհեստաւորներ, սակալն սրանից վար պարսպմունքներից այստեղի հալը խոյս է տալիս. դժւարին և ստորնակարգ պարսպմունքներին մէջ

տեսնում ես աւելի հրէաներին, լոյճներին և տաճիկներին: Զարմանալի է, որ հրէաները կ'երոպագում և այլ երկիրներում աւելի հեշտ միջոցներ են դտել ապրելու, իսկ իրանց հայրենիքին մօտ երկիրներում բազմաթիւ ստաբուբիկ չըջողներ ունին, որոնք չեն խորշում խողանակները ձեռքերին փողոցէ փողոց վազ տալ, սրա նրա առաջը ծունր դնել՝ կօշիկներ սրբելու և տաս փարազ վաստակելու համար: Ինչպէս երևում է, այդ աշխարհահռչակ խորամանկ ժողովրդին դժւար է հալերի և լոյճների մօտ դաս առած եւրոպացիների և այդ երկու ազգութիւնների հետ մրցելը: Թէև Զմիւռնիայում նաև այլ ազգութիւններ մեծ դրամատէրեր ունին, սակալն հալերը իրանց փոքրաթուութեանը նախելով՝ առաջինն են, զի հինգ հաս $\frac{1}{2}$ —1 միլիոն տակի համարող ներկայացուցիչներ ունին: Այն և շատ «միջակ» հարուստներ, որոնք Ափլասում գլխաւորի անունը կարող էին կրել: Աւերջին շրջաններում, որքան պոլսի հալ դրամատէրերը տեղի տւին լոյճներին, այնքան դմիւռնիացի հալերն առաջացան: Այս կողմից, ինչպէս երևում է, տեղացի լոյճներն առանց նախանձի չեն կարող նախել հալերի վերաջ: Իրողութիւնն այն է, որ այս քաղաքի հալը կամ վերին աստիճանի հարուստ է կամ բարրովին քաղցած. ի հարկէ կան նաև բազմաթիւ միջին վիճակի ընտանիքներ, սակալն այդ երկու ծայրաւիզութիւններն աստ սուաւել քան ո և է մի այլ տեղ աչքի է ընկնում, զի այս գաղթական հալերի չքաւորը չափազանց վեհանձն է. նա աւելի շուտ կը համաձայնի քաղցած մնալ, քան ստորնակարգ դրազմուք ունենալ: Խօսելով այս կարգի մարդկանց վերաջ, չը մոռանանք պատմական «Մորթաքի» կոչւած խանը, ուր հաւաքւած են բազմաթիւ աղքատ հալ ընտանիքներ ու անհատներ, որոնց ուրիշց գալն ու ինչ անելն Աստուած դիտէ: Այլ մարդ է Հալաստանից եկած մշակը, որի ճակատագիրն է ամենուրեք աշխատութեան ամենածանրը՝ արիւն քրտինք մտնիլը, կարծես հալ մշակի համար ստեղծւած լինէր այս խօսքը թէ՛ «քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քո»:

Պոլսեցիների հետ համեմատելով՝ ասում են որ դմիւռնիացիք ընդհանրանրապէս աւելի ծանրաբարոյ են, բայց և քիչ սղեւորւող: Ես անձամբ պոլսեցիներից դեռ շատ քչերի հետ մօտ ծանօթանալու և գործ ունենալու դէպք եմ ունեցել, ուստի չեմ կարող այս մասին մի դրական կարծիք չալանել, սակալն կովկասական և եւրոպական կեանք վարած մարդու համար՝ ընդհանրապէս Զմիւռնիայի կեանքը շատ պազ կը գալ, փասն զի նրանց կեանքը ոչ այս է և ոչ այն: Հալիական կեանքի նիստ ու կացի և շնորհալի լարաբերութիւնների սովորութիւնները կապկապած են եւրոպական կեղծ «էթիքէներով», իսկ եւրոպականները ասիական սովորութիւններով (աղէթներով) և բամբասանքներով: Այս մասին «հասարակաց կարծեաց» վերին աստիճանի անսպասելի և ծաղրալի հակատութիւններ կան թէ հանդէսներում երկսեռ հանդիսականների նստելու եղանակի վերաբերմամբ, փողոցում բարե տալու, սերենաղների և այլն և այլն մասին: Ամեն

բան չափիփած, իւրաքանչիւր քաղ կապկապած է այս հայերի կեանքում: Ինչպէս իւրաքանչիւր երևութ, շնորհակէս և այս ունի ի հարկէ իւր բացատրութիւնները. ընտանեկան նւիրական սրբութիւնների պահպանողական հալը, չըջապատուած լինելով օտար տարրերով՝ դարերի ընթացքում կազմակերպել է մի կեանքի եղանակ, որ պէտք է մրցել կարիւնար թէ եւրոպական և թէ չունական ազդեցութիւնների հետ, բայց և այնպէս պէտք է տեսնելին այն համետ ընտանիքները, որ այդ ամբողջի պարիսպներն արդէն տեղ տեղ ամբարն թուլացել են, որ ներս են թողնում «թշնամիներին»: Երբ հալը իւր ընտանեկան պարիսպների մէջ «թշնամու» տեսաւ, այն ժամանակ սարսափահար եղաւ և շառաջացան վերալիչեալ բազմապիսի հակասական կապերը: Սակայն շատ ուրախալի է, որ այս մի բուռն հալ գաղթականութեան մեծամասնութիւնը պահպանել է ընտանեկան կեանքի հաղկական տիպարը:

Այլ են Կովկասեան հայերի հասարակական և ընտանեկան կեանքի զարգացման աստիճանները: Այնտեղ հայերը կենտրոններ կազմելով ոչ թէ չուսահատական, այլ բնական կռիւ են մղում եւրոպական կեանքի սովորութիւնների դէմ: Թէև մի որ և է գաւառական քաղաք Կովկասում ընդհանրապէս աւելի չէ կամ քիչ է զարգացած Զմիւռնիայի հալերից, սակայն այնտեղ կեանքն այնպէս կապկապած չէ, հալ պատուար օրիորդն ու կիներ համարձակում է, երբ բնական սուրբ գործը պահանջում է, մինչև անգամ թ ա փ ա ու ա շ ր ջ ի կ դ և ր ա ս ան ն եր ի հետ թատերական բեմ ելնել (լսեցէք սիլ զմիւռնիացիք): Ինչո՞ւ, որովհետև հասարակութիւնը վտտահ է: Այնտեղ հալ օրիորդը կարող է երիտասարդին ոչ միայն ազատ բարեկէլ ալ և միտին նստել, չըջել հասարակական զբոսալպերում...: Ի՞նչ արժէ Կովկասեցու այն պատուական «Է.Փը», որի մասին զմիւռնիացիին ոչ միայն զաղափար չունի, այլ և երազել չէ կարող, քանի որ սրանց հարսանիքներն անգամ ընդհանրապէս մի մի հասարակ ալցելութեան («վիզիթու») ձև ունին: (պարահանդէտը վերապահեալ է միայն ամենածանր հարուստներին): Ի՞նչ արժէն այն հիանալի Կովկասեան քէֆերը, որոնք լինում են ընտանեկան, ընկերական կամ հասարակական ուրախութիւնների առթիւ. քանի քանի սառնացած սրտեր աստ տաքանում են, քանի քանի գոցեալ սրտեր բացուում, որքան քեհացած կամ խռոված զգացմունքների զլլթական բաժակի հնչումով մեռնում: Իսկ այն մեղմ ու հանդարտ և երբեմն սրտընտոտ պարերը, այն ժողովրդական պարերգերը, երգերը, տաղերը, որոնք հազի ընտանեկան կեանքի բոլոր պատկերները մարդուս աչքի առաջն են բերում և հիացնում նաև եւրոպացիներին, ձեր պէտք է գտնել: Մինչև անգամ ուսմներն ու վրացիները չեն կարող անտարբերութեամբ վերաբերել մեր հայկական պարերին, այս չքնաղ ու խորհրդաւոր զարծութեանը նրանցից շատերն ասանձին իմն հաճութեամբ են մասնակցում:

Զարմանալի է մարդկային բնաւորութիւնը. որքան հետ ու՛ այնքան

սիրելի են դառնում նրան առարկաներ ու անձնաւորութիւններ: Ինչպէս միշտ, այնպէս էլ վերջին ուղևորութեան ժամանակ ես կովկասում արամազիր էի շատ անգամ զմիւռնիացիների որոշ արժանաւորութիւնները նկարագրելով՝ մեր կովկասեցիներից աւելի բարձր դասել և Ձմիւռնիայում կովկասեցիների վերաբերմամբ միևնոյն դիրքը բռնել: Այժմ, երբ այս սողերը գրում եմ, իւրաքանչիւր քաջափոխում կանգ եմ առնում և քննադատում գրածներս, որպէսզի իմ ընթերցողներին թիւր և միակողմանի գաղափար չը տամ՝ մեր գաղթական և ընդի հայրենակիցների հետ համեմատելով: Եւ ահա տեսնում եմ, որ խօսելով Ձմիւռնիայի երիտասարդների մասին, մոռացել եմ ասել, որ նրանց մէջ կան լուրջ և մտածող խումբեր, որոնք թէ նիւթական և թէ մտաւոր ուժեր են ներկայացնում: Այս երիտասարդներից աւելի ծանրակշիռներն աւելի հասակաւորների հետ ընտրել են ազգային այլ և այլ վարչութիւնների անդամներ և որքան իրանց պատրաստութիւնը ներքէ:

Վերջին տարիները կուսակցական ուղին բաժանել է այս գործող ուղիքը և այս բաժանումն աչքսն չափազանց է, որ մինչև անգամ ազդեցութիւն է ունենում ընտանեկան շարաբերութիւնների վերայ: Ինչ այս քաղաքում փոքր դիրքով է պատահում, այն Մանիսայում ծայրաւերութեան է հասնում: Մի պաշտօնական անձնաւորութիւն, որ գնացել էր երկու կուսակցութիւններին հաշտեցնելու զիտաւորութեամբ, պատմում էր, որ մանիսացիք գանգատում էին, թէ այդ ուղին աչքսն է տարածել ընտանիքների մէջ, որ նոյն իսկ կնոջ և մարդու մէջ սառնութեան պատճառ է եղած:

Ձմիւռնիացոց կենտակահերուցիների նկարագրերը շատ թերի կը մնայ եթէ չը լինէմ այստեղ, որ այս քաղաքում մինչդեռ շունական և այլ թաղերը մանուկներով լեցուն են, հաշիական փողոցները կարծես սուրակ են: Ինչո՞ւ, որովհետև քեզ կը պատասխանէ երիտասարդը՝ մեր օրիորդները ստաւել քան այլ դրացիները չուայ են: Բացի սրտնից մեր կեանքն և այլ պահանջներ ունենալով՝ ընտանեկան վիճակը շատ ծանրացել է, 35—45 տարեկան երկուսու ամուսնացողները բացառութիւն կազմողները չեն: Բայց կան նաև բազմաթիւ ամուրի երիտասարդներ, որոնք լաւ սպահոված են: Եթէ գաւառներից անդադար հոսանք չը գար, հաշ գաղթականութիւնն այստեղ շուտ կը վերջանար: Չը խօսելով վերոյիշեալ հանգամանքներից առաջացած զանազան ծանրակշիռ հետեանքների մասին, լինե՞ք միայն, որ այս գաղթական հայերը, այսպէս սակաւանալով, այսօր, շունական Նշանաւոր մարդարձակութեան առաջ, 8000 ողորմելի թիւն են ներկայացնում: Ո՞վ կը հաւատայ, մինչդեռ հեռու տեղեր Ձմիւռնիայից այնպէս ձաչն է գալիս, ասում են ինձ շատեր, որ կարծես թէ 150,000 հաշ պարունակող հաշիական քաղաք լինէր:

Նորաձևութեան անադարտն ճնշումն զղում է այս քաղաքի խեղճ օրիորդը նոյն իսկ մանկական հասակից եկեղեցի գնալու, դպրոցական

հանդէսները և նոյն խոյ գպրոցական զբոսանքների ժամանակ: Այլ է փոքրիկ աշակերտուհին վերջին նորաձևութեան գոնէ մօտեցող զվեստ չ'ունենալ, «անոր մէջը չ'ուզեր խրկել»: Եւ սպասլիս մարեր աչքան շատ են տարաբաղդարար, որ նրանց հակառակարներն հաղազիւտ բացառութիւններ են: Այլ է գպրոցը, կամենալով ծանրաբեռնած ընտանիքների տնտեսական ծանր վիճակը որքան և իցէ թեթևացնել՝ կանոնաւոր կար ու ձևի մասնազէտ վարժուհի է հրաւիրում և կարող է ընտանիքներից ամենաչնչին թոշակը պահանջում, սրանցից շատ քչերն են հաճութիւն չ'ապրեում և սրանց միջից էլ շատերը կիսասիրտ: Կամ չնչին փողն են խնայում և կամ կարևորութիւն չեն տալիս, մինչդեռ շուսլութեան ծառայող և շրջուցիչ ծաղկակար ձեռագործների համար ոչ մետաքս, ոչ կերպաս և ոչ թաւիչ է պակասում: Եւ անս կանգնած ենք ուսումնարանի դրանը, մի հիմնարկութեան մուտքի մօտ, որն անցնելով մենք կարող ենք տեսնել այս քաղաքի մատող սիրունդը, որի կեանքը կարող է ժողովրդական կեանքի երևութիւններից շատերը մեզ բացատրել և վերջիններս փոխադարձաբար ուսումնարանական կեանքի ինչ ինչ երևութիւնները:

Մենք ցաւդ խօսեցանք այս մեր հայրենակիցների գործունէութեան այլ և այլ ճիւղերի մասին և կարծես մոռացել էինք սրանց վարժարաններն ու հիւանդանոցը, որ իրանց թէ վարչական մարմինների և թէ հասարակական գործունէութեան ամենազլխաւոր վայրերն են: Հիւանդանոցի մասին կարող եմ ասել, որ նորա շինութիւնը իւր գեղեցիկ պարտէզով ու այլ շարմարութիւններով կարող էր, շնորհիւ հանգուցեալ Յակոբ ու Յովհաննէս Սպարթալեանցիների, շատ քաղաքների հիւանդանոցներին նախանձելի լինել, սակայն եթէ ազդպիւն սնդուկը տակաւին պարտքի տակ չը լինէր, մատակարարութիւնը կարող էր աւելի լաւ լինել, որ առ ալժամ միայն դոհացուցիչ վիճակի մէջ է: Տղաւոց Մեսրոպեան վարժարանը, որ կողկատում Սպարթալեան անունով է չ'ապրեմ, կարող էր իւր շքեղութեամբ և շարմարութիւններով նաև եւրոպական նոյնանման հիմնարկութիւնների մէջ հաղազիւտ համարել: Նոյնը մօտաւորապէս կարելի է ասել նաև Հուրի սիմեան վարժարանի մասին. սակայն ինչ վերաբերում է այս հիմնարկութիւնների ներքին կեանքին՝ նա ոչ արտաքինին է համապատասխանել և ոչ էլ հայկական և տեղական կեանքի ծանր պահանջներին: Թող առժամանակ աչքանովս բաւականձաչ իմ հարցասէր ընթերցողը, որովհետև եթէ մենք մի քալ էլ չառաջ դնակինք և սկսենք քրքրել այս փափուկ խըղիբը, այն ժամանակ հարկադրած պէտք է լինէինք իւրաքանչիւր քննադատելի երևութի վերաբերեալ փաստերը նոյնպէս մէջ բերել, որ մեզ այս տեղ շատ հեռուն կը տանէր:

Այս երկրի նաև ուսումնարանական կեանքում իւրաքանչիւր քալափոխում տարօրինակ երևութիւններ ենք տեսնում և այն ոչ միայն հաչ ժողովրդի մէջ, այլ և չունաց և մինչև անգամ եւրոպացոյց: Մեր

այս ազգայինները ուսումնարանական գործն առհասարակ շատ բաներով քնն է մնացել իրանց զբաղմունքները լատ.աջդիմութիւնից: Տաճկահայերի ուսումնարանական գործն ընդհանրապէս խանձարուրի մէջ է գտնուում թէ եւրոպական և թէ ասիական մասերում. մինչդեռ այս երկրի ծանր պայմանները կրկնապատիկ մանկավարժական հմտութիւն են պահանջում՝ և կեդեցական, բարոյական, տնտեսական ուժերը պահպանելու համար: Մինչդեռ սրանց սահմանադրական վարչութիւնն ունի իրաւունքներ և ձեւեր, որոնք շատ նպաստաւոր կարող էին լինել ուսումնարանական գործին: Բայց ևս արդէն դուրս եմ գալիս Զմիւռնիայի սահմաններից և ժամանակ է, վասն զի զեռ ուղևորութեանս առաջին կարանի վերաջ եմ մնացել՝ միայն մերթ ընդ մերթ ընթերցողիս երեսկարութիւնն այս ու այն կողմ թողնելով: Տաճկահայերի ուսումնարանական գործը սրանց կեանքի ամենաշահագրգիռ երեւոյթներից մինն է, որի նկարագրութիւնը սակազն կարօտում է մի շարք ժողովրդական ոգով կազմած լուսաւորների հանդերձ քննադատութեամբ, որ ամենից առաջ կարևոր է Պալատի թերթերից մէկում հրատարակել: Գալով Զմիւռնիային՝ սորա մասին մեր ասելիքները պակաս չեն թէ ուսումնարանական և թէ այլ երեսկարների մասին: Այստեղ ես իմ ուշադրութիւնը գլխաւորապէս կենտրոնացրի հայերի համարեա լոկ բարոյական-մտաւոր կեանքի վերաջ, բայց ևս լուս ունիմ, որ «Մուրճ»-ի մօտակաջ համարներից մէկում պիտի կարենամ մանրամասն նկարագրել այս Ալտրնի նահանգի, Օսմանեան պետութեան թաղը կազմող այս գեղեցիկ ու արդիւնաւէտ երկրի բազմալեզու ժողովուրդների տնտեսական կեանքը և սրան շարակից մտաւոր ու բարոյական երեւոյթները:

Զմիւռնիայի օղը թէ իսկական և թէ փոխարեւրական մտքով առած՝ շատ հեղձուցիչ է, նամանաւանդ ամառաւջ օրերին, ուստի երկիւղ եմ կրում, որ իմ Արմիասեան հայրենակից ընթերցողներին, որոնք լեռնային հովաշունչ մթնոլորտի են սովոր՝ այս կաւարանում երկար պահելով՝ տաղտուկ չը զգային: Մ'ն ուրեմն և ինքնք սիրելի և ազատ ծովը, որ մի աղըն-թարթում իւր անմահական շնչով վարատում է ամեն ցաւ: Անքք արդէն Պլուտոնի թագաւորութեան մէջն ենք, նորա սիրատուն զաւակներից կանաչակապուտ բաղմակղղի հնազարեան կղէկեան ծովն է մեզ հիւրընկալողը: Ահ, ինչ թեթիւ է զգում մարդս իրան երբ չըջապատած է նա միայն ծովով ու ծովով, մտանաւով ներկան ու ապագան՝ մանկական լափշտակութեամբ ենթատուր է լինում այն անցեալ սիրելի զիւցաղնական արկածների լիշատակներին: Ազգիներ են, որ աջ և ձախ սուսկերի նման կարծես լուսել են ծովի հարթ մակերևութի վերաջ. քարակղերի վերաջ նշանակած բազմաթիւ կէտերն չանկարծ պատկառելի լեռնաշղթաներով կղզիներ են ներկայանում: Բայց սրբան էլ գրաւիչ լինէր այս ամենը, մօտակաջ Տրոփազան իւր պարիսպներով և միջի ու գրսի հերոսներով հմալել են արդէն

քաւմբողջ երեսակալութիւնը: Մի քանի ժամ ետ՝ և այնտեղ Գարդանկի դրան աջակողմեան թևի վերայ հեռու հեռու ամպերի տակ ցոյց եմ տալիս ձեզ այն քաղաքի տեղը, ուր պատերազմում էին ամբողջ մարդկութեան սիրելի ախաճները: Նս երկիւղ էի կրում մօտենալ այն զիւցազնների քաղաքին: Թող, թող նա այն հեռուոր ամպերի տակ լռելական պահպանէ իւր խորհրդաւոր էութիւնը, որպէսզի չ'նստմանան իմ երեսակալութեան մէջ այն սիրելի պատկերները: Երբ ևս սթափեցաւ, ինձ կրկին շարժական միջազգային կղզու վերայ տեսաւ:

Այս անգամ Փրանսիական Մեսսեժըրի ընկերութեան պատական շոգե-
նաւն էր ալզկղզին, ուրեմն ես ինձ Փրանսիական աշխարհում պէտք է զգալի:
Այս անգամ Զմիւռնիայից մինչև Բաթում գնալ զալիս չորս աղգութիւնների
շողենաւերի հանդիպեցի՝ Փրանսիական, աւստրիական, անգլիական և իտա-
լական, որոնց իւրաքանչիւրն իւր ալգային չատուկ պատկերն էր ներ-
կայացնում: Յարդ ինձ չէր աշողեւել անգլիական շոգենաւով ճանապար-
հորդելու, զի այս կողմերը ալգայիսի մարդակիր շոգենաւեր չը կան: Այս ան-
գամ մեր հայրենակից Ալեքսանդր Մանթաշեանի շոգենաւերից մէկն էր, որ, իբր
բացառութիւն, հիւրասիրեց ինձ: Մանթաշեանի քարիւղի (նաւթ) գործը միջերկ-
րական և Սև ծովերի վերայ չառաջադիմական մեծ քալեր է անում: Գիւռ
անցեալ տարի մի փոքրիկ սեպհական շոգենաւ ունէր, իսկ այժմ նաև մի
մեծ «Կրանվիլ» շոգենաւ գնեց, որի մէջ Բաթումից ևս միակ ճանապար-
հորդն էի: Այս քարիւղի գործերի մասին ես աւելի մանրամասն կը խօսեմ
իմ հետևեալ չօղւածում, որ վերաբերելու է այս երկրի աւելի տընտեսա-
կան կեանքին: Առաջմտ Վիշեմ, որ մեր վերոյիշեալ հայրենակիցը, շնորհիւ
իւր ուժին և ապրանքի արժանութեանը, այս կողմերը մի միակ մենաշնորհ
(մոնօպոլ) է ձեռք բերել, որովհետեւ երբ մի ալ մրցակից ապրանք է
բերում, Մանթաշեանի գործակալներն չանկարժ աչնպէս լիցեցնում են
քարիւղի գինը, որ նորեկը վնասով վաճառում ու չիտ է քաշում: Սակայն
այն տարի ռուսական արժէթղթերի անակընկալ և սաստիկ բարձրանալը
համարեա հողի հաւասարեցրուց ոսկին և, ի թիւս ալոց, նաև Մանթա-
շեանին մեծ վնասներ հասցրեց: Այս շոգենաւի գլխաւոր պաշտօնեաները՝
գլխաւոր նաւապետն ու օգնականը, գլխաւոր մեքենապետն ու օգնականը
անգլիացիներ էին, իսկ միւսները համարեա ամենաղգութիւններից, սկսած
Բրիտանիայի հպարտ զաւակներից մինչև սեամորթ լուսիչիկները: Բաց
բոլորն էլ իրանց գործում անգլիացիներ էին: Այս նաւի վերայ առժամա-
նակ ծառայում էր մի զարդացած ռուս պատանի, որ ինձ ցոյց տուց նա-
ւապետի օգնականին՝ ինչ էք կարծում սա ով է, ես պատասխանեցի
«Նաւաստի», մինչդեռ դուրս եկաւ բոլորովին հակառակը, ինչո՞ւ, որովհետեւ
աղ մարդը նաւի վերայ ամեն աշխատանք անում էր նաւաստիներին նեո՝
փոխանակ կանգնելու և ալոց սէս հրամայելու: Նաւապետը մի պատկա-
ռելի ծերունի էր, որի մասին կարելի էր ասել՝ ծովի վերայ ծնել և այն-

տեղ էլ մեռնելու է: Մեր ծերունի մտորին ևս զլիաւորապէս հաց ուտելու ժամանակ էի տեսնում, որ օրական երեք անգամ է տեղի է ունենում, մի անգամ ալ ազդութիւնների շոգեմուտերից աւելի: Մանաւանդ ծովի անհանդարտ ժամանակ, երբ մարդ ստիպւած է լինում ննջարանում անշարժ մնալ, շատ ձանձրալի է թւում անքան անգամը, 'ի նկատի ունենալով որ արեւելեան ճաշակին անզլիական խոհանոցի կերակուրերը՝ նման գերմանականին, շատ անախորժ և միակերպ են: Գերմանացու համար առհասարակ ստում են, թէ սաստիկ քիչ է խօսում, բալց անզլիացուն տեսնելով՝ կարծիքդ խոզն կը վռնէք: Ճաշի ժամանակ նուապետը ոչ միայն ինձ հետ էր քիչ խօսում, այլ և իւր օգնականի և անքան քիչ, որ միայն երբորդ օրը, երբ սխալմամբ մի միծ խնդրի վերայ ինձ հետ խօսք բացեց և ինձ բաւականին նեղը ձգեց, զարմայմամբ հարցրեց՝ միթէ ևս անզլիերէն չեմ խօսում: «մի քիչ», ասացի ևս, — «այս» պատասխանեց խօսակիցս: Եւ այս օր էլ այդպէս վերջացրինք:

Գտնալով կրկին մեր Փրանսիական նաւին՝ այստեղ միւս ծայրակող երևոյթին հանշիւտտուս ևնք լինում, վերին աստիճանի աշխույժ է տիրում շոգեմուտի վերայ, մանաւանդ որ զանազան կողմերից ճանապարհորդներ կային: Այս կողմից խաղաղիները բաւականին նման են Փրանսիացիներին, միայն առաջինները կարծես աւելի գրաւիչ ապուրուածիւն ևն թողնում մարդուս վերայ: Իտալացուն ով որ չը համակրէ ու սիրէ՝ նա կարծես չէ սիրում գեղարուեստը, սակայն այս երկրում նոցնպէս «ընտանիքը առանց հրէշի չէ», ինչպէս ստում է ուսուսական առածը. ճանապարհորդների գլխին անպիտի խաղեր ևն գալիս, որ ուրիշ երկիրներում հազազիւտ բան է: Իհարկէ, այդ որոշ դասակարգի մարդիկն են, որ օտարականների հետ միշտ գործ ունենալով՝ նրանց հարստահարելը բան ու գործ ևն շինել: Թէ Փրանսիական և թէ իտալական «Մարկ Վինչետի» շոգեմուտերը ընտիր ևն ամեն պարագաներով: Այլ է աւստրիական «Ալօյր»-ի ընկերութիւնը, որ չը կարողանալով մրցմանը զիմանալ՝ մեծ ձախորդութեան մէջ է և կարծես իւր մեծ կորուստները ուղեորների կոնակից է հանել կամենում, որովհետև կերակուրն անքան վատ էր, որ մենք ստիպուեցանք գանգատել, թէ միայն ձիթապտուղն է, որ հնարաւոր է ուտել: Բալց և լուեց մեր խօսքը: Ալօյրի շոգեմուտերը Տրիեստից լինելով՝ զլիաւորապէս խաղախօսուն, մի լեզու, որին տեղեակ չը լինելով հանդերձ՝ Փրանսերէն և լատիներէն գիտեցողը, բառերի վերջը օ և է աւելացնելով՝ շատ անգամ ուղղութեամբ իւր միտքը հասկացնում է:

Բալց մենք կարծեմ մտացանք, որ տակաւին Մարմարեան ծովի վերայ ենք և արդէն հասել ենք Գարդանել քաղաքին, որ Տրուլադալի աւերակներից դէպի արևմուտք՝ իսկ նեղուցի գրան մօտ է գտնուում: Սոմանեան պետութեան մէջ Բոսֆորից լատու այս երկրորդ կէտն է և պատերազմական տեսակէտից առաջին տեղն է բռնում, որ առանձին իմն

պատկառելի երևոյթ է ներկայանում: Մի միջակ գետի նման նեղուցը երկու կողմից բազմաթիւ թնդանօթներով է պաշտպանւած, որոնք հողէ պարիսպների մէջ դարձադողի թաղնւած՝ հեռուից միայն իրանց ահաւոր բերաններն են ցոյց տալիս: Հէնց որ այս կէտին հասար, կանդնիք, որովհետև մինչև թողտուլթիւն չը գալ, հրաման չը կալ անցնելու: Բայց այս ժամանակակից ուժեղ հողէ բերդերի գէմ կան և ահաւոր մարտանաւեր, որոնք աշխարհիս բոլոր ծովերն նաւատորմիդներով շրջելով՝ ՚ի ցոյց են հանում իրաքանչիւրն իւր հալոնիքի փառքն ու զօրութիւնը: Այս մարտանաւերը, որոնք մի մի պատկառելի շարժական բերդեր են, շարունակ 5—10 երևում են Միջերկրական ծովի վերայ և լաճախում Զմիւռնիան, բայց Գարդանէլին մօտենալու իրաւունք չը կալ: Զմիւռնիան, որ առանց այն էլ շատ շարժուն քաղաք է, երբ նաւատորմիդ է գալիս և 4—5000 ղինւոր է լցւում, առանձին խնի կիանք է տաւնում: Քարափը և ալ գլխաւոր փողոցները լի են անգլխացիներով, թերևս և սուսներով, կամ մի ալ անգամ՝ Փրանսիացիներով ու գերմանացիներով, տեսարանները շատ հետաքրքրաշարժ են՝ էլ ասիական ու եւրոպական «օլիններ» չեն մնում, որ Պլուտոնի այս անհոգ զաւակները չը թափեն:

Գարդանէլից վտայ մենք կրկին գալիս ենք մի բաց ծով, խաղաղ Մարմարեան ծովը, որին ալեկոծութիւնը կարծես օտարա՛յ երևոյթ է թւում: Այս ծովի մէջ նոնայէս սփռւած են մանրիկ կղզիներ կամ հեռուից մեզ երևում են բարձրաբերձ լեռները եղերքների վերայ: Մի քանի ժամ ես և ահա մենք մօտենում ենք պատմական Սոն-Սոնֆանօին որ մի գեղեցիկ ամալանոցի տեսարան է ներկայացնում, իսկ կէս ժամ չեսոյ մենք արդէն մալաբարաքը Նուաւանդիստն ենք: Մարմարեան ծովից մտնելիս՝ Պոլիսն ալնսլիսի սքանչելի տպաւորութիւն չի թողնում, ինչպէս ալ լինում է, երբ մարդ Սև ծովից է մօտենում: Բոսֆոր նեղուցը իւր պատկառելի թնդանօթներով, սաղարթալից աղիւնների մէջ խեղդած, հիանալի ծովափնեալ ապարաններով, որոնք նեղուցի երկու կողմը կանաչակապոյտ ծովի վերայ կարծես ցուցահանդէս են եղել մրցելու և անցորդներին հիացնելու: Եւ վրաւի, որքան անգամ էլ մարդս անցած չը լինէր այս անզուգական տեսարանների առաջից, միշտ նրանք նորանոր հրապույրներ են ներկայացնում: Որքան էլ գովէր բանաստեղծն այս արեւելեան ճոխ ու սքանչելի տեսարանները, գեռ քիչ է: Այս տարօրինակ քաղաքը, որքան արտաքուստ գեղեցիկ է, ալնքան ներքուստ խառն ի խուռն է և սպիղ: Ալն դիւթական չպատկերը, որ մեր առաջ է սփռած՝ մի ակնթարթում անհետանում է և մենք մեղ կրկին իրական աշխարհի մէջ ենք զգում: Թէև Պոլիսը մալաբարաքն է, սակալն ներքուստ ամենեկին չէ կարող մրցել Զմիւռնիայի հետ, որ փողոցների կանոնաւորութեամբ, մաքրութեամբ

և այլն շատ բտրձր է նրանից: Թէև Պոլիսը կենարոն է, սակայն այնտեղ չքաւորութիւնն ու աղքատութիւնն աւելի է տարածւած, այս մեծ քաղաքի վերայ եւրոպական քահաքակրթութիւնը չէ կարողացել այնպէս ազդել, ինչպէս Չմիւռնիայի: Պոլսի միայն Բերա կոչւած թաղն է եւրոպական, այսինքն մի երկու փողոցներ, որ բանինման են և զլիաւոր փողոցը մինչև անդամ մալաքաղաքի արժանի: Պոլսի մէջ պատահող հրդեհները աւելի և աւելի սպառնալ են անատէրերի ուժերը. ամբողջ թաղեր կը տեսնուք, որոնց բնակիչները պատուարւած են տախտակէ ողորմելի տնակների մէջ: Այս անգամ լուծիսի մեծ հրդեհին ևս ականատեսն էի շողեմաւից. մի քտնի բոպէում մի կէտից 3, 4, 6 և այլ թաղեր բռնկեցան, սարսափելի բոցը կարծես շողեչարժ մեքենայի նման շառաջ էր զլումւմ. մենք քանի հեռացանք, այնքան միջնեց և երկինքն աւելի կարմրեց: Նաւապետը պատմում էր, որ զիչերաւ ժամը երկուսին երկինքը տակաւին կարմիր էր: Միայն եւրոպական մասն է, որ աւելի քարաշէն է և հրդեհի դէմ աւելի պատրաստութիւն ունի, իսկ երբ միւս մասերում մանաւանդ հողմերի ժամանակ հրդեհ է ընկնում, ինչպէս վերջին անգամ, զարհուրելի է, էլ չը զխտես թէ երբ է վերջանալու:

Պոլսի կեանքից ես այս անգամ շատ պատմելէք չ'ունիմ, որովհետև արձակուրդների կարճ ժամանակամիջոցը և իմ հալոնելքի հեռաւորութիւնն ինձ թող չը սուին մի զիչերից աւել մնալու թէ գնալիս և թէ վերադարձիս: Մանաւանդ Պոլսում չ'արժէ մի երկու օր մնալ, մինչդեռ 1—2 շաբաթն էլ քիչ է. չը նալելով որ ձիաքարչ երկաթուղիներ, երկաթուղիներ և շողեմաւեր կան, այնու ամենայնիւ իւրաքանչիւր սպեկուլիւն միջին թաղ մի օր արժէ: Իսկ եթէ կամենում ես դպրոցներ ու այլ հիմնարկութիւններ լաճախել, ամիս աստ ու կաց. Մեզպէս ուղևորն ամենից լաւ կ'անէ, եթէ նա այն հազաւդիւտ և խորհրդաւոր կամուրջն երթալ, որ միացնում է եւրոպական մասը հանդիպակաց եզրի հետ: Գիւղերից դործի գալու ժամանակ ու երեկոյեան տները վերադառնալիս՝ նա կը տեսնէ ի թիւս այլ բաղամթիւ մարդերի և իւր վաղաժամ բարեկամներին բողբոլին անսպասելի, և համն էլ այդ է: Այս կամրջից մի բոպէում հազաւոր մարդիկ են անցնում և այնպէս արագ ու հապճէպ, որ եթէ դրանց շատերին բռնես ու պատճառը հարցնես, իրանք էլ չը գիտեն: Այս տարօրինակ տպաւորութիւնը մարդու գլուխը պտտալ է բերում, երբ երկար է նալում: Ակամայ փչում եմ ձլինճնալի բորսան, ուր կեանքի տաղնապը այն հարիւրաւոր մարդիկների վաճառատանը դժանոցի կերպարանք է տալիս:

Մի քանի բոպէում այս հազարաւոր անց ու դարձ անողների մէջ մենք տեսնում ենք աշխարհիս ցեղերի բազմազան ներկայացուցիչները իրանց բազմատարագ զղևտներով: Այստեղ նաև տաճկուհիներն արհամարհում են հինաւուրց թանձր քօզը և երեսրաց չրջում են, միայն տակաւին թափանցիկ սաւանի մէջ փաթաթւած, իսկ ներքուստ աւելի եւրոպական

տարազի նման: Այս կամուրջը մի պատուական բնական բեմ է, ուր մեր աչքին ի թիւս կենսական այլ երևութենքի՝ նաև ներկայանում է հարստութիւնը չքաւորութեան հետ, արտաքին երջանկութիւնը թշուառութեան հետ: Թերևս չափազանցութիւն չը լինէր ասածս, որ դժար է գտնել այնպիսի հումս մի կէտ, ուր աչնպէս ազդու կերպով ներկայանար ապահոված և զրկւած մարդկանց տարբերութիւնն՝ ինչպէս ալտեղ: Նրևակալեցէք բազմութիւ չքեղ կառքեր, երբեմն նաև սոկէզօծ, հիանալի ձիաներով և թաւիչ, մետաքս հագած փարթամ տէրերով, որոնց աջ և ձախ կողմը կամուրջի վերայ նստոտած են բաղմամբիւ աղքատներ՝ չաճախ իրանց մանուկները գլուխներին հաւաքած, նիհար, խոցոտած, այս ու այն զգալարանքներից զրկւած...

Վալով մեր ազգային կեանքին՝ Զմիւռնիսուլի մասին խօսելիս արդէն նկատեցի, որ տաճկահայերի ուսումնարանական գործը դեռ խանձարուրի մէջ է, որովհետև սրանք ոչ բուսուցչանոցների ունին և ոչ մանկավարժական թերթեր: Թէև ունին այսպէս անուանեալ «Ակնտրոնական ուսումնարանական խորհուրդ», սակա՛ն սա լոկ անուանական է, որովհետև ինչպէս որ օրինակ Զմիւռնիան ծրագրի, դասագրքերի, ուսուցիչների նշանակելում որոշ պաշտօնական միջամտութիւն չէ ունեցել իւր թեմում գտնւող շրջանների վերայ, աչնպէս և Պոլսի այդ ուսումնարանական խորհուրդը թեմերի վերայ ոչինչ իրական ազդեցութիւն չ'ունի: Ո՛վ ինչ ուզում է, աչն է անում: Այս հանգամանքներում ի զուր եմ նաև թեմական տեսուչներ որոնք շարունակ գաւառները շրջելին և կենտրոնի կանոնները գործադրել տալին: Այս կողմից Միացեալ ընկերութիւններն աւելի կենտրոնացում ունին, սակա՛ն իբրև մասնաւոր հիմնարկութիւններ՝ կարօտում են դեռ շատ կատարելագործութեան:

Ես վերը չիշեցի որ Պոլսը չունի մանկավարժական թերթեր և շուրջութիւն չէր լինիլ ազդ, երբ մինչև անգամ քաղաքական և գրագիտական ամսաթերթեր չ'ունի, երբ ալտեղ աչնքան սիրահարներ կան այս ճիւղերի համար: Պոլսում դեռ «Մուրճ» ոչ ոք չէ ստանում և շատ քչերը աչնտեղ նրա գոյութեան մասին տեղեկութիւն ունին: Միևնոյնը կարելի էր ասել աննշան բացառութեամբ կարծեմ «Աղբիւր»-ի և շարաթաթերթերից «Արձագանգ»-ի ու «Տարագ»-ի մասին, մինչդեռ Զմիւռնիան աւելի աչքաբաց է և կարծեմ այս բոլոր թերթերը կենտրոնից համեմատաբար շատ է ստանում, մինչդեռ կենտրոնի թերթերն ու մարդիկն են, որ պէտք է բանալին գաւառների միտքը: Բայց ոչ ապաքէն Ստամպոլը մեծ քաղաք է, նա չի կարող փոքր բաներ տեսնել:

Պոլսից անցնողը խօսելով տեղացի հայերի մասին՝ չէ կարող զանց առնել պանդուխտ հայերը, որոնց մեծամասնութիւնը մշակ դասն է կազմում: Նիթէ ժամանակ չունիս 24 ժամում ալցելութիւնների անելու, զնա մանաւանդ նաւահանգիստ, ալտեղ հարկւրներով աչքիդ առաջ կ'ելնեն:

Շահադրգիւ է հալ մշակ դասի վարչական եղանակը, որ կառավարում է նորա գործունէութիւնը նահապետական ձևով: Աշակներն ունին իրանց նահապետը, գանձապահը և ալ վարչական մարմիններ, որոնք ընդհանուր եկամուտը զուտարելով՝ բաժանում են իւրաքանչիւրին՝ համաձայն որոշ պարմաններին: Խիստ կարգ ու կանոնը և անպայման հնազանդութիւնը օրինակելի է:

Աշխատութեան ժամանակ հալ մշակին հունեմատարար լաւ տրամադրութեան մէջ ետ գտնում և քանի շատ են աշխատակիցները, աչքքան աննշան է երևում մինչև անգամ ամենածանր բեռը: Սրանց պարագութեան ժամերը պակաս հետաքրքրական չեն. մենք տեսնում ենք գանդան կենտրոններում պատերի տակ բազմաթիւ մշակներ նստոտած, մի քանիսը համախմբւած կոտակներ են անում, միւսները վիճում, կուտում, երբորդ խումբը լուրջ խօսակցութիւն անում, մի քիչ հեռուն առանձնացածներ, որոնք խորատուգւած իրանց մասածմունքների մէջ, կարծես ոչինչ չեն լսում ու տեսնում չըջակալքից: Թէ ընտանիքի աէր մարդ է այդ խեղճը, արդէն դրկում ու համբուրում է իւր «ճգերին ու վժերին» իւր խորտոխ ձագուկներին», թէ երիտասարդ է, հաշուում է իւր վաստակած փողերն ու տակաւին մնալու ժամանակը, թէ երբ արդեօք պիտի կարենայ պատկենական պարտքը թափել և հարսնացուն ու հարսանիքը տեսնել: Եւ ահա գլուխը քարին կուացու, նա արդէն անուշ երազի մէջ է, հարկերի խրճիթում օրուս թագաւորն է, նորա բաղձալի հարսանիքն է, բայց աւանդ «մշակ», բղաւեց մի խրոխա ձագ՝ և բոլորը վեր թռան և սպուշի պէս ալս ու ալն կողմը նայեցին ու վաղում են իրանց խռովութիւնը խանգարող մարդուն «թէմէլէհ» անելու:

Ես այս անգամ էլ տեսայ բաւականին մշակներ հայրենիք վերադառնալիս և համարիա իւրաքանչիւր շողեմաւի մէջ զուք կը տեսնէք անց ու դարձ անող բազմաթիւ հալ մշակներ: Գիշեր է, բոլորը քնած են, մի խորհրդաւոր լուսութիւն է տիրում շողեմաւի մէջ և՛ ահա հալ մշակների տաղերն ու խաղերն են, որ ընդհատել են համարձակում այդ խորին լուսութիւնը: Մանաւանդ մեծ քաղաքներից վերադարձող մշակները գիտեն նաև ազգային երգեր: Նրբեմն լսում են ախուր երգեր. այդ հրաժեշտի ձայներն են մարաքաղաքում անցկացրած զարձալի ժամերին, մերթ հնչում են ուրախ տաղերն ու երգերը, — այդ հայրենիքի սէրն է, որ ներշնչում է: Մայրաքաղաքից վերադարձող մշակն ալ ևս ալն սղորմելի խղճուկ մշեցին չէ. նա բաւականին կոկ է հագնւած, նորա միտքը զարգացած է, աչքը բաց:

Հետեւեալ օրն ես մեկնեցայ Պուլսից: Այս անգամ թէ գալիս և թէ վերադարձիս այս քաղաքն աչնպէս չը վրդովեց ինձ, ինչպէս այդ ինձ սուաջին անգամ արտասահմանից վերադառնալիս պատահեց: Այս անգամ արդէն երբորդը լինելով՝ ես արդէն տեղեակ էի օտարին շրջապատող հան-

գամանքներին, ես միևէն անգամ կարող էի ինձ պէտք եղածը տաճկերէն բացատրել, ուստի և քրիստոնէական հասարակութեան «բեղումը» կոչուելուն արժանանալ: Երբ բանն աշտուղ հասաւ, մի բուրբու բանը կարող էք չաճախ 10 կողէկով էլ չառաջ տանել: Այսպէս է ընդհանրապէս և այլ երկիրներում, սակայն նախելով տեղական հանգամանքներին՝ ահագին տարբերութիւններ կան:

Գիտ Սև ծովը ամառ ժամանակ խաղաղ է: Նորա մերթ ընդի և մերթ կանաչադարձ կղերքները երբեմն երևում ու երբեմն անհետանում էին մեր տեսութիւնից: Մենք մտեանում էինք զեղեցիկ Տրապիզոնի նաւահանգստին: Այս ծովափնեալ քաղաքը կարող էր իւր զիրքով շատ կարևոր դեր կատարել, բայց ավաստ որ երկաթուղային հաղորդակցութիւն չունի ներքին նահանգներին հետ: Իւր կեանքը համարեա մարած է, որովհետև չունի այնպիսի արտադրութիւններ, որոնք մեծ գումարներ ներս բերէին: Տրապիզոնը իւր բնակիչներով մի համեու դաւառական քաղաքի ստաւորութիւն է գործում: Սրանց թէ եկամուտներն են աննշան և թէ կեանքի պահանջները: Հայ կանաչ սաւան են ծածկում, տաճկուհիք նուրբ պէս և հասա քոչ, որով զրկւած են իրանց պոլսեցի քորերի ալատութիւնից:

Մեր հայրենակիցներն այս քաղաքում աւելի մեծ ուսումնարաններ են պահում, քան թէ իրանց ոչոք կը զօրէ: Թէև ժողովուրդն աւելի խեղճ է քան Չմիւռնիայինը, սակայն, ինչպէս երևում է, աւելի տրամադիր է իւր դաւակներ կրթութեան համար հատուցանելու՝ քան զմիւռնիային: Եթէ չեմ մոռացել, Տրապիզոնի երկսեռ վարժարանները մասաւորապէս 1200 աշակերտներ ունին, մինչդեռ Չմիւռնիայինը՝ 500:

Չը նախելով որ վարժարանների եկամուտները համեմատաբար շատ նւազ են, աչտու ամենաչնիւ եռանդուն հողաբարձութիւնը ջանք է դնում մանկավարժ տեսուչ և ուսուցիչներ ունենալու: Սակայն այդ շատ անգամ չափազանցութեան է հասնում, որովհետև հրաւիրում են պաշտօնեաներ, որոնց ուժիկը տարւալ վերջն անկարող լինելով հասուցանել, հարկադրւած են լինում, «նւիրեցէք վարժարանին քանի մի ամսական» խնդրելու: Այս լաւ չէ: Որքան որ համակրելի է հողաբարձութեան գլխակցական գործունէութիւնն, այնքան ևս անհասկանալի են այս անհաշիւ նախադիժները, որոնց չնորհիւ թէ այդ գործը սիրողների սիրտն են պաղկեցնում Տրապիզոնի վերայ և թէ գործերն այնպէս չետ են ընկնում, ինչպէս այս տարի սեպտեմբերի սկզբներին տակաւին ոչ տեսուչ և ոչ էլ ուսուցչական խումբ կար:

Ամեն անգամ, երբ ևս անցնում եմ այս քաղաքից՝ նորա հայ երկտասարդներն իմ վերայ ուշիմ, աչքարաց և եռանդուն մարդկանց սպաւորութիւն են գործում:

Նուրբաւերը Տրապիզոնի նաւահանգիստներում առհասարակ չորս

ժամ են կանգնում ու երեկոցան դէմ դէպի Կովկաս մեկնում: Տրապիզոնից Բաթում 7—8 ժամուա՛ ճանապարհ է, ուստի և շողենաւերը չափաւոր արագութեամբ են գիշերուա՛ ժամերին շտաջ գիւնում՝ առաւօտեան նաւահանգիստը լինելու համար: Այս քաղաքն իւր անեցողութեան հասակում լինելով՝ միշտ նորանոր տպաւորութիւններ է գործում ուղևորի վերաջ: Յիշում եմ աչն խղճուկ Բաթումն իւր փառեալ խրճիթներովն ու հիւրանոցներովը, երբ ես սորանից եօթը տարի առաջ արտասահման էի գնում և զարմանում՝ թէ ինչպէս բուսեց այս նոր քաղաքը իւր ընդարձակ կանոնաւոր փողոցներով, գեղեցիկ տներով, պարտէզներով ու ձոխ զբոսավայրով: Քաղաքակրթութիւնն ու քարիւղն էին աչն երկու հրաշագործները:

Բաթումի փոքրիկ հայկական հասարակութիւնը շատ անգամ իրան մասին լսել է տալիս լրագրներում: Այս քաղաքում գործում են, պէտք է մտածէ ընթերցողը, սակաչն այս երկրասարգութեան գործունէութիւնը հետևողական չէ երևում ինձ, որովհետև կարծես երբեմն բոցավառում, իսկ երբեմն առկաջում է: Այս, ի հարկէ, միւր կեանքի մէջ բացառիկ երևոյթ չէ, ողևորութիւնը տևողական չէ մեր մէջ: Բաթումը, ուր հաւաքւել են դանազան կողմերից ալ և ալ սովորութիւններ, զարգացման, համոզմունքների տէր հալեր, չ'ունի դեռ ևս կազմակերպած ընկերական կեանք, վասն զի հասարակութեան անդամները տակաւին ձուլւած չեն: Այս, կարելի էր ասել, նորածին քաղաքի հալերի զարգացած դասը կազմում են վաճառական և ծառայող երկրասարգները, որոնք թռչնի անհոգ կեանքն են վարում. ոչ ընտանիք ունեն և ոչ էլ մտածում են ունենալ: Կարծես առժամանակ եկել են ալս վաճառաչա՛ տեղը փող վաստակելու և ինչպէս որ վաստակել են՝ ծախսելու և մի օր ո՛վ գիտէ որ կողմը թռչելու: Սրանք ոչ առն ունեն, ոչ տեղ, ոչ հաւ ունեն և ոչ ճիւ. Ալ բան էր եթէ նստակեաց, զաւակներ ի տէր մարդիկ լինէին:

Հինաւորց փառաշէն խղճուկ եկեղեցին քանդիւ էին և մի հաստատուն ու գեղեցիկ հիւմք էին գրել, միաչն ափսոս որ հողի երեսը հանելով՝ զաղարել էին: Պէտք է երկաթը տաք ծեծել, եթէ ոչ՝ ժողովուրդը կը պաղի և կը մերժէ իւր օժանդակութիւնը:

Ուսումնարանի երկու դասարանները իրանց սրարգաներով կանոնաւոր էին: Նախելով տեղական հալերի վիճակին՝ կարելի էր աւելի սպասել:

Ես պէտք է շտապէի դէպի Թիֆլիս: Կրկին աչն գեղեցիկ երկաթուղու վերաջ էի, որ իւր ծովալին, անտառալին, լեւալին բաղմազան տեսարաններով իմ տեսած ամենագեղեցիկ ճանապարհներից մէկն է: Մանաւանդ անուշ և կաղզուրիչ է Կովկասեան հովը իւր զաւակներին, որոնք հեռու երկիրներից են վերադառնում: Զւարճալի է տեսնել տեղական ցեղերը իրանց շնորհալի զգեստներով ու բնատուր գեղեցկութեամբ: Քանի ալ սպգիր ու ցեղեր աւելի են ենթարկւում եւրոպական ճնշող նորաձևութեան ճիրան:

ներին՝ վրացիք և մանաւանդ խմբէլէները աւելի ևս վաչում են իրանց սեպհական ձեռագործի արտադրութիւններով։ Իսկ այն ուրախ ու զարթ արամադրութիւնը, որի մէջ կարծես միշտ գտնուում են այս անհող ժողովրդները, մի հեռաքրքրական ցեղական երևոյթ է։ Գրանց խօսակցութեան ձևն ու եղանակն այնպէս ծաղրածու են, որ մարդս այդ լեզուին անծանօթ լինելով հանդերձ՝ հաղիւ է իրան զսպում ծրծաղելուց՝ մինչև անգամ եթէ անծանօթ ընկերութեան հետ է նստած։

17—18 ժամ չետոյ Բաթումից Թիֆլիս ենք հասնում։ Կովկասեան այս մայրաքաղաքը, որ հաղիւ թէ Զմիւռնիայի չափ լինի, մանաւանդ իւր մշտաւոր կեանքով շատ բարձր է վերջինից։ Նորա թատրոնները, գրադարան ու ընթերցարանները, բազմապիսի օրինաւոր դպրոցները չը կան նաև Պօլսում։ Տաճկաստանի տնտեսական կիանքն եւրոպական դանազան ազդութիւնների հետ կապած լինելով՝ եթէ կամենայ էլ գիտութիւնների մէջ շատ չառաջ գնալ, անհնարին է, որովհետև նորա դպրոցներն իրանց ուժերը ստիպւած են սպառելու շատ օտար լեզուներ սովորելու համար։ Կովկասն և իւր մայրաքաղաք Թիֆլիսն այժմ այնքան զարգացել են, որ եթէ այստեղ այսօր մի համալսարան կամ այլ բարձրագոյն հիմնարկութիւն բացւէր՝ ոչ տեղական ուսանողների և ոչ մինչև անգամ ուսուցչապետների պակասութիւն կը զգացւէր։

Թիֆլիսն իւր մեծագոյն և կարևոր թաղերի ղեղեցիկ ժողոցներով ու ճաշակաւոր տներով կարող է մրցել եւրոպական շատ քաղաքների հետ։ Տաճկաստանի մայրաքաղաքի մի քանի փողոցները միայն կարելի նորա հետ համեմատել։ Միւս կողմից Կովկասի մայրաքաղաքը զուրկ չէ նաև զուս ասիական թաղերից, որոնց կեանքը և կարգ ու սարքը միւս թաղերի ճիշտ հակադասերն է։

Թէ գնալիս և թէ վերադառնալիս Թիֆլիսն ես համարեա ամալի տեսալ։ Աժարալին ամիսներին նրա կեանքը կարծես մեռած է, որովհետև քիչ թէ շատ կարողութիւն ունեցողը ամարանոց է փախչում։ Այլ էր երևոյթն արդէն օգոստոսի վերջին օրերը. բազմաթիւ ուսումնարանների մէջ հարցաքննութիւններն սկսւել էին, պարտաճանաչ ծնողները մինչև անգամ դաւառներից որոշածից մի քանի օր առաջ իրանց դաւակնելին բերել են։ Այլ է, օրինակ, մեր Զմիւռնիայի հաշիւը։

Այստեղ ծնողներն ունեն իրանց ամարանոց գնալու որոշ օրերը. երբ ժամն հասաւ, այլ ևս չեն նայիլ թէ իրանց դաւակնները զասեր ու քննութիւններ ունեն, իսկ թէ չետոյ հոկտեմբերին կամ նոյեմբերին կը վերադառնան, այդ էլ իրանց «քէֆն» է։ Այսպէս է հայ ժողովուրդը, այսպէս են քաղաքիս չոյներն ու եւրոպացիք. ինչո՞ւ. որովհետև աշակերտի խլիւղց է, տաբւալ որ օրին ու ժամին դաւակիդ տանես, գրկաբաց կ'ընդունեն։ Եթէ ազգային վարժարանը չ'ընդունի, սպառնալիք կ'տաս, թէ բողոքականի կաթիլիկի և այլն կ'տանես, և չաղթութիւնը տարած ես։

Հալիական այլ և այլ ընկերութիւններ նաև այս կենտրոնում շատ չը կան, եղածներն էլ տեղական եռանդ չ'ունին, մինչև անգամ ամենամեծ ողորութիւնը շատ շուտ է պազում այս քաղաքում և աչպիսով փոխանակ գաւառներին զարկ տալու՝ նրանց կամ վնասեցնում է և կամ նրանց շարաջաղիմութեան վերայ նախանձում: Թիֆլիսն այժմ աջնքան ընտիր թատերական ութեր ունի զարգացած դասից, որ կարող էր մի պատկառելի թատերասիրաց խումբ կազմելով՝ առանց իւրաքանչիւր անգամ ծանրաբեռնելու ամսական 1—2 անգամ զեղեցիկ ներկայացումներ տալ: Սրբ բաղմամբիւ անդամներ լինելին, իւրաքանչիւրին տարեկան 2—3 անգամ հազիւ հերթը դար: Հետզհետէ մի համեստ գումար կազմելով՝ կարելի էր աջն ժամանակ իրագործել մեր թատերական գործի հին ու անձնւր զինւոր Չմշկեանի նախապիծը, աջն է՝ դաւառները շրջել և հաւաքել ամենաընդունակ ութերը: Սրբ այս մասին խօսում էինք պ. Չմշկեանի հետ՝ ես շատ հաւանեցաչ այս միտքը՝ փորձով դիտեցալով որ մեր դաւառներում դերասանական զանձեր կան թաղւած անչառութեան մէջ: Մենք առհասարակ չենք հաւանում մեր դրացի վրացիներին, բայց տէտէք նրանք ինչպէս համեստ միջոցներով սկսեցին ու կենդրոնացրին իրանց ութերը և պակասն էլ հալերից լրացրին: Մեծ պակասութիւն է եթէ մանաւանդ նորագոյն կրթւած երիտասարդութիւնը այս ամենակարևոր գործերից մէկը զեռ քնած թողնեն:

Թիֆլիսի հալերի մտաւոր կեանքի ամենազլիւսւոր տարրերից մինն է մամուլը: Այս գործունէութեան ներկայացուցիչ թերթերի մասին խօսելը և նրանց համեմատելը ամենածանր և փափուկ խնդիրներից մէկն է, որ մի ուղեորի գրչի թեթև ծալքով շօշափելու բան չէ:

Որովհետև ես իմ նկարագրութեանս մէջ տաճկա և ռուսահալերի կեանքի երևութներն եմ համեմատում, ուստի այս ուղղութեանը հետեւելով մենք կարող ենք ասել, որ Թիֆլիսի հաչ մամուլն իբրև ամբողջութիւն Պոլսի զէմ գնելով՝ մենք ստաջիներ աւելի շուրջ և հաստատուն վիճակի մէջ ենք տեսնում: Շատ հազիւ է պատահում, որ Թիֆլիսում մի թերթ հրատարակէր, առանց նորա գոնէ մօտիկ ապագան (տարիները) կչուելու, իսկ Պոլսում մօտիկ շարաթներն էլ կչուի դնելը առհասարակ տեւրորդ բան են համարում: Այս տեսակէտից Պոլսի այժմեան թերթերի մէջ բացառութիւն են կազմում «Արեւելը»-ը որ ամենահաստատուն հիման վերայ է դրած, «Հալերնիք» ու «Մասիս»-ը, որոնք այսուամենայնիւ չեն կարող վերջին ժամանակներս առանց ընդհատումների հրատարակւելու:

Գալով երկու կողմերի մամուլների մտաւոր ութերին՝ Պոլսի թերթերն աւելի քաղաքական-գրական են: Բացի սրանից նրանց գլխաւոր նիւթն է Պոլսի և մտաւոր քաղաքների կեանքը, իսկ հեռււոր հալերների ուսումնարանական, տնտեսական և այլն կեանքի մասին միայն պատահական տեղեկութիւններ ենք կարգում: Թիֆլիսի թերթերն ընդհակառակն ապ-

րում են գլխաւորապէս դաւառներով և դաւառների համար: Այս հետաքրքրաշարժ երևոյթի պատճառն էս աչպէս եւ հասկանում՝ տաճկահայերը դաւառներում չ'ունեն այնքան զարգացած թղթակից կամ աշխատակից ուսուցիչներ, որոնք Առլիասեան թերթերի գլխաւոր աշխատակիցներն են. Պոլսը հեռու է դաւառներից և դուրի կանոնաւոր հաղորդակցութիւնից. մալաքաղաքի թերթերի ղեկավարները ծնւած չը լինելով՝ դաւառներում և Պոլսում կամ հեռու կերպով ուսում առած լինելով չեն սպրեւ ժողովրդի կեանքով, չեն զգացել նրա կարիքները: Այս աչպէս լինելով՝ մենք պէտք է Պոլսի թերթերում աւելի տեսութիւններ՝ քան բուն զգացմունքներով տողորած գրութիւններ գտնէինք: Խօսելով Թիֆլիսի թերթերի մտաւոր, բարոյական ու նիւթաւոր հաստատութեան մասին՝ մենք չը պէտք է մոռանանք՝ որ նրանց խմբագիրները, շատ անշնչան բացառութեամբ, գերմանական մասնագիտութեան հետեւած և գերմանացու տոկունութեամբ և շրջահպեցողութեամբ օժտւած մարդիկ են եղել և են, որոնց աջակից են այլ ուսական ու գերմանական համալսարանական աշխատակիցներ, թէև վերջիններս որոշ ու անողական չ'ամբեր չեն կաղմել: Թէև մեր Առլիասեան թերթերից և ոչ մէկն «Արևելք»-ի ընկերութեան պէս հաստատուն դրամադուլու չունի, թէև բաժանորդների թիւն առհասարակ 1200-ից հազու է անցնում, այնուամենայնիւ նրանք օրէցօր ապրում ու 10—20 տարիներ են շարատեում: Այսպիսի ծանր հանգամանքների մէջ շարատեութիւնը ինքն ըստ ինքեան մի մեծ բարոյական արժանաւորութիւն է, վասն զի նա ապացոյց է ինքնուրոյն ուժի ներկայութեան, որ մի միսիթարական երևոյթ կարելի է համարել Առլիասեան հպերի կեանքի մէջ:

Մի քանի օր վտոյ էս թողի Թիֆլիսը: Չարժէր այդ ժամանակ երկար մնալ, երբ քաղաքը համարեա դատարկ էր: Իմ ուսանողական ընկերակիցներից շատ քիչ մարդ տեսալ, որոնց հետ առ ՚ի սրտէ մի օր խօսելը մի տարւալ արժէք ունէր: Մեր կեանքի այլ և այլ ասպարէզներում դործող երիտասարդներն երբ Թիֆլիս տեսնում են, հարկադրւած են լինում մի մեանց իրանց դործունէութեան մասին հաշիւ տալ ու հաշիւ առնել, մի ընտիր սովորութիւն, որ շատ է նպատում ազգային առաջադիմութեան: Վերադարձիս ևս աւելի մարդ տեսալ Թիֆլիսում և մասամբ միսիթարւած ու գո՛հ սրտով հեռացալ այն քաղաքից, որ մեր մտաւոր կենդրոնն է:

Թիֆլիսից ևս մեկնեցալ դէպի դաւառները և նախ և առաջ հասալ գեղեցիկ Բորժոմի վերալով Ալսալցլսա: Բորժոմը Առլիասի ամենադեղեցիկ և սիրելի ամառանոցն է, թէև անցեալ տարի ևս Աբասթումանում առաւելութիւններ տեսալ, որոնցից զուրկ է առաջինը: Բորժոմի սքանչելի անտառները, որոնք Առլիասեան բնութեան թաղն են համարւում, իմ վերագարձիս հրդեհած տեսալ, որ քանի դնում՝ սատկանում էր, ամառանոցները ծխով էր լցւել և գիշերները բոցն անադին տարածութեան մէջ երևում էր: Չը նպելով որ նախկին փոխարքայ մեծ իշխանի Միսալիլ Նիկոլայիչի

գլխաւոր հարստութիւններն էլ ալդտեղ էին գտնուում, ահադին քանակութեամբ զօրք էր ուղարկւած, այնուամենայնիւ մրցելու հնար չէր երևում:

Ախալցխան մի վոքրիկ քաղաք է, հեռուից իւր գեղեցիկ դիրքով և պարտէզներով Տրապիզոնի տպաւորութիւնն է անում, միայն թէ իւր միջից հոսում է Քուր գետը, որ գոյանում է աչտեղ երկու գետերից, մինը Արդահանից եկող և միւսը Ախալքալաքից: Ախալցխան էլ ունի իւր «եւրոպական ու ասիական» թաղերը, ալաինքն հին բերդի թաղն իւր Հրէաստանով և կաթողիկէներով ու նորը: Այս քաղաքն եթէ պատերազմի ժամանակ և այն էլ սահմանակից լինելով հանդերձ՝ կիանք չ'ունեցաւ, էլ թնչ կարելի է սպասել ալժամ. մի մարած և խզճուկ վիճակ: Այնուպէս անհայն ժողովուրդն աչքարաց է, ունի քաղաքային վարչութիւն, բաւականին լաւ ուսումնարանական շէնքեր, եկեղեցիներ և այլն: Ամենահետաքրքիրն է այս քաղաքի հայերի արևստագիտական ճաշակն ու հմտութիւնները, որ ի բնէ հուշակւած են:

Այս անգամ իմ ուշադրութիւնը գրաւեցին պ. պ. Չիֆտալարեան եղբայրները, որոնք հասարակ միջոցներով և առանց մեքենաների շինում են ամենապատական եւրոպական ղէնքեր: Այնքան մաքուր և ընտիր ձեռակերտից են և միևնոյն ժամանակ անհամեմատ դիմացելուն, որ գործարանից հանած ապրանքից անհամեմատ աւելի արժէք ունին: Այս հասարակ արհեստաւորների հնարագիտութիւնն ու տոկունութիւնը զարմանալի է: (Մոռացա՛ւ ասել, որ ալժամ Թիֆլիսում կան նոյնպէս երկու դիմապործ կրթեալ երիտասարդներ, Գէորգեան ճեմարանի նախկին աշակերտներ, որոնք Ռուսաստանումն են սովորել մեքենաներով գործել և ալժամ կովկասում իրանց տեսակում առաջին և միակն են): Յետոյ ես աչցելեցի իմ համաքաղաքացի պ. Արշակ Կարապետեանցի կտորեղէնների գործարանը: Այս երիտասարդն եղել էր Ախալցխայի զժտութիւնների ժամանակ ուսուցիչ և զրկւելով իւր պաշտօնից՝ ինչպէս շատերն հեռացել էր աղքատաւորից: Նա իւր լսելքն ու միտքը տեղ էր բրդեալ կտորեղէններ գործելուն, հնարել ու կազմակերպել էր մանելու և գործելու մեքենաներ, հաւաքել էր մի քանի օրիտրղ ու կին գործաւորներ ու մի պատուական գործ էր բացել: Կտորների օրինակները տեսալ, որոնք բաւականին ընտիր էին և իրանց գործւածքով ու տեսքով նմանեցրած էին եւրոպականին: Ամսոս որ ախալցխացիք, թէև խօստացել էին աջակցել ընկերութիւն կազմելով, սակայն դեռ այս մարդը մին մենակ գործելով՝ մինչև անգամ լաւ բուրդ առնելու միջոց չ'ունէր: Ես խորհուրդ տւի այս ժրաջան երիտասարդին մեր հայրենի Ալեքսանդրապոլ քաղաքը վերադառնալ, ուր աւելի հնչտութեամբ կարող էր ընկերութիւն կազմել: Եթէ նախկին միջոցներ լինէին, այս գործը կարող էր հնչտութեամբ մրցել գործարանական ապրանքի հետ, վասն զի այն ժամանակը, որ շահում է մեքենան, աչխատանքի բացակալութիւնից մանաւանդ աղպլիսի քաղաքներում կարելի էր

չատ արժան գնել: Վերջին ժամանակներս դարգադործութիւնը նորնդէս բաւականին առաջ դնաց այս քաղաքում, սակա՛ն ախալցխացի կանաք իրանց կիրթ ճաշակով, հալկական տարադով՝ հանդերձի և արդ ու զարդի ձևակերպութեան վերաջ առանձին իմն ազդեցութիւն ունին: Ախալցխոն «մոդայի» կենտրոն է համարուում Ախալքալաքի, Արդահանի, Կարսի և Ալէքսանդրապոլի համար:

Ախալցխալից Ախալքալաք գնալու համար մենք մտնում ենք վերուլիշեալ գետի գեղեցիկ ձորը, որ լի է բաղմամբիւ ալդիներով ու կաղմակերպած բարձր ապաւածներով: 8—9 ժամ լետոյ հասնում ենք Ախալքալաք, նոր քաղաքը, որ Չմիււսնիայի հաղնոցի շափ է: Փողոցներն ու շէնքերը կանոնաւոր են, երեք կողմից չրջապատած է ձորերով, որոնց մէջ գետեր են հոսում դէպի Ախալցխա: Կիրքը բարձր է և ունի մի թիթիւ, ջինջ ու անմահական օդ: Այս քաղաքում արժէ միջան ամարալին երեք ամիսները մնալ, զի ձմեռը շատ ցուրտ է և սաստիկ քամիներ ունի: Այս փոքրիկ անկիւնը սիրելի պէտք է լինի իւրաքանչիւր հալ ճանապարհորդի, որ աշխարհի երեսին շատ մեծ ու փոքր քաղաքներ տեսնելով՝ զուտ հալկական ընտանիքի անարատ կեանքի մէջ է ընկնում: Այս կողմից սիրելի է նաև Ախալցխան, սակա՛ն Ալէքսանդրապոլը մի քիչ փոխւած ենք տեսնում: Կան աչնանդ ընտանիքներ, որոնք ոչ իրանց պսպրի կեանքն են վարում և ոչ էլ գիտեն թէ ինչպէս պէտք է դատարակեն իրանց դաւալներին, կի՛թ ուղում են ճշմարիտ եւրոպացի դառնալ:

Այս խեղճ Ախալքալաքն իւր բաղմամբիւ դիւղօրաւքով 4—5 տարի է տնտեսական մեծ տագնապի մէջ է: Այն հալ գիւղացիները, որոնք մի քանի տարի առաջ պակասութիւն էին համարում հաւ, սիր ու մածուն և այլն չուկայ բերել ու վաճառել, ալժմ, շնորհիւ ատողական երաշտութիւնների և ցրտերի՝ տնով տեղով սնանկացել են և իրանց կանանց կոկիկ ու հարուստ արդ ու զարգը քաղաքում վաշխառուների մօտ դրոււ գրել ամենաժանր պայմաններով: Տասնեակ աջողակ տարիներ են հարկաւոր, որպէս զի այս գիւղերի խելքերը գլուխները գան:

Ախալքալաքում կալ մի փոքրիկ զարգացած երիտասարդական խումբ, որ այս քաղաքի թարմ ոգով գործող առաջին սերունդն է: Սրանց գործունէութեան քսանամեակը մօտենում է, որ վիշտակութեան արժանի է, որովհետև իրանց աղքատիկ քաղաքում, ամենատուղ միջոցներով պահել են երկսեռ վարժարաններ, ընթերցարան և թատերական բնո: Այս կովկասեան աչն գողորիկ բեմերից մինն է, որի վերաջ հալ համեստ կի՛նն ու օրիորդը երբեմն ասիական և երբեմն եւրոպական տարալի զգեստներով թատերասեր հասարակութեան առաջ են ելնում՝ ազգալին ու համասարդկալին արժանաւորութիւններն ու պակասութիւններն ներկայացնելու:

Կեր հրաժեշտը տալով սիրելի Ախալքալաքին՝ գուրս ենք գալիս նորա ընդարձակ դաշտավայրը, որ անձրեակին տարիներում բիւրաւոր մար-

գիկ է կերակրում: Մի երկու ժամ լետոյ հասնում ենք «ղուխարորներ»-ի, ուստի աղանդաւորների գիւղերը, որոնց կեանքը մեր հալ նահապետական գիւղերի հակապակերն է: Գուխարորներն իրանց առարնին արձևաճեւրով, խնայողութեամբ, համաշխարհային ընտիր կեանքով, ժամկալութեամբ և չրջահալցողութեամբ շատ բարձր են մեր հալ գիւղացիներին: Հալ գիւղերը սնանկացան և գուխարորների պարտապան-մշակները դատան: Աարծեօք ասում էին, որ լաւ էլ տոկոս են ասնում: Բազմաթիւ հալ գիւղացիներ, գուխարորների վարուցանքն են անում, որոնք անբան գլուխ չ'ունենալով հողի մշակութեան համար՝ նախադատում են կառապանութիւնը՝ քաղաքից քաղաք շրջելը: Եւ մի անգամ վիչեցի, որ ալա աղանդաւորները վերջին տարիներն, երբ իրանց նահապետի վերջին շտաբիլը, դուտարը, մուսա, սորա հարստութեան և իշխանութեան ժառանգութեան մասին մեծ գծտութիւնների մէջ ընկան և ալժմ վերին աստիճանի գրգռած են երկու կուսակցութիւնները: Մինչդեռ առաջ մեծ ու փոքր կար, սէր ու պատկառանք կար, երբ միմեանց հանդիպում էին ծանօթ թէ անծանօթ՝ սիրալիւ բարև էին տալիս, ալժմ միմիաւն խոժոտ դէմքով ու լաճախ հալհոյանքով են միմեանց կողքից անցնում: Դեր հալերն ալքան տարիներ որոնց գրացութիւնից շատ անճշան մատուր ու բարոյական օգուտներ քաղեցին, իսկ գուխարորները, չ'ունենալով եկեղեցի և ուսումնարան՝ միայն ընտանեկան նահապետական կեանքի վերաջ գնալով՝ աւելի վետարիմեցին քան լաւաջողիմցին: Սա մի հետաքրքրաշարժ քաղաքակիրթական երևոյթ է:

Գուխարորների գիւղերից երկու ժամ լետոյ հասնում ենք պատմական Ախուրեանի ակունքներին, այն վճիռ ու սիրուն վտակներին, ու ստուակներին, որոնք հեղանակ միանալով՝ դէպի Ալէքսանդրապոլ և ապա Անի քաղաքն են շտապելու: Մի քանի ժամ մենք անցնում ենք բարձր ըլուրների վերայից և իջնում խոր հովիտներ ու ձորեր և վերջապէս մեր առաջ բացում է Ալէքսանդրապոլի լաջնածառալ դաշտավայրը, որի սահմանները միայն բարձրաբերձ լեռնաշրջաններն են կարում: Մի ընդարձակ և պատկառելի շրջան է, մի հալական հմալական «կլոր» սլար է ալ, որի մէջ երկու զոյգ հարս ու վեհալ, իրանց «տիկէ հարսանիքի» տարեդարձի ուրախութիւնն են անում իրանց աղւորիկ ու խորտիկ դտերց և աղաների հետ: Մասիս ու Արագածն են ալք ալեղարդ պատկառելի ձերունիները, որ նալում են իրանց բազմադարեան հնութիւնից:

Ալէքսանդրապոլը նոր քաղաք է. շինու է Ալէքսանդր Ա. կալսեր օրով և նորա անունով էլ կոչու է: Առաջ Կիւմրի (Կումալի) էր կոչում, որ մի հասարակ գիւղ էր և որի շինական հասարակութիւնը քաղաքի հիւսիսային կողմը տակաւին կալ և քաղաքի նիւթաւորապէս ուժեղ տարբերից մէկն է կալում: Ալք դասի հետ կարող է մրցել միայն առևտրականը: Ալէքսանդրապոլի բնակիչները բաշկացած են սասամբ կարնեցիներինց

(Ախալցխան ու Ախալքալաքը գլխաւորապէս այս տարրերից են բաղկացած նաև իրանց դիւղերով), ապա բաղադրեցիներէից և գլխաւորապէս Արարի դաղթականներից: Այս երեք քաղաքների բարբառներն էլ համարեա իսկութեամբ խօսում է իւրաքանչիւրն իւր ընտանիքում, սակայն ընթացիկ և տիրող բարբառը կարսինն է: Ալէքսանդրապոլն ալժամ 30,000 բնակիչ ունի, որ անհամեմատ շատ կը լինէր, եթէ պատերազմից չետոյ ամաչացած Արարը չընդլայնէր: Բնակիչները գլխաւորապէս հայերն են, ուրեմն հակահայան քաղաք է. կան սակաւաթիւ Կիւրեր ու Թուրքեր, որոնք հայերի հետ խօսում են հայերէն, իսկ միմեանց հետ թէ մայրենի և թէ հայերէն: Չորրորդ տեղը բռնում են ռուսները, որոնք գլխաւորապէս զինւորական ու քաղաքական պաշտօնեաներ են, հաստատ բնակութիւն ունին ձեր զինւորներն ու պաշտօնեաները, որոնք այլ ևս չեն ուղեցել Ռուսաստան վերադառնալ: Այս քաղաքում ծնւած ռուսները, որոնք մանկական հասակումն ունեցել են հաշ խաղակիցներ, խօսում են և հայերէն: Այստեղ ռուսերէնն այն դերն է կատարում, ինչ Տաւճկաստանի սալոններում զաղիւրէնը, ուրեմն «մօղալի» լեզու է և օրիորդներն արդէն կոտրատում են...: Ուղիղ խօսող քիչ կալ Ալէքսանդրապոլում, իսկ ինչ վերաբերում է արտասանութեանը՝ ինչպէս նաև թիֆլիսինը, «Աովկասեան ռուսերէն» է: Ով ռուսերէն կոտրատել գիտէ, նա ի հարկէ պէտք է նաև վէպեր կարդայ: Մի հետաքրքրաշարժ քաղաքակրթական-պատմական երևոյթ է այս. ինչպիսի որ մանուկներն ընթերցանութիւն սովորելով չափշտակութեամբ կարդում են հեքիաթ և դիւցազներգութիւն, այնպէս մանկական դարդացման մէջ գտնուող երիտասարդութեան միակ ու սիրելի նիւթն է վիպասանութիւնը, որ աւելի օրիորդների մէջ է զգալի: Նրբ ծնողներն իրանք ազէս են, ի հարկէ, նրանից բան սպասելն աւելորդ է, բայց ռուսմասրաճները կոչւած են լոյս տարածելու. նրանք պէտք է ընթերցանութեան համար ազնիւ ու կիրթ ճաշակ զարգացրած լինէն և միայն դասերը սերտել տալով չը բաւականանալին: Այսպիսի օրիորդները «վերելից» են նալում իրանց պէս չը կարդացող երիտասարդների վերալ...:

Ալէքսանդրապոլն երբեմն Կաթնի էր իբրև մի հոանդուն քաղաք, վերջին 5—6 տարիները նա մի տեսակ թմբութեան մէջ ընկաւ: ()տարաքաղաքացի ռուսացական խումբը ցրւեց, նորատեղը բռնեց տեղականը, որ հայերն իբրում շատ արժան գնահատուեց: Հարուստ և լուրջ մարդիկ հակական դպրոցներում ալ ևս դաւակներ չ'ունենալով՝ հեռացան հողաբարձական ասպարիւղից: Հողաբարձութիւնը, որ առաջ մի պատուաւոր կոչում էր, ալժամ նաև այն երիտասարդ տարրից զրկուեց, որ անձնւիրաբար գործում էր: Գնահատութիւն չկար:

Այս տարի հանգամանքները վտխել են: Միւնուոյն ժամանակ եկիւ է մի արժանաւոր չաջորդ հայր Գ. Սաթուհեանցը, որ ձգտում է վերջ տալ այն կուսակցական ոգուն, որ շատ բան քանդեց: Ալժամ այդ հնարաւոր է

և մենք պէտք է սպասենք, որ չաջողի այդ կարևոր դիտաւորութիւնը, որ ցարդ ոչ մէկին չը վիճակեց: Ալէքսանդրապոլում լաւ մտաւոր և բարոյական ուժեր կան, նորա ժողովուրդը արթուն և ընդունակ է, պէտք է միայն նորա ուժերի գործադրութեան եղանակն իմանալ: Այս քաղաքի հայերը վաղ ժամանակներից հետեւել են բարձրագոյն կրթութեան, ունին բաւականին համալսարանականներ, որոնց շատերն հասարակական և գրականական ասպարէզներում կարևոր դեր են խաղում՝ միայն ոչ իրանց քաղաքում: Այլ և այլ պատճառներէն հարկադրած՝ համալսարանակաների այդ խումբն այսօր ցրած է հեռաւոր քաղաքներ և իրանցից ոչ մի ներկայացուցիչ չունին քաղաքում: Այս տարի պր. Պ. Զիթողեանը միակ մարդն էր, որ վերադառնալով բելգիական Վիեժ քաղաքի արևստանոցից՝ դարեջրի կանոնաւոր գործարանի էր ձեռնարկել իւր հայրենի քաղաքում: Միւս տարի կրտսեր եղբայրն էլ է աւարտելու ու երկուսը միասին նաև այլ գործարաններ հիմնելու դիտաւորութիւն ունին: Մեր երկրում հում նիւթերն ու մանաւանդ աշխատանքը շատ արժան է. այս տարի էլ պատահմամբ բացուել են քաղաքի շրջակայքում քարածուխի անագին լեռնաշղթաներ, որ առանձին կեանք պէտք է նւիրեն Շիրակին: Ալէքսադրապոլն իւր շրջակայք բաղմամբիւ հազ գիւղերով բացառապէս ապրում է ցորենի և գարու բերքերով. երբ երաշտուք է, հազիւ է չունչ առնում:

Այս անգամ Ալէքսանդրապոլում մեծ շարժում կար, օժուում էր Աստուածածնայ վերաշինած եկեղեցին և մի զարդացած երիտասարդ ու. Մեւրիան՝ քահանայ էր ձեռնադրւում: Մենք թէև անծանօթ մնացինք այս մեր ներկայ թեմական տեսչին, սակայն, ինչպէս պատմում էին, գործունեայ և զարգացած ուսուցիչներից մէկն էր Նրեանի թեմական դպրոցի. ուստի մեր ուսումնարանները վերջին տարիները խապաւ զրկւած լինելով թեմական տեսչից՝ այս դէպքը կարող էր միայն ուրախալի լինել: Միևնուց ժամանակ ես չէի կարող շատ ողևորել նոր եկեղեցու մեծածախք շինութեամբ՝ չը նաչելով որ Սրբազան քարոզիչ Պարզեանը տհաճութեամբ խօսեց այն թղթակիցների մասին, որոնք այս տնտեսական տաղնապի ժամանակ աւելորդ էին համարել այս շէնքը, քանի որ մի քանի քաչափոխ հեռաւորութեան վերայ Յանագին եկեղեցիներ ունինք, որոնք բաւական դատարկ են մնում: Ըստ իս մի փոքրիկ մատուռ կ'բաւէր Աստուծոյ պատկերի համար, իսկ մնացած Կուսարը պէտք էր երկսեռ վարժարանաց շինութեան սեպհականացնել, որոնցից երկուսը մեծ վտանգի մէջ են:

ՍԵՒ-ԼԵՌՆՑԻՔ

(ՄԻ ՏՈՂՄԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐ)

ՅԼՐՈՒԹԻՒՆ ՂԱՐԱԳԵՕՋԵԱՆՑԻ

Մեր աշխարհի այն մասը, որը կոչուում է Եւրոպայ, ունի իւր հարաւում մի ընդարձակ լեռնոտ սեպաձև տարածութիւն, որը շրջապատուած է երեք կողմերից ծովերով և որը կոչուում է Բալկանեան թերակղզի: Այդ թերակղզու մեծ մասը ծածկուած է Բալկան կոչուած լեռներով, որոնք զլիսաւորապէս հաւաքուած են նորա արեւմտեան մասում և բռնում են Ադրիական ծովի ափերը: Հենց այդ ծովափնեայ բարձրաւանդակի ամենալեռնոտ մասում գտանում է մի վտքրիկ երկիր, որ կոչուում է Սե-լեառ ¹⁾ կամ Աարադադ: Սե-լեառն մեծ մասը բռնում են այնպիսի մուսլու անբերրի լեռներ, որոնք լի են ահռելի քարանձաւներով, վիհերով ու անապատներով: Նաո քիչ են պատահում այդ լեռների մէջ արգաւանդ հովիտներ կամ ձորեր: Ահա այդ մութ սարերի մէջ, երկար ժամանակից ի վեր ապրում է մօտ երեք հարիւր հազար (300,000) մարդ սլաւոնական ցեղից, որոնք կազմում են մի ամբողջ առանձին ազգութիւն, անկախ տէրութիւն: Այդ սարերում այս մի բուն ժողովուրդը, ինչպէս արժիւներ հիւսեցին իրանց բոյները, և ահա,

¹⁾ Այդ երկիրը ունի 170 քառակուսի մղոն տարածութիւն և 300,000 բնակիչ: Երբ այդ երկիրը ծածկուած է եղել խիտ անտառներով, դորանից դուրս է եկել Սե-լեառն կամ Աարադադ անունը: Իսկ այժմ միմիայն ամեն լեռներ են կրպին կազմութեամբ: Սե-լեառը իրանց սլաւոնների մէջ լալանի է Չերնոգորիա անունով:

չորս հարիւր տարուց աւելի է, որ արժիւնների նման պահպանուած են անվեհեր իրանց հայրենի լեռները միշտ քաջութեամբ կուելով, թէ հարեան բարբառոս թուրքերի և թէ ուրիշ թշնամիների դէմ, իրանց անկախութեան և ազատութեան համար: Հզօր է այդ ազգը բոլորը այնպիսի ընտիր դիւցազներ են, որոնց մասին միայն իրանց հին երգերու՛մ կարելի է լսել: Ուստի, աւելորդ չի լինի պատմել, թէ ինչպէս կազմեց այդ լեռնային արժիւնների բոյնը, ինչպէս առաջացան այդ դիւցազունները իրանց երկրի պահպանութեան համար և թէ ինչպէ՞ս են նոքա ապրում այժմս:

Վեց-եօթ հարիւր տարի սորանից առաջ, երբ Բալկանեան թերակղզում զոյութիւն ունէր սերբիական ընդարձակ թագաւորութիւնը, Սև-լեռը, որ այն ժամանակ Զէս էր կոչուած, կազմում էր չիչեալ թագաւորութեան մի մասը և կառավարում իւր իշխաններով, համարեա բոլորովին անկախ:

Սօտ հինգ հարիւր տարի առաջ տաճիկները, ոտք դնելով Բալկանեան թերակղզում, իրանց զօրքերով արշաւեցին սերբիացոց վերայ: Ղժբաղդաբար այդ ժամանակ սերբիացոց թագաւորութիւնը սաստիկ թուլացել էր կառավարող իշխանների մէջ պատահած երկպառակութիւնների և անմիաբանութեան շնորհիւ, այդ պատճառով չը կարողացաւ դէմ դնել այն ժամանակեաց հզօր և պատերազմասէր տաճիկներին: Այդ կռիւը տեղի ունեցաւ 1389 թւականին Կոստովի դաշտում: Այդ անյաջող պատերազմում ոչնչացաւ սերբերի զօրութիւնը. նահատակեց նոցա վերջին Լազար անունով թագաւորը և սերբիացոց երկիրը կամաց կամաց ընկաւ տաճիկների իշխանութեան տակ: Անկախ մնաց միայն գէտացոց կամ սև լեռնցոց երկիրը, որ կառավարւում էր իւր իշխաններով. բայց գէտացոց անկախութեանը նոյնպէս վտանգ էր սպառնում անհաշտ թշնամու կողմից: Նոքա ոչինչ էին այդ ժամանակ, եթէ ոչ մի բուռն սերբեր, որոնց վերայ եթէ ո՛չ այսօր, գոնէ վաղը պիտի արշաւէին տաճիկների անհամար հրոսակները: Օգնութեան յոյս չը կար ոչ մի տեղից, իրանք էլ անկարող էին իրանց պաշտպանել, միմիայն յոյսերը դրին իրանց լեռների վերայ: Զէտերի երկիրը կազմեա՛ծ էր երկու մասերից — հովիտներից ու լեռներից: Այդ լեռները նոցա համար ոչինչ էին, եթէ ոչ բնական ամրոցներ, որոնց պատերը բոլորովին վերանորոգութեան

կամ ամրացնելու կարօտութիւն չ'ունէին: Յաւական չէ՛ որ զէտերի այդ լեռնոտ մասը ջրջապատւած էր բոլոր կողմից ուղղաձիգ ու ցից ժայռերով, այլ նաև բաժանւած էր էլի մի քանի մասերի, որոնցից իւրաքանչիւրը ներկայացնում էր մի մի փոքրիկ բնական ամրոց, սլաքփակւած մի մեծ ամրոցում ճիշդ այնպէս՝ ինչպէս մեր Ալլիկիայի¹⁾ լեռները—Միջերկրական ծովի արևելա-հիւսիսային ափում:

Ձէտերի կառավարչներից մէկը, Յովհաննէս Աերնտելիչ անունով՝ վճռուեց օգուել այդ հանդամանքից, այն է՝ իրանց երկրի բնական ամրութիւնից, պահպանելու սերբիացոց այդ մասի ազատութիւնն ու անկախութիւնը: Նա տեսաւ, որ հովտում մի բուն ժողովուրդ կայ և անկարելի է դէմ դնել տաճիկ թշնամու ահագին ոյժին. դորա համար Յովհաննէսը այրեց իւր նախնիքների հին մայրաքաղաքը, թողեց հովիտը ու հեռացաւ իւր ժողովրդի հետ լեռներում ապաւինելու համար: Այստեղ սերբերը թէև թւով քիչ, բայց յոյս ունէին դէմ կենալ թշնամուն, որովհետև ամեն մի քարանձաւ, ամեն մի ժայռ նոցա համար մի մի նեցուկ էր ներկայացնում: Քաղնւելով անձաններում, դարան մտնելով բարձր քարերի շտուքը, մի խումբ մարդիկ կարող են հրացանի գնդակներով հազարաւոր թշնամիներ ոչնչացնել, կամ թէ չէ՝ հենց միայն քարանձաւութեամբ անդունդները շարտել նոցա: Եւ մինչև այժմ Աւ-լետաը կամ Ղարադաղը շրջապատւած է ամրոցներով. նա ո՛չ մի ամրոցի կարօտութիւն չի զգում, թէպէտ և իսկական ամրոց էլ չ'ունի:

Յովհաննէս Աերնտելիչը, ամրանալով իւր հայրենի լեռներում, հաւաքեց իւր քաջ ազատասէր ընկերներին և նոցա հետ միասին ուխտեցին յաւիտեան կուել տաճիկների դէմ: Նոքա իրանց խորհրդում այսպէս վճռեցին. «Եթէ մի որևէ սև լեռնցի կը փախչի պատերազմի դաշտից՝ թողնելով իւր հաւատարիմ եղբայրներին թշնամու սրի առաջ, այն ժամանակ նա կը կորցնի իւր բարի անունը, պատիւը, յարգանքը, նորան կը հազցնեն կանացի շորեր և կանայք իրանց իլիկներով կը քշեն զիւզից գիւղ»:

¹⁾ Ալլիկիայի լեռները շարունակութիւն են կազմում Վարինի բարձրաւանդակի, սրի ամենաբարձր գագաթը «Արարատն» է 18,700 ֆուտ բարձրութեամբ:

Այդ ուխտը մինչև այսօր պահպանուում է սև-լեռնցի քաջերի մէջ: Մինչև այսօր նոքա չիշում են այդ ուխտը, չիշում են իրանց եղբայրների ստրկութիւնը և իրանց երգերում երգում են հերոսների սիրազործութիւններն ու քաջութիւնները, որոնք իրանց զուխը գրին հայրենիքի ազատութեան համար, լաւ համարելով մահը՝ քան ստրկութիւնը: Եւ մինչև այսօր՝ սև-լեռնցու համար չը կայ ոչինչ աւելի ամօթալի եթէ ոչ ասել՝ որ նորա նախնիքները մեռան անկողնում, այսինքն իրանց բնական մահով, և ոչ թէ պատերազմի դաշտում, և այս պատճառով սև-լեռնցին միայն իւր չար թշնամուն կը ցանկայ մեռնել տանը իւր յարկի տակ: Այսպիսով Յոհաննէս Չերնոեւիչից սկսում է սև-լեռնցոց պատմութիւնը: Սակայն, պատմութիւն, որ պարունակում է իւր մէջ չորս հարիւր տարւայ արիւնահեղ պատերազմներ, որտեղ մի բուռն քաջ մարդիկ կուում են ահագին ոյժերի դէմ իրանց քրիստոնէական կրօնի ազատութեան համար, իրանց հայրենի լեռների համար:

Հարիւր հազարաւոր, մինչև անգամ միլլիօնաւոր տաճկական զօրքեր մտել են այդ անմատչելի լեռները, որպէս զի այդտեղից էլ չը վերադառնան: Շատ և շատ անգամ խորտակեցին սև-լեռնցիք թուրքերի յարձակումները և միանգամ միայն նոքա չը դիմացան: Բայց տասն և եօթերորդ դարու սկզբում (1623 թւականին) տաճիկները, ձանձրանալով սև-լեռնցոց դէմ մղած միշտ անյաջող պատերազմներից, վճռեցին միանգամայն վերջ տալ այդ մի բուռն ժողովրդին: Հաւաքեցին անհամար զօրքեր, չը նայելով սև-լեռնցոց կատաղի դիմադրութեանը՝ զրաւեցին նոցա մայրաքաղաքը, քանդոտեցին ամբողջ երկիրը և նոցա վերայ հարկ գրին: Այդ ժամանակ նոցա մէջ սկսաւ դաւաճանութիւն մտնել, սկսան երևալ այնպիսի մարդիկ, որոնք իրանց անձնական շահի համար ուրացան իրանց հայրենի կրօնը և ընդունեցին մահմեդականութիւն: Այդ ժամանակ սև-լեռնցոց կառավարում էին մետրոպոլիտներ (հոգևոր զլուխ), որովհետև Յովհաննէս Չերնոեւիչի ժառանգներից մէկը հրաժարեց իշխանութիւնից և յանձնեց մետրոպոլիտին: Անցեալ դարու սկզբում մետրոպոլիտ ընտրուեց մի քաջ ու խելացի մարդ—Ռանիէլ Նեզոչ անունով: Նա տեսաւ, որ արձակ կուում դժար է սև-լեռնցոց համար յաղթել տաճիկներին և այսպիսով թոթափել ստրկութեան անարգ լուծը. բայց

միևնոցն ժամանակ աւելի սպասելը վտանգաւոր էր, որովհետև սւ-
լեռնացոց մէջ քանի գնում՝ մահամեղականների թիւը աւելանում էր և
քրիստոնէական կրօնը կարող էր ոչնչանալ: Այդ պատճառով Գանիէլը
վճռեց միանգամից ոչնչացնել սւ-լեռան մէջ բոլոր մահամեղականնե-
րին. կանչեց դադոնի կերպով մի քանի անվեհեր ու ազգին անձնա-
տուր մարդիկ և նոցա վճռեց Քրիստոսի ծննդեան գիշերը անխնայ
կերպով սրի անցկացնել բոլոր մահամեղականները, թէ տաճիկներին և
թէ մահամեղականութիւն ընդունող սւ-լեռնացիներին: Այդ դադոնիքը
աջնպէս խիստ և սրբութեամբ պահպանուեց, որ մինչև իսկ մահւան
ժամը մահամեղականները ոչինչ չը գիտէին: Եւ կատարուեց սարսափելի
արիւնհեղութիւն: Մահամեղականներից շատ քչերը կարողացան ազատ-
ւել մահից: Բայց Արապաղը, ազատ Արապաղը՝ կրկին ստացաւ
իւր ազատութիւնը և այժմ չը կայ նորա մէջ ո՛չ մի մահամեղական:

Այդ ժամանակից սկսած ահա՛ անցնում է երկու հարիւր տարի
և սւ-լեռնցիք երբէք չե՛ն դադարում յաջողութեամբ պահպանել
տաճիկների յարձակումներից: Եւ տարի չէ՛ անցնում, որ նոցա լեռ-
ներում չը հնչեն պատերազմի փողերը, աղաղակները, սրերի շա-
չիւնները և հրացանների որոսման ձայները:

Ամեն տարի արիւն է թափւում սւ-լեռնցու և տաճիկի մէջ:
Եթէ այդ յաճախ յարձակումները կատարեալ պատերազմի բնաւորու-
թիւն չե՛ն կրում, բայց և աջնպէս իւրաքանչիւր տարի արիւնհե-
ղութիւնը անխուսափելի է նոցա մէջ: Երբեմն անզգոյշ սւ-լեռնցի
հովիւն գնդակահար է անում թփի մէջ թաղնւած տաճիկը և աւա-
րում ամբողջ հօտը:

Երբեմն Իսկուտարի լճում, ուր թէ սւ-լեռնցիք և թէ տաճիկ-
ները ձկնորսութիւն են անում միասին, մի ոչինչ քանի համար կռիւ-
են սարքում և սկսում է կոտորածը. կռիւը չի դադարում, մինչև
որ մի քանի մարդիկ չը սպանուեն երկու կողմից: Սակայն, սւ-լեռնցիք
ո՛չ թէ միայն տաճիկների հետ հարկադրւած են եղել կուռելու, այլ
և իրանց հարևան վենետիկացոց կամ իտալացոց հետ, յետոյ Ֆրան-
սիացոց հետ, որոնք աիրել էին իտալացոց երկիրը, և վերջապէս
աւստրիացոց հետ:

Կուռի պատճառը կայանում էր նրանում, որ սւ-լեռնցիք վա-
ղուց ցանկանում էին ձեռք բերել Կատարո ծովափնեայ քաղաքը)

որ իսկապէս անհրաժեշտ էր նոցա և որը պատկանում էր իրանց հայրենիքին:

Ճաճիկները Ղարաղաղին անուանում են թակարդ. և դա ճշմարիտ է. ամեն կողմից շրջապատած թշնամի ցեղերը, անմատչելի ժայռերով և միայն մէկ յարմար ճանապարհ կայ դէպի Պատարբօ քաղաքը: Մի՛ միայն այստեղ սև-լեռնցիք կարող էին հանդիստ կերպով ծախել իրանց երկրի բերքերը և դնել այն՝ ինչ որ նոցա բնութիւնը չի՛ արտադրում: Այդ քաղաքի համար նոքա կռիւ ունեցան մինչև անգամ Քրանսիացոց առաջին կայսր Նապալէօնի հետ, որը յափշտակել էր իտալացոց երկիրը: Սակա՛յն նոյն ինքը Նապալէօնը, նւաճելով եւրոպական ազգերի կէսը, հարկադրւած էր մտքից հանել սև-լեռնցոց նւաճելու համար կազմած ծրագիրը:

Ահա՛ թէ ինչպէս է պատմւում Նապալէօնի այդ անցաջող փորձը՝ սև-լեռնցոց մի ազգային երգի մէջ:

«Ո՞վքեր են այդ սև-լեռնցիք»,
Բոնապարտն է հարցընում,
«Ուղի՞ց է, որ այդ շար մարդիկ
Մեր ոյժից չե՞ն վախենում:

«Կը զղջան այդ յանդուգնները,
Ասացէ՛ք դրանց մեծերին,
Որ իրանց թուր, հրացանները,
Զդեն ոտքերիս տակին»:

— Զար են քո սպառնալիքները,
Մենք խոնարհւող պտուղը չե՛նք,
Մեր քարերը, մեր ժայռերը,
Զօրքիդ շիրիմ՝ կը դարձնեն՛նք:

Եւ մեր որջերում նստած
Անկոչ հիւրին ենք սպասում,
Մօտենում են կամաց կամաց
Նրձակայքը քանդոտում:

Ժայռի տակով նրանք անցնում են,
Եւ շփոթւում... վերևում՝

Փայլի գլխին նրանք տեսնում են,
Այլ գլխարկներ են փայլում:

«Դէ՛հ, ձեզանից թո՛ղ ամեն մին
Մի լեռնցի ըսպանի,
Անինայ է մեր թշնամին,
Գուք էլ նրան մի՛ք խնայի»:

Որոտացին հրացանները,
Եւ ցցերի վերայից
Ընկան կարմիր գլխարկները.
Մենք գուացինք թփերից:

Մեր հրացաններն որոտացին
Նոցա կրծքին: «Այս ի՞նչ է,
Փրանսիացիքը գուացին.
«Արձագա՞նք է»: Ո՛չ, այն չէ՛:

Նրանց գնդապետը վրռեցաւ,
Նրա հետ հարիւր քրսան մարդ,
Անբաղդ գունդը շփոթեցաւ,
Մենք Աստծուն տւինք փառք:

Այսպէս էին ապրում մինչև այժմ սև-լեռնցիք, համարեա միշտ կուելով՝ երբեմն առանձնակի, երբեմն պատահական խմբերով, երբեմն պատահական ճակատներում, երբեմն նախօրօք մտածած պատերազմներում, երբեմն արձակ դաշտում և երբեմն դարան մտած տեղից. այլապէս նոքա չէին կարող ապրել, որովհետև ամեն կողմից նոցա շրջապատել են անհաշտ թշնամիներ, սպառնալով նոցա ազատութեանը և անկախութեանը, հաւատին և ընտանիքին ¹⁾: Աւրեմն զարմանալի չէ՛, որ ամեն մի սև-

¹⁾ Սև-լեռնցիք ոչ մի ժամանակ երկարատև չեն կրել օտարի սարկահան լուծը: Նոցա պատմութիւնը ոչ ինչ է, և թէ ոչ հերոսական պատերազմներ թաճկի դէմ: Ընկնել պատերազմի դաշտում սև-լեռնցու համար դառել է մի սովորական երևոյթ: Սևոնել հիւանդութիւնից կամ ցաւից համարում է նոցա համար ամենաթշուառ վիճակ, որ կարող է մարդ ունե-

լեռնցու համար պատերազմը, արիւնհեղութիւնը դարձել է մի անհրաժեշտ ու մշտական արարմունք. իւրաքանչիւր մարդ այստեղ պարտաւորւած զինուոր է և միայն անչափահասութիւնը, հիւանդութիւնը կամ խորին ծերութիւնը կարող է սև-լեռնցուն ազատել հայրենիքի պաշտպանութեան համար կուր զնալու պարտականութեան առաջին հրաւերքից: Աև-լեռնցին ամենափոքր հասակից պատրաստում է իրան պատերազմական կեանքին: Դեռ ևս ծծկեր մանուկ՝ դնում են նորա օրօրոցում հրացանը և ատրճանակը, ու մկրտութեան հանդէսին ներկայ եղողների առաջին օրհնութիւնը լինում է այն, որ լինի քաջ և անվեհեր պատերազմի դաշտումը: Այն տեղի քահանաները մաղթանքների հետ միասին կատարում են նաև իրանց հայրենիքի ազատութեան խորհուրդը նորածնեալ մայրերի վերայ:

Իսկ ներկայ եղողներից մէկը ասում է. «Թո՛ղ մեր ապագայ զինուորը շուտով լուանայ իւր հրացանը թշնամու արիւնով: Միւսը բարեմաղթում է. «Թո՛ղ նորածին մանուկը միշտ ազատ լինի իւր կեանքումս: Երրորդը ցանկանում է. «Թո՛ղ անհաշտ թշնամի լինի տաճկին և կուր ինչպէս իւր հայրը»: Իսկ չորրորդը աւելացնում է. «Իննայէ Աստուած նորածնին և նորա յետագայ սերունդը մեռնել անկողնումս»:

Երբ մանուկը սկսում է ոտքի կանգնել, ամրանալ, երբ սկսում է զննել իրան շրջապատող կեանքը և նորա հոգաւ մէջ զարթնում է ջերմ սէր դէպի իւր հայրենիքի հերոսները, ծարաւ դէպի պատերազմական փառքն ու սխրագործութիւնները և ատելութիւն դէպի իւր հայրենիքի թշնամիները: Ականջ զննելով մեծերի խօսակցութիւններին, նա ամենից շատ լսում է հերոսական քաջութիւնների

Նալ: Այժմ նոցա կառավարութիւնը բոլորովին պատերազմական է: Ամեն մի սև-լեռնցի 17—48 տարեկան հասակում պարտական է զնալ հայրենիքին սպառնացող թշնամու դէմ: Նոցա իշխանը և ժողովրդական ներկայացուցիչների ժողովը վճռում են պատերազմ: Այտանգի ժամանակ բոլոր արական ցեղը 14 տարեկանից սկսած մինչև 60 տարեկանը հրաւիրւում է զինուորելու, հրացան առնելու. շատ անգամ նաև նոցա 12 տարեկան երեխաները ու աղջիկները ձեռք ձեռքի տւած, քարերով զինւած՝ պատերազմի դաշտ են դուրս գալիս դու տաճկի դէմ:

և արիւնալի կռիւների պատմութիւնները. նա տեսնում է, թէ ինչպիսի արհամարանքով են խօսում նոքա մահւան և վախկոտների մասին, որոնք մի ճանճ թուշելիս լեղիներն է պատուում:

Նե ահա՛, նա, խանձարուրից դեռ նոր դուրս եկած, երեւակացում է, թէ ինչպէ՞ս պիտի սպանե տաճիկին, ինչպէ՞ս պիտի լուծէ հօր և եղբօր մահւան վրէժը, ինչպէս պիտի արիաբար ձեռքին խաղացնէ հրացանը ու դաշոյնը, որը արդէն չորս տարեկան հասակից սկսած կախ է արած նորա մէջքից: Ինչ կը վերաբերէ կրթութեանը, Սև լեռնցիք միայն վերջին ժամանակներս սկսեցին գրել-կարդալ սովորեցնել երեխաներին իրանց մայրենի լեզուով, իսկ առաջ դրագէտները նրանց մէջ այնքան քիչ էին, որ մինչև անգամ նոցա քահանաները չը գիտէին կարդալ ու գրել և ժամերգութիւնները կատարում էին առհասարակ անգիր:

Սև լեռնցոց մնացած բոլոր եղած չեղած զիտութիւնը մինչև այսօր կայանում է նրանում, թէ ինչպէ՞ս պէտք է ճարպիկութեամբ թուշել վիհերի վրայից. քարը կամ դաշոյնը այնպէս վեր ձգել, որ նա մի քանի անգամ պտտելով օդի միջում, որքան կարելի է ամուր ցցւի ծառի կամ փայտի մէջ, ճիշտ այնպէս, ինչպէս տաճիկի սրտում: Փոքրութիւնից երեխան արդէն սովորում է մազլցել ուղղածիգ ժայռերի վերայով, անչառակ անդունդների կողքերով: Նրիտասարդի կրթութիւնը վերջանում է նրանով, որ սովորեցնում են նոցա հրացան արձակել և զէնքերը մաքրել. երբ նա այդ բաներումն էլ հմուտութիւն ցոյց կը տայ, այն ժամանակ հայրը իւր բոլոր ազգականների ներկայութեամբ, ենթարկում է նորան քննութեան և ապա հանդիսաւոր կերպով յանձնում է նորան հրացանը. և այնուհետև երիտասարդը դառնում է շիւնակի—կորովի զինւոր, որ հաւասար իրաւունքներ ունի հայրենիքի միւս պաշտպանների հետ:

Բայց արդեօք ինչպիսի մարդիկ են դուրս գալիս այդպիսի դաստիարակութիւնից: Բոլորը ընտիր ընտիր զիւցազներ: Գեղեցիկ է, բարձրահասակ և փայելլակազմ սև լեռնցին, երեսի զծաղրութիւնը կանոնաւոր, հայացքը թափանցող, հստատ, անյողոցող, պարթև, քաջ արի: Նա արագաշարժ է ու ճարպիկ, թէ պատերազմի մէջ և թէ որսի ժամանակ:

Նորա հրացանի գնդակը նշանից չի անցնում, դաշոյնի հար-

ածը մահացու է: Արքան ճարպիկութեամբ և համարձակ կերպով կալում է սև լեռնցին ժայռերի և քարերի կրճքին, որպիսի անվհերութեամբ հրացանի վրա թեկնած նա թուում է վիհերի վերայից! Չը կան նորա լեռնոս հայրենիքում ո՛չ չարմար ուղիներ, ո՛չ կամուրջներ. բայց սև լեռնցու համար ամենայն կողմ կայ ճանապարհ: Անսովոր մարդու մազերը բիզ-բիզ կը կանգնեն, երբ կը տեսնի այս ժայռերի մէջ որբուղ և անդունդներում կորչող շաւիղները. բայց սև լեռնցու համար սոքա ոչինչ են: Համբերութեամբ տանում է նա քաղցը և ծարաւը. քնում է բաց երկնքի տակ՝ մերկ քարերի վերայ, ուշադրութիւն չը դարձնելով ո՛չ ցրտի, ո՛չ քամու և ո՛չ անձրևի վերայ.

Մինչև անգամ կանայք այդ հերոսական երկրում քաջարի են այնպէս, ինչպէս տղամարդիկ: Երբ որ թշնամին նորա հայրենիքի երկիրն է մտնում, նոքա, իրանց ամուսիններին ու եղբայրներին համահաւասար, առնում են հրացանն ու գնում պատերազմի դաշտը, սիրտ են տալիս թույլերին, գովելով քաջերի չալթութիւնները: Ահա՛, թէ ի՛նչ է պատմվում սև լեռնցոց մի երզի մէջ. — «Սարի գլխին կանչեց վիրաւոր իւնակը (կորովին). անիծւած լինի՞մ ես. սպանեցին իմ խեղճ Ստանեցոյին և ես ոչժ չունիմ վրէժ-ինդիր լինելու: Իսկ հովտում լսեց նորան կինը և իմացաւ, որ սպանել են իւր սիրելի ամուսնուն:

Առնում է նա հրացանը և սուրը և քշում է թուրքերին, որ սպանեցին նորա սիրելի մարդուն, քշում է նա տասն ու հինգ թուրք միասին և ամենից առաջ վազում էր նոցա մեծաւոր Ձենդիզ-աղան: Հասաւ կինը Ձենդիզ-աղային և թողեց հրացանի գնդակը նորա ստոր սրտում: Սառեցաւ սիրտը առաջւանից աւելի և նա կարեց աղայի ածելած գլուխը և բերեց երեսաներին ցոյց տալու»:

Ձենդիզ աղայի կինը խաբէութեամբ դուրս է կանչում նորան մենամարտութեան. և ահա՛, քրիստոնեաց կինը հանեց իւր կանաչի շորերը և հագաւ Ձինդիզ աղայի շորերը, առաւ նորա ատրձանակները և հեծաւ նորա թրքական ձին:

«Երբ մտնեցաւ նա նշանակեալ տեղը, տեսաւ թրքուհին մենակ է՛ եկել, այլ մի ուրիշ թուրքի հետ. իսկ այն թուրքը նստած է հզօր ձիու վերայ ու սպասում է»:

Յարձակեց թուրքի վերայ սև անգղի նման, նստեցրեց նորա սրտում երկու հրացանի զնպակ և կորեց նորա ածելած գլուխը ու գցեց խուրճինը երեսաներին ցոյց տալու: «Բռնեց նա յետոյ երխասսարդ թրքուհուն, բերեց իւր հետ գիւղը և ստիպեց նորան կովեր և այծեր արածացնել:

Պահեց նորան իբրև հովուհի տասն և հինգ տարի և յետոյ ազատ թողեց վանդակիցս:

Գալով սև լեռնացոյ կենցաղավարութեանը, նոքա չունին ո՛չ քաղաքներ և ո՛չ գեղեցիկ շինութիւններ: Նոցա մայրաքաղաք Յեաինէն անգամ կարելի է գիւղ կոչել. նա ընդամենը հարիւր տուն ունի և երկու փողոց: Նոցա կառավարող իշխանի պալատը նոյնպէս մի անշուք բան է: Սև-լեռնացոյ եկեղեցիները անգամ սաստիկ աղքատ ու փոքր են. նոցանից ամենամեծում 40—50 մարդ հազիւ կարող են տեղաւորել: Նոցա բոլոր զարդարանքը միայն Փրկի պատկերն է: Եկեղեցական սպասներն ու քահանայի զգեստները անգամ շատ կոպիտ ձեռագործներ են, հասարակ, աղքատիկ:

Սև լեռնցիք ապրում են մեծ ընտանիքներով, տները շինում են որտեղ որ պատահի՝ լեռաների լանջերում, քարանձաւներում ու նոցա քունջ ու պուճակներում: Նոքա ապրում են երկու երեք, երբեմն տասն տներով, որոնք կոչվում են կուշաներ, ինչպէս մեզանում գիւղական համբառունները:

Նոցա խրճիթները շինւում են միմիայն լոկ քարերից սռանց ծեփելու, մեծ մասամբ բաղկացած են երեք պատերից, որովհետև չորրորդը արդէն կազմում է ժայռը, որին յենւում են այդ խրճիթները: Խրճիթները շատ ցած են, թեք կտորներով և ծածկւած են միայն ծղոտով, ասանց վառարանների, և լուսամուտի տեղ՝ մի հասարակ բաց անցքով, այն է՝ հերդիկով: Խրճիթների մէջ տեղը շինւած է լինում նոցա օձախը, որ մի փոս է շրջապատւած քարերով, որոնց վրայ դարսում են փայտերը: Այդ օձախի վերայ պատրաստում են իրանց պարզ կերակուրը, իսկ երեկոները հաւաքւում են նորա շուրջը լսելու իրանց պատերի զրոյցները և կամ աշուղի խաղերը: Ցան նախանկիւնում քաշ է արած մի սուրբի պատկեր, իսկ պատերի վերայ զէնքերը:

Սև լեռնացու տնական կահ կարասիքը շատ աղքատ է: Շատ քիչ

տներում կարելի է գտնել այնքան աման, որքան անհրաժեշտ է մի կանոնաւոր տան համար: Եւրաքանչիւր խրճիթում կայ միայն մի պղինձ, որի մէջ եփւում է ամենայն բան և որը սովորաբար կախ է արած լինում օձուքի վերայից: Այդ պղինձի մէջ եփած բոլոր կերակուրը լցնում են մի փայտեայ սկուտեղում (ղուշ), որը դնում են ցած սեղանի վերայ և որի շուրջը տեղաւորում է բոլոր ընտանիքը, ինչի վերայ էլ որ լինի, աթուռի, քարի, ծառի կոճղի կամ նոյն իսկ չատակի վերայ: Պատառաքաղի, զանակի, սփռոցի մասին նոքա հասկացողութիւն անգամ չունին:

Իսկ եթէ հարկաւոր է լինում միւր կամ հացը կտրել, այն ժամանակ սև լեռնցին հանում է գոտկից զանակը և կոտորում նորանով, ամենեւին ուշադրութիւն չը դարձնելով, որ գո՛ւցէ այդ զանակով մի քանի տաճիկների գլուխներ են կտրուել:

Սև լեռնցու բոլոր հարստութիւնը կազմում է նորա հրացանը, որ անցնում է ժառանգաբար որդուց որդի: Այդ պատճառով նա ուր էլ որ գնայ, իւր հրացանը միշտ հետն է տանում: Մինչև անգամ նոցա քահանաները զինւորած են ման զալիս, և հրացանից բաժանւում են միայն այն ժամանակ երբ եկեղեցի են մտնում. և ուրիշ ոչ մի բանով չեն զանազանւում նոքա մնացած աշխարհականներից. նոքա նոյնպէս ապրում, նոյնպէս հագնում ու նոյնպէս կոււում են, ինչպէս իրանց ծուխերը:

Այսպէս կազմւեց սև լեռնցոց կացութիւնը, նոցա բնաւորութիւնն ու կենցաղավարութիւնը: Նոցա ամեն բանում նկատելի է պարզութիւն, որ ունենում է ամեն ժողովուրդ իւր հետու անցեալում: Չորս հարիւր տարի է, որ նոքա կոււում են տաճիկների հետ և այդքան ժամանակեայ ընթացքում նոքա յետ մնացին ուրիշ ազգութիւններից իրանց մտաւոր զարգացումով և ուսումով:

Եւրոպական միւս ազգերի կեանքը այս չորս հարիւր տարեայ ընթացքում շատ բաներում բարեփոխւեց. իսկ սև լեռնցոց համար չը կայ ոչինչ բարեփոխութիւն կամ յառաջադիմութիւն: Ամբողջ նոցա կեանքը, համարեայ նոյնն է ինչ որ չորս հարիւր տարի առաջ:

Եւրոպայի բոլոր ժողովուրդները առաջ ապրելիս են եղել ցեղերի բաժանւած, բայց այժմ՝ ամենքը վաղուց թողել են այս նախնական կեանքի սովորութիւնը, իսկ սև լեռնցիք ապրում են մինչև այսօր

այնպէս՝ ինչպէս ապրելիս են եղել մեր պապերը, այսինքն՝ ցեղերի կամ սերունդների բաժանւած:

Գալով նոցա քաղաքական կամ կառավարչական կեանքին, նոքա կազմում են մի անկախ, ինքնուրոյն իշխանութիւն, որ կառավարում է նոցա իշխանը և ծերակոյարը (սենատ), որը բաղկացած է տասներկու անդամներից, որոնց ընտրում է ժողովուրդը: Իշխանը ծերակոյտի անդամների հետ միասին դատում ու վճիռ է կայացնում: Իշխանի տան մօտ կանգնած է մի բազմամիւղ կաղնի ծառ, որի տակ, ըստ հինաւուրց սովորութեան, վճռում են թէ դատը և թէ հասարակական ու ազգային ամեն կերպ հարցերը:

Երբ մի որ և է գործ է պատահում, իշխանը հաւաքում է բոլոր տասներկու անդամներին վճիռ կայացնելու: Իսկ մնացած բոլոր ժամանակը, նոքա սովորաբար սէյր են անում (ման են զալիս) Յետենէյում, կամ թէ չէ՝ նստաւում են երկար զերանների վերայ ու ծխում իրանց երկար շիպուխները:

Բայց ենթարկելով մի իշխանի իրաւասութեանը՝ Սև լեռնցոց ըկիրը բաժանւում է մի քանի գաւառների, որոնցից իւրաքանչիւրը, ունի իւր առանձին զօրապետը կամ սերգարը: Ամեն մի գաւառ բաժանւում է մի քանի ցեղերի, որոնցից իւրաքանչիւրը ունի իւր առանձին նախահայրը կամ թուկունջետը, որի յաջորդները համարում են իրանց: Յետոյ իւրաքանչիւր ցեղ բաժանւում է մի քանի շառաւիղների կամ եղբայրութիւնների, որոնք կազմում են մի տեսակ միութիւն մի քանի իրօր արիւնակից ընտանիքների: Իսկ արեւակցութիւնը հասնում է մինչև նոցա եօթը պորտը:

Այս եղբայրութիւնները կազմում են մի տեսակ առանձին առանձին ամբողջութիւն, որոնցից իւրաքանչիւրը գործում է առանձին միացած ոյժով, թէ եկեղեցում, թէ դատարանում, թէ հասարակական ժողովներում և թէ զանազան դաշնադրութիւնների ժամանակ: Իւրաքանչիւր ցեղ կազմում է մի տեսակ առանձին պետութիւն, որի զլուխ համարում է նոցա նահապետը կամ գլավարը, որը փոքր ինչ առաջ իրաւունք ունէր մինչև անգամ կեանքի կամ մահւան վճիռ կայացնել եղբայրութեան միւս փոքր անդամների վերայ:

Իւրաքանչիւր ցեղ պարծենում է իւր նախահայրով և միւս

ցեղերին իրանից ստոր է համարում... Ահա՛ այս բաժան-բաժանութիւնն է պատճառը, որ զանազան ցեղերի կամ եղբայրութիւնների կամ նոցա անդամների-իւնակների մէջ յաճախ պատահում են վէճեր, որոնք շատ անգամ վերջանում են արիւնահեղ կռիւներով կամ մենամարտութիւններով:

Այս մենամարտութիւնները թէ հիմայ և թէ մանաւանդ առաջ շատ յաճախ պատահելիս են եղել, մենամարտութիւնների պատճառը շատ անգամ լինում է մի ամենաշնչին բան: Ահա՛ թէ ի՞նչ է պատմում այդպիսի մենամարտութեան ակնատես մի ծանապարհորդ. «Մի իւնակ կճու խօսքով անպատեց մի ուրիշ իւնակի. վերջինս նորան մենամարտութեան կանչեց: Հակաակորդների անուններն էին՝ Եանիօ և Տրիպօ: Եւ որովհետև մենամարտութեան լուրը շուտով տարածեց, ուստի որոշեալ ժամին բազմութիւ ամբօխ հաւաքեց այնտեղ, որտեղ պիտի կատարէր այդ արիւնայլի հանդէսը: Նստերը զանազան բարձրութիւններից դիտում էին այդ երկու քաջերին:

Քշնամիները իրար մօտեցան, խօսակցեցին իրարու հետ, օղի խմեցին, լքցրին իրանց երկար հրացանները և կանգնեցին պայմանաւորաւճ տարածութեան վերայ: Որտաց միայն մի հրացան: Տրիպօյի հրացանը չ՛առաւ: Հակաակորդի գնդակը փչրեց նորա աջ ձեռքի արմունկը և մտաւ աջ կողքը: Տրիպօն ընկաւ ուշաթափ և ձեռքից զցեց հրացանը: Այն ժամանակ Եանիօն մօտեցաւ նորան, բարձրացրեց, ուշքի բերեց և հրամայեց Տրիպօյին, որպէս զի այժմ նա գնդակահարէ իրան: «Ձե՛՛մ կարող բարձրացնել հրացանս, չե՛՛մ կարող բռնել նորան» պատասխանեց Տրիպօն նւաստ ձայնով: Եանիօն վեր առաւ հրացանը, տեց նորա ձեռքը ու նստեցրեց գետնի վերայ. բայց Տրիպօյի ձեռքերը թուլութիւնից վայր էին ընկնում և մարմինը մի կողմն էր թեքուում: Եանիօն բարձրացրեց նորա աջ ձունկը. յենեց նորա վերայ հրացանը, մօտեցրեց նորա զոդ-զոջուն զլուխը շխմամսին և ասաց. «ես չե՛՛մ կամենում, որ այդպիսի մի իւնակ մեռնի առանց վրէժխնդիր լինելու. սակայն, ով պիտի քո մահւան վրէժը լուծէ. չունես դու ո՛չ եղբայր, ո՛չ բարեկամ, դու բոլորովին որբ ես» և կանգնեց հրացանի խողովակի դէմ, հրացանը արձակեցաւ և ազնիւ հակաակորդը տատանեցաւ.

Ամօթ է իւնակին վայր ընկնել և նա յենւելով մի ձեռքով քարին, իսկ միւսով հրացանի վերայ կարողացաւ ոտքի վերայ մնալ. և այս հերոսին համապատասխան վիճակի մէջ նա սպասում էր մահւան. ո՛չ մի տնքոց, ո՛չ մի տագնապելի շարժում չը ցոյց տւին, որ նա տանջուում է:

Մօտեցող մարդիկը Տրիպոլին արդէն մեռած դասն. Եանկօն ու շաթափ վիճակի մէջ էր և տնային հէքիմները բուժեցին նորան, թէպէտ այդ վէրքը նորա համար քսան և մէկ երրորդ էր: Այսպէս, թէ մենամարտութեամբ և թէ ուրիշ կերպով սպանւելը առաջ է բերում արեան վրէժինդրութիւն: Ղա այնպիսի մի սովորութիւն է, որ հին ժամանակ ունէին բոլոր ազգերը, ինչպէս և այսօր մեր օրերում քիւրդերը: Այդ սովորութիւնը կայանում է նորանում, որ սպանւածի ազգականները պէտք է վրէժը հանեն իրանց ազգականի մահւան համար, և պէտք է սպանեն կամ նոյն իսկ սպանողին, կամ թէ չէ նորա ազգականներից մէկին: Թէպէտ և այժմ՝ թէ մենամարտութիւնը և թէ արեան վրէժառութիւնը կառավարութեան տնօրինութեամբ արգելւած է. բայց ժողովուրդը մինչև այսօր համարութեամբ է վերաբերում դէպի այդ սովորութիւնը. և շատ հաւանական է, չի վերջանայ այդ նոցա միջից, մինչև սև-լեռնցիք լուսաւորւած, կրթւած ժողովուրդ չեն՝ դառնայ:

Բայց և այնպէս՝ չը նայելով նոցա այդպիսի ցեղական ներքին երկպառակութիւններին, մի ընդհանուր սրբազան պարտականութիւն, մի երևելի զործ միացնում է սև-լեռնցոց—դա թշնամու դէմ պատերազմն է:

Այս դէպքում իւնակները առանց սերնդի կամ ցեղի խտրութեան, կազմում են առանձին առանձին զնդեր, կամ զոյգեր, այստեղ իւրաքանչիւրը սարինման կանգնած է ամենի համար և ամենքը իւրաքանչիւրի համար: Գնդի ամեն մի անգամ պատրաստ է օգնել միւսին և փոխադարձաբար իրար վրէժը լուծելու համար:

Նոքա կուում են միասին և բաժանում հաւասար կերպով թշնամուց ձեռք բերած աւարը: Սակայն պատերազմը առ ժամանակ միայն միացնում է սև լեռնցոց իրարու հետ. վերջանում է պատերազմը՝ դարձեալ ցրւում են զետաները և նոցա անդամների մէջ կրկին ընդհատուում են բոլոր շարաբերութիւնները: Բայց այդպէս

շուտով չէ խզուում նոցա մի այլ կապը. դա ողջոյն-եղբայրութեան կապն է, որ կապուում է յաւիտեան:

Այս ողջոյն-եղբայրութիւնը կամ հոգեղբայրութիւնը կայանում է նրանում, որ երկու անձինք, որոնք ցանկանում են սերտ բարեկամանալ իրար հետ, կատարում են դորա համար մի յատուկ ծէս, որից յետոյ նոքա համարուում են եղբայրներ: Այս կապը նոցա համար աւելի ամուր, աւելի սրբազան է, քան թէ մինչև անգամ արիւնակցութիւնը: Հոգեղբայրները ո՛չ թէ միայն պարտական են միշտ և ամեն բանում օգնել, խնամել միմեանց, այլ նաև իւրաքանչիւրը նոցանից պարտական է իւր գլուխը դնել իւր հոգեղբոր համար: Եթէ պատահեց, որ կուռի դաշտում վիրաւորեցաւ երկու հոգեղբայրներից մէկն ու մէկը, այն ժամանակ միւսը վերցնում է նորան կուռի դաշտից և հեռացնում: Իսկ եթէ նա բոլորովին սպանւած է, կամ այնպէս վիրաւորւած, որ անկարելի է առողջացնել, այն ժամանակ հոգեղբայրը կուռի դաշտում կտրում է իւր հոգեղբոր գլուխը իւր ձեռքով, որպէս զի նա չը մնայ թշնամու ձեռքը:

Հոգեղբայրութիւնը շատ անգամ պատահական կերպիւ է լինում, օրինակ. երբ որ սև-լեռնցին գտնուում է մի որ և է կարիքի կամ վտանգի մէջ, որից չի՛ կարող ազատուել առանց ուրիշի օգնութեան նա հենց առաջին պատահողին դիմում է հետևեալ բաւերով. «օգնի՛ր ինձ ի սէր Աստուծոյ և սուրբ Յովհաննէսի, ես Աստուծոյ առաջ ընդունում եմ քեզ եղբայր»: Այս խօսքերը լսելով, սև-լեռնցին անշուշտ կանգ է առնում, կատարում է անպատճառ օգնութեան կարօտի խնդիրը, եթէ իւր ուժից բարձր չէ: Յետոյ նոքա համբուրում են իրարու հետ երեք անգամ և այդ բոպէից հոգեղբայրներ են դառնում:

Եթէ հոգեղբայրները աւելի ևս կամենում են ամրացնել իրանց եղբայրական կապը, նոքա դիմում են զեղի քահանային, որպէս զի նա օրհնէ նոցա, մաղթանք կատարէ և ապա ճաշակուում են նոքա երկուսով ի միասին: Սակայն ինչպէս մարդկանց մէջ լինում է հոգեղբայրութիւն, այնպէս և կանանց մէջ կազմւում է հոգեբոյրութիւն: Հոգեբոյրութիւնը կատարում է նաև մարդոց և կանանց մէջ. այս դէպքում մարդը երդւում է պաշտպանել իւր հոգեբորջ ամեն մի տեսակ անպատուութիւնից, ճշումից և վրէժխնդիր լինել նորա

համար, եթէ մէկը կը վիրաւորէ նորան անպատկառ կերպով: Ա՛չ մի կորովի, ըստ սովորութեան, չի՛ կարող ամուսնանալ իւր հոգեքրոջ վերայ:

Եւ ո՛վ այդ սովորութիւնը կը քանդի, սեւ-լեռնցոց կարծիքով, նորա համար անխուսափելի է երկնային պատիժը: «Մի անգամ աղջիկը գնում էր իւր հոգեղբոր հետ, վերջինս մոռացաւ իւր տւած երգումը և սկսեց խօսել նորա հետ իւր սիրոյ մասին: Այն ժամանակ երկինքը, որ մինչ այդ բոլորովին պայծառ ու պարզ էր, յանկարծ ծածկւեցաւ սև ամպերով, փայլատակեց սարսափելի կայծակը, և երգմնադրուժը կայծակահար վայր ընկաւ մեռած՝ ինչպէս մի հնձած խոտ, իւր հոգեքրոջ ոտների մօտ»: Ահա՛, այսպէս է երգուում սեւ-լեռնցոց մի ժողովրդական երգի մէջ:

Պէտք է ասել, որ սեւ-լեռնցիք առհասարակ սիրում են երգեր և հետևապէս նոքա շատ երգեր ունին. ինքը ժողովուրդը հիւսում է իւր երգերը և նոցա մէջ երգում է իւր ազգային կեանքը:

Ուրախ չէ՛ սեւ-լեռնցոց կեանքը, ուրախ չեն և նոցա երգերը: Բոլորը համարեայ լցւած են խորին տխրութեամբ: Նոցա մէջ ամենից յաճախ երգուում է այն՝ թէ ինչպէ՞ս պատերազմի դաշտում մեռնում է քաջ իւնակը, թէ ինչպէ՞ս մայրը բաժանւել է իւր որդոց հետ, բաժանւել է ու լաց է լինում: Եւ ահա՛, որդիքը վերադառնում են, որպէս զի իրանց հետ տանեն և փոքր եղբայրը, մայրը նոցա չէ՛ր թողնում. չէ՛ր կշտանում նոցա վերայ նայելուց երկար ժամանակով. վերջապէս տւեց նա իւրաքանչիւրին մի ձի ու մի բազէ և ճանապարհ գցեց նրանց մինչև հեռու մթին անտառը: Այնտեղ նա երկար փաթաթւում էր նրանց հետ. լաց է լինում. «երթաք բարով է ասում... գնացին որդիքը պատերազմ. բայց մայրը վշտից չի կարողանում ոտքի կանգնել. նա թուլացած ու թախծեալ նստում է խոտի վերայ և հողին աւանդում: Վերադարձան որդիքը. նիզակներով փորեցին նոքա իրանց մօր գերեզմանը, օրերով դադաղ տաշեցին և թաղեցին նորան: Տնկեցին նորա զլիտի մօտ վարդենի, աղբիւր բացարին, իսկ շուրջը տնկեցին խնձորենիներ, որպէս զի իւրաքանչիւր անցորդ օրհնէ իրանց մօր չիշատակը:

Ով քաղցած է, թո՛ղ կշտանայ, ո՛վ ծարաւ է, թո՛ղ յագնայ: Երգվում են Սև լեռնցոց մէջ նաև իրանց հերոսների ազատ կեանքը. նոցա քաջագործութիւնները և արիւնահեղ կսիւները

տաճիկների դէմ: Բայց նոցա երգերից մեծ մասը վերաբերում են սերբեացոց դիւցազն Մարկ Կորոլեիչին: Սև լեռնցիք նորա մասին երգում են այսպէս. «Մարկօն ապրեց աշխարհումս ամբողջ երեք հարիւր տարի, բայց մինչև այսօր նա դեռ չի մեռել, այլ քնած է մի խոր այլի մէջ: Երբ ծովը կը խփէ ափին Մարկօյի մահակը ու նորա սուրը կը ծակէ սարը և կ'ընկնի նորա ոտների մօտ. այն ժամանակ նա կը սթափուի, Մարկօն իւր դիւցազնական քնից և վա՛յ կը տայ այն ժամանակ տաճիկների գլխին...

Սակայն, այդ Մարկօն ո՛չ որ է, եթէ ո՛չ նոյն իսկ սերբիական ժողովուրդը. նորա դիւցազնական քունը—դարաւոր տաճկական լուծը, որ ծանրանում է նոցա վերայ. իսկ զարթնելը—այն ժամանակը, երբ կ'ազատեն նորանից սերբերը: Վօտ հինգ հարիւր տարի է, որ Մարկօն քնած է՝ սերբիական միւս երկրներում ժողովուրդը ստրկութեան մէջ է:

Սև լեռնցիք այսպիսով պահպանում են իրանց ազատութիւնը, հաւատը և անկախութիւնը...

Այնտեղ միայն չէ՛ քնած Մարկօն:

Ժողովուրդը ստրկութեան մէջ է: Բայց երբ որ նա զարթնեցաւ, իւր ազգի ազատութիւնը օտարի լծի տակից վճռած բան էր: Այդպէս էլ եղաւ. այսօր սերբիացիք շնորհիւ իրանց ապստամբութեան տաճկի դէմ՝ աւելի ազատ են, քան սորանից տասն և վեց տարի առաջ:

Իսկ ինչ կը վերաբերի Սև լեռնցոց, նոքա երբէք այդ անարգ ստրկութեան լուծը չեն կրել. նոքա բոլոր սլաւօնական ազգերից միակն են, որ երբէք օտարի ազդեցութեան տակ չեն ընկել. իսկ եթէ ընկել են, բայց այն էլ շատ քիչ ժամանակ: Մինչև այսօր հերոսական քաջութեամբ իրանց պատուի ու անհատական ձայնի տէրն են: Նոցա համար հասարակական ու ազգային թասիբը սրբութիւն է:

Սև լեռնցու համար մատնութիւն, դաւաճանութիւն, անմիաբանութիւն ասած բանը յայտնի չէ, և եթէ իմանայ, այդ բաները նորան օտարօտի կը թւի: Սև լեռնցի օրիորդը, հարսը, կինը չի զարդարելի, մազերը չի հիւսի, եթէ նորան պատերազմի գաշտը չը հրաւիրեն իւր եղբայրների հետ հայրենիքի ազատութեան համար:

ԱՆԴՐԷՏԻ-ից

ՋԱԻԱԴ ԲԱԼՈՒՂԱՆՆՅԻ

Ըսպատում եմ անհամբեր ես, եբբ կը մըտնի արեգակ,
Արևելքից կը տարածւի զովացուցի: մութն արագ,
Գետի վերայ խեղճ ձկնորսի առագաստը կը փըռւի
եւ հանգարտած փողոցներում լսպտերն էլ կը վառւի...
Որ ես իսկոյն աճապարեմ իմ անկիւնը անվրդով՝
Ծածկեմ սիրարս վիրաւորւած կոշտ ու կոպիտ ձեռքերով.
Պիտի վառեմ մամ իմ տիրոջ սուրբ պատկերի առաջին
եւ աղօթեմ ոգևորւած, որ տայ հանգիստ իմ մըտքին...
Բոլոր զրկանք ն անարգանք—այդ բոլորը պիտ' ներեմ,
Այն ժամ բախտ ու խաղաղութիւն անշուշտ իմ մէջ կը գըտնեմ...
Առաւօտեան ես դուրս կ'ելնեմ մարդկանց մօտը պարզ դէմքով
Ու կը մեկնեմ ձեռքըս նոցա, ինչպէս եղբորց, ժըպտալով,
եւ կ'ասեմ ես. «մոռանանք շուտ երեկւանը, ընկերներ,
Սիրենք իրար—այսօր Տէրը ինձ պարգևեց մի նոր սէր»...

ՊԱՆԴԻՏՈՒԹԻՒՆԸ ՄԵԶԱՆՈՒՄ

ԱՆՈՒՇ. ՔԱԼԱՆԹԱՐԻ

(Նարունակութիւն և վերջ 1)

II

Ո՞րչափ մուտք ունի պանդխտող գիւղացին իւր տնտեսութիւնից և որչափ ծախք է նա անում: Ո՞րն է մեծ՝ մուտքը թէ ծախքը: Ի՞նչքան է գիւղացին չես դցում սև օրւայ համար կամ որքանի նա պակասութիւն է զգում ամեն ասրի: Ահա կէտեր, որոնք նախապէս պէտք է պարզած լինեն՝ պանդխտութեան խնդիրը հասկանալու համար:

Օգտւելով եղած հետազօտութիւններից, իբրև օրինակ, առաջ ենք բերում պ. Տէր-Պետրոսեանցի արած հաշիւը Ալեքսանդրապոլ գաւառի մի քանի գիւղերի համար...

Պր. Տէր-Պետրոսեանցը առնում է դիտմամբ միատեսակ պալմաններով աղքատ 9 գիւղ: Ուրիշ գաւառներում ալ պաղքատութիւնը զուցէ հաւասարակչոււի, աչնտեղի հողի պակաս պտղաբերութեամբ, քան Շիրակինն է: Մենք ալդ հաշիւը առաջ ենք բերում մի հասկացողութիւն տալու համար ընթերցողին ալ տեսակ հաշիւների մասին, թողնելով իրան՝ ցանկացած ժամանակը՝ հաշիւներ անել զանազան մասների և հողերի համար, փոփոխելով հողի քանակութիւնը կամ դէպի շատը՝ կամ դէպի քիչը...

«Գիւղացու տարեկան եկամուտը» հաշուելու համար հարկաւոր է ինկատի առնել վարելահողի բաժնի և առհասարակ ամեն տեսակ հողաբաժնի չափը, երկու սեւին պատկանող անհատների թիւը, հողի պտղաբերութեան միջին ուժը և ստացած նիւթերի գինը: Հողաբաժինը որոշելու համար կը օգտուենք նոր պաշտօնական տեղեկութիւններից, որ գտնում ենք Զեւլինսկու հետազոտութիւն անջ և որոնցից կը լինենք միայն մեղ հարկաւոր թւերը:

1) Տե՛ս «Մուրճ» № 11:

| Գ ի ն գ ե ի ն ս ե ու ն ը | Բ ն ա կ ի շ — երկու սեռի Հողի քանակութ. դեսեատին | | | |
|--------------------------|--|-------------|--------------------|----------------|
| | Տղամարդ, | Կինարմար | Վաշեշահ. և Խոսեհար | Արտասեղ |
| Ազին | 423 | 396 | 682,67 | 300,00 |
| Գաւշան-ղշաղ | 515 | 445 | 940,60 | 150,00 |
| Դահարըու | 317 | 277 | 802,90 | չուճի |
| Ղաղարապատ | 226 | 212 | 537,17 | 370,83 |
| Ղարաքիլ. (փոքր.) | 1457 | 1326 | 3447,47 | 500,00 |
| Կեկաչ (Ղեղաչ) | 166 | 168 | 327,67 | 180,00 |
| Կեալալի. | 149 | 144 | 816,00 | 80,00 |
| Սւանվերդի. | 455 | 445 | 1036,56 | 250,00 |
| Զրփլի | 281 | 252 | 679,19 | 292,00 |
| Բոլորը | 3989 | 3665 | 9270,29 | 2122,83 |

Այս աղիւսակից երևում է, որ վերոյիշեալ 9 գիւղի 7654 երկու սեռի պատկանող անհատների վերայ գալիս է 9270,29 դես. վարուցանքի և խոտահարքի հող և 2122,83 դես. արօտատեղ: Բաց որովհետև մեր լիշած տեղում դուռ, մշտական, մարգագետին (խոտահարք) ամենևին չը կա, ուրեմն բոլորը 8270,29 դես. հողը՝ կը հաշւենք վարելահող: Այն ժամանակ երկու սեռի պատկանող ամեն մի անհատի վերայ գալիս է $\frac{9270,29}{7654} = 1,21$ դես. վարու-

ցանքի և $\frac{2122,83}{7654} = 0,270$ դես. արօտահող: Եւ որովհետև աղքատ աննշան արօտատեղը չի կարող աչքի ընկնող օգուտ տալ, մենք նորան մուտքի հաշի մէջ չենք մտցնիլ:

Վարուցանքի հաշից պէտք է դուրս գցել նորա այն մասը, որը խնով է ծածկւած: Եթէ բոլոր քարերը հաւաքենք թումբերի (որ այս կողմերում սովորական բան էլ է) և մի արտում հաշւենք 40 թումբ և ամեն մի թումբը 1 քառակ. սաժէն. աչն ժամանակ 1,21 դես. տարածութեան վերայ կը լինի $1,21 \times 40 = 48,4$ քառ. սաժէն. քարակոտով բռնւած տեղ: Բացի այդ՝ պ. Տէր-Պետրոսեանը անում է և ուրիշ հաշիւներ և վերջնականապէս հանելով $0,75$ դես. հող, ներկայացնում է իբրև մշակելի հող, իբրև վարելահող՝ $1,43$ դեսեատին:

Այս կողմերում ցանում են ցորեն ու գարի և աւելի առաջինից քան երկրորդից ¹⁾: Որովհետև Շիրակի (Շորագեալի) մասին տեղեկութիւններ չը կան, պ. Տէր-Պետրոսեանը օգտւում է Ղարսի նահանգի տեղեկութիւններից, որոնցից երևում է, որ ցորենի և գարու քանակութեան չարա-

1) Մենք ամբողջապէս չենք բերում Տէր-Պետրոսեանի յօդածը, աւելում ենք միայն էսկան մասը, բաց թողնելով այն, ինչ կարող է Լեռիարացիներ կողմից, առանց վնասելու յօդածի լմաստին...

բերութիւնը 13:10 է: Բայց որպէս զի աւելի մօտ լինի իրականութեան՝ նա ընդունում է 3:1 չարաբերութիւնը, որովհետև առհասարակ 2 տարի ցորեն են ցանում և մի տարի դարի նոյն արտում և չետոյ հողը հանգստացնում: «Առաջնորդելով 3:1 չարաբերութեամբ՝ այն կունենանք, որ 1,13 դեսետիւնից 0,85 դես. ցորէն է ցանւում և 0,28 դես. դարի:

Ղարսի նահանգում 1883 թուին ցանւած է 126,000 փութ ցորէն և 9700 փութ դարի. հնձւած է 572000 փութ ցորէն և 492,000 փութ դարի. ցորէնի բերքը մէկին 4,5 է, իսկ դարունը 5: Նոյնը Տէր-Պետրոսեանցը ընդունում է Շիրակի մասին, որովհետև երկու տեղերումն էլ երկրագործութիւնը նոյն ձևերով է կատարւում... Ինչ վերաբերում է մի դեսետիւնում ցանելիք ցորենի կամ դարու քանակութեան, մենք ընդունում ենք ամենաշատը 13 փութ ցորէն և 15 փութ դարի:

Յորէնի փութը, միջին բերքի տարին, արժէ 55 կոպէկ, իսկ դարու փութը 25 կոպէկ:

Այս բոլորից չետոյ հաշւենք մի հոգու տարեկան արդիւնքը: Յորենացան 0,85 դես վարելահողին պէտք է՝ հաշւելով ամեն մի դես, 13 փութ ցորեն՝ բոլորը $0,85 \times 13 = 11,05$ փութ սերմնացորեն. որի բերքը եթէ 4,5 ընդունենք, կ'ունենանք ընդամենը ցորեն $4,5 \times 11,05 = 49,73$ փութ: Եւ որովհետև ցորենի փութը արժէ 55 կոպ. ուստի $0,85$ դես. հողից կը ստանանք $55 \times 49,73 = 27$ ռ. 35 կոպ.: Նոյնպէս $0,28$ դարու վարելահողից, հաշւելով դես. 15 փութ. կունենանք $15 \times 0,28 = 4,2$ փութ սերմնագարի որի բերքը հաշւելով մէկը—5, կը ստանանք $4,2 \times 5 = 21$ փութ դարի, որ 25 կոպէկով փութը՝ կ'անէ $25 \times 21 = 5$ ռ. 25 կոպ.: Եւ այդպէս՝ երկու բերքերից մի հողին տարեկան աշխատանք ունի 27 ռ. 35 կոպ. + 5 ռ. 25 կոպ. = 32 ռ. 60 կոպ.: առանց դարմանը հաշւելու:

«Բայց եթէ աչքի առաջ ունենանք այն հանգամանքը, որ հողը հանգստանում է ամեն 3 տարին մէկ և համարենք, որ խողանից ստացւում է 5 բութլու խոտ—այն ժամանակ զիւղացու տարեկան արդիւնքը կը քչանալ մինչև $\frac{32,60 \times 3 + 5}{4} = 25$ ռ. 70 կոպ. (եթէ արտը մի տարի մնալ, իբր խողան հանգստանալու):»

Գլխաւոր պարագմունքից անցնենք երկրորդականին՝ տաւարապահութեան: Տաւարապահութիւնը աչտեղ ստանձին արդիւնաբերութեան ճիւղ է կազմում: Աչտեղ տաւարը պահում են երկրագործութեան և տան պիտոյքներին համար: Տաւարից եկածը հազիւ հազ ներքին պահանջը կարողանում է լրացնել:

Որովհետև 1008 ծուխի համար դիւղում կալ 3163 զլուխ լծան սպրանք, ուրեմն մի ծխի վերայ կը գալ $\frac{1008}{3164} = 3,14$ եզ և գումէ: Իսկ որպէս զի զիւղացիները կարիք չունենան վարձովի տաւարով գործելու, պէտք է, որ

ամեն մի ծուխ ունենալ տուևաղը 2 զող, կամ 4 հատ լծան եղ, մինչդեռ Ջե-
լինսկու տուած թւերից երևում է, որ եղածը մեր նշանակած minimum-ից
(ամենաքիչից) էլ պակաս է. (minimum-ը 4 է, եղածը—3,14): Այս մեր
վշած գիւղերում կա՛ր 9308 գլուխ խոշոր տաւար, 14007 ոչխար և այժ, 313
ձի, 509 էջ:

«Թէպէտ այդ փոքր քանակութիւնը մկալում է, որ այստեղ
տաւարապահութիւնը, իբր գիւղատնտեսութեան մի ճիւղ, բացակայում է,
բայց և այնպէս, այդ եղած քանակութիւնը մի շարքի ոգուտ է տալիս
գիւղացուն, ըստ որում՝ ի հարկէ շահաւէտութեան կողմից՝ կաթնատու տա-
ւարը աւելի նշանակութիւն ունի... Այժ ընդունենք բոլոր տաւարի 25%՝
կաթնատու, կունենանք 9308:4=2327 կաթնատու կով: Ամեն մի կովը տարե-
կան կը տալ 1 փութ և 30 ֆունթ իւղ և 1 փութ պանիր: Իւղի փութը
արժէ 8 ռ. իսկ պանիրինը 1 ռ. 20 կոպ. Ուրեմն մի կովը կ'տալ տարեկան
մուտք $70 \times 20 + 120 = 15$ ռ. 20 կոպ. մի գիւղացի ունի մեծ տաւարից աշ-
խատանք $\frac{1520 \times 2326}{7654}$ կոպ. = 4 ռ. 62 կոպ.՝)...

Ինչպէս, որ իւղը ստանալուց չեսող մնացած թանի գինը ի նկատի
չի առնած, այնպէս էլ ի նկատի չենք ունենալ տաւարի պահելու ծախքը...

Հաշուենք ոչխարից ստանալիք մուտքը:

Ջելինսկու հաշուով՝ 100 ոչխարից տարեկան գալիս է 80 ռ. 25 կ. ուրեմն
մէկից մուտք ²⁾—80¹/₁₀₀ կոպ.: Միջին գիւղացին ունի $\frac{14007}{7654}$ ³⁾ ոչխար, ուստի

տարեկան ոչխարապահութիւնից նա կը ստանալ մուտք. $\frac{14007}{7654} \times 80 \frac{1}{100} = 1,47$

կ. կամ տաւարից և ոչխարից զուտ աշխատանք 4 ռուբլի 62
կոպ. + 1 ռ. 47 կ. = 6 ռ. 09 կոպ. Ուրեմն գիւղացին երկրագործութիւ-
նից և տաւար պահելուց ընդամենը ստանում է 25,70 + 6,09 = 31 ռ. 79 կոպ.:

Այդ 31,79 կոպէկով այստեղի գիւղացին ապրում է ամբողջ տարին,
մտխելով զորանից կ'ե բա կ'ը ի, հ ա գ ու ս տ ի, հ ա ռ կ ե ռ ի և հասարակա-
կան ու սան ծախքերի համար:

Այժմ նշանակենք մի գիւղացու ծախքերի տարեկան minimum-ը
(ամենաքիչը):

«Սկսենք կիրակրից ⁴⁾: Հասակաւոր մարդու համար օրեկան հարկաւոր

1) 15 ռ. 20 կ. մի ծուխի աշխատանքը. 2327=կով 7654=այր և կին.

2) Մուտք=Валовой доход, աշխատանքը=чистый доход.

3) 14007—բոլոր ոչխարի և այծի քանակութիւնը:

4) Կորանց, որ Հետաքրքրուում են Վայն ընդր մանրամասնութիւններով, թէ ինչու
պ. Տէր-Պետրոսեանը այս կերպ կամ այն կերպ է նայում կերակրանիւթերի վերայ, տ-
ւաջարիւում ենք կարգաւ նորա ամբողջ յղւածը: Մենք բաւականանում ենք նորա
դրածքի միայն մի մասը առաջ բերելով...

է այն տեսակ կերակուր, որ պարունակում լինի առնւազն $27\frac{1}{2}$ մսխալ ձերմակուց (бѣлокъ)—13 մսխալ իւղալին մասներ և $1\frac{1}{4}$ օսլաչական մասեր (углеводы)—ուրեմն տարեկան մի մարդու համար հարկաւոր է՝ 104,54 փութ ձերմակուց, 49,43 Փ. իւղ և 456,25 Փ. օսլաչանիւթ: «Մենք կարծում ենք, որ բոլոր ձերմակուցը և օսլաչանիւթը ստանում է գիւղալին ցորենի հացից, որը զործածական է աչտեղ, իսկ իւղալին մասնիկները ստանում է կովի և կտաւատի իւղից... «Որպէս զի 104,54 փութ. ձերմակուց ունենանք, պիտի բանացնուի $\frac{100 \times 104,54}{12 \times 40} = 21,78$ փութ. ցորեն՝—եթէ տեղական ցորենի մէջ ընդունենք 12% ձերմակուց: Բայց այս ձերմակուցի մի հինգերորդ մասը գտնւում է ցորենի թէփի մէջ, որը մնում է առանց մարսելու: Այդ պակասող մասը, որ համապատասխանում է 4,36 փութ. ցորենի, լրացնելու համար՝ մի մարդու համար հարկաւոր է տարեկան ցորենի պաշար՝ $21,78 + 4,36 = 26,14$ փութ:

Այդ 26,14 փութ ցորենը պարունակում է մի մարդու հարկաւոր օսլաչանիւթը, որովհետև ինչպէս չափանի է այդ նիւթից պինդ ցորենը պարունակում է մօտ 65% օ. Բացի օսլաչանիւթերը այլքան ցորենի մէջ կազ և 15,68 փութ իւղ (եթէ հաշւենք ցորենի մէջ $1,5\%$ իւղալին մասներ): Ուրեմն հարկաւոր 49,43 փութ իւղից՝ 15,68 փութը զիւղացին ստանում է ցորենից. իսկ մնացած 33,75 փութը պէտք է ստանալ կովի և կտաւատի իւղից... Այդ 33,75 փութից՝ 20,07 փութը կովի իւղ է, իսկ 13,68-ը կտաւատի, հաշւելով ուտիս և պաս օրերը...

Բացի այդ՝ հաշւելով տարեկան ամեն մի մարդու վերայ մօտաւորապէս 1 փութ աղ՝ կունենանք.

| | |
|--|----------------|
| 26,14 փութ ցորեն, փութը 60 կոպէկ | 15 ր. 68 կոպէկ |
| 20,07 Փ. կովի իւղ, Փ. 23 կոպ. | 4 » 63 » |
| 13,68 Փ. կտաւատի, Փ. 12 կոպ. | 1 » 64 » |
| 1 փութ աղ, | » 30 » |

կերակուրը բոլորը. 22 ր. 25 կոպէկ

Հագուստը մի տարապ.

| | |
|---|---------------|
| 1 չուխա բրդի. | 2 ր. 50 կոպէկ |
| 2 կտաւէ շապիկ. | — » 80 » |
| 1 չիթի արխալուղ | 1 » 50 » |
| 1 շալի շալար. | — » 80 » |
| 1 կտաւի » | — » 40 » |
| 4 զոյգ բրդի զուլպա. | — » 40 » |
| 4 » տրէխ | — » 80 » |
| 1 » թողլուկ | — » 20 » |
| 1 բրդի զտակ, երկու տարին մէկը՝ հատը 60 կոպ. — | » 30 » |

բոլոր հագուստը 7 ր. 70 կոպէկ

Մեր առած 9 զիւղը տալիս են 13300 ր. 39 կոպ. թագաւորական և հասարակական ծախքեր. ամեն մէկը՝ $\frac{13300 \text{ ր. } 39 \text{ կ.}}{7654} = 1 \text{ ր. } 74 \text{ կոպ.}$

Մերմ. 0,85 դեռատին հողը ցանելու համար՝ հաշւելով, 13-ական փութ՝ հարկաւոր է 11,05 փութ սերմ, որ 55-ական կոպ. փութը, կ'աժեճայ 6 ր. 08 կոպէկ

0,28 դեռ. 15-ական փութ ցանելու հարկաւոր է 1,2 փ., որ 25-ական կոպէկով. կ'աժեճայ 1 » 05 »

26,14 փութ ցորենը աղալու համար, պէտք է տրւի ցորենի $\frac{1}{20}$ մասը=1,31 փութ: Աղալու ժամանակ հատիկները փշանալուց և ալիւրի փոշու ձևով պակասելուց, հաշւելով 2%՝ ընդամենը փշանում է 0,52 փութ. ուրեմն ցորենի աղալը արժէ 1,83 փ., որ 55 կ. կանի 1 » 01 »

Տարեկան լուս. և ճրագ — » 50 »

Սապոն 5 Փ., 15-ական կոպ. — » 75 »

Պղնձէ ամանի մի կլէկելը — » 10 »

Նրկրագործիքների կարկատանը և նորոգելը 2 » 50 »

Հովիւն. — » 50 »

Տաւարի պալտելը — » 60 »

Բոլորը 13 ր. 09 կոպէկ

Մենք ի նկատի չենք առնում տաւարի պահելու ծախքը, ենթադրելով, որ նա ալնքան կը լինի, ինչքանի են դարմանի և այլ մթերքների արդիւնքը, որը նույնպէս չենք հաշւել, թէպէտ և տաւարի պահելը աւելի թանկ է նստում, նամանաւանդ անբերրի տարիները: Այսպիսով մի զիւղացի տարեկան ծախսում է՝ կերակրի, շորի, հասարակական և արքունական և այլ պէտքերի. 22 ր. 25 կ. + 7 ր. 70 կ. + 1 44 կ. + 13 ր. 09 կ. = 44 ր. 78 կ. Իսկ մուտք ունի 31 » 73 »

Ծախքը մուտքից աւելի է 12 ր. 99 կ.

III

Գիւղացու տնտեսութեան մէջ գոյացած 12 ր. 99 կոպէկի պակասը որ պ. Գ. Տէր-Պետրոսեանցը դուրս է բերում, ի հարկ է, պարզ ապացուցանում է, որ գիւղացու ձեռքում եղած հողը չէ կարողանում ապահովել գիւղացու ապրուստը, ուրիշ խօսքով՝ որ գիւղացին զգում է սակաւահողութիւն...

Այդ 12 ր. 99 կոպէկը՝ կամ պարզութեան համար՝ 13 բուրլին՝ գիւղացին պէտք է մի տեղից ճարիւ նա պէտք է այդ պակասը լրացնի՝ կամ

աւելի վատ ապրելով կամ կողմնակի աշխատանք ճարելով և կամ թէ ալն և թէ միւսը միասին գործադրելով: Պ. Տէր-Պետրոսեանցի ասելով գիւղացիները վաշխառուներից փող են առնում 20—50 տոկոսով. ման են գալիս պատառոտած, բորիկ: Համարեալ բոլոր գիւղացիները պարտքի մէջ են և իրանց որդիներին տալիս են հացը փոր ծառայելու: Այսպիսով սկիզբն է դնում պանդխտութեանը, շնորհիւ ալն բանի, որ աշխատող ձեռքերը, ուրեմն միևնույն ժամանակ և սպառողները, աւելի շատ են, քան որչափ պահանջում է եղած գիւղական հողը:

Եթէ նոյն քանակութեան հողի վերայ աւելի քիչ մարդիկ ապրում լինէին, ալն ժամանակ հողը կարող կը լինէր նորանց ապահովել, իսկ աղ հողի կերակրելու ուժից օգտուող բերանները պիտի իրանց համար. ներկայ դրութիւնը աչքի առաջ ունենալով, կողմնակի աղբիւրների դիմեն եթէ չեն ուզում ենթարկել անկուշտ մնալուն և քաղցածութեան: Ուրեմն՝ պարզ է, որ մեր պանդխտութեան խնդրի հիմքումն է—ուտելու, ապրելու, հացի խնդիրը, ալ ոչ թէ միալն թափառելու սովորութիւնը, շլանալը, կամ գիւղից քաղաք տեղափոխելու հրապուրը:

Որպէս զի գիւղացու ծախքը և մուտքը հաւասարեն, հարկաւոր է որ նա էլի ունենալ 12 ր. 99 կոպէկ: Քանի որ հողի քանակութիւնը չի փոխւած և ուրիշ աղբիւրների էլ դեռ չենք դիմում, պէտք է, որ գիւղացիների թիւը պակսի մի չափով: Յալտնի է, որ մեր գիւղերում, ժողովուրդը ոչ թէ չէ պակասում, ալ և մեծ տոկոսով բաղմանում է: Գուցէ ժամանակով՝ եթէ ժողովուրդը ապահովելու միջոցներ չառնեն, մեր տնտեսական կիանքի զարգանալով, առաջ գալ պսակների և ծնունդների պակասելը և մտահոգութեան շատանալը, բայց ալժամ գիւղացիների թիւը՝ ինչպէս ասացինք՝ չէ քշանում, ալ սաստիկ աւելանում է և աւելորդ ուժերը ելք են սրտնում պանդխտութեան մէջ: Գիւղացիների թիւը, աշխատաւորների թիւը այնքան աւելի է պահանջից, որ բոլորովին հասկանալի է դառնում թէ ինչու գիւղացիների մի պանդխտական մեծ շարժում է նկատուում դէպի քաղաքները (առաւել Բագու) գարնանը, այսինքն ալն ժամանակ՝ երբ մի կարճ ժամանակից չետոյ սկսւելու է գիւղացիների ամենածանր աշխատանքը, երբ տանը մշակներ են հարկաւոր: Գարնանը պանդխտութեան գնում են կամ մեր վերև չիշած լեռնալիները, որ Գեկոնսկու ասելով՝ իջնում են տափարակ գործելու, կամ երկարատև պանդխտութեան գնացողները: Բագում գլխաւոր գործը նաֆթագործարաններում և նաֆթահորերում լինում է կամ աւելի լաւ է ասել, սկսում է եռալ գարունը գալուն պէս, երբ նաւագնացութիւնը բացուում է: Այդ պատճառով էլ գիւղի աւելորդ ձեռքերը՝ տանը ձմեռը հանգստանալուց չետոյ՝ գարնանը գնում են Բագու: Մշակներից նոքա, որոնք արդէն մի քանի տարուց Բագու են. ցանկանալով գիւղը դառնալու, բերել են տալիս իրանց փոխարէն իրանց եղբայրներին քաղաք, իսկ իրանք դառնում են կամ

գարնան, կամ չ'ուզենալով ամառուայ աշխատանքը թողնել. վերադառնում են աշնանը: Աչսպիտով մշակները, պանդուխտները, անդադար փոփոխում են և այդ շարժումը ստանում է պարբերական բնաւորութիւն:

Մենք պարզ տեսանք, որ պանդխտութիւնը կապած է աւելի մեծ խնդրի հետ, հողալին ապահովութեան հետ: Հետևաբար, քանի որ մեր հողալին խնդիրները չեն վճռւած և դեռ կարգի չեն բերւած, մեր պանդխտութեան խնդրի ծաւալը չի կարելի համարել բոլորովին որոշւած:

Նոյն խնդիրը կանգնած է և մեր առաջ. բայց ահա ինչ բնորոշ կերպով: Մեր երկիրը իւր ալժամեան քանակութեան հողով 5 անգամ աւելի ժողովուրդ կարող է կերակրել: Նթէ մեր անազին անապատները, որ կան Մուղանի, Միլի, Սարդարաբադի, Նլիսաւետպոլի և ուրիշ անջուր տեղիքում, ուղղէին արհեստական կերպով հանած առուներով. այնժամանակ ալժամեան անկարմար հողերը կը դառնային ամեն տեսակ բոց աճեց. ներս ընդունակ հողեր՝ սկսած ցորենից, զարուց մինչև խաղողը. բամբակը և միւս շահաւէտ բոցերը: Մեր երկրում հող շատ կա. բայց հողալին խնդիրները դեռ չեն կանոնաւորւած: Այդ հանգամանքները աչքի առաջ ունենալով՝ տէրունական կալւածքների նախարարութիւնը ձեռք է առել հետազօտել մեր հողալին խնդիրները և բարեփոխութիւնների ծրագիրներ կազմել: Ուրեմն սակաւահողութեան առաջը կարելի կը լինէր առնել՝ գաղթեցնելով մեր գիւղացիներին մի մասը դէպի մեր երկրի աւելի ազատ մասերը, եթէ անջուր տեղերով առուներ անցկացընէին և աչսպիտով մեծ ասպարէզ բացէր մեր գիւղատնտեսութեան զարգացման համար:

Սակաւահողութեան խնդրին այս որոշումը տալուց չնտոյ, հետեւալ նկատողութիւնն ևս աւելացնենք: Բացի սակաւահող գիւղացիներից, մեր գիւղերում կան և անհող գիւղացիներ:

Շարուպանի գաւառը հետազօտող Բախտաձէի ասելով ¹⁾, ամբողջ գաւառում անհող գիւղացիների թիւը համարում է 110 հոգի տղամարդ: Անհողների շարքին չեն զգած այն գիւղացիները, որոնք թէկուզ մի փոքր, բայց ինչ և իցէ մի կտոր, հող ունեն: Այդ աղքատների մեծ մասը ապօրինի զաւակներ են, որոնք անկարող են եղել մի որ և է ճանապարհով հող հող սեպհականացնել. դոքա ապրում են կամ օրավարձով ²⁾ կամ մուրացկանութեամբ:

Նթէ հաշուութիւններ սոցա շարքում և այն սակաւահող գիւղացիներին, որոնց զրութիւնը նոյնն է, ինչ անհողներինը, այն ժամանակ վերջիններիս թիւը շատ կը մեծանայ, որովհետև կան այն տեսակ գիւղական

¹⁾ Матер. для изслѣд. экон. быта госуд. крест. Шаропан. уѣзда Кут: гуд. изслѣд. Бахтадзе, т. V.

²⁾ Գիւղամէջ և մարդանցի (սե. քարի) հանքում:

հասարակութիւններ և այն էլ շատ բաղմամբարդ, ինչպէս Խոսնի և Լիչի գիւղերինը, որտեղ բնակիչները ուրիշի հողերով են ապրում, ուրտեղ 100 տղամարդից 61 հողին անհող է:

Թէպէտ Զելինսկու ասելով Ջանգեազուրի դաւառում հողի ցախշտակութիւններ և սոճաստարակ հողը թույլի շեռքից աժեղի ձեռքը պցելը չաճախ պատահում է մասնագական ազդարնակութեան մէջ, որը ալդ անում է կողմնակի ճանապարհով, բաւց մեր մասնաւոր ակղեկութիւններից կրնում է, որ մի չաղտնի չափով և չաղտնի ժամանակամիջոցում ալդ հանգամանքը ընդհանուր է բոլոր Զանկազուր դաւառի համար, և հալերի մէջ էլ ոչ պակաս չափով, քան թուրքերի մէջ:

Շուշաւ և Ջարրաւել դաւառի մասին խօսելով, Գեկոնսկին ասում է, թէ մի գիւղ ամենեկին հող չունի, իսկ 7 գիւղ միայն արօտահողեր ունին: Նախիջևան դաւառում կան մի քանի գիւղեր, որ կարելի է անհողների շարքին դասել: Նիգիղէ գիւղը, որ գտնւում է Վ. Աղուլխից 4—5 վերտա հեռաւորութեան վերաջ գուրկ է վարելահողից, ունի քիչ արօտ, այն էլ քարքարոտ, ապրում է կամ հուս (կաղ) պոկելով սարի լանջերից և բերելով Աղուլխում ծախելու, կամ թէ մշակ վարձելով: Նոյն դրութեան մէջ են երկու աղքատ գիւղեր Քեօթան և Քիլիթ, որոնց բնակիչների աշխատանքը անտառից փալտ և ամուրի բերելն է շալակով և Աղուլխում ծախելը:

Աղուլխով մեր մինչև հիմա լիշամ պանդուխտների իւր վերադաւելանում են և անհող գիւղացի պանդուխտները: Աչտեղ ընթերցողի ուշքն ենք դարձնում պանդուխտեան հետեւալ ձևի վերաջ, որը սովորական է թէ Վրաստանում և թէ մեղ մօտ Շիրակում: Շարուպան դաւառուից բացի այն, որ լիշատակում է Բախտաձէն կալաւստութիւնից իջարով հող վեր աւնելու մասին, անաղին բաղմութիւն ճանապարհում է Գօրաւ դաւառը և աղտեղ չաղտնի ճշանակամ պայմաններով հող է վեր աւնում և մշակում:

Նոյնը կատարում է և մեր Շիրակի մի քանի մասներում «մարաբաութիւն» անունով: Բողոխուշցիք, Գիւղխարաբացիք, Գիւլլիբուլաղցիք, բաւականաչափ վարելահող չը գտնելով իրանց գիւղերում, գնում են Ղարսի նահանգի Հաջիփիրըմ, Մօրիւղ, Ղմին, Գիւլլիբուլախ և ուրիշ գիւղերի հողերը մշակելու: Նոքա վարում են, ցանում, հնձում, կալսում և ստանում հունձի $\frac{1}{4}$, եթէ սերմը հողատիրոջն է և $\frac{1}{3}$ էջ եթէ սերմը ցանողինն է: Փոքր Սարեարցիներից մի քանիսը 2 սումար վարձով գնում են Ղարսի նահանգը հողագործութեան, ըստ որում հնձելը և կալսելը գիւղացու վերաջ է. սոքա գնում են և Բորչալու. բաց քիչ թւով, որովհետև աղտեղ հիւանդանում են տենդով: Շիրաւանջուղցիք և Սոգուլիցիք իրանց գութաններով գնում են մերձակայ էջմրածնի դաւառի քուրդերի եւթագները և պարապում են գլխաւորա-

պէս հողագործութիւնով Գեալթօ, Հակօ, Ղլիջեաթաղ ձմերոցներում, իսկ Սօգիւթլուն նոյնպէս և Սուսուզում ու Սարունջիում: Նորա ցանում են, հնձում, կալում և ստանում դարմանի ¹/₂-ը և հատիկի ¹/₃-ը: Չառնջա, Մաստարա, Արթիկ գիւղերի բնակիչները գնում են Ջօրբա—քիւրջիւրի կաթաղը—կատարում են բոլոր գործերը և ստանում բերքի ¹/₂-ը՝ եթէ սերմը քրդինն է, և ³/₄-ը՝ եթէ սերմը հալինն է, և այլն ¹):... Այս վերջին տեսակի պանդխտութիւնը նշանաւոր է նորանով, որ գիւղացին, հեռանալով իւր գիւղից, նոյնպէս երկրագործ է մնում: Նշանաւոր է և այն հանգամանքը, որ տանից գնում են պանդխտութեան ոչ միայն տղամարդը, ինչպէս այդ անում են միւս տեսակի պանդխտները, այլ երբեմն ամբողջ ընտանիքը, կինը, երեխայքը և ընտել կրկին գործերը աւարտելուց ընտել վերագառնում են միասին:

Վերջապէս մեր պանդխտութեան խնդրի մէջ մեծ դեր են խաղում Պարսկաստանից և կաթ թուրք մշակները: Գարունը սկսելուն պէս՝ մարտ, ապրիլ ամիսներում, հարիւրաւոր, խումբ խումբ, այդ պարսկաստանցիները դալիս են գործելու գիւղերում, նախ աղբիներում, իսկ քիչ ընտել արտերում հնձուր գառնալով: Բազու նահանգի հունձը գլխաւորապէս Պարսկաստանի մշակների ձեռքով է կատարւում: Նոյնն է մասամբ Ելխաւեստապօլի և Երևանի նահանգներում ²): Նորա աւելի արժան գործելով սաստիկ մրցում են տեղական հալ և թուրք մշակների հետ և չաղթում են: Մեր երկրացոյց մի մասը, չը գիմանալով այդ մրցման, գնում է քաղաքներ:

Վաճառանոցների և ճանապարհների հետու կամ վատ լինելը նոյնպէս մեծ խոչնդոտ է տնտեսական դարգացման: Ճանապարհների լաւացնելը, թէև ոչ շատ մեծ չափով, այնու ամենաքնիւր գիւղացու գրութիւնը կարող է բարւոքել: Երկաթուղու անցնելուց, թէպէտ երկրի արդիւնաբերութիւնը շատ կը մեծանայ, երկիրը կը հանգստանայ, բայց այդ կատարւում է ոչ միշտ յօգուտ ընդհանրութեան, այլ երբեմն մի փոքրամասնութեան:

Մեր երկրի պանդխտների կեանքի հետ ծանօթանալու համար մեր եղած գրական աղբիւրները՝ մի երկու պատկերներ են և յօդածներ: Յանկացողներին սուաջարկում ենք թերթիկ Վօթի «Պանդխտը», Ա. Մելիք Շահնազարեանի «Հալ գիւղացու սև օրը», «Մի փորձ մեր մշակների կեանքի ուսումնասիրութեան» «Մշակ» լրագրի մէջ և սերիշ մանր մանր յօդածներիցրւած մեր պարբերական հրատարակութիւնների մէջ: Տարաբաղդաբար

¹) Երբեք մասին այս մանրամասնութիւնները քաղել ենք Ազ. Քալանթարի սուած տեղեկութիւններից, որը հաւաքել է նա իւր հետազօտութիւնների ժամանակ:

²) Այս նահանգներից յետ ևն դաւանում կամ Չուլալի մասով, և թէ Երևանեան նահանգումն են բանում, կամ Բագուի վերայով: Չմեւը մնացող քիչ է լինում: Պարսկաստանցիներից պատահում են և քաղաքում բեռնակրութիւն անողները:

պէսք է խոստովանած, որ այդ տեղեկութիւնները գլխաւորապէս վերաբերում են Բագուայ մշակներին, Բագուայ պանդուխտներին: Ըստ որում դորա ըստ մեծի մասին միակողմանի կազմւած են և վերաբերում են պանդղխտութեան մութ և վնասակար կողմերին և քիչ են օգնում տմբոջ խնդրի պարզելուն:

Պանդուխտը, խտկապէս, վերադառնալով զիւզ, իւր հետ բերում է մեծ օժիտ վատ լատիւլութիւններու՝ Բագաքի կեանքը մեռցնում է գիւղացու պարզութիւնը, տակնուվերալ է անում գիւղացու բարոյական այնպիսի հակացքը, միանգամից նորան քանդելով և ոչնչացրածը առանց հիմնական քաներով վտարիներելով: Այժմ պանդուխտը բարոյապէս ստորանում է, նա դառնալով գիւղ սողում է նոյնպէս չրջապատողների վերալ փչացնող կերպով: Բագաքի ստոր խաւերի կեանքում՝ բարոյականութիւնից զուրկ նա քայքայւում է ոչ միայն բարոյապէս, այլ և ցածախ հիւանդանում է շատ անգամ նոյն խտկներակիան աստով, որը և տարածում է գիւղում: Առժերի անկանոն վատնելուց, միակողմանի չարքաչ և միշտ զրկւած կեանքից, աղջկախով, փչանում է պանդուխտը և Ֆիլիքապէս: Բայց մտաւորապէս աղջկա կարելի ասել. գիւղացին մտաւորապէս շատ զարգանում է, նորա պահանջները մեծանում են և լաջնանում. քաղաքը ազդում է գիւղացու ճաշակի և ոգու վերալ, գիւղացին աւելի համարձակ և ձեռնարկող է դառնում... Իսկ մտաւոր զարգացումը և լաջն աչխարհակացքը լաջող հանգստանքներում ծնում են և լաւ բարոյական հետեանքներ...

Պարզ է ուրեմն, որ պանդուխտը միայն վատ տարրեր չի մտցնում գիւղը, այլ և լաւ: Ըստ մեծի մասին պանդուխտութիւնը մեր գիւղացուն բարոյապէս և Ֆիլիքապէս սկարացնում է, իսկ մտաւորապէս ուժեղացնում: Պարզ հասկանալու համար առնենք օրինակներ, իբրև Ագուլիսը, Մեղրին, և այլն. որտեղ պանդուխտութիւնը շատ վաղուց սկսւած է, և ուրիշ գիւղեր, որտեղ պանդուխտութիւնը նոր է սկսել, կամ թող է դեռ:

Վերջապէս դառնանք մեր չօղւածի վերջին կէտին, թէ ինչպէս են վերաբերում մեղանում դէպ պանդուխտութեան խնդիրը:

Մեր պատահած չօղւածներում և մտաւոր չրջանների խօսակցութիւններում, քիչ բացառութեամբ, լսում ենք այն տարածւած կարծիքը, թէ պանդուխտութիւնը միանգամայն վնասակար չարժում է: Առանց խոր պատճառների մէջ մտնելու առաջարկում են միջոցներ՝ քարոզով, դրբերով, կանգնեցնել նորան. բայց մենք վերը ասացինք, որ այդ տեսակ հնարներով չի կարելի կանգնեցնել, կամ աւելի լաւ է ասել չի կարելի վճռել տընտեսական մի մեծ խնդիր: Չէ որ պանդուխտութեան պատճառները շատ խոր են, և մինչև չը փոխեն նորա պատճառները, չի փոխել և երկուքը: Մեր առաջ բերած պատճառների մի քանիսի առաջը գուցէ կարելի կը լինէր՝ առնել հաւարակական կարծիք կազմելով, ինչպէս քաղաքացիների արտաքին փալտով շրմալն է, բայց դա ինքը ըստ ինքեան շատ աննշան չար-

ժառիթներից մէկն է և ժամանակով ինքն ըստ ինքեան էլ կը հարթւի: Խնդրի ալս մասը, որչափ նա արժանի է ուշադրութեան, ի նկատի է առնւած թէ մեր հրապարակախօսութեան և թէ վիպագրութեան կողմից:

Ինչ վերաբերում է սակաւահոգութեան, կամ անհոգութեան՝ մենք ասացինք, որ գիւղացուն հողով ապահովելու հիմնական միջոցը ներքին դաղթականութիւնն հաստատելն է: Մենք սակաւահոգութեան խնդիրը քննելուց՝ առաջ բերինք նաև նորան առաջ բերող պայմանները, պատճառները շարքում, հողատիրութեան անհաւասարութիւնը, հարստահարութիւնները վաշխաւուները միջոցով, դաշտալին մշակութեան անկատարութիւնը, հասարակական պարտականութիւնների անկանոնութիւնները, (կոռ, բէգաւ) և տեսանք, որ գոքա խոչընդոտ են անտեսապէս ապահով կեանք վարելուն: Ուրեմն եթէ դորձադրելու լինենք զանազան միջոցներ, ինչպէս են համալնական հողերի կանոնաւոր բաժանելը, գիւղական վարկ հիմնելը, ուսումնարանների և այլ միջոցներով գիւղատնտեսական գիտելիքներ տարրացնելը գիւղերում, լարմար երկրագործիքներ տարածելը, հարկերի, տուրքերի և հասարակական պարտականութիւնների կանոնաւորելը և թեթեւացնելը, եղած դէմի հողերում ջրանցքներ անցկացնելը և այլ այս տեսակ միջոցները, որոնցով եղած հողը արդիւնաբերում է, իսկ ծախքերը պակսում են, կարող կը լինենք, մի առժամանակ, սակաւահոգութեան առաջը առնել, հետևաբար և պանդխտական հոսանքը թուլացնել: Ուրիշ միջոցներով կարելի է թուլացնել և մեր բերած միւս վնասող պատճառները, զորքիւնակ, ճանապարհներ անցկացնելով մեր երկրի զանազան մասերում, գիւղական շտեմարաններ հիմնելով և այլն: Այդպիսի միջոցներով մի առժամանակ կը նաւազնենք պանդխտութիւնը, թէև իհարկէ նորան չենք կանգնացնիլ:

Մեր պանդխտութեան խնդիրը կախւած է ոչ միայն հողալին և այլ գիւղին վերաբերող խնդիրներից, այլ մեր քաղաքների կեանքի զարգանալուցը, կամ աւելի ընդհանուր կերպով ասենք՝ կախում ունի մեր երկրի ամբողջ տնտեսական խնդիրների ուղղութիւնից: Մենք մեր ալժաման ծրարքից պիտի հանենք պանդխտական շարժման իսպառ կանգնացնելու միտքը, քանի որ դա՛ շնորհիւ հիմնական հանգամանքների՝ անկարելի է: Գուցէ հողալին խնդիրները կանոնաւորելուց, վարկեր և շտեմարաններ հիմնելուց չետո՞ թուլանալ այդ շարժումը, սակայն դա երկար չի տևիլ և մի քանի ժամանակից չետո՞ նորից, դուցէ աւելի մեծ ծաւալով կը սկսել... Պանդխտութիւնը, ինչպէս ասացինք, զանազան տեսակ հաց ձարելու խնդիրների մը ցման հետևանք է:

Միայն սուգ կարգալով ոչինչ չենք անիլ, մեղ հարկաւոր է ալժամ գբադել պանդխտների կեանքի, նոցա կենցաղի ուսումնասիրութիւնով, մտածել այն լարմարութիւնների և գիւրութիւնների մասին, որը պիտի տրւի պանդխտին օտարութեան մէջ, որ նա քաղաքում կարողանալ առանց պատահարների և վնասների՝ թէ ֆիզիկականի և թէ բարոյականի կողմից ապրել:

ՍՈՒՐԲ ԼԵԶՈՒ

Ղ. ԱՂԱՅԵԱՆՅԻ

(Շարունահումթիւն և վերջ ¹⁾)

Ե.

Մենք հեշտից սկսեցինք, որ քիչ քիչ հասնենք դժւարին: Մերոնք սովոր են հաւատով սովորել լեզուն և ոչ հասկացողութեամբ, որովհետեւ կարգալը հեշտ է, իսկ հասկանալը—դժւար: Նոր սովորելը հեշտ է, քան զետ սովորելը: Ով որ մէկ անգամ սովորութիւն է շինել իր համար գրել մի կերպ, թէկուզ սխալ, նրան զետ սովորեցնելը և ուղիղ գրել տալը շատ դժւար է: Ով չը գիտէ զետ սովորել, նա կատարելագործւելու ընդունակութիւնից զուրկ է: Խօսքը գոօշ չարժէ, գործն է գովելի: Այսօր մեզանում գրում են տարւոյ, տարուայ, տարւայ: Հարցրէք տարուայ գրողներին, թէ ալզ ինչ առայ է, ինչ մանիկ է, սրահղից է ծագել, գուցէ ուայ չը պէտք է լինի,—ոչ մի պատասխան տալ կարող չեն: Տեսել են ալզպէս գրած, իրանք էլ գրել են, հաւատով են գրում և ոչ հասկացողութեամբ:

Մեր լեզւի մէջ չը կայ առայ մասնիկ, ինչպէս կան օրինակ՝ ախան, ւոր, ալին ևայլն: Օրինակ. գրոց լեզուով չը կայ սեռականի առայ վերջատրութիւն, ալ առայ բաց եթէ է ուղղականների սեռականը դառնում է առայ, ալզ աւելցած լինել ոչ մասնիկին չի վերաբերում, ալ ուղղականի վերջի ին է, որ դառնում է առայ, ինչպէս գինի, գին-ու, տար-ի, տար-ու: Անա ալս միևնույն օրէինքին է ենթարկւած և մեր ժամանակակառն բառերի սեռականը, աւելի ճիշտն ասելով՝ ոչ թէ սեռականը, ալ սեռականի սեռականը: Այն, սեռականի սեռականը: Թէպէտ մեր բոլոր սեռականները հոլովւելու շատութիւն ունին, բացը դրանց նման չէ ժամանա-

¹⁾ Տե՛ս «Մուրճ»-ի № 11:

պահանջում է, որ ամեն մի ձայնաւոր իր նախորդ բաղաձայնին կայջի, կամ, որ միևնույն է, ամեն մի բաղաձայն իր չաջորդ ձայնաւորին կայջի, ինչպէս օրինակ ե-կի-ղե-ցի: Այս օրէնքը բացառութիւն չի վերցնում: Այս մասին ևս գրել եմ մանրամասն, բոլոր կարգի բառերը վանկերով: (Տես նախադիտելիք գիտակցարար կարգացնելու մասին՝ վեց օրինակելի դաս վարժապետաց համար): Աս արտեղ կը խօսեմ ալլ մասին, որքան որ մեր առարկային կը վերաբերի: Հալք խօսելիս կարծես երգում լինին. ամեն վանկի վերայ շեշտի նման մի բան են գնում և բառերը երկարացնում, Եւրոպական մի գրած բառի մէջ ալնքան վանկ կող միալն, որքան որ պարզ ձայնաւոր կամ երկրարբառ ունի իր մէջ, բայց մեղանում ալլպէս չէ ոչ գրւածքում և ոչ խօսելում: Եւրոպական արտասանութեան անտեղեակ մի հալք եթէ առաջարկէր, որ վանկէ կամ կրկնէ ձեր ասածը, նա երկախանկ Պլադատոն բառը կը շինէ չորս վանկ. ուր Գլադ-ատոն, և ուր Գը-լան-գըն-ատոն... Հալն իր ալս չատկութեամբը թէպէտ բառերը ձայնազայնում է, մի վերջօկից շինում է մի արշին, բայց ալն լաւ կողմն էլ ունի, որ բառն ալնպիսի վերլուծութեան է ենթարկում, որ ամեն մարդ տեսնում է աչքովը և լսում ականջովը, թէ որպիսի բաղկացուցիչ մասներ ունի նոյն բառը: Այս չատկութեան շնորհիւ ոչ երկու պարզ ձայնաւոր և ոչ երկու բաղաձայն իրար հետ միացնելու սովորութիւն չունի, բաղաձայնների մէջ գցում է մի ըթ, իսկ ձայնաւորների մէջ մի - կամ յ: Գրածի մէջ մենք ալլ չօղակապերը շատ տեղ գործ չենք գնում, բայց երբ սկսում ենք վանկել, զբանք լսւ են ընկնում խեղճ: Այս հանդամանքի շնորհիւ սղւած տառերը գտնում են, և ս խալ գրութիւններն էլ շտկւում:

Եւրոպական մի բառ, ինչպէս ասացինք, ալնքան վանկ է, ինչքան որ ձայնաւոր ունի, բայց մենք սրովհետեւ ըթը սղմում ենք, ալլ պատճառով իմանալու համար, թէ ալս կամ ալն գրած բառը քանի վանկ է, գրած ձայնաւորների թւին չը պէտք է նախնք, ալլ դեռ պիտի վանկենք, որ նոր իմանանք թէ քանի վանկ է: Օրինակ հետեւեալ բառերը մէկ մէկ ձայնաւոր ունին—գրի, ջրի, նրա, վրալ, դնալ, մնալ, զգալ, լսիլ, սկսել, քրքրել, մումալ, թրխալ, թրխիթրխալ... Բայց վանկում ենք զը-րի, ջը-րի, սրից երևում է նաև, որ ալլ ըն իզուր չէ մոնում ալլտեղ, որ դա է ի և ուտառը—գ-ի-ր, գ-ը-ր-ի, ջ-ու-ր, ջ-ը-ր-ի, վ-ե-րալ, ն-ո-ր-ա, ն-ը-ր-ա: Անչուշտ ալսպիսի ծագումն ունին ըթերը և միւս բառերի մէջ, բայց որոնց նշանակութիւնը մենք հիմա չը գիտենք. ինչպէս լսել, լ-ը-սել, գ-ը-նալ, մ-ը-նալ, և վերջապէս ինքնը բաղաձայն և մէկ ձայնաւոր ունեցող բառն է թը-րըխկ թը-րըխ-կալ...

Մեր որոշիչ կամ գիմորոշ չօղերը տառեր չեն, ինչպէս պատկերացնում ենք գրելով «, ք, ն: Վանկական օրէնքը ցայց է աալիս, որ գրածք ալթմ են ըս, ըզ, ըն, որ գուցէ սկզբումը եղել է ալիս, ալիչ, ալին կամ հենց ալըս, ալըդ, ալըն. վերջը կրճատելով հասել են մեզ իբրև ըս, ըզ:

ըն և ոչ ու, ք, ն, որ միանդամալն սխալ է: Այս բանը պարզաբանելուց առաջ նախ մի ուրիշ բան պէտք է պարզաբանել:

Մենք ասացինք, որ մեր լեզուում երկու բաղաձայն տառեր իրար հետ չեն միանում. և ճշմարիտ, կարծես մեր տառերի մէջ մէկ տեսակ մագնիսականութիւն կալ, որ նմանը նմանին պէտք է ժխտէ և միանալ չնմանի հետ. ինչպէս ձայնաւորը բաղաձայնի հետ միանում է և ժխտում ձայնաւորին, այսպէս էլ բաղաձայնը ժխտում է բաղաձայնին և միանում ձայնաւորի հետ: Բայց մի քանի բաղաձայն ունինք, որ բաւական եղբայրասէր են և չեն ժխտում միւս բաղաձայներին, այլ սիրով միացնում են իրանց հետ առանց որ և է ձայնաւորի: Այդ տառերն են բ, լ, դ, ա, ն, մ, որոնք աւուում են նալ, որ չը գիտեմ ինչ ասել է: Այս տառերն ահա բառալերջում իրանք չեն միանում նախորդ բաղաձայնի հետ, բայց միանում են չաջորդ բաղաձայնի հետ առանց ձայնակապի: Վերջնենք, օրինակ երեք կից բաղաձայն՝ կտր. պլախ կարդանք—կըտըր, որովհետև ուրիշ կերպ չենք կարող կարգալ, բայց բէն գցենք մէջ անդ՝ ալպէս՝ կրտ, և նախկին երկու վանկից կը դառնալ մէկ վանկ ինչպէս կըրտ: Արա պատճառն ուրիշ բան չէ, բայց թէ ալն, որ ք տառը իր չաջորդ բաղաձայնի հետ միանալու չտակութիւն ունի: Այս պէս են ահա նալ աւած տառերը: Չը պէտք է մտանալ ստեղծել, որ նախորդ տառի հետ չը միանալով, չի կարող միանալ ուրեմն և ինքն իրան հետ: Այս պատճառով ջուխա ք կը դառնալ ու, ջուխտ նոն ուանդական մի ձալն, ջուխտ դաար կոկորդալին խէ. ջուխա լիւնը կը թանձրացնէ իր ձալնը: Նալ տառերը քիմիապէս միանալով իրանց՝ հարեանի հետ, փոխում են մերթ իրանց ձալնը և մերթ նրա: Այսպէս ք տառին երբ չաջորդում են. բ, գ, դ, ձ, ջ մետաղաձայն տառերը՝ դառնում են հոլաձայն փ, ք, թ, ց, չ, օրինակ ալպէս բք=րի, բղ=րք, բլ=րթ, բձ=րց, բջ=րչ: Իսկ փայտաձայն պ, կ, ա, ծ, ճ, տառերը՝ նալից լիտոլ դառնում են մետաղաձայն. օրինակ՝ նալ=նք, նկ=նգ, նտ=նդ, նծ=նձ, նձ=նջ...

Այս նալ տառերից լիտոլ ահա երբ դնում են զիմորոջ գիր, այլ ոչ չօդ, ինչպէս ըս, ըդ, ըն, գրանք միանում են նշանց հետ և կորցնում իրանց սրտչիչ չտակութիւնները: Այդ ցուց է տալիս արդէն վանկական օրէնքը: Կարդացէք օրինակ հետեւալ միացած բառերը՝ շեշտելով—բանդ, գիրտ, դանդ, կանդ, սանդ, հէրդ, մէրդ, տէրդ, սէրդ, սանդ, քնւրդ, սունդ, հորդ, փորտ, կողդ, փողդ, հողդ, գինդ, ձէնդ, չէնդ, բնողդ, կուռս, ձեռս, տանս, բանս, ջանս և այլն և այլն:

Բայց միթէ դրանք միավանկ են. Նս չեմ ուզում ասել բանդ, որ է բանտ, այլ բանդդ, չեմ ուզում ասել քնւրդ, որ է քիւրդ, այլ քուրդդ, չեմ ուզում ասել հորդ, այլ հորդդ...

Եթէ ժողովրդի կենդանի արտաբերութեան համաձայն այդ բառերը դառնում են երկու վանկ, և ցուց են տալիս որ մեր զիմորոջ տառերը բաղաձայնից լիտոլ չօդեր են և ոչ գրեր, ապա ուրեմն վանկական օրէնքը լեզուի մէջ ուշադրութեան արժանի օրէնք է:

Արդ մեր վէճի ենթակազ եղող բառերը ինչպէս ենք տեսնում վանկւած մեր շարականների մէջ, մեր բանաստեղծութիւններում: Վերցնենք մեր ամենապաշտելի բառը, որ գրուում է Աստուած. ինչպէս է վանկւած ամենահին շարականներից սկսած մինչև ամենանորը, եթէ ոչ Աստուած: Այս Մեծորբեան և Հակոպեան օրբադան ըթը, որ հաղար ու արժէ, լատինահազ գրողների աչքի փուշն է: Այնպէս են խրտնում դրանից, ինչպէս թուրքը խոզի մտից: Բայց այդ մերն է, մեր սուրբ սառը, մեր հայրենի և մայրենի սուրբ ձայնը:

Մեր մի մասնագէտ մանկավարժ, որ հայերէն այնքան զիտէ, ինչքան ևս ղեկերէն, մինչև անգամ պատերազմ չպտնեց ըթի գէմ մի նոր գիւտ արածի պէս, փոխանակ սովորելու իր մայրենի լեզուի ավթութալքը:

Պարսկերէք և Մսիթարեանք, որ ուր սիրահար են, վանկելու ժամանակ իրանց ուն ծալում մի կողմ են դնում, որովհետև տեսնում են, որ ուն չի ենթարկւում մեր լեզուի վանկական օրէնքին, որ ճշգրտեամբ պահպանւած է մեր շարականներում: Հայր Բագրատունին, որ հակական բառերը եւրոպական արտաբերութեամբ է վանկում, բայց ինքն էլ տեսնելով որ սող չի դալիս, ասում է. ձայնաւորից առաջ կղած ուն կարելի է պահել առաջին վանկումը, շինելով ռ, ինչպէս—տըւաւ, նըւէր, անըւաղ, աղնը ւի: Հրաշալի օրինակ, որ ամենայն կեղծիք մերկացնում է: Միւս քերականները, մասամբ և Բագրատունին, փոխանակ ցոյց տալու, թէ ինչպէս է վանկում հաշ ժողովուրդը, իրանք են ստեղծում վանկելու կանոն, մասամբ թարգմանօրէն և մասամբ ինքնահնար: Լաւ բան է, ի հարկէ, գիտեանալ, որ Վլադիստոն բառից պէտք չէ շինել չորս վանկ, բայց եթէ դա լինէր մի հայերէն բառ, իրաւունք չունիս թող չը տալ հային, որ նա իր մայրենի լեզուն իր սովորածի համեմատ չը խօսի, այլ լատինական և գերմանական արտաբերութեամբ: Էլի լաւ է, որ այն ուերը, որոնք ինչքան ու են, այնքան էլ ըթ են և կարող ենք նրանց շինել ռ, ինչպէս նըւէր, տըւաւ, թըւով, լըւի ձըւից, բայց ինչպէս վանկենք այն ուերը, որոնք ոչ ու են և ոչ ըթ, այլ օտարամուտ մի ուղղագրութիւն, ինչպէս են՝ խօսուում, խօսուել, տանուել, չօղուած, հատուած, բանուոր, զինուոր, տարուար Եթէ դրանք հայոց լեզուի վանկական օրէնքին չեն ենթարկւում, պէտք չէ դրանց ապստամբ համարել կամ օտարահպատակ:

Վանկական օրէնքը ցոյց է տալիս, որ ոչ միայն որ և է ձայնաւորի առաջ ու գրել կարելի չէ, այլ ապացուցանում է նաև, որ լիւնն աղպիտի տեղերում ևս բաղաձայն է: Ո՞ր բանասիրին չէ պատահած, որ երբ ուղեցել է այդ կարգի բառերը տողադարձ անել, չի իմացել թէ ինչպէս լաւ կը լինի անել, արդեօք խօսուել չինէ, թէ խօսուել, գործուում, թէ գործուում, օրուայ, թէ օրուար Խոտտովանեցէք, որ ասածս սուտ չէ: Եւ ինչ է դրա պատճառը, եթէ ոչ այն, որ այդ տեղ չը կալ ձայնաւոր ու, այլ մաքուր բաղաձայն ու, ինչպէս օրուայ, գրուել, խօսուում:

Եթէ վանկական օրէնքը մի պակաս բան է թողնում, մենք այդ պակասը կը լրացնենք շեշտական օրէնքով:

Շեշտը պահանջում է ամփոփ սրտ, և սուր ձայն: Երկու պարզ ձայնաւոր միասին մի շեշտի տակ տեղաւորել չեն կարող: Ղարաբաղի բարբառում շեշտն անքան զօրաւոր է, որ իր նախորդ ձայնաւորներին կուչ է ածում, սղում, լուցնում, որ միայն ինքը ձայն չանէ: Օրինակ. վարթաբեղ, (կոչական) մին վրթարեղ.—մէկ այլը կտրաւ. վրթըբեղին. երկրորդ այլը սղեց. վրթըդնէ: Կորան բոլոր ձայնաւորները: Կուլէք մի կորցնէք, գրեցէք վրթըբըդնէ, բայց այդ բոլոր ըթերը սուղ են և ոչ իրանց բնական մեծութեամբ: Արդ ինչպէս պէտք է շեշտենք ուս, ուս, վանկերի վերայ, որ այդ ձայնաւորներից մէկին մի վրաս չը հասնի: Եթէ շեշտը դնենք ուր վերայ, ջոկ վանկ կը կազմէ, եթէ դնենք այի վերայ, ուն կը դառնալ: Փորձեցէք հետեւեալ բառերի վերայ. գրուելով, դործուում է, խօսուեցաւ, սղատուել: Միայն շեշտեցէք ամուր...

Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն

Եթէ ու, վ և ա տառերը իրար հետ հնչական մերձաւորութիւն չունենալին, ալ ևս այս չափ չփոթութիւն չէր կարող չառաջ դալ: Խամ մարդիկ տեսնելով, որ մեր գրերում մէկ ձայնի համար երեք տառ կալ, չեն կարողացել դրանց ծագման և էութեան պատճառն իմանալ: Բայց ինչ որ ներելի էր խաւար դարերում, ներելի չէ ներկալ լուսաւորեալ դարում, երբ ամեն ինչ հետազօտուում, ամեն ինչ քննադատուում և ամեն ինչ կատարելագործուում է: Մենք մինչև հիմա օտարներինքն ենք սովորել մեր լեզուն, այսուհետեւ թող օտարները մեզանից սովորին գոնէ այն լեզուն, որ այսօր կենդանի է, որի մէջ սպրում և սրով խօսում ենք մենք: Պարսն Տոմսօնը գրաբառի ոն նոյն լակ բառադիւղներում շինում է օ. հաւասանք: Եթէ Մխիթարեանների արտաբերելուն ականջ դնենք, պէտք է որ հաւատանք, բայց միթէ հալ աղգ ասածը Մխիթարեաններն են: Մի և նոյն Տոմսօնը Թիֆլիսի բարբառում չի գտնում: Ոչ մի բնիկ հալ, թէկուզ թիֆլիսցի լինի, միայն թէ լեզուն կտրցած չը լինի, կարող չէ նուառից առաջ ք հնչել, ալ ոչ ու: Գրոց լեզուում նուառից առաջ չը կալ ք, և այս կանոնը առանց բացառութեան է: Ղարաբաղի բարբառը այս կողմանէ գերազանցում է գրոց լեզւին: Ամենաբարակ բէն էլ հենց սր ընկնում է նուր մօտ, իսկոյն դառնում է ու, օրինակ՝ տարէ, տանէ, հերու, հունէ, փօր, փուրըռնէն հօր, հօռն անէ: Միով բանիւ, ինչ պէս տեսնում էք գրաբառից մի տասն աստիճան էլ բարձր է. գրաբառում դիմորոչ նուառի մօտ բէն ու չի դառնում գոնէ գրութեան մէջ, իսկ գրաբառացին կարող չէ ասել քն: Մեր բարբառներով գրողները ուչ չեն գարձնում հնչական տարբերութիւններին, որ շատ կարևոր է: Որքան ևս

լսել եւմ ականջովս, Արտուեան ճիւղի բարբառներումն եւ թէն մեղմ քան Ղարբարդումը, նուից առաջ չըկալ ր, այլ ւ: Ասում են՝ օրինակ՝ ցորեն ե ցոռնի, ցոռնումը, արին (արիւն) ե առնի, առնույ թորոն թոռնումը, տորոն, տոռնով, բերան բեռնի, ե այլն: Թիֆլիսի բարբառում արդարն ուան գառել է ր, բայց զա իր գոյութիւնը ցոյց է տալիս նու տառից առաջ: Ախլերդեանն ալս բանը շատ լաւ է իմացել ե աղպլիսի տեղերում գրել է ո: Ներկաչ սերունդը Թիֆլիսի բարբառին հմուտ չէ, ե համարեա չը կալ ալ եւ Թիֆլիսի բարբառ: Մենք մեր հասակում զրան տեսանք անարտոտ, ականատես եղանք փոփոխութեան աստիճաններին ե վերջին անկմանը: Պէտք էր արդեօք սպասել, որ միւս բարբառներն էլ անհետանան առանց գրի առնելու: Արդարն մեծ կորուստ կը լինի, բայց ում հասկացնես: Հոգեոր իշխանութիւնը աշխարհիկ լեզւին նշանակութիւն չի տալիս, ե մինչեւ անգամ թշնամարբ ե արհամարհանքով է վերաբերում դէպի նոր գրական լեզուն, իսկ աշխարհականներն էլ անհոգ են ալդ մասին: Ով որ հասկանում է բարբառներ ժողովելու կարեօրութիւնը, նիւթական հնար չունի ալդ գործով պարագելու, իսկ սվ որ նիւթական հնար ունի, չը դիտէ լեզւի արժէքը: Ինչո՞վ պէտք է կենդանութիւն ե կանոնաւորութիւն տանք մեր աշխարհիկ լեզւին, եթէ ոչ բարբառների հոգւովն ու անսխալ կանոններովը: Բայց ում հասկացնես:

Մենք պէտք է շնորհակալ լինինք մեր պապերից, որ մեզ աւելի քան թէ պակաս տառեր են տւել: «Աւելի պատառը, ասած է, փոր չի ծակիր»: Բայց ի՞նչ կը լինէր մեր լեզուն, գրական լեզուն, եթէ միւս արեւելեան աղգիրի նման պակաս տառեր ունենայինք: Պէտք է շնորհակալ լինինք նմանապէս, որ մեր նախնիք գրել են հնչական եղանակով,—ուր պէտք է եղել տառ փոխել՝ փոխել են, ուր պէտք է եղել սղել՝ սղել են, մէկ խօսքով պահպանել են լեզւի բնական ընթացքը պատմական շրջաններում: Եւրոպացոց նման չեն ասել, թէ որովհետեւ ալս ինչ բառը այն ինչ բառից է ծագում, որովհետեւ դենդերկնում կամ պարսկերկնում ալսպէս է, պէտք է ալսպէս էլ գրել: Մենք ալսօր կարգում ենք ալսպէս, ինչպէս որ գրւած է իսկ եւրոպացիներից շատերը այն չեն կարգում, ինչ որ գրւած է, այլ գրում են ուրիշ, ե կարգում ուրիշ: Ալսանչարմարութեան դէմ բողոքում են նրանց մանկավարժները ե պահանջում են հնչական, ալ ոչ գաղափարական լատագրութիւն, իսկ մերոնք, ընդհակառակն ինձ ասում են,—եթէ նրանք մի հնչիւնի համար մի քանի տառ են գրում հին ուղղագրութիւնը պահպանելու համար, ինչո՞ւ մենք եւ չենք կարող գրել ուսած ե կարգալ տում: Ալս թէպէտ կը նշանակէ մի շիմարութիւն միւս շիմարութեան օրինակով պաշտպանել, բայց քանի որ նրանց լեզուն ալ հնչիւնագրութեամբ է ջառաջ գնացել, բայց դարձեալ կանոնաւոր, ե մերն ալ, ինչո՞ւ չեղէինք մեր նախնեաց բռնած աւելի ուղիղ շաւղից, պարզ ե բնական ուղղագրութիւնից, որպիսին շարականինն է, որ բուն հաշկական է: Ինչո՞ւ

չը գրենք բուն հայկական հողուլի պարզ, բնական և անպաճոյճ առանց խելքներին զօռ տալու, թէ աչտեղ պէտք է գրել առ, աօ, օա, որովհետև լատիններէնում կամ չունարէնում աչպէս է: Ո՞րտեղ է լուած, որ հալը վանկէ հա—ուլ, բայց աչպէս են խորհուրդ տալիս մեզ գրելու լատինահայերը, և գիտէք ինչու. որովհետև, ասում են, « երկբարբառ է, ալը երկու տառերը միմեանցից բաժանել կարելի չէ: Ի՞նչպէս թէ կարելի չէ, անհ քեզ—հա—ուլ: Վանկը ժողովրդինն է, չէտը ժողովրդինն է, վերջապէս լեզուն ժողովրդին է: Մենք թնչ ենք, եթէ ոչ սոսկ պատկերազրոյց և ոչ ստեղծող, հնարող որ և է բառ կամ հնչիւն: Ասել են քերականութիւնը, աչինքն՝ գիրքը՝ արևստ է, աչինքն սովորելու բան է, բայց ուլ է ասել, որ լեզուն, ժողովրդի լեզուն արևստ է, և ոչ բնական մի կրեով, որ ածում և զարգանում է լատինի և օրինաւոր կանոններով:

Թող պօլսեցիք և Մխիթարեանք, որոնք հայրենի հողից զրկւած են, հալ ժողովրդից հեռու, մեզ համարեն միջնորդ ժողովրդի և իրանց մէջ, մեզնից սովորեն աշխարհիկ լեզու, ինչպէս մենք նրանցից ենք սովորել գրոց լեզուն: Նրանք մեզ սովորեցրել են արևստակեալ կանոններ և օտարամուտ ուղղագրութիւն և սխալներ, իսկ մենք փոխարէնը կը տանք բնական և կենդանի կանոններով: Իսկ սրա համար մեզ գրողներին հարկաւոր է միակերպ ուղղագրութիւն ունենալ: Նախ տառերը միակերպ գրենք, չնայ կը դառնանք բառերին և նախադասութիւններին:

Թէ Մխիթարեանք և պօլսեցիք հայկական հնչիւնները սխալ են հնչում, ալը մասին ոչ որ ալ ևս տարակուս չունի այժմ: Արդէն դրանց միջից էլ դուրս են գալիս առողջամիտ մարդիկ, որոնք խոստովանում են իրանց սխալը, բայց ժամանակի բերմունք համարելով իրանց սխալը շտկելու չափ եռանդ չունին: Միթէ ապացուցանել պէտք է, որ եթէ մի մասունագրի և մանաւանդ մի գրամատիկոսի արտաբերութիւնը սխալ է, սխալ ուղղագրութիւն և սխալ կանոններ էլ պէտք է աւանդէ իր վտանորդներին, որոնք դպրութիւնը հաւատով սովորելով պիտի սովորեն սխալ գրել: Սրինակ մեր հչմունքով, ինչպէս առաջ էլ ակարկեցինք, փառստաձայն տառերը նու առաւից չիտոյ դառնում են մետաղաձայն: Այս կրեովը մեր բոլոր բարբառներում և նոյն իսկ գրոց լեզուի մէջ առանց բացառութեան է: Ղարարադի բարբառում, ուր մեր բ, գ, դ, ձ, ջ տառերը իրանց մետաղական ձայնը չինել են փառսականից էլ նուրբ իբրև շիւղական, նու առաւից չիտոյ հնչում են դանդակի ձայնով, ինչպէս զրընգ, հանգ, հունգ, տունգ: Կարդում են՝ ծունգ, վանգ, ըզունգ, խունգ, տանձ, խնձոր, ինձ (Մխիթարեանք ինծ, ինծի) գինձ, սանձ, աձն, պանձ, հանգ, բանգ, և բանրոս, սանդ և սանրոս, գինգ, հանբարք և համբարք, Մերաթ և Մբատոս, թամբ ու թունբ, ուումբ, ամբ, շամբ և անբ, շանբ և այլն: Այս կանոնը պահպանւում է և մեր բոլոր միւս բարբառներում: Ուրիմն ոչ թանկ, ալ թանգ, թանգարան, ոչ թագուն, ալ թաքուն, ոչ զանկակ, ալ զանգակ, ոչ արձագանք,

ալլ արձաղանդ. ոչ անկիւն, ալլ անգիւն, ոչ տանձ, խնձոր, ալլ տանձ, խնձոր և ալլն և ալլն:

Միննոյն Մխիթարեանք ըստ չօղը հնչելով իրրև առ, առաջին ձևը ան-
 ւանել են բռնաբարբառ, իբր ըստ ձայնը բռնութեամբ է մտնում
 մեր լեզու մէջ: Ի հարկէ բռնութեամբ կը մտնէ, երբ որ բռնութեամբ զուրս
 մղես իր մարտնի և ժառանգական տեղից և ուղեկառ նորա տեղը մի լա-
 տինական առ զնել: Ուրեմն ոչ թէ ըւը, որ բռն հաղկական է, ալլ առն է
 բռնաբարբառ:

Մենք ասացինք մերը, որքան որ կարելի էր բազմամեալ մի մտած-
 մունք ամի լատիոց արտալատել, թող մեր հակառակորդները բազմալեզ-
 ւեան բառերով մի նախշուն պատասխան գրեն: Մենք ամենի բերանը
 ծեփելու համար շաղախի ահագին թումբեր ունինք ի պաշտպանութիւն մեր
 մարտնի սուրբ և անարատ լեզուի:

ՊՐՈՖԵՍՈՐ ՐՈՔԵՐՑ ԿՈՒՒԻ ԳԻՒՏԸ ԹՈՔԱՒԵՏԸ ԲԺՇԿԵԼՈՒ ՀԱՍԱՐ

ԲԺՇԿ. ԳՐԻԳ. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ (ՂԶԱՐՅՈՒ)

Յառաջ քան թէ այդ զիւտի մասին խօսելը, մենք պէտք է մեզ պարզենք թէ ինչ է թոքախտը և ինչ է այդ հիւանդութեան պատճառը և ինչ փոփոխութիւններ են տեղի ունենում թոքերի մէջ այդ ժամանակ:

Դեռ 1794 Բաիլլի և Բայլ 1810 թւականներին մատնանիշ արին այն երևոյթի վերայ, որ թոքախտով հիւանդներին թոքերում երևում են մանր բշտիկներ զորը գոյնով և մէկ կորեկահատի մեծութիւնով և անուանեցին այդ բշտիկները տուբերկուլ: Այդ փոքրիկ տուբերկուլի կենսական ընթացքը հետզհետէ ուսանելով դասն, որ զորը գունաւոր թափանցիկ տուբերկուլը ժամանակով իւր կենտրոնի մէջ փոխում է, սպիտականում է, կաթնադոյն է դառնում կամ սպիտակ դեղնադոյն և աւելի պանրի կերպարանք է ստանում, և այդ փոփոխութիւնը ընդունեցին և ընդունում են իբրև տուբերկուլի մահուան նշան. այդ փոփոխութիւնը կենտրոնից տարածւում է դէպի մակերեւոյթը, այնպէս որ ժամանակով ամբողջ տուբերկուլը ընդունում է պանրի փշրանքի կերպարանք, ասել է թէ մեռնում է:

Քանի որ տուբերկուլը կորեկահատից մեծ չէ՝ անուանում է միլիարտուբերկուլ: Բայց շատ անգամ տուբերկուլները մեծ քանակութեամբ միմեանց մօտ են դոյանում, միմեանց հետ միանում են և կազմում են տուբերկուլի կոյտեր, այնպէս որ երբեմն աղաւնիի ձուլ մեծութիւն են ունենում, որոնց կենտրոնը լինում է դեղնադոյնսպիտակ, իսկ մակերեւոյթը զորը թափանցիկ: Երբեմն, պանրանսլուց չե-

տոյ, այդ կոյտերի մէջ կրի ազերը խառնելով՝ քարացնում են դոցա-
մի քանի դէպքում այդ տուբերկուլների կոյտերը երկար ժամանակ,
մինչև անգամ տարիներ անփոփոխ են մնում, ասել է թէ շեն պան-
րանում: Երբեմն էլ այդ անփոփոխ կոյտերը ծծւում են և շրջակայ
գործւածները սպիի (քլորի) կերպարանք են ստանում: Բայց ամե-
նաշատ անգամ այդ պանրացած կոյտերը կակղում են, քայքայւում
են այնպէս, որ եթէ այդ կոյտը մորթի տակն է, մորթը ծակելով
վերք է առջ բերում, ինչպէս գայլակեղ (լուպուս) անուանած մորթի
հիւանդութեան ժամանակ, երբեմն գողեաց թաղանդի տակ գտնելով
ինչպէս աղիքների մէջ, ծակելով աղիքների վերք է առջ բերում:
Եթէ գործւածի խորքի մէջն է գտնւում ինչպէս թոքերի մէջ, այն
ժամանակ տուբերկուլ-կոյտի կակղելով՝ թոքերի մէջ խոռոչներ (կա-
ւերն) են զոյանում: Այդ խոռոչների մէջ գտնւում են պանրացած
և քայքայւած գործւածի կտորները, թարախ, վերջինիս արտադրողը
այն բորբոքւած գործւածն է, որը խոռոչի շուրջն է գտնւում: Այդ-
պիսի խոռոչներ գոյանում են մորթի տակ, երբ մորթը տուբերկու-
լով հիւանդ է ինչպէս դայլակեղի (լուպուսի) ժամանակ, այդպիսի
խոռոչներ գոյանում են միանունքների մէջ, ոսկորների մէջ, երկա-
մունքների (պլոմփների) մէջ, թոքերի մէջ, աւիշի խուլերի մէջ,
ուղեղի մէջ: Բայց ամենից շատ պատահում են թոքերի մէջ և կա-
րող են ահազին մեծութեան հասնել: Եթէ մի քանի խոռոչներ մի-
մեանց մօտիկ են գտնւում և երբ նոցա միջի գործւածները կակ-
ղում են և քայքայւում են, այդ խոռոչները միանում են և այդ-
պիսի ձևով մեծանում են:

Տուբերկուլոզը տարիներ, մինչև անգամ տասնական տարիներ կա-
րող է տևել և միևնոյն ժամանակ միմիայն տեղական մնալ, ասել է
թէ: մի տեղից միւս տեղ չը տարածւել, մի գործարանի միայն մի
մասի մէջ տարածւել և այնտեղ էլ մնալ, գործարանի դայլակեղ (լու-
պուս) հիւանդութիւնը, որ միմիայն մորթի տուբերկուլոզ է. կարող է
տասնական տարիներ մորթի մի սահմանափակ տարածութեան վե-
րայ մնալ՝ մնաս չը բերելով մարդու ընդհանուր առողջութեան և
չը տարածւելով միւս գործարանների մէջ: Շատ անգամ միւս գոր-
ծարանների տուբերկուլոզը ևս, գործարանի թոքերինը, կարող է տա-
րիներով սահմանափակ մնալ, մինչև անգամ բալորովին ծծւել և

առողջութիւնը կատարելապէս վերականգնել: Տարաբաղդարար վերջինս շատ հազիւ է պատահում: Սովորաբար, եթէ մի գործարանի մէջ, գործինակ թոքերի մէջ, մի տեղ գոյացաւ տուբերկուլը, նա սխտում է տարածւել առաջ նոյն գործարանի մէջ աւշեայ (Lymphbahnen) խողովակների միջոցով, և ապա միւս գործարանների մէջ խաչափողի, աղիքների, երիկամունքների մէջ և այլն:

1882 թւականին Բոբերտ Կոխը գտաւ, որ տուբերկուլի չառաջ բերողը մանրասունդեր են, որոնք իւր մշակած մեթոդով ներկած և 300 — 400 անգամ մեծացնող մանրադէտով դիտելուց երևում են իբրև փոքրիկ ձողիկներ (տուբերկել-բացիլլեն) և շատ անգամ փոքր կորու թիւն ունին:

Ներկած բացիլների մէջ երբեմն երևում են փայլուն չը ներկւած մասեր և կարծում են այդ որ մասերը սպորներն (սերմերը) են: Այս բացիլները ցանուում են արեան շիճուկի վերայ, ուր նոքա մարմնի ջերմութեան ազդեցութեան տակ բազմանում են: Բայց 28° ցածր և 42° բարձր ջերմութեան մէջ չեն աճում: Եթէ այդ բացիլները անխառն պատուաստել կենդանիներին կամ կաշւի տակ, կամ փորի մէջ, կամ աչքի մէջ, կամ երակի մէջ կամ վերջապէս ներշնչել տալով, այն ժամանակ կենդանին հիւանդանում է տուբերկուլով: Մարդը և կենդանիները հիւանդանում են տուբերկուլով ընդունելով բացիլները կամ նոցա սպորները թոքերի մէջ, աղիքների մէջ և մարմնի վերքի վերայ:

Մեր շրջակայքի մէջ տարածւում են բացիլները և նոցա սպորները խորխի և այլ արտաթորութիւնների միջոցով, և որովհետև սպորները շատ դիմացկան են, ուրեմն նոքա արտաքին աշխարհի մէջ աւելի երկար կը մնան և կը խսունեն ներշնչելու օդի հետ, կերակուրների և ըմպելիների հետ, երբ բացիլները մտնում են մարդու մարմնի մի որ և իցէ գործւածի մէջ, այնտեղ նոքա աճում են և բազմանում են և նոյն իսկ գործւածի մէջ զանազան փոփոխութիւններ պատճառելով՝ չառաջ են բերում տուբերկուլը, որը հասնելով մի որոշ զարգացմանը, մեռնում է, ընդունելով պանրի կերպարանք:

Վերջին հետազոտութիւնները ցոյց են տալիս, որ պանրացած տուբերկուլի մէջ բացիլները ապրում են և եթէ այդ պանրացած մասերը ուրիշ կենդանիներին պատուաստելով, ըստ մեծի մասին կարելի է տուբերկուլոյ չառաջ բերել:

Ինչպէս յայտնի է, կովերը ևս հիւանդանում են տուբերկուլոզով և վերջին հետազոտութիւնները ցոյց են տալիս, որ այդ կովերի կաթը ուրիշ կենդանիների մարմնի մէջ մտցրած՝ նոյնպէս տուբերկուլոզ է յառաջ բերում, ուրեմն և մարդիկ էլ կարող են հիւանդանալ, եթէ այդպիսի կովի հում կաթը խմեն:

Նորերումս պրոֆեսոր Կոխը հրատարակեց մի յօդած Deutsche Medicinische Wochenschrift-ի մէջ այն նիւթի մասին, որով նա սկսել է տուբերկուլոզով հիւանդներին բժշկել, ի միջի այլոց և թոքախտով հիւանդներին, որոնց թիւը ահագին է:

Ինչ կը վերաբերի իւր գործածած դեղին, նա ասում է, որ դեռ ևս նորա դիտողութիւնները վերջացած չեն, ուստի և չի կարող յայտնել, թէ ինչիցն է գոյացած այդ դեղը: Սակայն ասում է, որ դա մի թխագոյն (բրաուն) հեղուկ է, որը ինքն ըստ ինքեան չէ փշանում: Բայց գործածելու համար հարկաւոր է ջրով նոսրացնել և այդ դրութեան մէջ շուտով պղտորում է և նորա մէջ բազմանում են մանրատունիքը: Եթէ այդ նիւթը մտցնել ստամոքսի մէջ, նա ոչինչ ներգործութիւն չէ ունենում, իսկ եթէ մորթի տակ ածել, այն ժամանակ նա ազդում է և սորա համար հարկաւոր է մէջքի մորթի տակը ածել:

Կոխը առաջ կենդանիների վերայ է փորձել իւր հեղուկի զօրութիւնը և ապա իւր վերայ, մտցնելով իւր սեպհական մորթի տակ մի քառորդ գրամ: Ահա ինչպէս է նկարագրում նա դորա ազդեցութիւնը. երեք կամ չորս ժամից յետոյ ձեռքերը և ոտները սկսում են ցաւել, մարդ զգում է յոգնածութիւն, սկսում է հազալ, շնչառութիւնը դժարանում է մի ամբողջ ժամ, միւնոյն ժամանակ սիրաջ խառնում է մարդ, սկսում է փոխել, մարմնի ջերմութիւնը հասնում է մինչև 39,60, տանկերկու ժամից յետոյ այդ բոլոր երևոյթները անցնում են, մարմնի ջերմութիւնը միւս օրը հասնում է բնականին. իսկ ծանրութիւնը և յոգնածութիւնը շարունակւում են մի քանի օր. այդ բոլոր ժամանակը մորթի ծակած տեղը մնում թեթեւ կարմրած և քիչ էլ ցաւում է:

Ինչպէս բազմաթիւ փորձերը ապացուցանում են, ամենափոքր քանակութիւնը, որը կարող է ազդեցութիւն ունենալ, մէկ հարիւրերորդ գրամն է: Նատերը այդ փոքր քանակութիւնը մորթի տակ

մտցնելուց յետոյ, ստանում են թեթե ցաւ ձեռքերում և ոտներում և յոգնածութիւն, որը շուտով անցնում է, մի քանիսի մարմնի ջերմութիւնը բարձրանում է մինչև 38° և երբեմն աւելի ևս: Նթէ միւսնոյն քանանակութիւնը մտցնենք այնպիսի հիւանդների մորթի տակ, որոնք տուբերկուլոզ շունին, նոքա ևս միւսնոյն երկույթներն են ունենում, ինչպէս առողջները: Բայց բանը ուրիշ կերպարանք է ստանում, երբ այդ միւսնոյն քանակութիւնը մտցնենք տուբերկուլոզով հիւանդի մորթի տակ: Այն ժամանակ շորս կամ հինգ ժամից յետոյ սկսում է դող, մարմնի ջերմութիւնը բարձրանում է մինչև 39° իսկ շատ անգամ մինչև 40 և երբեմն մինչև 41°, ձեռքերը և ոտները ցաւում են, հիւանդը ցանկութիւն է ստանում հազելու, ամբողջ մարմնի զորութիւնը թուլանում է, շատ անգամ սիրտը խառնում է և հիւանդը փոխում է: Մարմնի մորթը երբեմն դեղնում է, երբեմն կարմիր բծեր են դուրս ապրիս մորթի վերայ ինչպէս կարմրուկի ժամանակ: Այդ բոլորը շարունակւում է 12-ից 15 ժամ: Բացառութիւնով նա կարող է ուշ սկսել և այն ժամանակ աւելի թեթե է անցնում: Նշանաւորը այն է, որ այդ ամենը շատ քիչ է թուլացնում, ընդհակառակը զորանից յետոյ հիւանդը իրան աւելի լաւ է զգում:

Տուբերկուլոզի փոփոխութիւնը աւելի լաւ է երևում, երբ մորթն է հիւանդ տուբերկուլոզով՝ զորօրինակ գայլակեղի (լուպուս) հիւանդութեան ժամանակ, որը ըստ մեծի մասին երեսի վերայ է լինում և որի փոփոխութիւնը մարդ աչքով կարող է տեսնել: Մորթի հիւանդ տեղերի վերայ այնպիսի փոփոխութիւններ են յառաջ գալիս, որոնք ուղղակի ապացուցանում են, որ այդ հեղանիւթը առանձին ազդեցութիւն ունի տուբերկուլոզի վերայ: Մէջքի մորթի տակ դեղը աճելուց մի քանի ժամ յետոյ, երեսի հիւանդ մասերը սկսում են ուռել և կարմրել և այդ ամենը մարմնի ջերմութիւնը բարձրանալուց առաջ: Ձերմի ժամանակ ուռուցքը և կարմրութիւնը աւելանում են և վերջի վերջոյ կարող են շատ սաստիկանալ, այնպէս որ այդ մասերը ունենում են թուլ կարմիր գոյն: Նթէ գայլակեղի կոչաբ որոշ սահմաններ ունի, այն ժամանակ ուռած և կարմրած տեղը շրջապատած է լինում սպիտակ շրջանակով՝ որ մի սանալմեարի լայնութիւն ունի, սրա շուրջը պատած է լինում կարմրացած մորթով: Ձերմի վերջանալուց յետոյ

Հիւանդ տեղերի ուռուցքը փոքր աւ փոքր նստում է և սովորաբար երրորդ կամ չորրորդ օրը բոլորովին անհետանում է: Գալակեղի կոյտերը ծածկում են կեղևով, որոնք թափում են երկու երեք շաբաթից յետոյ և նոցա տեղը մնում են կարմիր սպիներ: Բաց միանգամ միայն մորթի տակ այդ զեղի ածելը բաւական չէ, այլ հարկաւոր է մի քանի անգամ կրկնել, որ գալակեղի գործւածը կառարելապէս առողջանայ: Գլխաւորն այն է որ միայն մորթի հիւանդ տեղերն են այդ փոփոխութեան ենթարկում, իսկ առողջ տեղերը մնում են անփոփոխ: Այդ իսկ փոփոխութիւնները ցոյց են տալիս տուբերկուլոզով հիւանդ խուլերը, ոսկորները, յօդերը, ուր նկատւում են ուռուցք, ցաւ և երբեմն կարմրութիւն:

Թէ ինչ է կատարւում թոքերի մէջ՝ մենք այդ դիտել չենք կարող, թէև այդ ժամանակ հազը սաստկանում է, խորխը սկսում է աւատութիւնով դուրս գալ, բաց ընդհանուր փոփոխութիւնը, այն է ջերմը և միւս երևոյթները առաջին տեղն են բռնում: Սակայն պէտք է մտածել, որ այստեղ էլ այնպիսի փոփոխութիւններ են յառաջ գալիս, ինչպէս գալակեղի ժամանակ:

Եղոր չիշած ընդհանուր երևոյթները՝ ջերմը, ձեռքերի և ոտքերի ցաւերը, յոգնածութիւնը և այլն ամեն անգամ յառաջ են գալիս, երբ մէկ հարիւր երրորդ զրամ քանակութիւնով դեղը ածւում էր մի որ և իցէ հիւանդի մորթի տակ, որի մարմնի մէջ տուբերկուլոզական ախտ կար թէ մորթի վերայ, թէ թոքերի մէջ կամ թէ ոսկորների մէջ, ուստի կասկածաւոր դէպքերում այդ զեղի միջոցով կարելի կը լինի փորձել, թէ հիւանդը տուբերկուլոզ ունի թէ ոչ, եթէ հետազոտութեան միւս միջոցները մեզ զրական պատասխան չեն տալիս:

Կոխի կարծիքով նորա դասած դեղը ոչ թէ տուբերկուլոզացիւներին է սպանում այլ տուբերկուլոզական կենդանի գործւածը, ինչպէս գալակեղը բժշկելուց երևում է, ուռուցքը, կարմրութիւնը ցոյց են տալիս որ արեան շրջանառութիւնը գործւածի մէջ խանգարւում է և ապա կանգ է առնում և վերջապէս գործւածը մեռնում է:

Ուրեմն, կրկնում է Կոխը, իմ դեղը չէ սպանում բացիլներին, այլ տուբերկուլի գործւածը և այն ևս միայն կենդանի գործւածը բաց ոչ մեռածը, զորօրինակ՝ պանրացած տուբերկուլոզական կոյտերը:

Մեռած գործւածի մէջ կարող են կենդանի մնալ տուբերկուլ բացիլները, որոնք կամ մեռած գործւածի հետ դուրս կը թափւեն կամ նայելով հանգամանքին կը թափանցեն դրացի առողջ գործւածի մէջ:

Սորանից պարզ երևում է, որ եթէ մի հիւանդ իւր թոքերի մէջ կենդանի տուբերկուլներ ունէ և միւլնոյն ժամանակ և մեռածները, այն է՝ պանրացածները, որոնց մէջ բացիլները կենդանի են մնում և երբ մենք Կոխի դեղով կենդանի տուբերկուլները կ'ոչնչացնենք, սակայն այն պանրացած տուբերկուլները իւրեանց բացիլներով անփոփոխ կը մնան և հիւանդը այդ պանրացած տուբերկուլներից միշտ կարող է նորից վարակել, այդ իսկ պատճառով և Կոխը խորհուրդ է տալիս իւր դեղով բժշկելը ժամանակ առ ժամանակ կրկնել: Ինչ որ կը վերաբերի այդ դեղով թոքախտով հիւանդներին բժշկելուն, Կոխը ասում է որ այդ հիւանդներին վերայ իւր դեղը աւելի մեծ ազդեցութիւն ունի, ուստի նա սկսում է բժշկել ամբողջ մորթի տակ մի հազար երորդ զրամ և երբ այդ քանակութիւնը զաւարում է ազդել հիւանդի վերայ, այն ժամանակ նա ասում է մորթի տակ երկու հազար երորդ և այլն և հասնում է մինչև մէկ հարիւր երորդ դրամի և մինչև անգամ մի քիչ էլ աւելի: Կեղի ազդեցութիւնը երևում է նրանից, որ մորթի տակ դեղը ածելուց չետոյ հազը և խորխի քանակութիւնը աւելանում են և չետոյ կամաց կամաց պակասում են և մի քանի յաջող դէպքերում անյայտանում են. խորխը իւր թարախտութիւնը կորցնում է և դառնում է շողիաւոր: Բացիլների թիւը խորխի մէջ այն ժամանակն է պակասում, երբ որ խորխը շողիաւոր է դառնում: Ապա նոքա անյայտանում են և չետոյ երբեմն նորից երևում են մինչև որ հազը ոչնչանում է: Միւլնոյն ժամանակ գիշերւայ քրտինքը կտրւում է, արտաքին տեսքը լաւանում է, մարմնի կշիւը աւելանում է: Այն հիւանդները, որոնք թոքախտի սկզբնական շրջանում են գտնւում, վեց-եօթը շաբաթում առողջանում են: Նոյնպէս այն հիւանդները, որոնք ոչ շատ մեծ խոռոչներ ունեն իրանց թոքերի մէջ, համարեա առողջանում են: Բայց մեծ խոռոչներ ունեցողները այնքան մեծ օգուտ չեն ստանում, թէև նոցա խորխնէլ պակասում է և իրանց լաւ են զգում: Այդ իսկ պատճառով, ասում է Կոխը, ես կարող եմ եզրափակել, որ

սկսող թոքախորը այդ դեղով կ'բժշկուի և այն ժամանակ միայն այդ դեղը մարդկութեան համար մի բարերարութիւն կը դառնայ, երբ թոքախորը իւր ժամանակին կը բժշկուի, ասել է թէ նոյն իսկ սկզբունք

Կրանշէ և Մարտէն Ֆրանսիացի բժիշկները նոյեմբերի 19-ին 1889 թ. ուղարկեցին Ֆրանսիական Ակադեմիային մի փակած նամակ թոքախորի բժշկելու մասին և նամակը առժամանակ պետք է փակած մնար: Բայց երբ Կոխը այս տարի օգոստոս ամսի սկզբում միջազգային կոնգրեսում յայտնեց, որ նա թոքախորի դէմ դեղ է գտել, այն ժամանակ յիշեալ բժիշկները օգոստոսի 18-ին 1890 թ. դիտութեանց ակադեմիայի նիստին հետեւեալը հաղորդեցին:

Եթէ ճագարի ականջի երակի մէջ մտցնենք մաքրած ջրի մէջ խառնած տուբերկուլբացիլները, այն ժամանակ առանց բացառութեան չորս շաբաթից յետ մեռնում են և նոցա փայծաղը, լեարդը և թոքերը տուբերկուլոզով վարակւած են լինում: Բնդհակառակը, եթէ բացիլները երակի մէջ ածելուց յետոյ, նոքա սկսում են բժշկուել իրանց դաժձ ձևով, այն ժամանակ ճագարները երկար են ապրում՝ 100 և մինչև անգամ 200 օր. մարմնի միջի փոփոխութիւնները շատ աննշան են, փայծաղը փոքր է, լեարդը ըստ երևոյթին առողջ, բայց լեարդի մէջ երևում են հեռքեր տուբերկուլոզի, որը առողջանալու վերայ է:

Պաշտպանող պատաստումը նոքա պատրաստում են այնպէս, որ № 1-ը սպանում է ճագարին 14 օրից մինչև երեք շաբաթում, № 2-ը և 3-ը զեռ ճագարի համար մահաբեր են, 4-ը և 5-ը, նախելով կենդանու դիմացկանութեան, կամ սպանում են նորան կամ ոչ, մինչդեռ 7—10-ը անմիտ են ճագարի համար: Թէև առաջի փորձերը շատ յաջող չեն եղել, սակայն վերջին փորձերը ապացուցանում են, որ նոցա յաջողել է ճագարներին մի որոշ դիմադրութիւն հաղորդել տուբերկուլոզով վարակւելու դէմ: Ցանկեմէ ճագարներին ութը շաբաթուայ ընթացքում պատւաստել են բացիլներով № 6, 5, 4, 3 և 2-ով և 14 օրից յետոյ պատւաստել են այս 11-ին և երկու ուրիշ առողջ ճագարներին № 1-ը. վերջինները, պատւաստուելուց, 23 և 30 օր յետոյ մեռել են, իսկ չիշած տասնեմէկից ասաջինը մեռել է 65-րդ օրը, իսկ երեքը զեռ չորս ամսից յետոյ կենդանի են:

Պ. պ. բժիշկները այն կարծիքն են յայտնում, որ Կոխը ուրիշ ճանապարհով է բժշկում քան թէ իրանք:

Եւ իսկապէս, Կոխի խօսքերից երևում է, որ մի որ և իցէ քիմ իական մարմին է գործ ածում իւր հիւանդներին բժշկելու համար, որը մի առանձին չարաբերութիւն ունի դէպի տուբերկուլի գործւածը, գուցէ և քաղցկեղի (բակ) գործւածը. որովհետեւ միմիայն քիմիական մարմիններն են, որոնք թանձր հեղուկ ժամանակը՝ չեն փշանում, իսկ նօսրացնելուց յետոյ սկսւմ են պղտորել և մանրասունկերով լցւում են: Ընդհակառակը, եթէ պ. պ. Գրանչէ'ին և Մարտէն'ին յաջողի հիւանդ մարդկանց վերայ իրանց զաղափարը իրագործելու, այն ժամանակ նոցա զիւտը աւելի գերազանց կը լինի, որովհետեւ նայն իսկ բացիլների վերայ կ'ազդի՝ որոնք և են տուբերկուլոզի իսկական պատճառը:

ԿՈՒԻ ԶՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Ա ԲԱՐՆԵԼՆԵՆԻ

Նոյեմբերի 14-ին (նոր տամար) լոյս տեսաւ „Weitere Mittheilung über ein Heilmittel gegen Tuberculose von Koch“ (Տուբերկուլոզի դէմ մի առողջարար միջոցի մասին ևս մի հաղորդագրութիւն Կոխի) որի մէջ պրոֆեսոր Կոխը յայտնում է թէ իւր դիտաւորութիւնն էր իսկապէս նախ ամբողջ հետազոտութիւնը վերջացնել, մանաւանդ բաւականաչափ փորձեր ունենալ պրաքտիկայիմջ և դեղը մեծ քանակութեամբ պատրաստելու համար, նախ քան որ և իցէ բան այդ մասին կը հրատարակէր: Բայց որովհետև, չը նայած բոլոր զգոյշութեան՝ դորա մասին շատ է խօսուում, մանաւանդ թէ խեղաթիւրւած և չափազանցացրած կերպով, այդ պատճառով Կոխը տալիս է հետևեալ բացատրութիւնները գործի դրութեան մասին, որ կեղծ զազափարներ չը կազմեն, թէև կարևոր խնդիրներ կան, որ նա պէտք է բաց թողնէ:

Կոխի ղեկավարութեամբ Ալբրեքց և Պիու.Նլ գոքտորների արւած փորձերը մասամբ դեռ չեն վերջացել: Կոխը դեռ վերապահում է միջոցի (դեղի) բաղադրութեան և պատրաստութեան մասին խօսելը, քանի որ գործը դեռ չի վերջացած: Դեղը մի թխագոյն հեղուկ է, որը դիմանում է առանց նախազգուշական միջոցների և դորժածութեան համար պէտք է նորան անօտացնել (verdünnen), բայց անօտացածները լուծւում են և այն ժամանակ նոքա անպէտք են: Ստամոքսի միջոցով դեղը չի ներգործում այլ սա պէտք է կաշի տակով (subcutan) ներս մտցնել: Իբր գործադրելի անդ ընտրեց Կոխը: Ուրիշ անգեր փորձեր անելուց յետ, մէջքի կաշին (Rückenhaut)

ուսի թիակները մէջ տեղը և մէջքի մէջ, որովհետև այստեղ թէ ամենաքիչ տեղական բէակցիա է երևում և այստեղ ներմուծութիւնը (ինկելցիօն) գրեթէ առանց ցաւի է անցնում: Ինչ վերաբերում է նորան, թէ ինչպէս է դեղը ներգործում մարդու վերայ, շուտով երևաց, որ մի շատ կարևոր կէտում մարդս այլ կերպ է քան ծովի խողերը: Մարդը շատ աւելի զգացուն էր այդ դեղի համար, քան ծովի խողերը: Իւր սեղհական անձի վերայ 0,25 խորանարդ սանտիմետր ներմուծութիւնից յետոյ, վերին բազուկի վերայ, Կոխը երեք ժամից յետոյ զգացել է քաշքշոց անդամների մէջ, թոյլութիւն, հազի հակումն, շնչառութեան ծանրութիւն, որոնք տրագ աւելանում էին. հինգերորդ ժամում նա զգացել է մի արտասովոր դողդողոց (Schüttelfrost, ознобъ), որը գրեթէ մի ժամ էր տևել. միևնոյն ժամանակ վատ է զգացել ու փսխել է և մարմնի տաքութիւնը բարձրացել է մինչ 39,6 ստորձան: Սօտ 12 ժամ յետոյ այդ բոլոր ցաւերը սկսել են անցնանալ, տաքութիւնը իջել է և մինչ հետևեալ օրը կրկին սովորական բարձրութեանն է հասել: Անդամների մէջ ծանրութիւն զգալը և թոյլութիւնը դեռ մի քանի օր էլ պահպանուել են, նոյնքան ժամանակ էլ մնացել էր ներմուծութեան տեղը մի քիչ կարմրած: Առողջ մարդու նկատմամբ դեղի ներգործութեան համար ստորին սահմանն է մօտ 0,01 խորանարդ սանտիմետր (կամ 100 անգամ անօսրացած դեղի համար մի խորանարդ սանտիմետր). մարդկանց մեծամասնութիւնը դորան ընդդիմագործեց (reagirte, реагировала) անդամների թոյլ ցաւերով և արագանցնող յօդնութիւնով: Եթէ այդդեղի նկատմամբ (մարմնի քաշի վրայ հաշւած) փորձական անասունի և մարդու մէջ մեծ զանազանութիւն կայ, սակայն մի քանի ուրիշ յատկութիւնների կողմից երևում է կրկին բաւականին լաւ համաձայնութիւն: Այդ յատկութիւններից կարևորագոյնն է այն յատուկ ներգործութիւնը, որ նա ունի թոքախտային պրոցեսների վերայ (tuberculose Processe), ինչ տեսակի էլ նոքա լինեն:

Անցնելով փորձնական մարդուն, Կոխը ասում է. առողջ մարդը ընդդիմագործում 0,01 խորանարդ սանտիմետր ներմուծութեանը կամ ամենեւին և ոչ կամ շատ աննշան չափով: Նոյնը վերաբերում է հիւանդ, բայց ոչ թոքախտային (տուբերկուլոզ) մարդուն: Բայց

տուբերկուլոզ (թոքախտային) մարդու մօտ ընդհակառակը՝ 0,01 խորանարդ սանտիմետր ներմուծութեամբ լինում է թէ ընդհանրապէս ուժեղ և թէ նաև տեղային (örtliche, местный) ընդդիմազործութիւն: Անդհանուր ընդդիմազործութիւնը (Reaction, реакция) կայանում է ջերմի մէջ, որ մեծ մասամբ զողացնելով է սկսում և որի միջոցին մարմնի տաքութիւնը 39-ից անցնում և յաճախ մինչ 40, անգամ մինչ 41 աստիճանն է հասնում: զորա հետ լինում են անդամացաւեր, հազելու ցանկութիւն, մեծ յօգնութիւն, յաճախ նաև վատառողջութիւն և փսխումն: Այդ լինում է մեծ մասամբ 4 մինչ 5 ժամ ներմուծութիւնից յետոյ՝ և տևում է 12 մինչ 15 ժամ: Հիւանդները զորանով շատ քիչ են վնասուում (werden wenig angegriffen) և, հենց որ ցաւերը անցնում են, համեմատապէս իրանց առաջանից աւելի լաւ են զգում: Տեղային ընդդիմազործութիւնը (die örtliche Reaction, местная реакция) ամենից լաւ նկատուում է լուպուս հիւանդի մօտ: Այստեղ դեղի հակա-տուբերկուլոզային (antituberculose) ներգործութիւնը միանգամայն զարմանալի կերպով յայտնուում է: ներմուծութիւնից մի քանի ժամ յետոյ լուպուսային տեղերը սկսում են ուռչել և կարմրել: ջերմի ժամանակ ուռուցքը և կարմրութիւնը աւելի ու աւելի աճում են և այն էլ այնքան նշանաւոր չափով, որ լուպուսի հիւսւածքը (Lupusgewebe) տեղ-տեղ թուխ-կարմիր և նեկրոտային է դառնում: Ջերմի դադարելով ուռուցքը սկսում է պակասել: Գոյացած վերքի տեղերը յետոյ դառնում են բեկորներ, որոնք 2—3 ժամից յետ վաչր են ընկնում և երբեմն մի անգամ ներմուծութիւնից յետոյ մի հարթ կարմիր վերքի սպի են թողնում: Սովորապէս մի քանի անգամ ներմուծութիւններ են պահանջուում, որ լուպուսային հիւսւածքը հեռացնելի: Իբր մանաւանդ կարևոր բան պէտք է չիշել, որ նկարագրուած փոփոխութիւնները կատարուում են միայն լուպուսով հիւանդացած գլխաւոր տեղերի վերայ: Մինչև անգամ ամենափոքրիկ և աննկատելի՝ սպիի հիւսւածքի մէջ թաքկացած հանգոյցները նոյն պրոցեսներն են կատարում և ուռուցքի ու գոցնի փոփոխութեան պատճառով նկատելի են, մինչդեռ խոհական սպիի հիւսւածքը, երբ լուպուսային փոփոխութիւնները բոլորովին անցած են, անփոփոխ են մնում: Այս պրոցեսը այնքան ուսանելի է և դեղի բնաւորութիւնը այնքան որոշող, որ բոլոր փորձերը պէտք

է սկսեն լուսուսով հիւանդացածներով: Ներքին օրդանների մէջ գերիշխում է բնականապէս ընդհանուր ընդդիմադործութիւնը: Բայց պէտք է ընդունել, որ նաև այստեղ նոյն փոփոխութիւններն են կատարում, ինչպէս և լուսուսի վերայ նկատում են:

Նկարագրւած ընդդիմադործական երևոյթները առանց բացառութեան երևան են գալիս, երբ մարմնի մէջ կայ մի որ և է տուբերկուլոզային (թոքախտ-բարակացաւի) պրոցես, գործադրելով Օ. 10 խոր. սանտիմետր: Կոխը այդ պատճառով կարծում է, որ իւր դեղը ապագայում անհրաժեշտ միջոց է լինելու դիագնոզի (ցաւը ճանաչելու) համար: Նոր սկսող բարակացաւի (ֆոիզիս) կասկածաւոր դէպքերում կարելի է այդ դեղով նաև այն ժամանակ դիագնոզով անել, երբ հնարք չը լինի՝ բացիլները գտնելով՝ ցաւի բնութիւնը ճանաչել: Խոլերի, թաքնւած ոսկորային տուբերկուլոզներ, կասկածաւոր կաշւի տուբերկուլոզներ և այլն հեշտ և ճիշդ կերպով կարելի է ճանաչել:

Բայց դիագնոզի (ցաւը ճանաչելու) միջոցից աւելի նշանաւոր է Կոխի դեղը, որպէս առողջացնող դեղ: Յայտնեաց դիտողութիւնները հաստատում են որ դեղով պատճառւած լուսուսային կաշւի փոփոխութիւնների ժամանակ՝ ոչ թէ հիւսւածքի մէջ եղած տուբերկուլային բացիլներն են մեռնում, այլ միայն հիւսւածքն է բռնում՝ դեղով, այն հիւսւածքը, որի մէջ են բացիլները: Հիւսւածքի մէջ շրջանառութեան նշանաւոր հոսանքներ են տեղի ունենում, որով երևի բացիլների սնելու մէջ մեծ փոփոխութիւններ են լինում, որով նայած թէ դեղը ինչպէս են ներգործել տալիս՝ հիւսւածքը շատ թէ քիչ արագ մեռցնում է: Դեղը ուրեմն մեռցնում է ոչ թէ տուբերկուլոզային բացիլներին, այլ տուբերկուլոզային հիւսւածքը: Գործնով արդէն ասւած է, թէ մինչ որ սահմանն է ներգործում դեղը: Նա կարող է միայն ազդել կենդանի տուբերկուլոզային հիւսւածքի վերայ, բայց արդէն մեռած, օրինակ մեռած պանրային մասսաների վերայ, մեռած ոսկորների վերայ և այլն՝ նա չի ներգործում, որպէս չի ներգործում նաև այն հիւսւածքների վերայ, որոնք հենց նոյն այդ դեղով մեռցրած են: Այդպիսի մեռած հիւսւածքների մէջ կարող են դեռ մնացած լինել կենդանի տուբերկուլոզային բացիլներ:

որոնք հիւսւած քից դուրս են վաճառուս, բայց որոնք կարող են անցնել հարեան և գեռ կենդանի հիւսւած քի վերայ: Ուրեմն պէտք է նախ մեռցնել գեռ ևս կենդանի տուբերկուլոզային հիւսւած քները և յետոյ ամեն ջանք գործ զնել, օրինակ՝ խիրուրգական միջոցով, որ մեռած մասերը հեռացնեն. բայց ուր որ այդ անկարելի է, պէտք է դեղի շարունակ գործածելովը վստանգւած կենդանի հիւսւած քը պաշտպանել այն բանից, որ նորա մէջ նորից չը մտնեն բացիները:

Վերոյիշւածը բացատրում է միաժամանակ դեղի մի ուրիշ բնասորոշ յատկութիւնը, որ նորան կարելի է շատ արագ մեծացրած չափերով (զոզաններով) տալ հիւանդին: Այդ չի կարելի բացատրել նորանով, թէ հիւանդը սովորեց դեղին, եթէ իմանանք, որ երեք շաբաթում չափսը կարելի է 500 անգամ աւելացնել: Այդ երեւոյթը պէտք է այսպէս բացատրել, որ սկզբում շատ կենդանի հիւսւած ք կայ և դորա համապատասխան էլ դեղի մի փոքր զոզան էլ բաւական է, որ մեծ ընդդիմագործութիւն (րէակցիա) լինի. բայց ամեն մի ներմուծութիւն (ինօնեկցիժ) մեռցնում է ընդդիմագործութեան ընդունակ (կենդանի) հիւսւած քի մի մասը. ուրեմն յետոյ հարկաւոր է աւելի մեծ չափերով դեղ, որ առաջւայ չափ ընդդիմագործութիւն լինի: Եթէ անհասկած տուբերկուլոզային մարմինները, մեծացրած զոզաներով ներգործելուց յետ, այնքան քիչ են ընդդիմագործում, որպէս ոչ տուբերկուլոզայինները, այն ժամանակ պէտք է ընդունել, որ ընդդիմագործութեան ընդունակ բոլոր տուբերկուլոզային հիւսւած քները սպանւած են: Թէ այդ բացատրութիւնները և եզրակացութիւնները — ասում է Կոխը — ճիշդ են, այդ ապագան կ'ասէ, իսկ առայժմ դոքա նորա համար կարևոր էին:

Կոխը ի վերջոյ հետևեալն է հաղորդում դեղի մինչ այժմեայ գործադրութեան մասին: Բոլոր լուպուսային հիւանդներին ներս է սրտկեն (կաշւի տակով ներս է մտցւել) Օ.₀₁, յետոյ թող է արել որ ընդդիմագործութիւնը վերջանայ: Մի կամ 2 շաբաթից յետոյ կրկին Օ.₀₁ տրել է և այսպէս շարունակել, մինչև որ ընդդիմագործութիւնը թուլացել է և դադարել: Երկու երեսի լուպուս-հիւանդների մօտ մէկին 3, միւսին 4 ներմուծութիւններով լուպուսային տեղերը սպիացան, միւս լուպուս-հիւանդների դրութիւնը, համեմատ բժշկելու աւողութեան՝ լուացաւ: Բոլոր այս մարդիկ ուրիշ տեղե-

բում երկար տարիներ բաց առանց յաջողութեան բժշկել էին: Բորրովին նմանը եղաւ և խոլերի, ոսկրային և ջուրային տուբերկոլորների (բարակացաւտոններ) մօտ: Յաջողութիւնը նոյնն էր, ինչպէս և լուպուսի դէպքում՝ արագ առողջանալը թարմ և թեթև դէպքերում, ծանր կերպով առողջանալը՝ ծանր դէպքերում:

Թոքերի զարգացած տուբերկոլոր (բարակացաւ) ունեցողները ցոյց էին տալիս իրանց շատ աւելի զգայուն դէպի դեղը, քան թէ նոքա, որոնք խիբուրդական տուբերկոլորային ափեկցիաններ ունէին: Թոքախտ-բարակացաւտոնները (Փոիզիս ունեցողները—Phthisiker) ընդդիմադործում էին գրեթէ կանոնաւորապէս դեռ ուժեղ կերպով, երբ նրանց արւում էր շատ քիչ զոգաներով՝ 2 հազարերորդ (0,002) և մինչև անգամ 1 հազարերորդ (0,001) խորանարդ սանտիմետր: Այս ամենաստոր սկզբնական զոգաներից յետոյ կարելի է հասնել այն զոգաներին, որ միւս հիւանդները հեշտութեամբ տանում են: Թոքախտ-բարակացաւտոնները (Phthisiker) զորա համեմատ ընդունում էին սկզբում 0,001, յետոյ, երբ մարմնի տաքութիւնը բարձրանում էր, նոյն զոգան ամեն օր այնքան շարունակում էր, մինչև որ այլ ևս ընդդիմադործութիւնը դադարում էր: Յետոյ միայն արւում էր 0,002 (2 հազարերորդ), մինչև որ ոչ ընդդիմադործութիւն չէր լինում, և այսպէս համարեա միշտ միայն 0,001 կամ շատ շատ 0,002 բարձրացնելով մինչև մի հարիւրերորդականը և աւելի: Այսպիսով կարող է հիւանդը համարեա առանց ջերմի և նորա համար գրեթէ աննկատելի կերպով շատ մեծ զոգաների հասցնել: Վեռ բաւականի ուժեղ բարակացաւտոնները հասան մեծացրած զոգաներին աւելի շուտ և յաջող հետևանքը երևում էր համապատասխան արագութեամբ:

Ընդհանրապէս հազը և խորխը (Auswurf) առաջին ներմուծութիւնից յետոյ մի փոքր աւելանում էին, յետոյ կամաց-կամաց պակասում և ամենաչաժող դէպքերում ի վերջոյ բոլորովին անցնում էին: Նաև խորխը կորցնում էր իւր թարախային յատկութիւնը և դառնում էր շողխաւոր (schleimig). զուրս նետած բացիլների թիւը սովորապէս այն ժամանակ պակասում էր, երբ խորխը մատոգատ օր տեսք էր ընդունել. յետոյ բացիլները առ ժամանակ բոլորովին կորչում էին, բայց երբեմն-երբեմն կրկին երևում էին, մինչև

որ խորխը բոլորովին դադարում էր: Միաժամանակ գիշերւացքրտինքը դադարում էր, տեսքը լաւանում և մարմնի քաշը աւելանում էր:

Թոքախտ-բարակացաւտոններից նոքա, որոնք դեռ սկզբնական շրջաններումն էին, բոլորն էլ 4 մինչ 6 շաբաթում ազատուցին բոլոր հիւանդական նշաններից և նկատում էին որպէս բուժւածներ: Նաև ոչ շատ մեծ խոռոչներ (caverne) ունեցող հիւանդները նշանաւոր չափով լաւացան և զրեթէ բուժուցին: Միայն երբ թոքերը շատ և մեծ խոռոչներ ունէին, թէև խորխը նւազում էր և հիւանդը իրան լաւ էր զգում, բայց մի իրական (օրեկտիւ) բարելաւութիւն չէր նկատում: Դորա համեմատ Կոխը պէտք է ընդունէր, որ սկսւող թոքախտ-բարակացաւը իւր դեղով հաստատապէս բուժելի է: Որքան որ մինչ այժմեայ փորձերը թոյլ են տալիս մի եղբակացութեան գալու, թէ արդեօք բուժուելը վերջնական է թէ ոչ, Կոխը կարծում է, որ մի հիւանդութեան կրկնելը (Recidiv) ի հարկէ դեռ անկարելի չը պիտի նկատուի. բայց կարելի է նաև, որ մի անգամ արդէն բուժւածները տևողապէս ազատուան: Մեծ խոռոչներով բարակացաւտոնները միայն բացառակոն դէպքերում տևողական օգուտ կը ստանան զեղից, բայց անցողական կերպով նոքա ևս մեծ մասամբ կը լաւանան: Դորանից պէտք է եղբակացնել — ասում է Կոխը — որ նաև այդպիսի հիւանդների տուբերկուլոզը զեղից ազուում է, որպէս և միւս հիւանդներինը, բայց որ սովորապէս անհնարին է հեռացնել մեռցրած հիւսւածքների մասսաները երկրորդական թարախային պրոցեսների հետ: Ակամայ այտուից միտք է չղանում, թէ կարելի չէ արդեօք այդ կատարել մի կոմբինացիայով այժմեայ զեղի՝ խիրուրգիական գործողութեան կամ ուրիշ զեղերի հետ:

Կոխը ստիպողապէս խորհուրդ է տալիս, որ իւր դեղը անխափր կերպով չը գործադրեն ամեն տուբերկուլոզներին. այդ պատճառով նա կ'ուզենար, որ դեղը արւի միայն չատուկ հիմնարկութիւններում, ուր խնամքով կարելի է դիտողութիւն անել և խնամք տանել, քան եթէ շրջազայելով և կամ հիւանդի տանը բժշկեն: Նա կարծում է, թէ մինչ այժմեայ մեթոդները՝ սարի կլիման, ազատ օդում բուժելը (Freiluftbehandlung), չատուկ սնունդը, շատ անգամ, մանու-

Լանդ բարձի թողի արած ծանր դէպքերում, այս նոր դեղով բու-
 ժելու ժամանակ էլ օգտակար են լինելու, երբ հիւանդը կը լաւանայ:
 Նոր դեղով բժշկելու համար կարևորը այն է, որ բու-
 ժելը սկսելի որքան կարելի է վաղ: Գարակացաւի սկզբնա-
 կան շրջանում դեղը լիակատար կերպով ներգործում է: Աոխը այդ
 պատճառով յորդորում է բժշկներին, որ նոքա դիագնոզը շուտով կա-
 տարեն, մանաւանդ պէտք է, աւելի քան ցայժմ եղած է, սպու-
 տումի հետազոտելովը տուբերկել բացիլլզներն վերայ՝ բարակացաւը
 որքան կարելի է շուտ վիպելի (konstatiren), կասկածաւոր դէպքե-
 րում փորձնական ներմուծութիւններով իմացել՝ կա՞յ արդեօք տու-
 րերկուղոզ թէ ոչ: Երբ այսպէս բոլորը օր առաջ կատարած կը լինի
 և հիւանդութիւնը չեն թողնիլ որ ծանր կերպարանք ստանայ, այս
 նոր դեղը դառած կը լինի մի իսկական բարերարութիւն հիւանդ
 մարդկութեան:

Աոխը ի վերջոյ նկատում է, որ նա զիտմամբ բաց է թողել
 թւանշաններ և նկարագրութիւններ հիւանդութեան մասնաւոր դէպ-
 քերի նկատմամբ, որովհետև այն բժիշկները, որոնց հիւանդների
 թւումն էին փորձերի ենթարկած հիւանդները, իրանք են յանձն
 առել դէպքերի նկարագրութիւնը և ինքը չի կամենում նոցա
 օրեօրի նկարագրութեան առաջն առնել:

ՐՈՒԲԵՐՏ ԿՈՒ

Ա. ԲԱՐՆԵԱՆՆԻ

Այն մարդը, որի անունը ներկայումս ամբողջ քաղաքակիրթ աշխարհում մարդկութեան մեծ բարերարներից մեկի անունն է վիշուած, երկար և ծանր ջանքերի տակ է անցել ճանապարհը դէպի այն փառքը, որ նա պարտական է բժշկականութեան մէջ արած իւր գիւտերին: Ծնւած որպէս հանքային վերակայութիւն, լետոյ հանքային խորհրդականի որդի, հաննովրեան լեռնային Ալաուսթալ քաղաքում 11 դեկտ. 1843 թ., աչժմ նա տղամարդու ուժեղ հասակունն է և կարող է արդէն վառ նպէլ իւր շատ նշանաւոր ծառայութիւնների վերայ: Իւր բժշկական ուսումը ստացաւ Գոթտինգենի համալսարանում 1862-ից մինչ 1866 թ.: Գոթտարութիւնը ստացած, նա մի առժամանակ օգնական բժիշկ էր Համբուրգի ընդհանուր հիւանդանոցում. զորանից վառ նա զործեց որպէս զործնական բժիշկ Հաննովերի մի փոքրիկ քաղաքում, լետոյ Պոզենի պրովինցի Ռակելից քաղաքում. 1872-ից նա նշանակւեց լիճակաւին Ֆիլդիկոս, և ալդ պաշտօնում նա փոքրիկ քաղաքներում իւր ուսումնասիրութիւնը մեծ լրջութեամբ և եռանդով շարունակեց, ալնպէս որ կամայ-կամայ նա ճանապարհ լացող հետեանքների հասաւ: Հակառակ Պատեօրի, որը սկզբից հէնց քիմիկոս է, Աոխը իւր հետազօտութիւնները բուսաբանութիւնից սկսեց: Բերլինի «Պոստ» լրագրի մի կենսադրական ուրապժից երեւում է, որ Աոխը երկար ժամանակ աչխասնլ է Բրեսլաւի բուսաբան պրոֆեսոր Ֆերդինանդ Աոհնի լաբորատորիայում, ուր նա հետեից Աոհնի հալեացքներին՝ բուսական պարազիտների պարարերութիւնների մասին դէպի վարակիչ հիւանդութիւնները: Աոխի առաջին հաստեւոյցած աչխասութիւնն էր «Բերանի վարակիչ հիւանդութիւնների միկրօօրգանիզմների մասին», որնա 1878 թ-ին Աասսել քաղաքում ժողովւած բնագիտների ժողովի բժշկական սեկցիայում դասախօսեց (այն ժամանակ դեռ բակտերիօլոգիա չը կար և առողջաբանութիւնը դեռ պաշտօնական գիտութիւն չէր): Արդէն ալս աչխասութեան մէջ լաւ նկատուեց Աոխի գիտնական հետազօտութեան ձևն ու եղանակը: Նորա մտքերի

ընթացքը և եղրակացութիւնները խիստ տրամաբանական են և վկայում են սրամտութիւն. նորա հետազոտական մեթոդները, որ նա ինքը երկար տարիների ընթացքում ստեղծել էր, այնքան հետևողականութեամբ, ճշտութեամբ և չրջանկատութեամբ մշակւած են, որ նոքա զինւած են ամեն հակաճառութեան դէմ. այդ պատճառով էլ նորա հետազոտութիւնների հետևանքները մինչ այժմ գիտութեան կողմից ընդունւել են ուղղակի որպէս անկասկած փաստեր:

Կոխի հետազոտութիւնների նշանակութիւնը մասնագէտներից խսկոյն հասկացւեց և գնահատւեց: Յոլսէփ Լիստէր, Էրենելի անդլիացի խիրուրգը և վէրքերի խնամելու անտիսեպտիքական մեթոդի ստեղծողը, խիստ անգլիերէն թարգմանել տւեց Կոխի այն առաջին աշխատութիւնը:

Իւր բակտերիոլոգիական գործունէութեան առաջին տարիներում Կոխի հետազոտութիւնները տարածւեցին սեպտիցեմիայի վերայ (Septicaemie, արււնի նեխութիւն) և փայծաղի բորբոքման վերայ: Մանաւանդ վերջինիս նկատմամբ նոքա շատ արդիւնաւոր եղան. նոքա նոր լոս գեղեցին փայծաղի բակտերիաների վերայ: Գորան չաջուրդեց ջերմի նորոգելու (febris recurrens) փոխադրելու գիւտը, որպէս նաև թէ այդ հիւանդութիւնը գրգռում է այսպէս կոչւած Օբերմայերերեան սպիրիլլուս (Obermeyerscher Spirilius):

Իւր գիւտերի համար Կոխը պարտական էր մանրադիտական առարկաները, մանաւանդ բակտերիաները ներկելու իւր արևեստական մեթոդին, որով նոքա աչքին տեսանելի և որոշ են դառնում: Գլխաւորապէս այդ ներկելու մեթոդին պէտք է վերադրել այն զարգացումը, որ ստացաւ բժշկականութեան այդ ամենանոր ձիւղը վերջին տասը տարիներում: Հէնց բակտերիաները ներկելու այդ մեթոդը տարաւ Կոխին զէպի այն գիւտը, որը բժշկական հետազոտութեան մեծագործութիւն կը համարւի բոլոր ժամանակների համար, այն է՝ գիւտը սուբերկէլ-բացիլի, որպէս զրոյիչ տուբերկուլոզի, իւր արտաշաղակու բոլոր ձևերով մարդկային և կենդանական մարմինների մէջ: 1882 թ. 24 մարտի (նոր տոմար) կապացաւ Բերլինի Ֆիզիոլոգիական ընկերութեան նշանաւոր նիստը, ուր Կոխը դատախօսեց «Տուբերկուլոզի էտիոլոգիայի մասին» (Ueber Aetiologie der Tuberculose): Ազգանդ նա ապացոյց բերաւ, որ թոքերի բարակացաւը, կաշւի, ոսկորների, չոզերի և այլն տեղալին տուբերկուլոզի դանազան տեսակները՝ բոլորն էլ հառաջանում են տուբերկէլ-բացիլի զարգացումից:

Արդէն այս գիւտը, որը սկզբում այլ և այլ կասկածների հանդիպեց, մեծամեծ հետևանքներ ունեցաւ բժշկական ըմբռնողութեան համար բարակացաւի էութեան մասին. իւր լիտագազ զարգացումով այդ գիւտը տարաւ զէպի չալոնի պրոֆիլակտիկական միջոցները՝ տուբերկուլոզի տարածման դէմ: Տուբերկէլ-բացիլի գիւտի ժամանակ Կոխը արդէն չալոնեց, որ կարելի պիտի լինի միջոց գտնել, որը անվնաս կը զարծնի հիւանդութեան այս զրգողին:

Իբր գնահատութիւն իւր առաջին բակտերիոլոգիական աշխատութիւններէ, դ-ր Կոխը 1880 թւականին կանչուեց Բերլին, որպէս կարգաւոր անդամ կալսերական-ստողջապահական վարչութեան: Նորա աշխատասիրութիւնը տուրբիկէլ-բացիլի մասին դուրս եկաւ այդ հիմնարկութեան միջոց: 1883-ին Կոխը նշանակուեց զազտնի խորհրդական և իբր զեկալար գերմանական խոլերական մասնախմբի, դ-ր Գաֆկի'ի ու դ-ր Ֆրիշեր'ի հետ ուղարկուեց Նիպոտոս, ուստից նա փետոյ գնաց խսկերալի հալրենիքը՝ Հնդկաստան: Նաև այստեղ հանձարեղ և բաղդաւոր հետազոտողի աշխատանքը անհետևանք չանցաւ: Հնդկաստանից նա վերադարձաւ լաղթութեան ձայնով՝ «Էւրիկա» և ներկայացրեց իբր լաղթանակ այն, ինչ իւր ձեռն պատճառով կոչուեց ստորակէտ-բացիլ: Նաև այս գիւտը մեծ զարկ տուեց հալբացքներին՝ խոլերալի հիւանդութեան զարգացման, տարածման և էութեան մասին: Խոլերալի ճանաչելը դորանով շատ հեշտացրուեց, և որքան շուտով նա ճանաչուեալ է՝ նոյնքան կարեւորութիւն է տրուեալ նորա առաջնաւանդութեան:

Պրուսական պետութիւնը, աչնքան մեծ ջանքերով և անձնւիրութիւնով ձեռք բերած հետեանքների համար՝ պարգևեց հետազոտողին 100.000 մարկ (կամ մօտ 33.000 ռուբլի ոսկով) և հիմնեց համալսարաններում ամբիօններ առողջաբանութեան համար (հիգիեն), որոնցից Բերլինի համար նա նշանակուեց կարգաւոր պրոֆեսոր, ստանալով զազտնի բժշկական խորհրդականի տիտղոս: Միաժամանակ հիմնուեց առողջաբանական ինստիտուտ, որը նորա ղեկավարութեանը լանձնուեց, ուր նա պատրաստեց այն առողջաբանների սերունդը, որոնք ալժմ համապատասխան ամբիօններ ունին գերմանական համալսարաններում, որպէս Վոլֆհիլդէլ (Գոտտինգէն), Լօֆլէր (Կրայֆալադ), Գաֆկի (Գիսէն), Կրեանէր (Ենա), Ֆրենկել (Լօնդրէրգ), Ֆրիշեր (Կիլ):

Կոխի արած ծառայութիւնների պատկն է ալժմ նորա դրած միջոցը, որով մեռցնուեալ են տուրբիկէլ-բացիլներից վարակեալ մարմնի հիւսւածքները, թէև զեռ ոչ բացիլները իրանք, և որով նոր սկսեալ թողախտ բարակացաւտոները սևողապէս բժշկուեալ են: Գիւտի մանրամասնութիւնների մէջ այստեղ աւելորդ ենք համարուեալ մտնել, քանն որ «Մուրճ»-ի ստեյ իսկ համարուեալ կը սպազուեն անշուշտ թէ Կոխի նորազոյն հրատարակութեան մանրամասն ղեկուցումը և թէ նշանաւոր գիտնականների վկայութիւնները այդ առիթով, որի մասին բոլոր քաղաքակրթեալ երկիրներից լսուեալ են զարմացման և ողորութեան ձայներ: Զի կարելի սակայն լրութեան թաղ նաև ալս հանգամանքը, որ գերմանացի Կոխի այս նորազոյն գիւտի առիթով լաճախ կրկնուեալ է Ֆրանսիացի մեծ գիտնական Պաստուրի անունը, որին մանաւանդ Ֆրանսիացիք համարուեալ են իսկական աղբիւր Կոխի նորազոյն գիւտի: Այդ խնդիրը երկի շուտով կը պարզուի, երբ Կոխի պատրաստած հեղուկի զազտնիքը ինքը հեղինակը կը հրատարակի: Առ ալժմ թող միայն տեղ արել շնորհակալութեան անխառն զգացմունքի բարեխիղճ և հանձարեղ հետազոտողին, որի գիւտը, որպէս երևուեալ է, կոչուեալ է մարդկութեանը ամենատարածուեալ և ամենաանբուժելի համարուեալ ցաւի դէմ աջողութեամբ մարտնչելու:

Գ Ր Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ՓԱՓԱԶԵԱՆՑ, Վ. — «ԹՈՓԱ», ութաճալ, 44 էրես, տառ № 12,
Թիֆլիս, սպ. Արօր, 1890, գինն է 5 կոպէկ:

Քաղաքակրթւած տէրութիւնները գործեր պաշտպանելու իրաւունքը տալիս են աշխարհի մարդկանց, որոնք ստացել են ընդհանուր և մասնագիտական — իրաւաբանական կրթութիւն և որոնց կեանքը չէ ներկայացնում մի որ և է նշանաւոր բարոյական արատ. նոյն իսկ ազգայինների վերաջ հաստատում է մի որոշ հսկողութիւն: Իսկ ուր բացակայում են սրա նման հոգսեր, ուր կառավարութիւնը չէ մտածում իւր պարտաւորութիւնների մասին, աշխտեղ առաջ է գալիս փաստարանների մի աշխտեղակ զստակարգ, որը նոյնքան վնասակար ազդեցութիւն է ունենում հասարակութեան բարոյակօն որքան և տնտեսական կեանքի վերաջ: Այս վերջին անսակի փաստարաններից մէկի գործունէութեան հետ ծանօթացնում է մեզ պ. Փախապեանը իւր «Թոփալ» գրքով:

Գործը կատարում է վանում: Վանի նման մեծ քաղաքը չունի վկայական ունեցող մի փաստարան.

դրա փոխարէն նա ունի մի դաս մութ անցեալով մարդիկ, որոնք չաճախ յրանց գիտութիւնը ձեռք են բերել սեփական փորձով, երբ զանազան շանցաւոր գործերի համար դատի են եղել ևնթարկւած. նրանց աջողութիւնը հիմնւած է դասաւորների և քննիչների հետ ունեցած բարեկամութեան վերաջ, որին նրանք հասել են կեղծաւորութիւնով և ալ անբարոյական միջոցներով: Այլախինքնից մէկն է և «Թոփալ» (կաղ) Ակօն: «Ժամանակին Թոփալը մանրախճառ էր, բայց աւելի զբաղւած էր մուրհակներով փող տալով, քան վաճառականութեամբ. մի օր էլ փորձեց կեղծ մուրհակ շինել, բայց բռնուց, զատի տակ ընկաւ, մի տարի բանտ ճատեց, տարիներով դատ վարեց, վերջապէս ազատուց բանտից, բայց երբ զուրս եկաւ, նրան արդէն չալանի էր, թէ ինչ բան է նախնական, վճռաջինջ, ևզեռական և ալ ստուանները, ինչ ան օրէնքները և ինչ միջոցներով կարելի է ալ օրէնքների առաձգականութիւնից

օգուել)»... Այս կերպով ձեռք բերած գիտութիւնը նա լրացրեց, կարդալով տաճկական օրէնագրքերը: Գործի աջողութեան համար նա ծանօթացաւ դատաւորների հետ և այս բոլորից չետոյ սկսեց իւր գործը: Ահա և նրա գործերից մէկը: Մի օր անգաւակ, Կուռուպաշայ Մելիքը, մտնում է թողնելով տեղական հանգամանքների համեմատ բաւականի մեծ ժառանգութիւն. նրա օրինաւոր ժառանգներն են կիներ և եղբոր որդիքը, Մելքոնը, Կարապետը և Մարգարը: Ժառանգները ձգտում են իրար զրկել, համադիւղացիները ուզում են նրանց հաշտեցնել, բայց իզուր: Նրանք վճռում են դատարանին դիմել. մէջ է մտնում Թոփալը: Նա առանձին առանձին խօսում է թէ Մելքոնի, թէ Մարգարի և թէ այրիի հետ, ամեն մէկի համար չանձն առնելով միաժամանակ գործ վարել ընդդէմ միւսների: Հրապուրելով ապագայ հարստութիւնով, վիճողները իրանց ունեցած չունեցածի մեծ մասը ծախսում են գործի համար. Մարգարը գրաւ է գնում տունը, այգին և այս բոլորը ժառանգութեան մի մասի հետ մտնում է Թոփալի գրպանը, իսկ ժառանգութեան միւս մասը «սողիները (բանից դուրս եկաւ) պատկանում է եղել ոչ թէ մեռնողին, այլ մի տաճիկ բէգի, որը թափու դէլիբէսի միւղիրն էր, դատը դեռ ևս չարունակում էր, սակայն Թոփալը մեզր ուտելուց չետոյ սրբել էր չրթունքները, քաշուի մի կողմ և իրան դիմողներին մի անդամ ընդ միշտ չափակել, որ սալ ևս ինքր չէ խառնելու աղ: գործին»:

Տեսնելով, որ տաճիկը ժառանգութեան մեծ մասը զաֆթեց, եղբայրները հաշտուում են և բացի Մարգարից, որը սարսափած էր եղած փորձովը, վհուում են շարունակել գործը Պոլսում. այդ հաշտութիւնից «երեք օր չետոյ Կուռուպաշայ Մելիքի դասը գնում էր Պոլիս... գնում էր անդառնալի, գնում էր գլուխը դնելու Թամիլի դատարանի պատերից կախած հաստէկ սուպրակների վերայ և քնելու չաւիտեան...» Նոյն քաղաքն է դիմում և Մարգարը. նա առնում է պանդխտական ցուպը, գնում է դառն քրափնքով ազատելու գրաւ դրած իւր հողերը. նա երկար մնում է Պոլսում և ո՛վ գիտէ, դեռ որքան պիտի մնայ, որովհետև «պարտքը տոկոսներ էր ծնում և այդ տոկոսները ուրիշ մանր տոկոսներ»:

Վերև նկարագրած չարիքը մի մասնաւոր չարիք չէ, նա ընդհանուր հասարակական է Տաճկաստանում և «Թոփալ»-ի գլխաւոր արժանաւորութիւնը կալանում է հէնց նրանում, որ նա ուշք է զարձնում մի հասարակական չարիքի վերայ:

Հարկ ենք համարում ցոյց տալ գրքի և մի երկու թերութիւնները: Հեղինակը ներկայացնում է մեզ, որ Կուռուպաշայ Մելիքի ժառանգները, ազահութիւնից զրգւած, ձգտելով իրար զրկել, չը կամենալով գործը վերջացնել հաշտութեամբ, դիմում են Թոփալի նման մի անձնաւորութեան և քանդում են: Կը պատահեն ընթերցողներ, որոնք կը դատեն այսպէս. «Ի՞նչ այդ ժառանգները ազահ չը լինէին, եթէ նրանք չը ձգտէին իրար զրկել և գործը իրանց մէջ հաշ-

տուժեամբ վերջացնէին, նրանք հարկաւորութիւն չէին ունենալ շիմել թոփալին, ուրիմն իրանց անբաղտութեան գլխաւոր պատճառը իրանք են»։ Հեղինակը և ցոյց է տալիս այդպիսի մտածողներէց մէկին՝ Մարգարին. «իմ մեղքս, իմ ագահութիւնս էր պատճառը, ասում էր նա»... և զգալով, որ կարող են Մարգարի նման ընթերցողներ լինել, ինքը հեղինակը իւր կողմից ասում է. «Քեզ թոփալ Ակոն կողոպտեց, քեզ վախառուն բռնաւորեց»։ Այսպիսի թիւրիմացութիւնները շատ անհետու համար, հարկ էր թոփալի գործունէութիւնը դտել այդպիսի խառնուրդից, հարկ էր ներկայացնել այնպիսի հանգամանքներ, երբ դատ ունեցողները բարեխղճաբար համոզւած լինելով իրանց իրաւունքների արդարութեան մասին, ստիպւած են զինել թոփալի միջոցով դատարանին։ Այն ժամանակ պարզ կը լինէր, թէ որ կողմում պէտք է համարել մեղքի ծանրութիւնը։

Մի երկրորդ նկատութիւն ևս։ Վեղձ կլասիկները նկարագրելով մի բարոյական հրէշ, ներկայացնում էին հրէշ նրան և ֆիզիքական կողմից. նոյնն է անում և

պր. փափագեանը. ահա ինչ գծերով է նա ներկայացնում իւր հերոսին. «Նորա անունը թոփալ էր, որովհետև կաղ էր և ոչ միայն մի ոտքով՝ այլ երկու. դորա համար իսկ, երբ ման էր գալիս, նմանում էր մի վաւաճաղի։ Կարճահասակ էր, մինչև իսկ թզուկ, խորշոմապատ պղնձադոն դէմք, փոքր խոր ընկած շարժուն բրերով աչքեր, հաստ շրթունք, հաստ ընչաքց, գերծած ծնօտ, կոշտ կարճ մատներով ձեռքեր» (11 եր.)։ Նոյնպէս նկարագրում է և Վանի փաստարանների ամբողջ դասակարգը. Վանը «ունի մի դաս անվկայական կաղ, կուր և երբեմն իսկ թոթովախօս իրաւաբաններ» (1 երես)։ Սակայն այսպիսի ձևեր ցանկալի չեն մի զուտ բէալական գրւածքի մէջ, որովհետև դրանք արհեստականութեան սոււեր են զցում գրւածքի վերայ, զրանով թուլացնելով տպաւորութիւնը։

Առաջ բերած թերութիւնները սակայն չեն ոչնչացնում գրքոյկի գլխաւոր արժանաւորութիւնը, և մենք խորհուրդ են տալիս մեր ընթերցողներին կարգալ այդ գրւածքը։

B.

ՂԱԶԱՐԵԱՆՅ, ՅԱԿՈՒ.—«ԳԻՒԻԼԷ»։ Մի արկած քիւրդերի կեանքից, Թիֆլիս, 1890 թ. տպար. «Արօր», Նազարեանցի. 60 էրես, գինն է 15 կոպէկ։ Հրատարակութիւն «Աղբիւր» և «Տարաղ» պատկերազարդ հանդէսների։

Հեղինակը լաւ ծանօթ է երևում հետաքրքրական տեղեկութիւնների քրդերի կեանքին, նա տալիս է նոցա կենցաղավարութեան մասին մի քանի Գրւածքը իւր մէջ պարունակում է մի վէպիկի համար հարկաւոր նիւթեր։

Չը նաչելով նիւթի չարմարութեան և հեղինակի լաւ ծանօթ լինելուն աչն կեանքին, որ նկարագրում է, ինքը վէպիկը, իբրև հեղինակութիւն, անկատար է և միայն մասամբ չաջողւած:

Գլուխն սրտոտ քրդուհի է, որ իւր նշանածին կորցնելուց լեռնային վճռում է նորա վրէժը առնել նորան սպանողներէրից և իսկապէս առնում էլ է, կատարելով համարձակ արշաւանք թշնամիների վրանը և դնդակահար անելով զլիւստը թշնամուն: Պատմուածքի բարոյականը աչն է՝ թէ մարդիկ պէտք է իրանց պատիւը կարողանան պաշտպանել, չը վախենան և երբէք ստրկաբար չը տանեն վիրաւորանքներ:

Հեղինակը իւր գրածքին առանձին անուն չի տուել, ալ անուանել է նորան «մի արկած քիւրդերի կեանքից»: Անչափ է մնում ընթերցողի համար թէ ի՞նչ է դա, եղած զէպը, թէ ախպական մի նկարագրութիւն:

Եթէ դա իսկապէս տեղի ունե-

ցած մի անցք է, աչն ժամանակ հեղինակը պէտք է և բոլոր գրածքին տար ճշգրիտ պատմութեան կերպարանք: Եթէ դա մի տեսակ ստեղծագործութիւն է, հիմնւած քրդական կեանքի ծանօթութեան վերայ, աչն ժամանակ պէտք է վիպական ձևը լաւ պահպանւած լինէր և վէպի գանազան մասերը համաշափութեան բերւած լինէին:

Հեղինակը դժարացել է օգուտ քաղելու իւր նիւթից: Նա իւր տեղեկութիւնները մոցրել է գրածքի գանազան խորշերը ոչ ցանկալի հրատեթեամբ և փոխանակ ճոխացնելու պատուածքը՝ բռնաւորել է նորան և դարձրել ծանր ընթերցանելի:

Պատմուածքի երկրորդ կէտը, սկսած վեցերորդ գլխից, աւելի չաջող է և կարդացում է համեմատաբար բաւականին հեշտութեամբ, իսկ մի քանի տեսարանները և հաճութեամբ:

Իբրև ժողովրդական գիրք՝ նա կարող է ընթերցողներ գտնել:

Քլ.

«ԱԶՕ-ՄԱՐՈՒՆ». Ս. Պետերբուրգ, տպարան Սկորոխոզովի. 1890 թ., փոքրաչիւր 22 երես. գինն է 3 կոպէկ:

Գրքուկի նիւթը հետաքրքրական է, իսկ նորա բովանդակութիւնը ժողովրդական ընթերցանութեան համար նպատակաբարձ: Գրածքը սակայն կիսակատար է մշակւած և կրում է մի քանի տեղերում թուլ մտածմունքի կնիք իւր վերայ:

Նիւթը առնւած է Զուլամերիկցի

ասորիների կեանքից, որոնք բաւանի են իբրև քաջ և ազատասէր ժողովուրդ: Այդ ասորիները կայողացել են իրանց լեռներում պահպանել իրանց ժողովրդական իրաւունքները: Այդ ասորիների և թուրքերի մէջ ստեղծուած անհրաժեշտ մի մեծ ընդհարումի նկարագրութիւնը կազմում է գրքուկի

բովանդակութիւնը: Ընդհարումի մէջ Ազո-Մարուն ասորուհին կատարում է մեծ քաջագործութիւններ:

Դրքուկի զլիաւոր պակասութիւնը այն է, որ նա սկզբում խելօք չէ զուրս բերել ասորիներէ վերաբերմունքը դէպի թուրքը: Այդ վերաբերմունքը չը պէտք է ցեղական ատելութեան կնիք կրի: Նթէ այդ տե-

սակ վերաբերմունքը իրականութիւնից է առնւած՝ նա պէտք է կամ գաղափարական հիմունքով բացատրուած լինէր կամ եթէ այդ չը կա, այն ժամանակ նա՝ իբրև ոչ կրթիչ մի հանգամանք՝ պէտք է ամենին գործ չը դրէր ժողովրդական գրքի համար:

Ք.

ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՅ ԿՈՍՏԱՆԴԻՆ. ՊՈՒՂԵՅՈՅՑ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՇԵՐԱՍԱՊԱՀՈՒԹԵԱՆ. Թիֆլիզ, տպարան Յ. Մարտիրոսեանցի. 93 էրես. գինն է 40 կոպէկ շրատար. Թիֆլ. Ընկեր. հայերէն գրքերի հրատարակութեան № 27:

Ուղեցուցը այն գրքուկներից մէկն է, որոնք այնքան ցանկալի են մեր ժողովրդի համար, նա սալիս է շերամապահութեան մասին հասկանալի լեզուով խրատներ և ծանօթացնում է մեզ իւր արած երեք տարւաչ փորձերի հետ Անդրկովկասի զանազան տեղերում:

Շերամապահութեան մէջ ինչպէս և ուրիշ արդիւնաբերութիւնների մէջ երկու կողմ կա. մէկը առարկան է և նորա շատկութիւնը, միւսը՝ ինքը արհեստն է: Հեղինակը շեշտելով զանազանում է այդ երկու կողմը և իւր գրութեան մէջ պահպանում է նոցա համապատասխան քննութիւնը: Այդ պատճառով նա շերամապահութեան արհեստից շինել է առանձին բաժին:

Հեղինակը, սկսելով շերամորդնի ձուի քննութիւնից՝ քալ առ քալ նկարագրում է որդնի մեծանալը, շապիկ փոխելը և նորա կանոնաւոր և

անկանոն զարգանալու առանձնապատկութիւնները:

Յայտնի է, որ շերամորդնի հիւանդութիւնները մեծ վնաս տւին շերամապահութեան զարգանալուն և մի քանի տեղ կանգնացրին նորան: Այդ հիւանդութիւնների ուսումնասիրութեան նւիրեցին իրանց շատ գիտնականներ, որոնց մէջ աչքի է ընկնում հռչակաւոր Փրանսիացի Պաստեորը, որ ոչ միայն ուսումնասիրեց հիւանդութիւնների պատճառը, այլ և գտաւ դոցա առաջն առնելու հնարները: Այժմ խելացի և չաջող շերամապահութեան զաղտնիքը մասամբ կապացած է այն ճշգրութեան մէջ, որով շերամապահը հետևում է Պաստեորի աւանդած խրատներին: Պ. Մելիք Շահնազարեանցը այդ պատճառով նւիրել է առանձին գլուխներ թէ հիւանդութիւնների նկարագրութեանը և թէ դոցա ճանաչելու ու դո-

ցանից ազատ մնալու միջոցներին.

Հեղինակի շերամապահական փորձերը կատարած են Սաղուրամո գիւղում 1886 թւականին, Աղղամում 1887-ին և Չիլի գիւղում 1888-ին. Այդ փորձերի նկարագրութեան ընթերցումից մնում է մի սպաւորութիւն, որ գիտութիւնը, շերամապահութեան արհեստին հմուտ լինելը, մի՞ զեր ուճի կատարելու մեր երկրում: Այդ փորձերից երևում է, որ մեր տեղական ժողովուրդը՝ այն ինչ լաւ է, շահաւէտ, եթէ ոչ սկզբից, գոնէ կամաց կամաց գնահատում է:

Աղղամում թուրք ժողովուրդը, ուր գործել է գրքովի հեղինակը, սկզբում ծիծաղով է վերաբերել դէպի նորութիւնները. բայց երբ նկատել է իւր և պ. Մելիք-Շահնազարեանցի պահածի մէջ առաջացած տարբերու-

թիւնը, երբ տեսել է, որ իւր խնամած որդն պերրին և Ֆլաշրի հիւանդիւններով հետզհետէ կտորուում է, մինչդեռ Մելիք-Շահնազարեանինը հաւասար զարգանում է և վաղահասութո՞ժ է շինում, այն ժամանակ սկսում է սաստիկ հետաքրքրել հեղինակի խնամելու եղանակով:

Գրքովի վերջում զետեղւած են աստիճանաբար մեծացող որդնի և նորան պահելու գործիքների նկարները:

Հեղինակը մի քանի տեղ անուշադիր է եղել դէպի իւր գործածած լեզուն, և նախադասութիւնները միմեանց հետ կապել է անկանոն կերպով:

Բայց առհասարակ գիրքը լաւ տպաւորութիւն է թողնում և ցանկալի է, որ նա տարածւի մեր շերամապահական շրջաններում:

Քլ.

ԳԵՐԲԵԼ, ԱԴՈԼՑ. — Շեքսպիրական պրոբլեմներ: Պլանը և միութիւնը «Համլետի» մէջ 1890 թ. (գերմաներէն):

Յայտնի է, թէ ինչ անազին գրականութիւն կալ Շեքսպիրի «Համլետ» ողբերգութեան նւիրւած. Բայց դորա մասին սովորական ընթերցողները միայն լսել են և միմիայն մասնադէտքականագէտները իսկապէս գաղափար ունին այդ գրականութեան մեծութեան մասին: Անթիւ հատորների կան դրւած այդ ողբերգութեան վերաբերմամբ, որոնք բոլորն էլ աշխատում են լուծել այս խնդիրը, թէ ինչ է ներկայացնում այդ դանիական պրինց Համլետը, որը այդքան

և այդքան տատանւում է վրէժխնդիր լինել իւր հօրեղբորից, որը սպանել էր Համլետի հօրը, սորա գահը ձեռք բերելու համար: Եւ որովհետև «Համլետը» նոյնքան քննադատել է, որքան և հիացել, պէտք էր կարծել, թէ նոր այ ևս ոչինչ չի կարելի ասել այդ մասին: Ազոլֆ Գելբելը սակայն հանդէս է գալիս մի նոր հայեացքով և խնդրին մի նոր լուծումն է տալիս, որը մնդ թերևս զարմացնի իւր պարզութիւնով:

Բանը սա է, որ մենք ամենքս նախապաշարած ենք քննադատում Համլետին. մենք ամենքս աչքան լսած ենք դանիական պոլնցի անվճռողականութեան մասին, որ չենք կարողանում ազատ մնալ մեր կարգացածից ու լսածից:

Ամենազլիաւոր խնդիրը, որ ամեն ձևերով նոր-նորից առաջադրւած է եղել մինչ այժմ, այս է եղած՝ ինչու է տատանւում Համլետը:— Գեղեցիկը սակայն, փոխանակ այդ խնդրով զրազելու, ուղղակի պատմում է սղբերգութեան գործողութիւնը և, կարող էք երևակայել, որ նա սչինչ չի գտնում, որ կարողանար մեզ համար մի խնդիր լինել: Այլ իրօք, ինչ է պատահում «Համլետի» մէջ: Սովորապէս, կարճ և պարզ լինելու համար, մենք այսպէս ենք սկսում՝ «Մի մարդասպանութիւն է կատարւած»... և այլն: Ի հարկէ, երբ այնպէս սկսենք պատմել, մեզ աւելորդ ֆիլոսոֆաշուքիւն կը թւան այն բոլոր խօսքերը, ինչ փոռ արտասանում է դանիական պոլնցը. զարմանում ենք, որ մի մարդ, որ այդքան կատաղած է իւր հօրեղբոր նենգութեան վերաջ, փոխանակ ուղղակի նպատակին գիտնու՝ նորան սպանելու, դեռ տատանւում է: Բայց բանն էլ հէնց նրանումն է, որ հանդիսատեսը այդ սպանութեան մասին միայն աչքան գիտէ, որքան այդ ցոյց է տրւում բեմի վերայ. մի չը նախապաշարած հանդիսատես իսկուց կը պատասխանէր, թէ ոչ թէ սպանութիւն է կատարուել, այլ «մի ուրախ երեսց, որը մեզ պատմեց, թէ մի սպանութիւն է կատարուել»: Չանաղանու-

թիւնը մեծ է և պարզ, որովհետև զորան լաջորդում է այս հարցը՝ «ուրախանի ձայնը լսելուց փոռ, ինչն է Համլետի պարտականութիւնը»։ Գորա պատասխանը այս պէտք է լինի, թէ Համլետի պարտականութիւնն է համոզել այն բոլորի մէջ, ինչ նա լսեց: Ահա, երբ այսպէս խնդիրը զրած կը լինենք, մենք կը տեսնենք, որ աւելորդ է եղած Համլետի տատանման մասին աչքան խօսելը, քանի որ Համլետը ամենին չի տատանում: Նա սպացոյցներ է որոնում և երբ նա սպացոյցներով համոզում է իւր վճիռը գործադրում է:

Այսպիսով մենք տեսնում ենք, որ այն չանդիմանութիւնը, որ մինչ այժմ կրիտիկոսները արել են Շեքսպիրին «Համլետի» աւիթով, մտացածին է և որ ինքը «Համլետը» ամենին տեղիք չի տալս այն խնդրին, որ մինչև այժմ աչքան զբաղեցրել է կրիտիկոսներին, որոնց անվերջ վիճաբանութիւններին այժմ մի անդամ ընդ միշտ վերջ է տրւում:

«Համլետի» քննադատութեան համար այս նոր ճանապարհը բացել են ամենից առաջ կլայն Վերդեր և կարլ Վերդեր եղբայրները, բայց Ադոլֆ Գերբելը, իւր ներկայ գրքով ամենից հեռուն է գնացել այդ ճանապարհի վերայ: Քալ առ քալ հետեւելով Շեքսպիրի ողբերգութեան, նա սպացուցանում է, որ Համլետը ամեն մի վայրկեան աշխատում է հաւատարիմ մնալ իրան, որով և ջնջւում է մինչ այժմ մեր ունեցած դադափարը թող իշխանադնի մասին, որը իբր թէ աչքան մեծ է խօսքերով և աչքան թող գործքերով: Մենք

| | |
|---|------------------------|
| այժմ տեսնում ենք Համլետին իւր իսկական տեսքով, և միաջն այժմ չպատկերում է նորա վիճակի իսկա- | կան ողբերգական լինելը: |
|---|------------------------|

Ն.

Ն Ո Ր Ս Տ Ա Յ Ի Ա Ծ Գ Ր Ք Ե Ր

- 1) ՇԻՐԻԱՆՋԱԴԵ.—«ԶՈՒՐ ՅՈՅՍԵՐ» (վէպ): Արտատպւած պատկերազարդ «Արձագանք-ից»: Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոս-անցի, գինն է ր.:
- 2) ԽԱԼԱԹԵԱՆ, ԳՐ.—«Մովսէս Խորենացու Հայոց Պատմութիւնը Խորէն ծ. վ. Ստեփանէի թարգմանութեամբ» (քննադատութիւն): Արտատպւած «Արաքս» պատկերազարդ հանդիսից: Ս. Պետերբուրգ, տպարան Սկորոխոզովի, 1890 թ., գինն է 25 կոպէկ:
- 3) ԹՈՒՄԱՆԵԱՆՅ, ՅՈՎՀԱՆ.—«ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ»: Մոսկա, տպարան Մ. Բարխուդարեանցի, 1890 թ., գինն է 35 կոպէկ:
- 4) ԱՂԱՅԵԱՆՅ, Ղ.—«ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ»: Հրատարակութիւն մի խումբ համակրողներու: Թիֆլիս, տպ. «Արօր» Տ. Նազարեանցի, 1890 թ., գինն է 1 ր. 50 կոպէկ:
- 5) ՀԵՂԻՆԱԿ ?.—«ԴԵՊԵՂՁԻՍԻՍԱՅԻՆ ԳԼՈՒԽ»: Թարգմանեց հ. Մետրոպ վ. Ծաղիկեան, Մխիթարեան ուխտէն, վիեննա, Մխիթարեան տպ. 1890 թ., գինն է 35 սանտիմ (15 կոպ.):
- 6) ԹՈՒՄԱՆԵԱՆ ԱՐՇԱԿ.—«ԱՐԲԵՅՈՂ ԵՒ ՏԱՔ ՍԷՐ», պատկեր իրական կեանքից: Հրատարակութիւն Նիկող. Աբրահամեանցի, Բագու, տպ. Ս. Տէր-Յովհաննիսեանցի, 1890 թ., գինն է 30 կոպէկ:
- 7) ԳԱՐԳԵԼԻ, ՅՈՎՀԱՆՆԵՍ.—«ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՅ»: Հրատարակութիւն Թիֆլիսի ընկեր. հայերէն գրքերի հրատարակութեան, № 28. Ս. Պետերբուրգ, տպ. Սկորոխոզովի, 1890 թ., գինն է ?:
- 8) ԱՂԱՆԵԱՆՅ, ԳԻԻՏ քահ.—«ՊԱՏԻ ՕՐԱՅՈՅՅ» 1891 թ. համար, տպարան Յ. Մարտիրոսեանցի, գինն է 75 կոպէկ:
- 9) ԶԱՔԱՐԵԱՆ, հայր ՊՕՂՈՍ.—«Գործնական քերականութիւն դերմաներէն լեզուի, ըստ Օթթուլի, առաջին մասն»—բառագիրութիւն, վիեննա, ի վանս պաշտպան Ս. Աստուածամնի, 1890 թ., գինն է 3 ֆրանկ:
- 10) ՀԵՂԻՆԱԿ ?.—Թարգմ. հայր ԳՐԻԳՈՐԻՍ վ. ԳԱԼԵՄՔԵԱՐԵԱՆ, Մխիթարեան ուխտէն: «Ուսումնասիրութիւնը լեհացոց» դատաստանազրոյն: վիեննա, Մխիթ. տպար., 1890 թ., գինն է 1.25 ֆրանկ:
- 11) ՄԷՆԷՎԻՇԵԱՆ, հ. ԳԱՐԻԷԼ, կրօն. Մխիթ.—«Աղգարանութիւն աղնուական զարմին Տիւղեանց: վիեննա, Մխիթարեան տպար. 1890 թ., գինն է 1 ֆրանկ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄՍԻԱՅ ՔՐՈՆԻԿ

Գրականապէս ամբողջ քաղաքը, այս լուսէին որ գրում եմ այս տողերը, զբաղւած է քաղաքալին ինքնավարութեան անդամների ընտրութեան խնդրով: Անցեալ քրօնիկում ես իմ ընթերցողներին արդէն կարճաժամ կերպով ծանօթացրի այդ ընտրութիւնների մեխանիզմի հետ: Բայց ես հարկ եմ տեսնում ասածս կրկնել, բայց մանաւանդ լրացնել:

Քաղաքալին ինքնավարութեան անդամներ թիֆլիսում 72 հոգի պէտք է լինեն: Գոցա ընտրում է քաղաքի հարկատու ժողովուրդը, որը, երեք կողարի է բաժանւում. առաջին կողարին պատկանում են ամենաշատ հարկ տուողները, որոնց անունները եւ անցեալ անգամ լինել էին: Երկրորդ կողարին պատկանում են մի քանի հարիւր մարդիկ. զոքա միջակ հարկ տուողներն են. վերջապէս երրորդ կողարին պատկանում են հազարից անց մարդիկ, որոնք փոքր հարկ են վճարում քաղաքին: Առաջին կողարի հարկատուները ընտրում են քաղաքալին ինքնավարութեան համար 24 հոգի ձայնաւորներ, երկրորդ կողարինը՝ նույնպէս 24 հոգի, երրորդները՝ նմանապէս 24 հոգի: Եւ այդ ընտրութիւններն էլ կատարւում են առանձին-առանձին, մի օր նշանակւում է առաջիկաների համար, մի այլ օր՝ երկրորդների և մի երրորդ օր էլ՝ երրորդների համար: Ուրեմն ընտրութիւնները պէտք է վերջանալին երեք անգամով, և որովհետեւ մի ընտրութիւնից մինչ հետեւալ ընտրութիւնը—կիրակիից կիրակի—մի շաբաթ միջոց է տրւում, ամբողջ օպերացիան պէտք է վերջանար երեք շաբաթուալ մէջ: Բայց իրողութիւնը այս է, որ նոյեմբերի 4-ին կատարւեցին առաջին կողարի ընտրութիւնները, նոյեմբերի 11-ին եղան երկրորդ կողարինը, մինչդեռ երրորդ կողարի ընտրութիւնները, որ պէտք է կատարւէին նոյեմբերի 18-ին, ոչ միայն այր օրը չը վերջացան, այլ չը վերջացան նոյն իսկ չաջորդ կիրակի օրը՝ նոյեմբերի 25-ին և ոչ իսկ մի շաբաթ էլ անց՝ դեկտեմբերի 2-ին:

Մինչ այժմ ընտրւած են 24 հոգի առաջին կողարից, 24 հոգի երկրորդից և 10 հոգի երրորդից, այնպէս որ 14 հոգի էլ պէտք է ընտրւեն:

Ստորև դնում եմ ընտրւածների անունները, նշանակելով թէ իւրաքանչիւրը որքան սպիտակ և որքան սև քւէներ է ստացել և դասատրելով ընտրւածներին համաձայն սպիտակ քւէների թւին:

ԱՌԱՋԻՆ ԿՈՊԱՐ

Քւէ տւողների թիւը 44.

Մեծամասնութիւն . 23

| | Ապիւսի | Սև |
|--|--------|----|
| 1. Թամամչեան, Միքայէլ (Թիֆլիսի առևտրակ. բանկի կառույց) | 39 | 13 |
| 2. Փիթոյեան Իսահակ | 38 | 8 |
| 3. Ծովիանեան Իսահակ | 37 | 9 |
| 4. Փրիզոնեան Ալեքսանդր | 37 | 9 |
| 5. Մանթաշեան Ալեքսանդր | 34 | 12 |
| 6. Թամամչեան Գէորգ | 34 | 12 |
| 7. Ռօտինեան Յովհաննէս | 33 | 13 |
| 8. Ալիխանեան Կոնստանդին | 33 | 13 |
| 9. Խալաթեան բժիշկ | 33 | 13 |
| 10. Վէլսենհօֆ, Փոն, Ստանիսլաւ | 32 | 14 |
| 11. Նիկողաձէ Նիկողայ | 31 | 15 |
| 12. Անանեան, բժիշկ | 31 | 15 |
| 13. Սարաջև | 31 | 15 |
| 14. Մաչաբեղի, Իւան, իշխ | 31 | 15 |
| 15. Ղորղանեան, Գրիգոր | 31 | 15 |
| 16. Իւանենկօ, Ապրուն | 29 | 17 |
| 17. Զեղոկաեւ Ալեքսանդր, իշխան | 29 | 17 |
| 18. Տէր-Ասատուրեան Գէորգ | 28 | 18 |
| 19. Ծուրինեան, Արտեմ | 28 | 18 |
| 20. Միքելաձէ Վլադիմիր, իշխան | 27 | 19 |
| 21. Յիւստաձէ, ուսուց | 27 | 19 |
| 22. Ալազեան Ալեքսանդր | 27 | 19 |
| 23. Իզմայլեան Պաւլոս | 26 | 20 |
| 24. Քարթլեւիլ Գէորգի | 26 | 20 |

ԵՐԿՐՈՐԳ ԿՈՊԱՐ

Քւէ տւողների թիւն է 152

Մեծամասնութիւն . . 77

| | | |
|--|-----|----|
| 1. Օրբելի բժիշկ | 124 | 27 |
| 2. Նարալեան Գրիգոր, ինժեներ. | 124 | 27 |
| 3. Մատինեան Ալեքս. (Ներկայ քաղաքագլ.) | 116 | 38 |
| 4. Եւանգուլեան Գէորգ | 116 | 38 |
| 5. Կապանով վաղիմ. (պետական բանկի թիֆ. լիսի բաժնի կառավարիչ | 111 | 41 |
| 6. Փրիգոնեան Գրիգոր. | 107 | 45 |
| 7. Կարապետեանց Նիկիտա, ինժեներ | 106 | 46 |
| 8. Գլաւացկի, Պլատոն. | 102 | 50 |
| 9. Մալինին, բժիշկ | 99 | 53 |
| 10. Բաբեան Նազոր, բժիշկ | 97 | 55 |
| 11. Դորդանեան Դաւիթ | 96 | 56 |
| 12. Դաւթեան Նազոր. | 95 | 57 |
| 13. Յովհաննիսեան, Աբգար | 95 | 57 |
| 14. Աղելլսանեան (Թիֆլ. փոխար. վարկի ընկ. կառավարիչ) | 96 | 58 |
| 15. Շահբուղաղեան (Թիֆ. առևտ. բանկի ղրբեկ. | 93 | 59 |
| 16. Վերմիշեան Նիկ., բժիշկ | 93 | 59 |
| 17. Վերմիշեան Քրիստափոր. | 93 | 59 |
| 18. Զուբալով Նիկիտա (հաշտ. դատ.) | 93 | 59 |
| 19. Շահարոնեանց Միքայէլ, բժիշկ | 92 | 60 |
| 20. Մեղեղլեւ Նակով. | 92 | 60 |
| 21. Փրիգոնեան Նիկողայոս | 91 | 61 |
| 22. Դորդանեան Իւան | 89 | 63 |
| 23. Անանեան Ալեքսանդր. | 86 | 66 |
| 24. Ստասկովսկի, Բոլեսլաւ | 82 | 70 |

ԵՐՐՈՐԳ ԿՈՊԱՐ

Չալն աւողների թիւը 578

Մեծամասնութիւն. . . 290

Ընտրւած են առ աւժմ միալն 10 հետեւեալ անձերը՝

| | | |
|--------------------------------------|-----|-----|
| 1. Մաչարելի, Միխայիլ, իշխան. | 380 | 198 |
| 2. Կարաբանսկի Կոնստ. | 363 | 215 |
| 3. Զորջաձէ, Զախար, իշխան. | 352 | 226 |
| 4. Մաչարելի, իշխ. վ. | 325 | 253 |
| 5. Սունդուկեանց, Գաբրիէլ. | 310 | 263 |
| 6. Կալթմազեան, Նիկ. | 304 | 274 |
| 7. Շահաղիլեան, Ալ. | 302 | 278 |
| 8. Անդրոնիկով, իշխ. Նիկ. | 296 | 282 |

| | | |
|----------------------------------|-----|-----|
| 9. Կանդուրալեան, Վասիլ | 296 | 282 |
| 10. Քարտուկով, Գեորգի | 292 | 286 |

Այս երրորդ կարգի ընտրութիւնները, որ զեռ չեն էլ վերջացել, տեղիք տւին աջնայիսի տեսարանների և տղմունքների, որ ցալժմ տեսնւած չէր: Ընտրողները բաժանւած էին կուսակցութիւններին: Ես հետաքրքրուցի իմանալ թէ արդեօք ինչ գաղափարներ կան այդ իրար դէմ կատաղի կերպով կուտղ կուսակցութիւնների հիմքում, և գտալ միաչն մի բան, որը հետեւալն է. քաղաքային ներկալ վարչութիւնը, այսինքն զխաւորապէս քաղաքագլուխը իւր օգնականով, նոր դումալից իրանց պաշտօններում վերընտրելու համար, իբր թէ ամեն ջանք են դորժ դնում աղղել ընտրող ժողովուրդի վերալ, որ վերջինս ձալնաւոր ընտրի միմիալն ալնայիսիներին, որոնց վերալ վարչութիւնը վստահութիւն ունի՝ թէ նոքա քաղաքագլխի և նորա օգնականի պաշտօնում ալժմեալ քաղաքագլխին և սորա օգնականին կ'ընտրեն, Որպէս տեսնում էք՝ մի բնական ցանկութիւն. բալց բոլոր խնդիրը նորանումն է, որ այդ իրանց գուցէ բնական ցանկութեանը հասնելու համար, նոքա իբր թէ զիմում են ալնայիսի միջոցների, որոնք մատչելի չեն ուրիշներին, ալ մատչելի են միմիալն նրանց, որոնք ալս բոլղին իշխանութիւն ունին իրանց ձեռքերում: Ինչ միջոցներ են դոքա արդեօք: Ահա ինչ: Երրորդ կարգի ընտրողները ամենամեծ մասամբ մանր վաճառականներ են, արհեստաւորներ, մասվաճառներ ևն, մրղավաճառներ են, զուխանչիկներ, որպէս նաև ալնայիսի տնատէրեր, որոնք հաղիւ իրանց քաղաքային տնահարկը կարողանում են վճարել: Միւս կողմից՝ դոքա մեծ մասամբ ալն մարդիկն են, որոնց վերալ մեծ աղղեցութիւն ունի քաղաքային վարչութիւնը իւր աղենտներով, որոնք են բաղարի վերակացուներ և քաղաքի հարկահաններ: Գիցոք մի անկարող տնատէր ուղում է խնդրել քաղաքային վարչութեան, որ նորա հարկը բաշխի կամ իջեցնել: Քաղաքային վարչութիւնը ալղ զէպքում ում պէտք է զիմէ խնդրատուի կարողութեան մասին տեղեկութիւն ստանալու համար?—Նա զիմում է քաղաքի հարկահան ալն աղենտին, որը անձամբ ձանաչում է խնդրատուին: Եթէ ալղ աղենտը կը վկալէ որ իրօք խնդրատուն խեղժ է՝ քաղաքային վարչութիւնն էլ կը չարղէ խնդրատուի խնդիրքը, թէ ոչ՝ չի չարղիւ: Ալժմ երևակալէք, որ ներկալ քաղաքագլուխը իւր օգնականով և վարչութեան երկու միւս անդամներով, ուղենալով վերընտրել իրանց տաշտօններում, քաղաքային վարչութեան բոլոր աղենտների միջոցով կամենան ձնչում գորժ դնել աղենտներից կախումն ունեցող բոլոր մարղկանց վերալ, թելաղբելով սրանց, որ սոքա ընտրեն ալս ու ալն ինչ մարղկանց որպէս ապաղաղ դումալի անդամներ: Բնական է, որ ալղ կարող են անել նոքա շատ աւելի մեծ հեշտութեամբ, քան նոքա, որոնք կը կամենալին ուրիշ մարղկանց ձալնաւոր ընտրել:

Ալժմ, ինչ հիմք կար կատկածելու թէ ներկալ քաղաքային վարչութիւնը

ղիմել է մի աղապիսի միջոցի իւր թեկնածուներին ձայնաւոր ընտրելու համար, ուրեմն ինչ հիմք կար ներկայ վարչութեան դէմ նույնքերի 18-ի ընտրութիւնների ժողովում աչն անհատու խօսքերը արտասանելու և բողոքները անելու, որոնք պատճառ եղան նխտի ընդհատման և ընտրութիւնների վետաձգման:

Ահա ինչ հանգամանքը հիմք ծառայեց աղապիսի կասկածանքներին. Որպէս ասացի, երրորդ կարգի ընտրողները մի մեծ մասով՝ քաղաքային վարչութիւնից աչսպէս կամ աչնպէս կախումն ունեցող մարդիկ են. Բնական է աղ պատճառով, որ նույնքերի 18-ի մեծամասնութիւնը առաջարկել էր ընտրել աչն 24 մարդկանց, որոնք ցանկալի են ներկայ քաղաքային վարչութեան, Բայց ներկայ վարչութեան հակառակորդներն էլ առաջարկել էին իրանց մարդկանց, աչնպէս որ բոլոր առաջարկածների թիւը 120-ից անց էր: Դէ աչմ երեակալեցէք, որ երրորդ կարգի ընտրողները մեծամասնաբար աչ գրագէտ է: Եթէ զիցուք 120 տուփ առանց որ ոչ կարգի դարուած լինէին մէկը միւսի կողքին, ինչ հասկանաչ անգրագէտ ընտրող թէ աչ ինչ տուփի մէջ, որի վերաչ զիցուք գրւած է կիրակոսով՝ սպիտակ քար պէտք է գցի թէ սե: Բայց եթէ մեծամասնութիւնը առաջարկել էր 24 որ ոչ մարդկանց և աղ բոլոր 24 հողու տուփերը մէկը միւս կողքին, աչն էլ սկզբում շարւած լինեն, իսկ հակառակորդների առաջարկածները թւով զիցուք 100 տուփ՝ աչն 24-ից չեսոչ դարուած լինէին, աչն ժամանակ, գործը չաջողցնելու համար, վարչութիւնը կարող էր աչսպիսի մի բան անել. իւր կուսակից բոլոր ժողովականներին կարող էր ասել՝ պարոններ, երբ կ'սկսւի քէտրկութիւնը, մօտեցէք տուփերին և, նոչն իսկ առանց իմանալու թէ ում տուփերն են, առաջին բոլոր 24 տուփերի մէջ սպիտակ քէ տէք, իսկ մնացած բոլոր տուփերում սե քէ գցեցէք: Եւ որովհետեւ աղ առաջին 24 տուփերը վարչութեան թեկնածուների տուփերն են, ուրեմն նոչն իսկ քօռ-քօռ՝ վարչութեան հաճելի բոլոր մարդիկ ընտրւած կը լինէին: Եւ իրօք, երբ հարկաւոր եղաւ տուփերը դարսել, քաղաքազուխը կարգադրեց, որ նորա դարսեն աչն կարգով, որքան որ առաջարկւածները ձայն են ստացել, որ ասել է թէ սկզբում դարսեն վարչութեան կանգիդատները տուփերը և չեսոչ ուրիշներին:

Տեսնելով աղ բանի մէջ մի ճարտիկ մանեւոր վարչութեան անդամների օգտին, հակառակորդները խողոքեցին, պահանջելով, որ տուփերը դարսեն կամ առաջարկւած մարդկանց աղղանունների աչքենական կարգով, կամ վիճակահանութեամբ: Աչսպիսով հակառակորդները չոչս ունէին, որ անգրագէտ ընտրողները կը շփոթեն և, խառնի խուռն՝ դարսած 120 տուփերի մէջ, չեն իմանալ, թէ որի տուփում սպիտակ քէ պէտք է գցեն, որի տուփում՝ սեր:

Քաղաքազուխը չամառեց և չուզեց կատարել բողոքողների առաջարկը և աղ չամառութիւնիցն է, որ գործը ստացաւ բարդ կերպարանք, որով՝

հետև քաղաքագլխի ցանկութիւնը՝ անպատճառ տուփերը ասածին համեմատ դարսել՝ կարծես արդարացրեց հակառակորդների կասկածը թէ քաղաքային վարչութիւնը երրորդ կարգի ձաճաւորների ընտրութիւնը ս ա ր ք ո վ ի է կամեցել կատարել տալ, աչսինքն այն ձևով, ինչպէս ես վերը նկարագրեցի։

Մտնել աւելի մեծ մանրամասնութիւնների մէջ այդ առիթով համարում եմ ես հետաքրքրութիւնից դուրս մի բան։ Յիշատակելու արժանի է թերևս միայն այս, որ եթէ սկզբում խնդիրը այլ և այլ պարագլուխների մրցման մէջ էր հաջ մեծամասնութեան սահմաններում, երրորդ կարգի թերի ընտրութիւններով մրցումը իւր սկզբնական բնաւորութիւնը կորցրեց՝ դառնալով մի մրցում հաջ մեծամասնութեան և վրացի փոքրամասնութեան մէջ, փոքրամասնութիւն, սակաւն, որը իւր աւելի հաւաք ուժերով կարողացաւ իւր շարքերից աւելի մարդիկ առաջացնել, քան երկպառակտւած մեծամասնութիւնը։ Պէտք է ցուել, որ խնդիրը ստացաւ ազգային բնաւորութիւն, քանի որ քաղաքային գործերում տարբերի խտրութիւնները բոլորովին անտեսելի են, և հաջ հասկացող ու շիտակ մարդը նոյնքան պէտք է պաշտպանել վրացուց, որքան վրացին՝ հայից։

Չմեռաջ ղեկընը իւր հետ բերում է կոնցերտներ, ներկայացումներ և պերերեկույթներ, գլխաւորապէս այլ և այլ ընկերութիւնների օգտին։ Պարոն Ամիրջանեանի կոնցերտը ապա և օր. Գեղեցեանի կոնցերտը և լետոյ նաև իրան դը Ռուբինի անւանող տիկնոջ կոնցերտը — ահա առաջիմ համադումարը նույնքերին տրւած կոնցերտների, որոնցից դեռ ոչ մինը իւր վերայ լարւած ուշադրութիւն չը դրաւեց։ Աւելի հետաքրքրական էր հայոց թատերասէրների ներկայացումը, մասնակցութեամբ գլխաւորապէս տ. տ. Քալանթարեանի, Աւթանդիլեանի և պոլ. Մանգիլեանի, Ալահվերդեանի և ուրիշների։ Ես այս ներկայացման մասին մի առանձին բան ասելու չունիմ. բայց որպէս չաջողակ թատերասէրների ներկայացում, ես կ'ուզեմ մի անգամ անցեալ տարի արդէն չաջանած միտքը նորից ալստեղ կրկնել։ Անցեալ տարի, նոյն ալդ խմբի մի ներկայացման առիթով ես ցալտեցի, որ թատերասէրների ներկայացումները իմ աչքում չունին պատահական երևույթի բնաւորութիւնը, այլ, որ հէնց թատերասէր խմբերի զարգանալովն է, որ մենք ունենալու ենք այն, ինչ սովորաբար անւանում են հալոց թատրոն։ Ես գտնում եմ, որ բուն դերասաններից բազկացած մի խումբ շանս չունի մեզանում երկարատև գոյութիւն ունենալու. և ես կարծում եմ, որ օրինակ, ի զուր է պ. Տէր-Պետրոսեանը (Օրդուրաթեան) դիմում լրագրի միջոցով հաջ մօտ ու հեռու հասարակութիւններին, չորդորելով որ բեմական տաղանդ զգացող օրիորդներ ու պարոնները գան ու խմբեն իւր շուրջը մշտական խումբ կազմելու համար։

Ամեն ինչ, որ շարատեութիւն պէտք է ունենայ, պէտք է նաև օրդանապէս կապուած լինի կեանքի հետ: Այս ես գտնում եմ, որ սիրողների ներկայացումները մեզմոտ ոչ թէ կապրիղի ծնունդ են, այլ ծնունդ են մեր կեանքի պահանջներին: Գուցէ, այն, ժամանակով հաշտարակութիւնը պէտք կ'ունենայ աչքապէս ասած՝ փեշաքաւոր դերասանների. բայց, ամեն բան կշռած, ես վերջ ի վերջոյ դալիս եմ այս եզրակացութեան, որ փեշաքաւոր դերասանների մի շարատե խումբ մեզմոտ դեռ ես չանս չունի գոյութիւն ունենալու: Սիրողների ներկայացումների մէջ, ընդհակառակը, ես նշմարում եմ իսկ և իսկ այն, ինչին որ մենք առաջիկայ պէտք ունինք, միայն զոքա աւելի զարգանան և աւելի լաճախ կրկնեն: Թիֆլիսը այդ կողմից համարձակ կարող է առաջնակութիւն ունենալ մեր բոլոր միւս քաղաքների առաջ, գլխաւորապէս այն պատճառով, որ այդտեղ կան շատ այնպիսի նպատաւոր հանգամանքներ, որոնց մէջ կարող է բնատուր սաղանդը սնել և արեւստի կատարելութեան մտնել, նաև առանց այդ արեւստը իւր մշտական փեշակը դարձնելու:

Թատերասէր խմբերը, ըստ իս, ներկայումս հալկական թատրոնի խնդրում մի պատմական դեր են կատարում: Այդ խմբերի շնորհիւն է, որ հաշտարակութիւնը ամենաբնական ճանապարհով ծանօթանալու է թատրոնի հետ և սիրելու է թատրոնական գործը: Այդ խմբերի շնորհիւն է միայն, ըստ իս, որ հաշտարակութիւնը թատրոնական գործը սկսելու է իւրը համարել և, իբր իւր ջանքերի ծնունդ՝ սկսելու է փաշփաշել նորա զաղափարը: Այս կ'աւելագնեմ նաև, որ թատերասէրների ձեռքով պահանջող թատրոնով աւելի, քան դերասանական ուժերով պահանջածը՝ կը տալ գործին ժողովրդական բնաւորութիւն, առանց որի ոչ մի հասարակական հիմնարկութիւն տևողականութիւն ունենալ կարող չէ: Թատրոնն էլ հէնց հասարակական հիմնարկութիւններից մէկն է:

ԼՈՒՍԻՆԻ

P. S. Նոր հաղորդում է մեզ գեկտ. 9-ին կատարուած քաղաքային լրացուցիչ ընտրութիւնների հետևանքը: Ընտրուած են համեմատական մեծամասնութեամբ, մասնակցութեամբ 452 ընտրող անձերի:

| | | |
|------------------------------|-----|-------------|
| 11 Վասիլէեւ, Պ. | 264 | ուպիտակ քւէ |
| 12 Բոլղարսկի, Վ. | 256 | » |
| 12 Վեցել, Ֆ. | 256 | » |
| 14 Դոլինսկի, Ի. | 255 | » |
| 15 Պաւլենով, Իշխ. Գ. | 253 | » |
| 16 Բուղղանեան, Ի. | 252 | » |
| 17 Բարատով, Իշխ. Գ. | 242 | » |
| 18 Բաքրաձէ, Ա. | 237 | » |

| | | |
|--------------------------|-----|---|
| 19 Սարաջև, Վ. | 237 | » |
| 20 Սարաջև, Ա. | 237 | » |
| 21 Պաշկեւիչ, Ա. | 236 | » |
| 22 Յիցիանով, Գ. | 227 | » |
| 23 Արջևանիձէ, Ն. | 226 | » |
| 24 Մամաջեւ, Լ. | 225 | » |

Քաղաքալին Նոր դումալի համար ընտրած 72 հոգուց 38 հոգի (52.7%) հայեր են, 22 հոգի (30.5%) վրացիներ են, 11 հոգի (15.2%) ռուսներ են, 1 հոգի գերմանացի:

Պարապմունքների համեմատ 72 հոգուց հաշւել են որ՝

Վաճառականներ և կապալառուներ են՝ 8 հոգի, բժիշկներ՝ 8 հոգի, քանկիրներ ու բանկի ծառայողներ՝ 8 հոգի, եկամուտով ապրողներ՝ 8 հոգի, ինժեներներ՝ 7, օֆիցերներ՝ 6, տէրուական ծառայողներ՝ 5, գործարանատէրեր՝ 5, գրողներ՝ 4, ուսուցիչներ՝ 3, դատաւորներ կամ նախկին դատաւորներ՝ 3, գիւղատնտեսներ և անտառագէտներ՝ 3, փաստաբաններ՝ 2 հոգի:

ՆԱՄԱԿՆԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ

ՏԻԳՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑԻ

II

Անցեալ նամակումս ես խօսեցի Ալեքսանդր II-ի ընթրումների մասին, բայց ոչինչ չ'ասեցի թէ ինչպէս էր վերաբերում այդ ընթրումներին այն ժամանակեայ ռուս հասարակութիւնը:

Ճիշտ է, այդ հասարակութիւնը-իբրև նոր, անզարգացած, քաղաքական աւանդութիւններից-տրադիցիաներից զուրկ հասարակութիւն՝ շատ փոփոխական և դիւրաթեք է, նորա մեծամասնութիւնը չ'ունի քաղաքական դաւանանք և շատ ենթարկում է զօրեղ ազդեցութիւնների, ուրեմն և մեծ ընդդիմադրութիւն չէր կարող ցոյց տալ Վայսրի նորամուծութիւններին. բայց այդ ընթրումները հասարակութեան միջոցով, նորա օժանդակութեամբ պէտք է իրազօրժէին. եթէ հասարակութիւնը անընդունակ լինէր ըմբռնելու այդ ընթրումների շարժառիթ նոր սկզբունքները, եթէ նա չը տար արժանաւոր գործիչներ այդ վսեմ գաղափարները կեանքի մէջ մտցնելու համար, այն ժամանակ կայսրի բարի ցանկութիւնը կը մնար «ձայն բարբառոյ ջանապատի»:

Ի՞նչպէս կարող էր վերաբերել այդ ընթրումներին եւրոպական լուսաւոր գաղափարներով տոգորւած ռուս ինտելլիգենցիան, որ այնքան ժամանակ սպասում էր փառաւոր ապագայի այդ գեղեցիկ արշաղթին, որ ինքը մինչև այդ ժամանակ՝ որքան հանգամանքները ներում էին՝ աշխատում էր փարատել զիշերւան թանձր խաւարը և աւետում էր արևազալը: Ինտելլիգենցիայի մեծամասնութիւնը — ազատամիտները ցնծում էին. վաթսուն թւականների սկիզբը նրանց համար տօն էր, նրանց երազածը կատարւում էր: Գո՛չ էին նոյնպէս

և արմատականները, թէև նրանք ազատամիտների ցնծութիւնը միամիտ, չափազանց էին համարում. արմատականների կարծիքով այդ ընթացքները լիակատար չէին, սյարունակում էին հակասութիւններ, որոնք՝ նրանց ասելով՝ կարող էին չեղփայնել ընթացքների լաւ կողմերը, կարող էին ապագայ քայքայման սերմեր դառնալ: Ուրախ էր նոյնպէս և Ռուսաստանում նոր զարգացող երրորդ դասակարգը. ընթացքները մտնում էին Ռուսաստանը արեւմտեան եւրոպական երկիրների շարքը, պատւաստում էին Ռուսաստանին եւրոպական կուլտուրան. հին, ճորտական կազմակերպութիւնը արգելք էր կապիտալիստական արդիւնագործութեան համար:

Բայց շատ շատերը տեղոհ էին կեանքի այդ նոր հոսանքից: ճորտատիրութեան մէջ ծնւած ու կրթւած կալաճատէրերն՝ մեծամասնութիւնը շուտով չէր կարող հրաժարւել իւր սովորութիւններից: Նրանց մէջ կային ճորտատիրական սկզբունքներով խմորածանկեղծ պահանջողականներ, որոնց կարծիքով ուսու ժողովուրդը անպատրաստ էր նոր ընթացքների համար, չէր կարող ապրել առանց կալաճատէրերի հովանաւորութեան ու խնամակալութեան. նաքազուում էին, որ, ընթացքները մտնելուց յետոյ, սանձարձակ ժողովուրդը, որ նրանց կարծիքով մի վայրենի ամբոխ էր, տակն ու վրայ կ'անի ամեն բան, Ռուսաստանում կը սկսւի բարեխոնական խառնակութիւն: Պատմութեան տւած խրատը նրանց համար անօգուտ էր անցել: Կարծես նրանք բոլորովին մոռացել էին Սեւաստոպոլի պատերազմը (1853—55), որ, չը նայելով ուսու զօրքի կատաղի քաջութեանը՝ վերջացաւ ուսուների համար ցաւալի կերպով, որ կայծակի պէս ցնցեց ուսու հասարակութիւնը, բաց արեց բոլոր առողջամիտ ուսուների աչքերը ու ցոյց տւեց նրանց թէ որքան իրանք յետ են ընկել Սեւաստոպոլից, ապացուցեց նրանց որ ազգերի զոյութեան կուում քաղաքակրթութիւնը և լուսաւորութիւնը, կուլտուրան ու ցիւլիլիզացիան նոյնպիսի զէնքեր են, ինչպէս կենդանական աշխարհում ֆիզիքական ոյժը, ոտների արագութիւնը և այլն: Անկեղծ պահանջողականները այդ անընդունակ էին հասկանալու, իսկ մեծամասնութիւնը ազգի մասին սկի չէր էլ մտածում՝ նա մտածում էր իւր շահերի մասին: Ի՞նչպէս, նա էլ այսուհետեւ չէր կարողանալու հայհոյել, ծեծել, առնել-ծախել այդ Սենկա—Վանկաներին, այդ

Գունկա-Մատրեօնաներին, որոնց Աստուած՝ նորա կարծիքով՝ հենց նորա քմահաճութիւնները և կամքը կատարելու համար էր ստեղծել, սկսած անմեղ կապրիզներից մինչև վավաշոտ կրքերը: Ինչպէս, այդ ճորտերը, այդ խօլօրե-ները, որոնց նա աւելի ստոր, անբան անասունի հաւասար ջինս էր համարում, պէտք է այսուհետև իրան հաւասար մարդիկ համարեն, պէտք է իւր եղբայրները կոչեն և՛ որ ամենասարսափելին է՝ պէտք է իւր հետ նստեն զեմսկից ժողովներում, իրան դատեն իբրև երդւեալ դատաւորներ. և աշխարհը չի՛ կործանւի...

Բայց ինչ կարող էին անել պահպանողականները Վաչսեր կամքի դէմ. նրանք ուրախ էին որ կարողացել էին զոնէ մի քանի կէտեր մոցնել նոր օրէնսդրութեան մէջ, որոնք յարմար դէպքում կարող էին զարգանալ, փոփոխել օրէնսդրութեան ուղղութիւնը:

Վաթսունական թւականների սկզբում կառավարութիւնը՝ վստահանալով ռուս ժողովրդի առողջ դատողութեան, նորա բարոյական ոյժի, նորա հարուստ ընդունակութիւնների վերայ՝ հրաւիրեց նրան մասնակցելու տեղային վարչութեանը և դատավարութեանը, տւեց նրան տեղային ինքնավարութիւն և եւրոպական դատաստան երդւեալ դատաւորներով, ընտրողական հաշտարար դատաւորներով: Ռուս ժողովուրդը արդարացրեց՝ կառավարութեան վստահութիւնը: Մի ակնթարթում՝ կարծես գետնի տակից՝ դուրս եկան հազարաւոր աղնիւ, լուսաւորւած, անշահասէր գործիչներ: Ռ՛ւր էին դրանք նախարեֆորմեան կաշառակեր միրզաների, կամայական աստիճանաւորների ժամանակ: Միամիտ հարց: Ռ՛ւր են գնում ծիծեռնակները ձմեռը, ո՛ւր են թագնւում հրաշալի ծաղիկները, երբ ձիւնն ու սառուցը շղթայում են երկրի երեսը, ո՛ւր են անհետանում սիրուն թիթեռները. ո՛րտեղից են յայտնւում նրանք ողջունելու բնութեան յարութիւնը երբ որ սառնամանիքը տեղիք է տալիս քաղցրաշունչ զարունքին...

Ռուսաստանը, կարծես մոզական դաւազանի շարժումից, բոլորովին կերպարանափոխուեց. կատարւեց բարոյական յեղափոխութիւն: Առանց ողևորութեան չի կարելի կարդալ այդ շրջանին վերաբերեալ յիշողութիւնները, չի կարելի չը յափշտակել այդ մեծ պատմական բուպէով:

Նոր դատաստանը գրաւեց ժողովրդի վստահութիւնը դէպի դատարանը. սովորեցրեց նորան ղիմել (հաշտարար) դատաւորին հաստատ յոյսով որ նա անաչառ և արդար կը վճռի գործը: Վաշտակերութիւնը համարեա վերացաւ: Նոր դատաստանը մտցրեց ռուս ժողովրդի մէջ օրինականութեան զգացմունքը (ЧУВСТВО ЗАКОННОСТИ), իրաւական սկզբունքը (ПРАВОВОЕ НАЧАЛО), որ յատուկ է եւրոպական հասարակութիւններին և որից դժբաղդաբար զուրկ է կամայական, բաշիբուզուկ Ասիան: Նոր դատաստանի քանհինգամեակը լրանալու առիթով անցեալ տարի կատարած հանդէսներն ու արտասանած ճառերը պարզ ցոյց տւեցին, թէ որքան խորը արմատ է գցել նա ռուս ժողովրդի ու հասարակութեան գիտակցութեան ու սրտի մէջ: Այն քաղմութիւ խնդիրքները, որ, ընտրողական հաշտարար դատաւորների քննադատութեամբ ոչնչացնելուց յետոյ, ուղարկում էին քաղաքային խորհուրդները և զեմսկից ժողովները արդարադատութեան մինիստրին խնդրելով, որ իրանց էլ տրւի ընտրողական հաշտարար դատաւորներ ունենալու արտօնութիւնը, ինչպէս այդ տրւած էր մայրաքաղաքներին ու Սզեսային և կարող է տրւել մի քանի մեծ քաղաքների՝ արդարադատութեան մինիստրի տնօրինութեամբ, — այդ խնդիրքները մի տեսակ պատուաւոր վկայականներ էին գործիչների և ամբողջ ինստիտուտի համար:

Անցնենք զեմսովօին: Անհնար է կարճ նամակում յիշատակել այդ հաստատութեան բոլոր արածները: Դորա համար հարկաւոր են ամբողջ գրքեր, երկար ուսումնասիրութիւն: Յանկացողները կարող են կարդալ Абрамовъ-ի «Что сделали земство» գիրքը, որ զեւ շատ քիչ է զեմսովօյի բոլոր գործունէութիւնը գնահատելու համար: Չ'ասել ոչինչ նոյնպէս չի կարելի: Բաւականանանք հարեանցի ակնարկով:

Իմանալու համար թէ ինչ է արել զեմսովօն, պէտք է զեմսկից նահանգների այժմեան դրութիւնը համեմատել մի կողմից այն դրութեան հետ, որի մէջ նրանք գտնւում էին րեֆորմից առաջ և միւս կողմից տեղային ինքնավարութիւնից զուրկ թէկուզ սահմանակից նահանգների այժմեան դրութեան հետ (զեմսովօից զուրկ են Ռուսաստանի ոչ միայն Եւրոպայից դուրս գտնուող նահանգները, այլ և եւրոպական Ռուսաստանի շատ նահանգներ. միայն 34 նահանգ ու-

նին զեմսովօ): Աէաք է աչքի առաջ ունենալ և այն, որ զեմսովօն ունի իւր իրաւասութեան շրջանը, որից դուրս նա ոչինչ չի կարող անել:

Չեմսովօյի գործունէութիւնը կարելի է չորս ճիւղի բաժանել՝ ժողովրդական կրթութիւն, ժողովրդական առողջապահութիւն, ժողովրդի անտեսական-վիճակագրական ուսումնասիրութիւն և նորա անտեսական դրութեան բարեփոխում: Գործունէութեան մնացեալ կողմերը վերաբերում են ժամանակաւոր կամ մասնաւոր թէև նոյնպէս անհրաժեշտ կարիքներին:

Ինչ է արել զեմսովօն ժողովրդի մէջ լուսաւորութիւն տարածելու համար: Փող խօսեն թւանշանները: Մոսկւայի նահանգում զեմսկից հիմնարկութիւնները մտցնելու ժամանակ կար 270 ուսումնարան 9,411 աշակերտով, 1889 թւին Մոսկւայի նահանգն ունէր 713 գիւղական դպրոցներ 43,727 աշակերտով, և ընդամենը 769 ուսումնարան 48,889 աշակերտով: Մինչև 1870 թիւը բոլոր զեմսովօները ծախսում էին ժողովրդի կրթութեան վերայ 1 միլիոնից պակաս, 1874-ին — 2,952,226 ռ., 1879-ին — 4,595,666 ռ., 1885-ին 6,887,000 ռ. (ամբողջ բիւջէի 16⁰/₀-ը): Համեմատենք զեմսովօների գործունէութիւնը Աետերբուրգի քաղաքային խորհրդարանի գործունէութեան հետ, որ համարում է օրինակելի քաղաքային խորհրդարան՝ մանաւանդ այդ կողմից: Աետերբուրգի քաղաքային խորհրդարանը, ընդունելով ներքին միւխտարութիւնից (քաղաքային ինքնավարութիւնը մտցել է 1870 թւին) ընդամենը 16 տարրական ուսումնարան աշակերտների աննշան քանակութեամբ, 1887 թւին ունէր 230 դպրոց 11 հազար աշակերտներով: Այժմ այդ մայրաքաղաքի օրինակելի խորհրդարանի հետ համեմատենք զեմսկից ժողովները, որոնցից շատերը շատ հեռու են մայրաքաղաքների քաղաքակրթող ազդեցութիւնից: 2ր մոտանանք նիւթական միջոցների տարբերութիւնը: Աետերբուրգի բիւջէն (1887 թւին) միջին թւով 9 բուրջի էր մի բնակչի վերայ, իսկ զեմսովօներում միջին թւով 70 կ. մի բնակչի վերայ: Աետերբուրգում մի քաղաքային դպրոցին ընկնում էր 4,000 բնակիչ և մի աշակերտին 80 բնակիչ. զեմսկից դաւառների համարեա 2/3 մասը 1887 թւին համեմատաբար աւելի ուսումնարաններ ունէին քան Աետերբուրգի քաղաքային խորհրդարանը:

և զեմակից գաւառներն $9/10$ մասով ուսումնարաններում համեմատաբար աւելի աշակերտներ կային քան Պետերբուրգի քաղաքային ուսումնարաններում ¹⁾։ — Ժողովրդի կրթութեան համար, բացի ուսումնարանների ու աշակերտների թւից, մեծ նշանակութիւն ունի և ուսուցիչների զարգացման աստիճանը, առաջւայ ազէտ, թերուս ուսուցիչների տեղ զիւղացիները զեմավօր շնորհիւ այժմ ունեն մասնագիտական-մանկավարժական և միջին կամ բարձրագոյն ուսում ստացած ուսուցիչներ։ Բայց ուսումնարանը մենակ բաւական չէ ժողովրդի մասսայի մէջ գրագիտութիւն ու լուսաւորութեան ուրիշ բարիքները տարածելու, մանաւանդ արմատացնելու համար։ Գիւղացի երեխան, դուրս գալով ուսումնարանից ու սխելով պարապել երկրագործութեամբ (հէնց այդ տեսակների կրթւած լինելը ամենամեծ նշանակութիւնն ունի մի որ և է ազգի համար), կարող է մոռանալ ուսումնարանում ձեռք բերածը, եթէ ուսումնարանից դուրս գալուց յետոյ դրքեր չը կարդայ, չը շարունակի կրթւել։ Սիմբիրսկի գաւառի ուսուցչական խորհուրդը փորձ է արել որոշելու թէ որքան հաստատ է արմատանում զեմակից ուսումնարանների ուսած գիտութեան պաշարը գիւղացիների մէջ։ Խորհուրդը այդ նպատակով հրաւիրել է գաւառի զեմակից ուսումնարաններում աւարտած բոլոր հասակաւոր գիւղացիներին և քննել է նրանց։ Հրաւիրւածներից (չը հաշուելով զինուորական ծառայութեան ու ուրիշ պատճառներով բացականերին) չեն եկել քննւելու $1/3$ մասը։ Մնացած $2/3$ մասի 1,676 հոգու քննութիւնը ցոյց է տւել հետևեալը։ Արօնից բոլոր քննւողների $31,5/0$ -ը պատասխանել են գերագանց, $38,5/0$ -ը — շատ լաւ, $26/0$ — բաւարար և $4/0$ — միջակ. նոր կտակարանից աւելի լաւ են պատասխանել քան հին կտակարանից։ Ալաոներէնից ու ռուսաց լեզուից. — $29/0$ — գերագանց, $36/0$ — շատ լաւ, $32/0$ — բաւարար և $3/0$ միջակ։ Քաւբանութիւնից ու գրելուց աւելի թոյլ են եղել։ Հաւաքւած տեղեկութիւններից յայտնւել է, որ այդ քննւող 1,676 հոգուց ուսումնարանից դուրս գալուց յետոյ զիրք ամենեւին չեն կարդացել կամ քիչ են կարդացել $34/0$ -ը, բացառապէս կրօնական

¹⁾ Абрамовъ. Очерки современнаго земства. Русская мысль. 1889 г., № 3.

բովանդակութեամբ գրքեր են կարդացել 28⁰/₀-ը, համարեա բացառապէս պատմական և մանաւանդ պատերազմական գրքեր են կարդացել 1,5⁰/₀-ը, միայն հէքիաթներ—1⁰/₀-ը, զանազան բովանդակութեան գրքեր են կարդացել—35⁰/₀-ը: Քննողներինց 92,5⁰/₀ պարապում են երկրագործութեամբ և զիւղատնտեսութեամբ, միայն 3,7⁰/₀-ն է գրագիր, գործակատար դարձել, մնացածը շարունակել են իրանց ուսումը միջին կամ բարձրագոյն ուսումնարաններում: Ուրեմն զեմսկից ուսումնարանը չի հեռացնում զիւղացուն հողինց:

Զեմսովոն, աչքի առաջ ունենալով այդ բոլորը, աշխատում է շարունակել կրթել զիւղացի սիրան ու միտքը ուսումնարանինց զուրս էլ: Զեմսովոները շատ տեղեր բաց են անում իրիկնապահի կամ կրկնողական դասեր, կիրակնօրեայ ուսումնարաններ հասակաւորների համար, հիմնում են իրանց ուսումնարաններում գրադարաններ, որտեղից գրքեր տրուում են կարգալու զիւղացիներին և գրքերի պահեստներ զիւղացիների մէջ օգտակար գրքեր տարածելու համար, սարքում են ուսումնարաններում կամ ընթերցարաններում զիւղացիների և աշակերտների համար ժողովրդական դասախօսութիւններ (ընթերցանութիւններ) պատկերներով (ТѢНОВІЯ КАРТИНЫ) և այլն:

Բժշկական-առողջապահական գործունէութիւնը: Իւր գոյութեան ընթացքում զեմսովոն ժողովրդի առողջութեան վերայ ծախսել է այդ նպատակով 9 միլլիոն ռուբլի, այսինքն իրանց ամբողջ բիւջէի 21⁰/₀-ը: Բժշկական դեպարտամենտի տեղեկութիւնների համաձայն 1887 թւին բժշկական օգնութեան գործը զեմսկից և զեմսովոից զուրկ նահանգներում հետեւեալ դրութեան մէջ է եղել.

| | |
|----------------------------------|------------------------------|
| զեմսկից նահանգներում | զեմսովոից զուրկ նահանգներում |
| 1 հիւանդանոց 34,000 բնակչի վերայ | 40,000 բնակչի |
| 1 մահճակալ 1,200 " " | 1,900 " |
| 10,000 բնակչից | |

| | | |
|-------------------------------|------------|----------|
| դիմել են բժշկական օգնութեան | 2,259 հոգի | 729 հոգի |
| ինամուտել են հիւանդանոցներում | 104 " | 52 " |

Մոսկուայի նահանգում զեմսովոն մոցնելու ժամանակ եղել է 12 քաղաքային հիւանդանոց և միայն 3 զիւղական բուժարան 45 մահճակալով, իսկ այժմ կայ 54 զեմսկից հիւանդանոց, ուր տարին

խնամուժ են մօտ 10,000 հիւանդներ և դիմում են բժշկական օգնութեան 300,000-ից աւելի մարդ:

Մոսկւայի համալսարանի առողջապահութեան յայտնի պրօֆեսսոր Էրիսման մեծ գովասանքով է խօսում զեմսովօի առողջապահական-բժշկական գործունէութեան մասին:

Պէտք է յիշել նոյնպէս և զեմսկից բժշկական ժողովների մասին: Թէ ինչ արել է զեմսովօն ժողովրդի տնտեսական դրութեան ուսումնասիրութեան համար, — համար, բաց շատ պերճախօս վկայ են հարիւրից աւելի «զեմսկից վիճակագրական ժողովածունները», որոնք արդիւնք են զեմսովօների վիճակագրական բիւրօների բարեխիղճ, մանրակրկիտ և լուսաւոր աշխատանքի: Մոսկւայի համալսարանի վիճակագրագիտութեան (ստատիստիկայի) ու քաղաքատնտեսութեան պրօֆեսսոր Չուպրով իւր դասախօսութիւնների մէջ խօսելով այդ ժողովածունների մասին, ասում է, որ Ռուսաստանի զեմսկից նահանգները տնտեսական կողմից աւելի մանրամասն և աւելի լաւ են ուսումնասիրւած քան Արեւմտեան-Եւրոպայի որ և տէրութեան նահանգները: Բաց ի հարկէ Ռուսաստանի միւս նահանգները ամենին համեմատել չեն կարող Արեւմտեան-Եւրոպայի տէրութիւնների նահանգների հետ, այնպէս որ ընդհանրապէս եթէ վերցնենք և համեմատենք եւրոպական Ռուսաստանը՝ օրինակ՝ Գերմանիայի հետ, կասկած չը կայ որ Գերմանիան աւելի լաւ է ուսումնասիրւած, քան եւրոպական Ռուսաստանը:

Անցնենք ժողովրդի տնտեսական դրութեան բարեօքմանը: Ձեմսովօները վերջին ժամանակները աւելի մեծ ուշադրութիւն են դարձնում այդ գործի վերայ: Աշխատելով բարձրացնել հողի արդիւնաբերութիւնը, զեմսովօները զիւղատնտեսական տեղեկութիւններ, գիտութիւններ են տարածում ժողովրդի մէջ, սարքելով զիւղատնտեսական ցուցահանդէսներ, հիմնելով զիւղատնտեսական դպրոցներ. տարածում են զիւղացիների մէջ բարեօքւած սերմեր և կատարելագործւած գործիքներ (մասամբ ձրի են բաժանում, մասամբ ծախում են ապառիկ կամ փող են փոխ տալիս որ իրանք զիւղացիները առնեն), սարքում են սերմերի ցուցահանդէսներ: Մոսկւայի Կլին գաւառի զեմսովօն վճռել է վերջերքս սարքել փորձական զաշտ (опытное поле), որ միջոց կը տայ ուսումնական զիւղատնտեսին

Ծանօթանալու տեղային պայմանների հետ և միւս կողմից օրինակ կը դառնայ շրջապատող զիւղացիների համար, ցոյց կը տայ նրանց ակնյայտնի կերպով զիտութեան այս կամ այն ցուցմունքի ճշմարտութիւնը: Երկրագործական արդիւնաբերութեան օգտին շինուած են էլեւատորներ հացահատիկների համար: Հիմնուած են հացահատիկների պահեստներ: Աշխատուած են կարգաւորել հացի առևտուրը: Խնդրուած են կառավարութիւնից իջեցնել հացահատիկների երկաթուղային տարիֆը: Գիւղացու ամենամեծ ցաւը զարմանելու համար աշխատուած են ընդարձակել զիւղացիների հողատիրութիւնը, պարտք են տալիս զիւղացիներին հող գնելու համար, հիմնուած են շինական (сельский) բանկեր (նոր երևոյթ է), ինչպէս են կառավարութիւնից քչացնել զիւղական (крестьянский) բանկի տոկոսը (ազնականների բանկի փոխառուները այժմ վճարուած են 4⁰/₀), իսկ զիւղական բանկի փոխառուները—6⁰/₀): Օգնուած են փոխատու-իննացողական ընկերութիւններին: Աշխատուած են զարգացնել տնայնագործութիւնը (кустарная промышленность). էժան փոխատուութիւն են անուած տնայնագործերին, հեշտացնուած են նրանց արդիւնքների վաճառումը, հիմնուած են տնայնագործական արդիւնքների պահեստներ և թանգարաններ (Մոսկւայում земский кустарный музей), տնայնագործական բանկ (Պերմի զեմսովօն), սկսուած են սարքել երկրագործական գործիքների մրցումներ-կոնկուրաներ (Մոսկւայի նահանգի մի զաւառում այս տարի զեմսովօն սարքեց գութանների մրցումն. մրցմանը մասնակցում էին ոչ միայն տեղային տնայնագործ գութանաշէնները, այլ և զիւղատնտեսական գործիքների 2 ամենայայտնի ֆիրմաներ «Эмиль Липгартъ» և «Работникъ». 26 գութան են բերել մրցելու, որոնցից 12-ը զիւղացիների շինածն է եղել. երկու մասնաժողով են կազմել էքսպերտիզի համար՝ մէկը զեմսովօն ներկայացուցիչներից, միւսը զիւղացիներից. երկու մասնաժողովի կարծիքն էլ նման են եղել, 8 գութան օրինակելի են համարուել, որոնցից 6 տեղային տնայնագործների շինածն է եղել. մրցման աւիթով զանազան զիւղերից հաւաքած է եղել ահագին բազմութիւն): Զեմսովօնները շատ ղան են արել նա և զիւղացիների ինչքը սպահովացնելու համար, զեմսկից անասնաբոյժները անասունների տարափոխիկ ախտերի տարածելու առաջն առնուած են. բացի զրանից զեմ-

ատվոները մոցնում են անասունների ապահովութիւն (страхованіе) կարիւրութից, անասունների ապահովագրութիւն փտտերից և այլն:

Իրանց տնտեսական գործունէութեանը աւելի օգտակար դարձնելու համար, զեմտովօները այժմ սկսել են հիմնել զեմնիկի վարչութիւններին աջակցելու համար «տնտեսական խորհուրդներ» և «տնտեսական բիւրօներ»․ այդ աւելի սխտեմատիկական կը դարձնի զեմտովօի գործունէութիւնը:

Զեմտովօի տւած օգուտը դնահատելու համար չը պէտք է մուռանալ, որ այդ մի շկոլա է ուրս ժողովրդի համար, որ զարգացնում է նրան քաղաքականապէս, զարգացնում է նորա ինքնաձեռնաշութիւնը: Բացի դրանից զեմնիկի գործիչները, ապրելով ժողովրդի մէջ, մի տեսակ կենտրոններ են դառնում, որոնք տարածում են իրանց շուրջը եւրոպական կուլտուրան:

Անցեալ տարի լրացաւ զեմտովօի առաջին քսանհինգամեակը: Բոլոր զեմտովօները վճռել էին տօնել այդ տարին և աշխատում էին մի որ և է բանով նշանաւոր դարձնել և անմահացնել այդ յոբելէանը, հիմնելով հիւանդանոցներ զիւղացիների համար, ապաստանարաններ որք մանուկների համար և այլն: Առանձին բնաւորութիւն էին կրում անցեալ տարուայ զեմնիկի ժողովները: Զեմնիկի գործիչները ցոյց տւեցին, որ հասկանում են զեմտովօի նշանակութիւնն ու իրանց կոչումը․ այդ երևում էր նրանց արտասանած ճառերից: Ռուս հասարակութիւնը ցոյց տւեց, որ դնահատում է զեմտովօի մատուցած ծառայութիւնները․ այդ երևում էր լրագիրների և ամսագիրների սուլար մեծամասնութեան մէջ տպւած յօդածներից: Թէ ինչպիսի համակրութեամբ է վերաբերում զեմտովօին ուրս հասարակութեան զարգացած մասը, այդ երևում է թէկուզ նրանից, որ զեմնիկի բժիշկ, զեմնիկի գործիչ անունը ամենապատուաւոր, ամենահամակրելի կոչումն է համարում հասարակութեան մէջ: Վնահատում են զեմտովօի տւած օգուտները և կառավարութեան լուսաւորւած պաշտօնեաները—նահանգապետները, որոնք միշտ գործ ունեն նահանգական զեմնիկի ժողովների հետ․ նրանցից մի քանիսը իրանց ճառերում անցեալ տարի մեծ գովասանքով էին խօսում զեմտովօի գործունէութեան մասին: Վայսը զեմնիկի ժողովների շատ վճիռներ արժանացրել է «գովելի է» կարծիքի: Վերջապէս կառավարութիւնը իւր վստահութիւնը զեմտովօին ցոյց տւեց նրանով, որ, չը նայելով կատարի պահպանողականների յորդորներին, չ'ոչնայրեց այդ հաստատութիւնը, այլ միայն փոփոխեց: Բայց զորա մասին միւս անգամ:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՐՏԱՍԱՅՄԱՆԻՑ

ԿՈՒԽ ԳԻՒՏԻ ԱՌԱՋԻՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր :

ԲԵՐԼԻՆ, 17 նոյեմբերի (նոր տոմար): Երէկ, 16 նոյեմբերի գաղտնի բժշկական խորհրդական պրոֆ. դ-ր Փոն Բերգման, խիրուրգների «Աղատ ժողով» մէջ, իւր կլինիկայում դասախօսութիւն արաւ Կոխի դեղի մասին: Լսել ցանկացողների թիւը, թէ արտասահմանից և թէ բնիկներից աչնքան մեծ էր, որ խողների թիւը պէտք էր սահմանափակել: Ներկայ էին լուսաւորութեան մինիստր դ-ր Փոն Գոսլեր, գաղտնի խորհրդական պրոֆ. դ-ր Փոն Յրմաէն Միւնխենից, գաղտնի բժշկ. խորհրդական պրոֆ. գ-ր Յիրխով և Բերլինի ուրիշ բժշկական պրոֆեսորները, գլխաւոր շտաբի բժիշկ դ-ր Փոն Կոլեր, գաղտնի խորհրդական դ-ր Փոն Կիրչենտաւ-նէր Միւնխենից և այլն: Ներկայ եղող անգլիական բժիշկները իրանց նա բերել էին մի լուպուս-հիւանդի Բերգմանը սկսեց իւր խօսքը չափանելով շնորհակալութիւն և հիացմունք Կոխին: Հիպպոկրատից և Գալէնից ղէս ոչ ոք չի հետազօտել տուբերկուլոզային հիւանդութեան պատճառները և բոլոր և նորա բուժելը ապահովացրել: Կոխը երևում է որ մի բժիշկ է, որին վիճակաւ է այդ չաղթութիւնը: Կոխը թուլ է տաւոմ նրան (Բերգմանին) այսօր փորձեր ցույց տալ, որ ինքը Կոխը արել է: Ոչ մի հնար չի եղել համողելու, որ ինքը Կոխը ներկայ գտնւի ժողովին: Բերգմանը ներկայաց-րեց մի շարք հիւանդներ, որոնք Կոխի եղանակով խնամուել են: Նախ նա ցույց տուեց լուպուս-հիւանդների բժշկուելու մի քանի ստաղիանների (չրջանների) մէջ: Նօքա բոլորը 10 տարուց ի վեր առանց հետեանքի և բոլոր միջոցներով բժշկուում են եղել: Կոխի եղանակի կրկնակի ներգործութիւնը՝ ընդհանուրը և չափուկը-իւրաքանչիւր հիւանդի վերայ նկատելի էր, որպէս նաև սկսող և չառաջացող բժշկութիւնը: Յետոյ ցույց տուեց Բերգմանը տուբերկու-լոզային սկրոֆուլոզի երկու դէպքեր, 18 դէպք շոգերի և սակորների տու-բերկուլոզի և 3 դէպք խուչափողի (կոկորդ) տուբերկուլոզի: Գասախօսու-թեան վերջում Բերգման նորից չափանեց պատուական բժիշկների ժողովի կողմից շնորհակալութիւն մեծ հետազօտողին՝ իւր գիւտի համար:

ՎԻՆՆԱ, 14 նոյեմբ. Այսօրուայ իւր դասախօսութեան սկզբում չարոնեց պրոֆ. Նոթնագել ամենափառաբանական կերպով կոխի նոր՝ բժշկական եղանակի մասին, որը իբր դարուս և բժշկական գիտութեան գոյութիւնից դէս ամենամեծ գործն է: Կոխի անունը լինելու է մեր դարու ամենատօնւածներէից մէկը: Այս խօսքերին չաջորդեցին լսողների երկարատև կեցցէները: Նաև պրոֆ. Բիլրոթ՝ առիթ գտաւ իւր այս օրուայ դասախօսութեան միջոցին՝ կոխի բժշկական եղանակի մասին ամենաշորհակալակաւ և գովասանական խօսքերով արտայայտուելու և աւելացրեց՝ «Մի չը սպասուած պերսպեկտիւ է բացուում. բժշկականութեան բոլոր ձիւղերը շահ կը ստանան այս հանճարեղ գիւտից»:

ՎԻՆՆԱ, 14 նոյեմբ. — Այսօրուայ մի դասախօսութեան մէջ պրոֆես. Նոթնագել ասաց, թէ նա կանգնած է բժշկականութեան ամենամեծ չաղթութիւններից մէկի առջև: Կոխի արած գործը կարող է համեմատուել միայն Ջենների ծաղկի պատուաստման հետ: Նաև պրոֆ. Բիլրոթ խօսեց այսօր կոխի բժշկական եղանակի մասին: Չը սպասուած հորիզոն է բացուում: Խիրուրգի համար ցալժմ չը լուծւած խնդիր էր՝ թոքերի խոռոչները բացել: Եթէ իրաւ կոխի զեղի ներմուծութիւններով բացիլները կը սպանւեն (մի բան, որ կոխի ասելով չի կատարուում, ծանօթ. խմբ.), ալն ժամանակ խիրուրգը կարող է առանց վտանգի հիւանդի համար խոռոչները բացել: Բիլրոթը համոզումնք է չալտնում, որ նաև քաղցկեղի (ուակ) բուժելը միայն ժամանակի խնդիր է:

ԲԵՐԼԻՆ, 17 նոյեմբ. — Երեկ փորձեր կատարեցին 5 լուպուս-հիւանդների վերայ, որոնք ներմուծութիւններ ստացան, ամենքի մօտ ջերմ և բորբոքումն եղաւ. պրոֆ. Բերգման չալտնեց, որ արդէն այս անվրէպ ապահովութիւնը, թէ կոխի զեղով ջերմ և գոլոց է առաջանում, զեղին տալիս է կատարեալ բժշկական նշանակութիւն: Հիւանդներից երեքը կոխի եղանակով արդէն խնամուել են. նոքա ամենքը ներմուծութիւններ են ընդունել, որոնք զնալով նւաղ ընդդիմագործական երևոյթներ էին չառաջացնում: Կեղը գործ է ամուում մինչև որ ջերմը չը նորոգւի: Բերգմանը չալտնեց, որ քաղցկեղի (ուակ) վերայ կոխի զեղը չի ներդրում և քանի որ քաղցկեղը խոչարիողում շատ հեշտութեամբ տուրերկուղի հետ շփոթել կարելի է, այդ պատճառով կոխի զեղը լաւ դիագնոստական միջոց է տուրերկուղը քաղցկեղից (ուակ) որոշելու: Եթէ ընդդիմագործութիւն (բէակցիա) չեղաւ՝ նշանակում է քաղցկեղ է և ոչ տուրերկուղ:

ԲԵՐԼԻՆ, 18 նոյեմբ. — Բերլինի լրագիրները մանրամասն տեղեկութիւններ են տալիս պրոֆ. Բերգմանի դասախօսութեան մասին, որ նա կարգաց իւր կլինիկայում «Ազատ ժողովի» մէջ: Ալդտեղ 39 պացիենտներ առաջ բերեցին, որոնք մեծ մասամբ լուպուսով, չօղերի տուրերկեղներով և առհասարակ արտաքին հիւանդութիւններ ունէին: Ներմուծութիւնները (զեղը կաշի տակով ներս սրսկելը) կատարեց գոքտոր Պֆուելը. չալտնաս

հիւանդները այդ միջոցին իրանց հանգիստ պահեցին, միայն երեխաները գաւնդատաւոր ձաղներ շտեղծեցին: Բերդմանի ասելով, Աոխի դիւար թու է տալիս որոշել տուբերկիւնների գոյութիւնը: Նաև անկասկած է, որ Աոխի բժշկական եղանակը նաև արտաքին հիւանդութիւնների վերաջ լաւ է ազդում, բայց բուժելու եղանակը ընդհանրապէս և հարկաւոր դիտողութիւնները դեռ վերջացրած չեն: Ինչ վերաբերում է ներքին հիւանդութիւնների, օրինակ՝ թոքերի բուժելուն, Բերդմանը նկատեց, որ դեռ անորոշութիւն կա: Վտանգ կա, որ դեղի գործածութեամբ՝ հիւանդը չը խեղդւի, եթէ բաժանւած թոքի մասերը չնշարժուի և կոկորդի մէջ պինդ նստեն: Խռչափողում հիւանդին մէկի վերաջ Աոխի բուժելու եղանակը նույնպէս ներգործեց, որպէս արտաքին հիւանդութիւնների վերաջ. ջուլած կաշին չաջողութեամբ դուրս նետուց հաղալով: Թէ արդեօք նոյնը կը լինի աւելի խորը ներքին հիւանդութիւնների դէպքում, դեռ հաստատ չէ: Փորձերը շարունակեցին:

ԲԵՐԼԻՆ, նոյեմբ. — Պրոֆեսոր Աոխի բակտերիօլոգիական հետազոտութիւնների երկարամնայ աշխատակիցը, պրոֆ. Ֆրենցել (Fräntzel), երէկ բժիշկների մի մեծ աուդիտորիումի առջև դասախօսեց այն փորձերի մասին, որ Աոխի բուժական եղանակով կատարել են թոքերի բարակացաւորների վերաջ, և հաղորդեց, որ ծանր դէպքերում նշանաւոր բարելաւութիւն, միջակ և թեթիւ դէպքերում՝ կատարեալ առողջութիւն է չառաջացել: Պացիենտների գանդաւանները կամաց-կամաց զտարում են, սնունդի գրութիւնը լաւանում է և բացիւնները խորխի մէջ անշտանում են:

ԲԵՐԼԻՆ, 18 նոյեմբ. — Առաջին գիկուցումը «Գոքտար Աոխի միջոցի մասին տուբերկոլոզը բուժելու համար» հրատարակելու է վաղը իբր արտակարգ հրատարակութիւն «Deutsche Medicinische Wochenschrift» (գերմանական բժշկական շաբաթաթերթ) թերթի, որ հրատարակում է դր Գուտմանը՝ Գէորգ Թիմէի (Բերլին և Լապպիգ) տպարանում:

ՊԱՐԻՉ, 16 նոյեմբ. — Թերթերը աշխուժով զարուում են Աոխի դիւտով: «Soleil» լրագիրը հարցմունք արաւ Գիւլտարդէն—Բօմէյ և Վեբն և օչլի մօտ: Գիւլտարդէն—Բօմէյ կարծիք չապանեց, որ անկարելի է փչացած սակորները և թոքերը վերականգնել: Արդէն զարմանալու արժանի չաջողութիւն է, եթէ մարմնի այն մասերը, որոնք միկրոբներից վտանգւած են, սոցա չարձակումներից պաշտպանեն: Իւր կարծիքով, Աոխի միջոցը կաշնում է միկրոբներին զտարում մէջ, միացած սակուցինարի հետ: Աոխը այս դէպքում գործ է դնում միայն Պատտօրի մեթոդը, որի վերաջ նա առաջ չարձակում էր:

Eclair լրագիրը առաջ է բերում Աօրնիլ, Ժերմէն Սէ և Գրանշէի կարծիքները: Աօրնիլ մեծ հաւատ ունի դէպի դիւտը և գտնում է որ մինչ ալժմեայ հետանքները խրախուսիչ են, բայց կարծում

է, թէ Կոխի միջոցը միաջն վերականգնեցնում է վնասւած հիւսւածքները, բայց չէ սպանում բացիւններին և կարելի է որ բացիլը իւր կործանիչ ներդործութիւնը լիտոյ նորից սկսի: Կոխը, ասում է նա, բաժանում է բարակացաւոտներին՝ նոր հիւանդացածներին, թոքերում դեռ խոռոչ չունեցողներին և մեծ խոռոչներ ունեցողներին: Նթէ, ինչպէս Կոխը հաւատացնում է, նրան չաջողւել է գէթ առաջիններին բժշկել, այդ էլ մինչ այժմ եղած ամենամեծ գիւտերից մէկը պէտք է համարել: Մինչև այժմ 100 բարակացաւոտներից միաջն մէկին կարելի էր լինում ազատել: Բարակացաւը մինչ այժմ իմացւում էր առակուլտացիաի միջոցով, բայց միաջն քիչ բժիշկներ կան, որոնք կարող են լաւ առակուլտացիա կատարել: Այդ պատճառով եթէ Կոխի եղանակով անվրէպ կերպով ճանաչեն տուրերկեր բացիւնները, այդ արդէն շատ կարևոր է:

Նաև դր. Սէ ընդունում է Կոխի բժշկական եղանակի նշանակութիւնը, միաջն կարծում է, թէ դեռ շատ կէտեր կան պարզելու՝ 1) Կոխը ազատում է միաջն վնասցրած հիւսւածքը, բայց միկորոքներին չի սպանում, 2) նրան թւում է թէ Կոխի դիագնոզը աչնքան անվրէպ չէ, ինչպէս Կոխը ասում է, 3) նա վախենում է թէ հիւանդութիւնը կրկին կարող է նորոգւել: Չը նաչած դորան, Կոխի միջոցը կարող է շատ լաւութիւն անել և նորա մեթոզը բացում է հետազոտութեան համար հեռու ճանապարհ, Գ-ր Գ-ր անչէ, որը ինքը տուրերկուլոլի ուսումնասիրութիւնով զբաղւած է, պնդում է, որ լուպուսը չաճախ բուժւել է, նոյնպէս բուժւել է մի թոքախաւ բարակացաւոտ առաջին շրջանում, նոյնպէս լիմֆ-գանգլիաների, սակորներին և չօդակապերին տուրերկուլոզը արդէն խիրուրգիան շատ անգամ բժշկել է: Կատկածելի է թւում նրան, որ Կոխի գիւտը սպասած մեծ չաջողութիւնը ունենայ:

ՊՐՈՑԵՍՈՐ Գ-Ր ՅԻՄՍԵՆ Գ-Ր ԿՈՒԻ ԲԺՇԿԱԿԱՆ
ԵՂԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ:

Միւնխէն, 19 նոյեմբերի

Գաղտնի խորհրդական պրոֆ. Գ-ր Յիմսեն այսօր իւր կլինիկում առաջին տնգամ դասախօսեց՝ Բերլինից վերադառնալուց դէս և չաչտեց իւր տպաւորութիւնները Կոխի բուժական եղանակից, որ նա տեսաւ Բերլինում: «Ալղևմաչէ Յայտունք» լրագրում տպւած է դասախօսութեան մասին սղագրական հետևեալ տեղեկութիւնը: Մեր էքսպեդիցիալի ժամանակ, ասաց նա, մենք մի քանի հարիւր հիւանդ տեսանք, որոնք նոր ժամանակներում խնամւած էին: Ամենաերկար ժամանակը 6 շաբաթ էր, որովհետև առաջին փորձերը սկսւել են միաջն օգոստոսին: Արկու-երեք ղէպքեր այդ ժամանակահատից է և այն էլ զորքա խիրուրգիական ղէպքեր են: Այն ղէպքերը,

որ մեզ նախ և առաջ հետաքրքրում են, ներքիններն են, մանաւանդ թութերինը և զոքա միայն 6 շաբաթւանից են սկսել փորձի ենթարկել: Առաջին փորձերը պատկանում են դ-ր Ֆրենցելին: Նորա հետ մենք երկուշաբթի երեկոյան խօսեցինք: Այդ ղէպքերը մեզ վերայ լաւ տպաւորութիւն են անում: Եթէ բժշկած լինելու մասին դեռ խօսք չը կայ, բայց հիւանդները ջերմից ազատուել են, խորխոր, եթէ բոլորովին չի էլ զաղարել, գոնէ նշանաւոր կերպով պակասել է: Տուբերկել—բացիլները թիւը և չտակութիւնը փոխուել է, այն, անգամ մի քանի օրերում չը գտեց ոչ մէկը: Եթէ կոխը ասում է, թէ իւր հեղուկը ամեննին չի ներգործում բացիլների վերայ, ևս սակայն տեսայ, որ բացիլները մի փոքր հիւանդոտ երևացին: Այդ մենք պարզ տեսանք մանրադիտական պրեպարատների վերայ: Բացիլները մասամբ կտրատուած և լղարած էին, իսկ միքանիսը բոլորովին ընկած էին. կարճ՝ բացիլները այն տեսքն ունէին, կարծես թէ մի հիւանդութիւն երկար ժամանակ նրանց չաղթահարած լինէր: Հիւանդների մարմնի քաշը 4 ֆուտ աւելացել էր միմիայն 6 շաբաթում: Նշանակութիւն ունի այն, ինչպէս պրոֆ. Ֆրենցելը շեշտեց, որ չառաջացած բարակացաւի ղէպքում, մանաւանդ երբ մեծ խոռոչներ և զոչացեւ, կոխի հեղուկի ներմուծութիւնը ոչ մի չաջողութեան շանս չունի: Գ-ր Կերհարտը մէկէլ օրը կէս օրից առաջ սկսեց ներմուծութիւններ անել և այսօրայ տեղիկութիւնների համեմատ՝ նա երէկ ներկայացրել է ղէպքերը և, որպէս սովորապէս, նաև ազդեղ ընդդիմագործութիւնը (րէակցիա) տեղի է ունեցել: Ամենադեղեցիկ կերպով տեսնում են հետաքրքրելի խրուրդիական ղէպքերում՝ լուպուսի, խոլերի վերայ և այլն: Ընդդիմագործութիւնը շատ շուտով, սովորապէս 5 մինչ 6 ժամից չես տեղի է ունենում: Ընդհանուր երևոյթներից զուրս, որպէս գլխացաւ, փոխումն և ալլը, մենք տեսնում ենք տեղային երևոյթներ, այն է՝ ուռչել, ցաւ և բորբոքումն այն ամենի, ինչ տուբերկուրպային է: Այդ տեղային երևոյթները զիտողին ամենից շատն են վարմացնում: Մենք ղէպքեր տեսանք, զլիսաւոր շտաբի բժիշկ Կոհլերի մօտ, ուր մարմնի զանազան տեղերում ընդդիմագործութիւն տեղի ունեցաւ: Աչսպէս տեսայ մի հիւանդուհի երկու սպիներով (Narbe), մէկը ծունկից ներքև (Unterschenkel), անում էր բոլորովին սիֆիլիտական վէրքի տպաւորութիւն, մինչդեռ երկրորդը վզի վերայ էր և ակնշարնի էր, որ տուբերկուրպային ծագում ունէր: Ներմուծութիւնից չես հէնց միայն վզի վրայինը ցոյց տուց մի ընդդիմագործութիւն (րէակցիա), մինչդեռ միւսը բոլորովին ընդդիմագործութիւնից զուրկ մնաց: Այդ կողմից շատ համոզիչ էր խոչափողի կարցինոմի (Kehlkopfcarcinom) մի ղէպք, որ ևս Բերգմանի հետ հետազօտեցի: Մենք, այն է Բերգման, կոխ, երկու անգլիացիք (սոքա իրանց հետ բերել էին մի լուպուս—հիւանդի), գաղտնի խորհրդական Գրաֆ և ևս, որոնում էինք ամենապարմար ղէպքերը ներմուծութեան համար Բերգմանի կլինիկում, կոխը

որոշում էր հեղուկի չափսը իւրաքանչիւր դէպքի համար: Կոխը շատ մատչելի էր և շատ աշխատածի դէմք ունէր: Չափսերը որոշելում Կոխը շատ զգուշ էր, նա տալիս էր միայն շատ փոքր չափսերով: Չէ թէ դէպքեր են եղել, երբ ընդդիմադործութիւնը շատ զօրեղ է եղել: Այսպէս, օրինակ, Բերմանը ցոյց տուց մի դէպք, ուր ընդդիմադործութեան ջերմը (Reactionsfieber) մինչ 41,5 աստիճանի հասաւ և այն միայն 0,01 խորանարդ սանտիմետրի չափով: Մենք տեսանք լիտոյ ուրիշ հիւանդներ, որոնք բժշկուում էին և արդէն 8—11 ներմուծութիւններ էին ընդունել, և այդ շատ հետաքրքրական էր: Բերգմանի մօտ հետաքրքրական դէպքեր կան և մենք որոնեցինք ու գտանք թոքերի և խոչափողի աուբերկուլոզի երեք դէպք և բացի դորանից՝ վերը փշած կասկածաւոր դէպքը: Վերջինս մի 40 տարեկան մարդ էր, որի ձախ ձաշնակապը (Stimmband) հաստացել էր և ներմուծութիւն էր պահանջում: Այդ մարդը կերկերած և համարեալ առանց ձաշնի էր: Բերգմանը քաղցկեղի (ռակ) տեղ ընդունեց այդ, ես էլ նոյն կարծիքի էի: Բայց կործանման ոչ մի նշույլ չէր երևում: Մենք ներմուծութիւն արեցինք և կրեկոնեան նա կրկին մեղ ներկայացրուց: Ընդդիմադործութեան ոչ մի նշույլ չը կար և հիւանդի դրութիւնը ոչնչով չէր փոխուել, մինչդեռ տուբերկուլոզային հիւանդները, չը նպօժ որ տակի փոքր չափս էին ընդունել, խիստ երևութներ ցոյց տւին: Մենք հետազօտեցինք վերջիններս և մի շատ մեծ օէղէմ գտանք, մէկը մինչև անգամ ստերիզոր ունէր: Ես տեսաւ, որ 5 միլլիգրամ հեղուկը արդէն զօրեղ ընդդիմադործութիւն է չառաջացնում, և մենք տեսանք նոյնպէս, որ այդ ընդդիմադործութիւնը ոչ մի վատ հետևանք չի ունենում:

Տարօրինակ թւաց ինձ թոքը: Մինչդեռ խոչափողում ընդդիմադործութիւնը կատարում էր, թոքի մէջ ոչինչ չէր նկատուի: Պէտք էր կարծել, որ երբ խոչափողը աղպէս ուռչում է, պէտք է որ բրոնխներն էլ նոյնպէս ընդդիմադործեն. բայց մենք ոչ մի հեռք չը գտանք:

Ինձ շատ հետաքրքրեց լուպուսը: Մենք 12 մինչ 13 դէպք տեսանք: Ընդդիմադործութիւնը աղտեղ սաստիկ մեծ էր: Ամբողջ շրջանը ուռչում է, որպէս նաև հարեան մասերը, որոնց մասին կարծում էր թէ իբր բուրովին առողջ էին: Նշանակում է որ Կոխի հեղուկի ներգործութիւնը մանում է բացիլները բնական ամենախորը ծակ ու ծուկերը: Առուցքը անաղին էր: (Մենք այստեղ բաց հնք թողնում մի քանի տողեր):

Կոխի մեթոդը շատ հասարակ է: Երբ մի անգամ գիտական վերաստուգութեան փորձերը վերջացրած կը լինեն, այն ժամանակ ամեն բժիշկ կարող է անել: Դա մի հասարակ ներմուծութիւն է:

Պրոֆ. Յիմսեն վերջացրեց հետեւալ խօսքերով: «Կոխի հեղուկի ընդունակութիւնը՝ միմիայն տուբերկուլոզ հիւսւածքի վերայ ներգործել, պաթօլոգիայում առանց օրինակի է. դա անբացատրելի է և կարող է միայն այն ժամանակ բացատրուել, երբ մենք կ'իմանանք, ինչպէս և ինչ բաղադրութիւնից է պատրաստուում հեղուկը և ինչ չարաբերութիւն ունի հեղուկը դէպի բացիլները:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Պարլամենտական ընտրութիւնները Խոալիայում և Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներում:—Կարդինալ Հաւիժըրի, կղերականութիւնը և Ֆրանսիական հանրապետութիւնը:—Կարնելի և Քլադստոնի խռովութիւնը:

Քաղաքական աշխարհը այս վերջին ամսում զբաղեց մի քանի դէպքերով, որոնք մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում զլիաւորապէս երկիրների ներքին քաղաքականութեան նկատմամբ: Դոքա են՝ պարլամենտական ընտրութիւնները Խոալիայում և Հիւսիսային-Ամերիկայի Միացեալ Նահանգներում, Կարդինալ Լաւիժըրիի արտայայտութիւնները Ֆրանսիական հանրապետութեան մասին և Պարնելի ու Քլադստոնի յարաբերութիւնների խռովութիւնը:

Յիշւածներից արտաքին քաղաքականութեան համար կարևորագոյնն է իտալական ցայժմեայ մինիստր-նախագահ Կրիսպիի կատարեալ յաղթութիւնը պարլամենտական ընտրութիւնների մէջ: Յայտնի է, որ Կրիսպին Գերմանական-աւստրո-ունգարական և իտալական այսպէս կոչւած եռապետեան դաշնակցութեան ջերմ պաշտպաններիցն է և, որպէս նշանաւոր զործիչ, այժմ, երբ եռապետական դաշնակցութեան զլիաւոր ղեկավար Բիամարկը հեռացած է ասպարիզից, Կրիսպին, շնորհիւ իւր անձնական յասկութիւնների, մի առանձին կարևորութիւն է ստացած եռապետական դաշնակցութեան խորհրդում: Այժմ, իւր մեծ յաղթութիւնով օպպոզիցիայի վերայ, Խոալիայի պատկանելը եռապետական դաշնակցութեան՝ վճռւած խնդիր պէտք է համարել նաև շաջորդ տարիների համար:

Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներում կատարւեցին, նոյեմբերի սկզբներում, նոր ընտրութիւններ կոնգրեսի համար: Հետեանքները այնպէս էին, որպիսին սակաւ է պատահել նոյն իսկ

այդ երկրում: Երկու կուսակցութիւններ կան այդ երկրում, որոնցից մէկը՝ հանրապետական է կոչուում, միւսը՝ դեմոկրատական: Վերջինս մեծամասնութիւն ունի, ր նաև 1884-ին, երբ Գրովեր Կլեեյլենդ հանրապետութեան նախագահ ընտրուեց, բայց այդ մեծամասնութիւնը ճանկայացուցիչների ժողովում, այն ժամանակ միայն 44 ձայնով էր առաւել: Այժմ, 52-երորդ կոնգրեսի ճանկայացուցիչների ժողովում, այդ մեծամասնութիւնը արդէն 140 ձայների տուակութիւնն ունի: Նոր ընտրութիւններից առաջ եղածը ընտրուեց 1888 թւականին, երբ հանրապետականները թող մեծամասնութիւն ստացան և նորա միջոցով ընտրուեց այժմեայ նախագահ Հարիսոն: Բայց 1888 թւականին հանրապետականները մեծամասնութիւն կարողացան կազմել վստ միջոցներով: Կլեեյլենդի վերընտրութիւնը խանգարելու համար, նոքա նախ ուղեցին սարսափեցնել ընտրող ժողովուրդը նորանով, որ իբր թէ Կրեեյլենդը կը մտցնի Վաշտոն տուակութիւն սխտեմբ: Բայց երբ տեսան որ այդպիսով չեն կարող յաջողութիւն ունենալ, դոքա դիմեցին մեծ Փարբիկանտներին, խոստանալով, որ եթէ իրանք՝ հանրապետականները՝ յաղթեն, այն ժամանակ Եւրոպայի ապրանքների վերայ այնքան մեծ մաքսեր կը դնեն, որ նոքա, Փարբիկանտները մէկին տասը կը շահեն: Այդ գործարանատէրերն էին, որ պաշտպանեցին հանրապետականներին, ահագին դումարներ աւելով՝ ընտրութիւնները հանրապետականների օգտին յաջողեցնելու համար: Եւ իրօք, երբ նոքա դործը յաջողացրին, մնուպիստները և հարուստ կրպորացիաները պահանջեցին հանրապետականների խոստացածը, որոնք և տուեցին որքան կարողացան: Հանրապետականների վերջին մեծ գործն էր Մակ Կինլէյի մաքսային օրէնքը, որով չափազանց պէտքացնուում է Եւրոպայից ապրանք բերելը Հիւսիս-Ամերիկայի Միացեալ նահանգները, յօգուտ երկրի մեծ գործարանատէրերի:

Հանրապետական փոքրիկ և անհաստատ մեծամասնութիւնը մեծացրեց նրանով, որ, բոլորովին չնչին պատճառներով, մի շարք դեմոկրատների ընտրութիւնը անկանոն յայտարարուեց և նոցա տեղերը տուեցին հանրապետական հակառակորդներին: Վճուեց որ տուրութիւնը ամեն ամիս 4.500.000 ունց արծաթ գնի՝ փող կտրելու համար, որ դորանով դործերը կենդանութիւն ստանան և արծաթի

տէրերը շահեն, իբր փոխադարձութիւն նոցա կողմից արած օգնութեան 1888-ի ընտրողութիւնների ժամանակ: Քաղաքացիական պատերազմի վետերանների շատ ազդեցիկ ընկերութիւններին շահեցրին մի օրէնքով, որի զօրութեամբ բոլոր վետերանները (և նոցա այրիներն և որդիքը), որոնք անկարող են իրանց ապրուստը հայթայթել, ստացան կենսաթոշակ: Խնդիրք տւողների թիւը հասաւ 460.000-ի, և այդ տարում կենսաթոշակը հասաւ 150 միլիօն դոլլարի: Յետոյ պէտք եղաւ զոհացում տալ բրդի դործարանատէրերին և այլն:

Բայց այդ բոլորը բաւական չէր: Հանրապետականները զիտէին, որ ժողովրդի կամքի հակառակ են հասել իշխանութեան: Հարկաւոր էր ուրեմն մի օրէնքի միջոցով տէր մնալ նաև այդ կամքի հակառակ: Այդ կարելի էր թուում ընտրութիւնների մասին մի նոր օրէնքով, որը ընդունւեց ներկայացուցիչների ժողովում: Երկար կը լինէր այդ ընտրողական օրէնքի ֆոկուսաբանութիւնը բացատրել. բայց նորա նպատակը պարզեց ժողովի մի շատ յանդուգն, անգամ անամօթ նախագահի (Րիդ, Reed) այս խօսքերով՝ «Մենք ուզում ենք ինքներս վերահսկել ցուցակագրութեանը, ինքներս քաշել ձայների (քէների) հաշուու հոգսը և ինքներս ընտրողական վկայագիրներ տալ»: Այլ խօսքերով հանրապետականները ուզում էին ընտրութիւնների տէրը դառնալ: Բարեբաղլաբար այդ օրէնքը չ'ընդունւեց սենատից, և հանրապետականները այժմ յայտարարում են, որ նոր տոմարով նոյեմբերի 4-ին կրած պարտութիւնը պէտք է հէնց դրան վերագրել: Թերևս այդ այդպէս էլ է. բայց հասարակաց կարծիքը մի անգամ ևս առանց կեղծի արտայայտւեց ընտրութիւնների հետևանքների մէջ, և ժողովուրդը այս անգամ մի այնպիսի պարզութեամբ խօսեց, որ երկար տարիներ հարկաւոր կը լինեն, մինչև որ կորրուպցիօնիստներն ու մոնօպոլիստները կրկին գլուխ բարձրացնել կարողանան:

Որպէս տեսնում են մեր ընթերցողները, այդ դեռ միայն Մակ կինլէյի օրէնքը չէ, որ պատասխանատու է հանրապետականների մեծ պարտութեան համար. մեզը ընկնում է հանրապետականների փուչ տարրերի վերայ, որոնք ահագին սոււեր էին զգում իրանց կուսակցութեան վերայ: Այսպիսի դէպքերում ամերիկական հասարակութիւնը միշտ առանց նախապաշարմունքների ահագին մեծամասնութիւններ

րով յարձակել է իւր երկրի հաստատութիւնների թշնամիների վերայ: Դեմօկրատների յաղթութեամբ պէտք է սպասել արդեօք որ կը փոխել Մակ Կինլէյի մաքսային օրէնքը? Կարծում ենք, որ ոչ: Առանց նախագահի և սենատի համաձայնութեան՝ օրէնք չի կարող փոխել. արդ, այժմեայ նախագահը դեռ մի տարի էլ ունի կառավարելու, իսկ նախագահ Հարրիսոն բացարձակ պաշտպան է այդ օրէնքի: Իսկ միւս կողմից, այժմեայ ընտրած ներկայացուցիչները՝ ընտրելու օրից (4 նոյեմբ. 1890 թ.) 14 ամիս չետոյ միայն պէտք է ժողովւեն, ուրեմն միայն 1891 թւականի դեկտեմբեր ամսի առաջին երկուշաբթի օրը: Մօտ ապագայի համար ուրեմն չը պէտք է սպասել Մակ Կինլէյի օրէնքի վերացումը:

Սկսած քսան տարիներից դէս, երբ հանրապետական կառավարութեան ձևը հաստատուել է Պրանսիայում, այս երկրի ներքին քաղաքական խնդիրներից ամենակարևորը եղել է այն, որ այդ կառավարչական ձևը ընդունելի բոլոր Ֆրանսիացիներից, և ոչ միայն հանրապետականներից, այլ և բոլոր Ֆրանսիական քաղաքացիներից: Իրողութիւնը այս է, որ հանրապետութիւնը հաստատեց Պրանսիայում զլիսաւորապէս այն պատճառով, որ հին թագաւորական տոհմերը որպէս և կայսերական նապոլէօնեան տոհմը իրանց դերը կատարեցին վերջացրին, և ազգի քաղաքական ամենավտահեղի անձերը, նոցա հետ և երկրի մեծամասնութիւնը դատեցին, որ 1789 թւականից դէս կատարած քաղաքական փոփոխութիւնները այլ ևս չեն թոյլ տալիս կապել Պրանսիայի բազմը նախկին արքայական և կայսերական տոհմերի հետ, որոնցից իւրաքանչիւրի տոհմական աւանդութիւնները այլ ևս անհաշտելի են ներկայիս պահանջների հետ: Բայց իրողութիւն է և այս, որ Ֆրանսիական ազգի մի մեծ մասը, թէև ոչ մեծամասնութիւնը, շարունակեց հաւատարիմ մնալ միապետական սկզբունքին, այնպէս որ Ֆրանսիական հանրապետութիւնը հէնց սկզբից ունեցաւ ներքին թշնամիներ՝ թագաւորականներ և կայսերականներ, որոնք կատաղի կերպով սկսեցին իրանց ընդդիմադրութիւնը հանրապետութեան դէմ: Աջակիտով ներկայ Ֆրանսիական հանրապետութիւնը ունեցաւ երկու ծանր խնդիրներ լուծելու, որոնցից մէկն էր՝ Պրանսիան

բարձրացնել բարոյապէս, մտաւորապէս, անտեսապէս և պատերազմական ոյժի կողմից — իւր նախկին զիրքը վերստին ձեռք բերելու համար, իսկ միւս կողմից՝ յաղթահարել իւր ներքին թշնամիներին, այսինքն նոցա, որոնք հանրապետութեան մասին լսել անգամ չէին կամենում: Բնական է, որ, ինչքան հանրապետութիւնը կարողանար յաջողացնել առաջին գործը, նոյնքան հեշտութեամբ կարող էր նա յաջողել այս երկրորդ գործում: Պէտք էր երկրին համոզել, որ հանրապետութեան կառավարութեան ներքոյ Պրանսիան կարող է իւր փառապանքներին հասնել. այդ համոզմունքը մի անգամ որ արմատանար երկրի մէջ, հանրապետութեան թշնամիները իրանց ոյժը կը կորցնէին: Հանրապետութիւնը սակայն ապացուցեց իւր կատարեալ կենսունակութիւնը Պրանսիայում, քանի որ այժմ այդ երկիրը ըստ ամենայնի գերազանց է քան մինչ 1870 թուականի Պրանսիան և քանի որ նա ոյժ ունեցաւ զիմանալ բոլոր ընդդիմադրութիւններին, անգամ դաւադրութիւններին, որպիսին փորձեց 1877-ին, մարշալ Մակ-Մահոնի նախագահութեան ժամանակ և նորա իսկ ձեռնառութեամբ և որպիսին էր այս վերջին տարիներում փորձաձգեցին մեծ դաւադրական գործը, որի պարագլուխ հանդիսացաւ զենեւրալ Բուլանժէն:

Հանրապետութեան յառաջդիմութիւնների հետ միասին զուգընթացաբար մեծ կորուստներ կրեցին ամեն կարգի միապետականները, մէկը միւսի յետևից կորցնելով իրանց պարագլուխներին: 1873-ին մեռաւ Նապոլէօն III նախկին կայսրը, թողնելով ժառանգ պրինց Լուի Նապոլէօնին, որը երիտասարդ հասակում սպանեց զուլուններից, Աֆրիկայում, 1879-ին: Տոհմի զլուխ անցաւ պրինց Ժերոմը, որը նոյն իսկ իւր կուսակցութեան մէջ չը գտաւ միաձայն հպատակութիւն, այնպէս որ կուսակցութեան մի մասի զլուխ սկսեց ճանաչել Ժերոմի որդի Վիկտորը: 1881-ին մեռաւ Փրանսիական արքայական հին Բուրբոնեան տոհմի զլուխը՝ կոմս Շամբոր, որից յետոյ բոլոր միապետականները ճանաչեցին արքայական կուսակցութեան զլուխ՝ Թրէանեան տան ներկայացուցիչ՝ Պարիզի կոմսին, որը այժմ միանգամայն խայտառակեց, երբ իմացեց որ նա զաղտնի կերպով միացել էր խայտառակ Բուլանժէի հետ:

Մի հանդամանք, որ մեծ ոյժ էր տալիս հանրապետութեան

Թշնամիներին, այդ՝ եկեղեցին էր, այսինքն կաթոլիկ հոգևորականութիւնը, որի մասին յայտնի է, թէ ինչ զորեղ կազմակերպութիւն և պրոպագանդայի ինչ զորեղ միջոցներ ունի բոլոր կաթոլիկ երկիրներում: Կորա վերայ աւելացրէք և այն, որ կաթոլիկ կղերի շարքերում հազազիւտ չեն մեծ տաղանդով և կամքի ոյժով հոգևորականներ, որոնք ընդունակ են ամենածայրայեղ գործերի: Կաթոլիկ եկեղեցու շահերը պատմականապէս կապւած համարելով միապետական կառավարութեան շահերի հետ, նոքա մինչ այժմ ամենայամու թշնամութիւն են ցոյց տւած Ֆրանսիայի հանրապետութեան, ոյժ տալով բոլոր հակահանրապետական կուսակցութիւններին:

Նորութիւնը այժմ՝ այն է, որ կաթոլիկ կղերի ընդդիմադրութիւնը Ֆրանսիական հանրապետութեան՝ սխում է կոտորել: Որ մենք այդ երևութիւն մեծ կարևորութիւն ենք տալիս Ֆրանսիական ներքին քաղաքականութեան համար, այդ արդէն երևում է այս բաւականին երկար յառաջաբանից, որ մենք կարևոր համարեցինք տալ մեր ընթերցողներին, նախքան դէպքի յիշատակելը: Իսկ կատարւած դէպքը՝ կարդինալ Լաւիժըրի՝ ի նոյեմբերի 10-ին խօսած ճառն է:

Կարդինալ Լաւիժըրի Ալժիրիայի և Կարթագէնի (Տունիսի) կաթոլիկ եկեղեցու թեմի առաջնորդն է, մանաւանդ յայտնի այն մեծ պրոպագանդայով, որ նա յաջողութեամբ կատարում է Աֆրիկայում սարկութիւնը վերացնելու համար, մի պրոպագանդա, որը, ինչպէս յայտնի է, հասցրեց Բրիտանի «հակա-սորկական կոնգրեսին», սոյն այս 1890 թւականին, ուր Աֆրիկայում կոլոնեաներ ունեցող բոլոր պետութիւնները վճռեցին միաբան ոյժերով ջնջել Աֆրիկայում գերեվաճառութիւնը: Եւ առհասարակ կարդինալ Լաւիժըրի այժմ, համարձակ կարելի է ասել, ամենաժողովրդական և ամենաքաղաքական անձնաւորութիւնն է համայն կաթոլիկ աշխարհում: Ահա այդ կարդինալն է, որ իւր մօտ նախաձաշի էր կանչել Միջերկրական ծովի Ֆրանսիական նաւատորմի զֆիցերներին, որպէս նաև տեղական գարնիզոնի բարձր օֆիցերներին և վարչութեան բարձր աստիճանաւորներին, որոնց նա հետևեալը խօսեց.

«Ես շատ ուրախ եմ այն բանի համար, պարոն ծովապետ, որ մեր նահանգապետի բացակայութեամբ, ես կարող եմ հաւաքել Ձեր

շուրջը գուռածներին, որոնք Ալթիրիայում ներկայացնում են Ֆրանսիայի իշխանաւորներին: Եւ ինչ որ ինձ ամենից շատ է ուրախացնում, այդ այն է, որ դուք ամենքդ այս ճաշկերոյթին ներկայացել էք հրաւերքով մի հին արքեպիսկոպոսի, որը, որպէս և Պուք, Ֆրանսիային աւելի լաւ ծառայելու համար, Աֆրիկան շինել է իւր երկրորդ հայրենիքը: Ծայ Ասատուած, որ նոյն օրինակը կրկնւի Ֆրանսիայում, և որ արտասահմանի զիմաց մեր մէջ տիրող միաձայնութիւնը շուտով իշխէ մայր-հայրենիքի որդոց մէջ: Համաձայնութիւնը այն անցեալի զիմաց, որ դեռ արեան մէջ է, ապագայի զիմաց, որ միշտ սպառնում է, մեր ամենամեծ պահանջն է, և այդ միաձայնութիւնն է, որ, թոյլ տւէք ինձ այդ արտասանելու՝ եկեղեցու և նորա հովիւների ցանկութիւնն է, երարխիայի բոլոր աստիճանների վերայ: Անկասկած է, որ այդ չի պահանջում մեղնից, որ մենք մուսանանք անցեալի փառքի չիշատակը, որպէս և հաւատարմութեան և երախտագիտութեան զգացմունքները, որոնք ամեն մէկին պատիւ են բերում: Բայց երբ որ մի ժողովրդի կամքը պարզ արտայայտուած է, երբ կառավարութեան մի ձև ոչինչ չունի իւր մէջ, ինչ որ, որպէս նորերս Լէօ XIII. յայտնեց, հակառակ լինէր այն սկզբունքներին, որոնք քրիստոնէական և քաղաքակրթական ազգերի հիմքն են կազմում, երբ որ հայրենիքը՝ սորան շրջապատող վտանգներից պաշտպանելու համար՝ պէտք կայ որ կառավարութեան այս ձևին յարենք առանց յետին մտքերի, — այն ժամանակ վերջապէս բոպէն եկած է յայտարարելու, որ կառավարութեան այդ ձևը իւր փորձի շրջանը անցէկացրել. այն ժամանակ մենք պէտք է նրան ամեն բան զոհենք, ինչ մեր խիղճը և պատիւը թոյլ են տալիս, յօգուտ հայրենիքի: Այդ սկզբունքներին ես հետևում եմ իմ թեմի մէջ և ցանկանում եմ, որ հոգևորականութիւնը նոցա ամբողջ Ֆրանսիայում տարածէ: Այդ հպատակութիւնը և հայրենասիրական անձնւիրութիւնը միակ միջոցն է՝ կարգ ու խաղաղութիւնը պահպանելու, աշխարհը ողորպրական վտանգից ազատելու համար, այդ, նոյն իսկ այն կրօնը ազատելու համար, որի ծառաներն ենք մենք:»

Այսպիսի խօսքեր մի կաթովիկ բարձր հոգևորականից զեռ ևս լւաւած չէին երբէք, քանի որ զոյցութիւն ունի Ֆրանսիական հանրապետութիւնը: Պապական լրագիրները խօսելու եղանակից երևաց,

որ Լաւիժըրին, իւր բռնած դիրքով, հետևել է պապի թելադրութիւններին: Բայց թէ որքան Լաւիժըրի՛ի բռնած դիրքը յեղաշրջում պիտի առաջացնէ կաթոլիկ կղերի մէջ Պրանսիայում առհասարակ, այդ մասին դեռ ևս շատ է կանուխ հաստատ խօսք ասելը. առայժմ Լաւիժըրի կարգինայի հետ միացել է Աննեսի՛ի եպիսկոպոսը, բայց նոքա, որոնք Պրանսիայի կղերականութեան իսկական առաջնորդներն են, որպէս են սրբազաններ՝ Ֆրեպպել և Րիշար, կարգինայներ Լանժենիցեօ, Թոմաս և ուրիշներ, նոքա դեռ քաշած դիրք են պահպանում: Անկասկած է, որ Լաւիժըրին աշխատելու է, որ դպրոցական և զինւորական օրէնքները, որքանով որ նոքա վերաբերում են եկեղեցուն և հոգեւորականութեան, փոփոխեն. բայց և այս անկասկած է, որ այդ նրան չը պիտի յաջողէ: Յամենայն դէպս Լաւիժըրի՛ի արտայայտութիւնները այն տեսակի են, որ մեծ կապ կարող են ունենալ Պապի արտաքին քաղաքական դիտաւորութիւնների հետ և երևի այդ դէպքը կարևոր դեր է խաղալու մօտ ապագայի քաղաքական անցքերի մէջ Պրանսիայում:

Մենք այժմ դիմում ենք Պարնելի դէպքին, որը ամուսնայ ասկենասնասացիճնական դէպքն է: Մենք մի այլ՝ աւելի յարմար առիթի ենք թողնում խօսել իրլանդական խնդրի մասին այն ընդարձակութեամբ, որին նա լրացնէ արժանի է: Այսքանը միայն պէտք է առայժմ իմանալ, որ Իրլանդիան Մեծն Բրիտանիայի մի մասն է, Իրլանդացիք անգլիացիներից դարեր առաջ նւաճւած ազգ են և սոցանից ճնշւած ու խեղճացրած, գլխաւորապէս նորանով, որ երկրի հողը դարերի ընթացքում խլեց տեղացիներից և բաժանեց անգլիական լորդերի և կոնսիստների մէջ, այնպէս որ իրլանդացիք իրանց հողը մշակում են միայն որպէս կապալառուներ, կապալադրամ վճարելով հողատէրերին: Բազմաթիւ ապստամբութիւնները նպատակի չը հասան, միայն թէ 1801 թւականից Իրլանդիան իրաւունք ստացաւ մասնակցել անգլիական պարլամենտի օրէնսդրական գործունէութեան, որոշ քանակութեամբ (22 հոգի) ներկայացուցիչներ ունենալով բարձր (լորդերի) ժողովում և 100 պատգամաւոր ընտրելով Ստորին ժողովի համար: Բայց և այնպէս յարաբերութիւնները Իր-

լանդացիներին և Անգլիացիներին մէջ շարունակեցին ֆիալ ոչ միայն լարած, այլ և թշնամական, որ և ներկայ դարումս արտայայտեցին բազմաթիւ դէպքերով, որոնց մանրամասնութիւնների մէջ մանեւր այստեղ յարմար չենք գտնում: Այդ պատճառով Իրլանդիայում շարունակեց գոյութիւն ունենալ Home-Ruler-ների (անկախութեան) կուսակցութիւնը, որի վերջնական նպատակն է անկախութիւնը Անգլիայից, իսկ մօտաւոր նպատակը՝ սեպհական իրլանդական պարլամենտը: Այդ կուսակցութեան պարագլուխ վերջերքումս հանդիսացաւ Պարնելը, որի ղեկավարութեամբ կուսակցութիւնը ձեռք բերեց ոյժ, զօրութիւն և յարգանք, ինչպէս դեռ երբէք նորանից առաջ: Մեծ յաջողութիւններից կարևորագոյնն էր այն, որ Պարնելիստների ծրագիրը իւրացրեց Անգլիայի ազատամիտ կուսակցութեան հռչակաւոր պարագլուխը՝ Գլադստոնը, որի պատճառով այդ մեծ կուսակցութիւնը բաժանւեց երկուսի՝ զլադստոնեանների և ունիօնիստների (վերջինիս պարագլուխն է լորդ Հարաինգտոն): Ունիօնիստները կամենում են, որ Իրլանդիան օրէնսդրական մարմիններով ֆիալ միացած Անգլիայի հետ և այժմ, իրլանդական խնդրում, նոքա հակառակ են ոչ միայն Պարնելին, այլ և իրանց նախկին ընդհանուր գլխաւոր Գլադստոնին, այդ խնդրում մէկ լինելով պահպանողականների հետ, որոնց շէֆն է այժմեայ մինիստր-նախագահ լորդ Սոլսբրին:

Գլադստոնի միութիւնը Պարնելիստների հետ համարւում էր ամենամեծ գրաւականը, որ իրլանդական անկախականների դատը մօտ ապագայում յաղթութիւն պիտի տանէր, որովհետև Գլադստոնի կուսակցութիւնը անկասկած է, որ մօտ ապագայում իշխող կուսակցութիւնը պէտք է դառնայ Անգլիայում:

Իսկ մի ցաւալի դէպք նորերումս առիթ եղաւ, որ Գլադստոնը բաժանւեց Պարնելից և երկպառակութեան մեծ առարկայ դառաւ իրլանդական կուսակցութեան մէջ:

Ահա և դէպքը: Նոյեմբերի նոր տոմարով 17-ին, երդւեալ դատաւորները վճիռ կայացրին կապիտան Օ'Նի'ի գործի համար, որը ապահարզան էր պահանջում իւր կնոջից, մեղադրելով սորան դադտնի շարքերութիւնների մէջ Պարնելի հետ, որը իւր ընկերն է անգլիական պարլամենտում: Երդւեալ դատաւորները վճիռ կայացրին յօգուտ կապիտան Օ'Նի'ի, որ ասել է թէ հաստատեցին մեղադրանքը Պարնելի դէմ:

Դէպքը այդ է, իսկ դորա հետեանքը եղաւ մեծ: Որ պահպանողական լրագիրները չափազանց ուրախացած են դէպքից—այդ շատ հասկանալի է. բայց ծանրութիւնը նորա մէջն է, որ բոլոր ազատակիտ թերթերն էլ վրդոցւեցին Պարնելի դէմ: Նոքա շեշտում են այս բանի վերայ, որ ընտանեկան սրբութիւններ պղծողը չը պէտք է պարլամենտական մի կուսակցութեան գլուխ ճանաչուի: Գլադստոնեան թերթերից մէկը (Daily Chronicle), օրինակ, ասում է. «Ոչ մի երկրում չի յարգում ընտանեկան կապերի սրբութիւնը այնպէս, ինչպէս Իրլանդիայում; մանաւանդ կաթոլիկ ազգաբնակչութեան մէջ: Երեկւայ մերկացումներից չետոյ, ի՛նչպէս կարելի է, որ կաթոլիկ Իրլանդիան պահպանէ Պարնելին որպէս իւր պարլամենտական առաջնորդին: Բայց ոչ միայն Իրլանդիայում, այլ և Անգլիայում իսկ պէտք է Պարնելը, զայլթակելով իւր ընկերի կնոջ, իրան շատ վնասած լինի: Անգլիայի միջին դասի ընտրողները շատ կը վիրաւորեն, եթէ Գլադստոնը ցանկանայ նրանց պարտաւորացնել, որ նոքտ մի կուսակցութիւն պաշտպանեն, որի պարագլուխը Պարնելն է»:

Պարնելի մեղաւորութիւնը բարոյապէս բարդում է և ծանրանում նաև նորանոյ, որ նա առաջ հերքում էր մի այդպիսի լուր, իբր թէ դա հնարած լինէր իւր հակառակորդ պահպանողականներից, և այն օրը, երբ կապիտան Մ'Եի իւր պրոցեսը դատարանում սկսեց, Պարնելը գոնւում էր որպէս պատուաւար հիւր՝ Գլադստոնի մօտ, սորա գիւղական կալւածքում:

Լարւած սպասում էր յայտարարութիւնների թէ Պարնելի և թէ Գլադստոնի կողմից: Կարծւում էր, թէ Պարնելը, զիջանելով բողոքողներին՝ ինքնակամ կերպով կը յեռանայ կուսակցութեան ղեկավար լինելուց: Բայց Պարնելը պրոցեսի վախճանի հետեւալ օրն արդէն ցոյցեր արաւ, որից եզրակացրին թէ նա ասպարիզից հեռանալու դիտաւորութիւն չունի:

Նւ իրօք, քանի մի օր չետոյ, պարլամենտական նստաշրջանի վերսկսելու օրը, իրլանդական պատգամաւորները ընդհանուր ժողով ունեցան, նախագահութեամբ իրանց մէջ աւագագոյնի: Պարնելի մուտքը ժողովի մէջ ընդունեց անվերջանալի կեցցէներով: Նա տեղ բռնեց նախահի կողքին: Երբ ժամանակաւոր նախագահը առաջարկեց որ Պարնելին ընտրեն նախագահ, վերջինս պատասխանեց թէ իւր

ընկերներին է թողնում վճռել, արդեօք ինքը պէտք է շարունակէ իւր ղեկավարութիւնը, թէ ոչ: Եթէ վճիռը իւր դէմ լինի կամ եթէ տարածանութիւն լինի այդ առիթով, նա ուրախութեամբ կը հեռանայ հասարակական ասպարիղից: Միմիայն այս համոզմունքը, թէ իւր ծառայութիւններին դեռ կարօտ է իրլանդական կուսակցութիւնը՝ տեղիք է տալիս մի պաշտօն իւր վերայ կրկին ընդունել, որը իրան, ուրեմն իւր կուսակցութիւնը յարձակումներին կ'ենթարկէ:

Իրլանդական պատգամաւորները հաւատարիմ մնացին իրանց ղեկավարին: Բայց խնդիրը բոլորովին այլ կերպարանք ստացաւ, երբ իմացեց, որ Քլադստոնի բարեկամ Ջօն Մորլէյ դեռ նիստեց առաջ ներկայացրած է եղել Պարնելին հետեւեալ նամակը, որ նա ստացել էր Քլադստոնից:

«N. 1, Կարլտոն Գարդենս, 24-ն նոյեմբ. 1890. Իմ սիրելի Մորլէյ!—Երբ ես արդէն որոշ վճռի հասայ վերաբերեալ Պարնելի ղեկավարութեան շարունակութեան՝ իրլանդական կուսակցութեան մէջ, իմ այտոնդ զալով ես որոնեցի պր. Մակ Քարթի'ին իմանալու համար թէ արդեօք պէտք է ես սպասեմ, որ պր. Պարնել ինքը այդ մասին մի բան հաղորդէ թէ ոչ: Պր. Մակ Քարթի'ին ինձ պատասխանեց, թէ նա այդ մասին որ և է տեղեկութիւն տալու դրութեան մէջը չէ: Ես նորա ուշադրութիւնը դարձրի այն բանի վերայ որ 1882 թւականին, Ֆենիկս-պարկում կատարեալ ոճրագործութիւնից յետոյ, որի նկատմամբ հետք անգամ չկար Պարնելի մեղսակցութեան, նա ինձ ինքնաբերաբար գրել էր, թէ նա իւր պաշտօնը որ և է պատրուակով կամենում է վազը դնել. մի առաջարկութիւն, որից հրաժարուելը ես իմ պարտքն համարեցի: Թէ ես յոյսս չեմ կտրում, թէ պ. Պարնելը ում և իցէ բան կը հաղորդի այդ մասին, բայց տեսնելով պատրաստութիւնները վաղը սկսող նստաշրջանի համար, անհրաժեշտ համարեցի, որ Մակ Քարթի'ին ծանօթացնեմ այն վճիռների հետ, որ ես կայացրել եմ բոլոր ինձ մատչելի գիտողութիւնների և կշռադատութիւնների հիման վերայ: Եւ այդ վճիռը սա է, որ չը նայած պ. Պարնելի՝ իւր երկրին մատուցած մեծ ծառայութիւններին, նորա մնալը ղեկավարութեան պաշտօնում, այս բոլորին, Իրլանդիայի դատի համար վերին աստիճանի վնասակար և ոչնչացնող հետեւանքներ պիտի ունենայ: Ես կարծում եմ, որ այդ

Հայեացքը պէտք է աւելի ընդհանրացնեմ, ասելով, որ նորա մնալը ղեկավարութեան մէջ ոչ միայն չարաչար դժւար դրութեան մէջ կը գցի իրլանդական դատի հաւատարիմ և փորձեաժ բարեկամներին շատերին, այլ և բոլորովին անառարկայ կը դարձնէ իմ ղեկավարութիւնը ազատամիտ կուսակցութեան, որը գլխաւորապէս հիմնուած է իրլանդական դատի պաշտպանութեան վերայ:

«Այս վերջին վճռի մասին ես խնդրեցի պ. Մակ Քարթիին, մտերմականութեամբ ընդունել և զորանից ոչ մի զործածութիւն չ'անել, եթէ միայն նա իմանայ, որ պ. Պարնել ինքնաբերաբար այդ մտքով մի քայլ կ'անէ: Բայց միւս կողմից ես խնդրեցի նորան, որ իրլանդական կուսակցութեանը այդ մասին հաղորդէ, երբ ինքը կը համոզուի, որ պ. Պարնելը ինքնակամ կերպով չի մտածում հեռանալ:

Եւ ահա ես գրում եմ այժմ Ձեզ այն զէպքի համար, եթէ պ. Մակ Քարթի առիթ չի ունենալ յարաբերութեան մէջ մտնել պ. Պարնելի հետ, որովհետև ես լսում եմ, որ Դուք թերևս այլ ճանապարհով կարող էք առիթ գտնել: Եթէ կարելիութիւն գտնէք, խնդրում եմ Ձեզ պ. Պարնելին վերոյիշեալ վճիռների մասին տեղեկացնէք: Ես կարծել եմ, որ այդ մասին ես պէտք է պարզ և ուղղակի խօսեմ, որքան էլ ես կը կամենայի՝ դրութեան անձնական բնաւորութիւնը անտես առնել:

«Թէ այն, ինչ որ հասարակաց պարտաւորութիւնը ինձ ստիպում է արտայայտելու՝ ինչ ձևով Դուք յարմար կը դատէք նորա տեղեկութեանը հասցնելու, այդ թողնում եմ Ձեր յարեկամութեան, Ձեր տաքտին և Ձեր դատողութեանը:

Ձեր անձնէր Վ. Է. Գլադստոն:

Կարող էք երևակայել, թէ ինչ գրգռոց կարող էր գցել մի այդպիսի յայտարարութիւն իրլանդական կուսակցութեան և անգլիական մամուլի մէջ: Իրլանդական կուսակցութեան մէջ երկպառակութիւն սկսեց Պարնելի նկատմամբ:

Պարնելը, այդ անցքից յետոյ, նոյեմբերի 29-ին դիմեց իրլանդական ժողովրդին մի մանիֆեստով, որը սկսում է այսպէս:

«Քանի որ իրլանդական պարլամենտական կուսակցութեան ամբողջութիւնը և անկախութիւնը թաղուել է և քանդուել անգլիական ազատամիտ կուսակցութեան հեռադրաթել քաշողներից, ես

Հարկ եմ տեսնում Ձեր խորհուրդին ղիմելու, Ձեր կարծիքն իմանալու համար մի գործում, որը միայն Գուք իրաւունք ունիք վրձուելու: Մորէյին գրած Գլաղստոնի նամակը, որի նպատակն է ազդել իրլանդական կուսակցութեան ղեկավարին ընտրելու գործի մէջ և որը ազատամիտ կուսակցութեանը վեւո՛ր իրաւունք է վերագրում, անմիջական պատճառն է այս իմ դիմումի, որը Ձեզ ուզում է յիշեցնել, որ Իրլանդիան իւր կուսակցութեան անկախութեան մէջն է ապահովութիւն տեսնում սահմանադրական շրջանակների մէջ: Այն նամակում արտայայտւած սպառնալիքը, որ, եթէ Իրլանդիան Անգլիայի այդ առանձնաշնորհումը չը տայ, Անգլիան Հոմ-րուլ-ը (իրանդական ինքնավարութիւն) անորոշ ժամանակով կը յետաձգէ, հարկադրում է ինձ Ձեզ մի քանի փաստեր հաղորդել, որ ես մինչ այժմ ինձ համար եմ պահել, որպէս զի զուք կարողանաք չափել այն կորուստը, որը ձեզ սպառնում է, եթէ զուք մասնէք ինձ սպառնացող անգլիական գայլերին, որոնք ինձ ջնջել են ուզում:

Պարնելը ապա տեղեկացնում է այն առաջարկութիւնների մասին, որ Գլաղստոնը Հոմ-րուլի (իրլանդական ինքնավարութեան) պլանների մասին արել էր նրան 1889 թ. նոյեմբերին, Հաւարդէնում: Գորա համաձայն պէտք է իրլանդական պատգամաւորները մնային անգլիական պարլամենտում: (Իրլանդական պատգամաւորները, որպէս յայտնի է, տեսնելով որ իրանց վերայ ուշադրութիւն չէին դարձնում, պարլամենտի նիստերին կամաւ դադարել էին յաճախելուց: Մանօթ. Խմբագ.): Քէ արդեօք իրլանդական հողի յետ գնելը Իրլանդիան պէտք է կատարէր, թէ Միացեալ թագաւորութիւնը, այդ մասին Գլաղստոնը կասկածներ չայտնեց: Իրլանդիայի բարձր ոստիկանական պաշտօնեաները, Անգլիայի հասարակաց կարծիքին բաւարարութիւն տալու համար, անորոշ ժամանակով դեռ ևս Աոնդոնից պէտք է նշանակէին: Մախքերը ի հարկէ, Իրլանդիան պէտք է քաշէր: Նաև մինչ 10—12 տարի ոստիկանական դատաւորները պէտք է նշանակէին անգլիական կառավարութիւնից: Գորա դէմ Պարնելը յայտնել էր իւր հայեացքները: Իրլանդական պարլամենտը պէտք է սեննար այն իրաւունքները, որ ունի ամեն մի նահանգի (տէրութեան) պարլամենտը Հիւսիս-Ամերիկայի միացեալ նահանգներում, և բոլոր վերոյիշեալ գործերը պէտք է իրլանդացիներից իրանցից հո-

գացեն: Հողային խնդրի մասին (առաժ է Պարնելի մանիֆեստում) ազատամիտների ղեկավարները ոչ մի պրոգրամ չունէին, այնպէս որ ներկայ նստաշրջանի սկսելուց առաջ, Պարնելը խօսակցութիւն է ունեցել Մորէյի հետ, մանաւանդ հողային խնդրի մասին: Պարնելը պնդում է եղել այն բանի վերայ, որ իրլանդական տեղական օրգանները պէտք է վերահսկողութիւն կատարեն հողը յետ զնելու համար նշանակւած փողերի վերայ: Մորէյ խոստացել էր այդ մասին առաջարկ անելու պարլամենտում: Եթէ վերջինս չընդունուց, այն ժամանակ պէտք է արմատականները յարձակողական ղիրք բռնեն կառավարութեան օրինագծի սկզբունքի դէմ: Միաժամանակ Մորէյ հարցրել է Պարնելին, որ եթէ ազատամիտները յաղթեն, կամենում է սա արդեօք իրլանդական աւագ-քարտուղար դառնալ կամ թէ մի ուրիշ իրլանդական պատգամաւոր պէտք է այդ տեղը ստանայ: Պարնելը յայտնել է իւր զարմանքը այդ առաջարկի վերայ, որովհետև իրլանդական կուսակցութեան անկախութիւնը դորանով զերծւած կը լինէր և իրլանդացիներին վտանգ կը սպառնայ, որ նոցա կուսակցութիւնը կու չը զնայ անգլիական ազատամիտ կուսակցութեան մէջ: Մորէյի յայտարարել է Պարնելին նաև, որ ազտամիտ կուսակցութիւնը, եթէ կառավարութեան ղեկը ձեռք բերէ, դուրս վունտւած կապալառուների համար ուղղակի ոչինչ չի կարող անել, որպէս ոչինչ չի կարող անել նաև իրլանդական պարլամենտը՝ համաձայն նրան տրուելիք իրաւունքների: Պարնելը յայտարարում է, որ այս բոլորը նա հաղորդում է նորա համար, որ ոչ ոք չ'երևակայէ, թէ դուրս վունտւած կապալառուները բան ունին կորցնելու, եթէ ազտամիտ կուսակցութիւնը յաղթելու չը լինի:

Մանիֆեստը վերջանում է այս խօսքերով. «16 տարի առաջ ես ծրագրեցի անգլիական որ և է կուսակցութիւնից անկախ կուսակցութեան հիմունքները: 10 տարի առաջ ես ղեկավար ընտրուեցի: 10 տարւայ ընթացքում կուսակցութիւնը անկախ մնաց, և այդ պատճառովնա կարողացաւ անգլիական ժողովրդին ցոյց տալ իրլանդական Հոմ-րուլի (ինքնավարութեան) անհրաժեշտութիւնը: Հոմ-րուլը կարող է ձեռք բերել միայն երբնա անկախ կը մնայ անգլիական որ և է կուսակցութիւնից: Ես չեմ կարծում, թէ Հոմ-րուլը և իրլանդական պարլամենտ հիմնելու գործը վտանգւեն, եթէ իրլանդական ժողովուրդը ինձ պաշտ-

պանէ: Բայց եթէ ազատամիտ կուսակցութիւնից սպառնացող վտանգը իրագործուելու լինի, այն ժամանակ ես կարծում եմ, որ իրլանդական ժողովուրդը ինձ հետ միասին աւելի լաւ կը համարի յետաձգել մեր ազգային իրաւունքների և նոցա իրագործող միջոցների ձեռքից բաց թողնելը»:

Պարնելի այդ մանիֆեստը անգլիական թերթերում զարհուրելի պախարակական գնահատութիւն գտաւ և Վլադստոնը իւր պատասխանը երկար սպասեցնել չը տւեց: Նա իսկոյն թերթերին մի գրու թիւն ուղարկեց, ուր նա միանգամայն հերքում է Պարնելի տւած տեղեկութիւնների ճշգրտութիւնը վերաբերեալ իւր և իրլանդական ղեկավարների մէջ եղած խօսակցութիւններին: Վլադստոնը պնդում է, որ Պարնելը իւր (Վլադստոնի) ծրագիրներից Հոմբուլին վերաբերեալ ոչ մէկի դէմ չի եղած և ոչ էլ ակնարկած է, թէ այդ ծրագիրները չեն բաւականացնիլ իրլանդական ցեղի ձգտումներին: Վլադստոնը մեղադրում է Պարնելին հաւատարմազանցութեան համար, քանի որ խօսակցութիւնը իրար մէջ մտերմական է եղած: Ի վերջոյ յայտնում է Վլադստոնը, որ նա միշտ կարծել է, որ Իրլանդիայի ազգային կուսակցութիւնը անգլիական ազատամիտ կուսակցութիւնից անկախ պիտի մնայ:

Այս անսպասելի դէպքերը նոր հանգամանք ստեղծեցին իրլանդական կուսակցութեան համար, որի անդամների թիւն է 79 հոգի պատգամաւորներ անգլիական պարլամենտի Ստորին ժողովում: Մեծամասնութիւնը շուտով վճուեց ընդդէմ Պարնելի, որը, առանց կուսակցութեան խորհուրդի, սորա գլխովն ի վեր զիմել էր ուղղակի իրլանդական ժողովրդին: Իրլանդական ազգային կուսակցութեան Լոնդոնի օրդան «Ստար» թերթը բացարձակօրէն յայտնեց իրան ընդդէմ Պարնելի: Այդ թերթի ասելով, կուսակցութեան գլխաւոր անդամներից հակառակ են Պարնելին՝ Դիլլոն, Օ'Բրիեն, Հիլէյ, Սեքստոն, Տ. Պ. Օ'Կոննոր, Մակ Քարթի և Կլենսի: Մի քանիսը դեռ չեն արտայայտուել և, կարևորներից, Զոն Սեզմոնդ ու Դ-ր Կեննի միակն են, որ Պարնելի կողմն են բռնած: Ընդհանրապէս կուսակցութիւնից առայժմ 43-ը Պարնելի դէմ են, 23-ը Պարնելի կողմը և 13 չեզօք զիրք են բռնած: Հակա-պարնելիաները արդէն կազմակերպուել են և իրանց գլուխ ընտրել են Մակ Քարթիին:

Սորանով և կը վերջացնենք Պարնելի դէպքի մասին, որը դեռ հեռու է վերջացած լինելուց, և դեռ անկասկած առիթներ ենք ունենալու գալ տարի խնդրին վերադառնալու:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Խնդրեմ հետևեալ իմ կարճ գրութեան տեղ շնորհէք «Մուրճ» ամսագրում:

Որովհետև բանաստեղծութիւնները կազմում են «Մուրճ» ամսագրի խնամքով տանուղ բաժիններից մէկը, որի զարգացման վերայ, որպէս երևում է, խմբագրութիւնը առանձին ուշադրութիւն է դարձնում, ուստի թող թույլ տրւի ինձ մի քանի խօսք ասելու:

Մեր ժամանակակից բանաստեղծութիւնը դեռ մանուկ և անհաստատ գրութեան մէջ է, նա ալժմ է սկսում կազմակերպւել և նոր նոր միայն վարձեր է անում մտնելու մեր ժողովրդի խորշերը և շօշափել մեր հասարակական գործողի զգացմունքների և վրդովմունքների աշխարհը: Ոտանաւոր գրողների, ջանգեր չօրինողների թիւը մեծ է. բայց և մեծ ջանք է հարկաւոր այդ մեծ կուտից մարդարիտներ դուրս խլելու, նոցա զտելու և նոցա ամբարելու մեր ապագայ բանաստեղծութեան զարգացման և կազմակերպութեան համար: Կա ի հարկէ շատ զժւար գործ է, բայց ինչպէս երևում է «Մուրճ»-ի խմբագրութիւնը ուրախութեամբ և չօժարութեամբ է տանում այդ, որովհետև ինչպէս երկու տարւալ փորձը ցոյց է տալիս, նա վարձատրում է:

Եւ մեր համոզմունքը, որպէս և ընթերցողներից շատերի վկայութիւնները միանգամայն մխիթարիչ կարող են լինել «Մուրճ»-ի խմբագրութեան համար: Մի քանի բանաստեղծներ, որոնք ամիսներ շարունակ զետեղել են իրանց ոտանաւորները այդ ամսագրում, գրաւել են իրանց համար հաստատ խորշեր ընթերցողների սրտերում, ծնեցրել են նոցա մէջ մաքուր, աղնիւ և վեհ զգացմունքներ: Քաջակերութիւնը և անկեղծ համակրութիւնը չէ թողնում կորչելու, սառչելու և ոչնչանալու այդ մեր երիտասարդների առաջին փորձերը: Առողջ քննադատութեան ազդեցութեան տակ այդ նորակազմ բանաստեղծութիւնը կ'ամրանայ և լաւագոյն ապագայի համար հող կը պատրաստի:

Բայց ինչ ենք տեսնում մեր շուրջը: Առողջ քննադատութիւն, անկեղծ համակրութիւն, աղնիւ վերաբերմունք:

Գժրազղաբար ոչ:

Ամբողջ երկու տարի է, որ «Մուրճ»-ում երկացող նոր բանաստեղծութեան փորձերը զանազան թիւր նկատողութիւնների, կասկածաւոր ակնարկների են ենթարկուում, ակնարկների, որոնց մէջ լիզուր ենք որոնում մեզ հետաքրքրող խնդրի մասին գործին վերաբերեալ մի խելացի խօսք, մի իմաստալից խորհուրդ, մի նպատակադրմար նկատողութիւն:

Մէկը աչգպիսի քննադատներից (ոմն խ. Ազ—էր) աչժմ, օգտուելով երևան գալուց մի աչնպիսի խալտառակ և անճոռնի ոտ կապողի, որ հեռու չարաբերութիւն անգամ չունի մեր երիտասարդ բանաստեղծների գործունէութեան հետ՝ աններելի կերպով սուեր է աշխատում տարածել նոցա վերաջ և աժան կերպով սրախօսելով ու ոստումներ անելով՝ չպտարարում է «Մուրճ»-ին, իբրև միզսակից աչն անհամութիւնների, որոնցով լիքն են շատ ոտահիւսների գրածքները և որոնց ամենակատաղի և ամենաէական թշնամին աչն ամսագիրն է, որ նոցա բարեքելուն նւիրած է և որ խկապէս որոնում է բանաստեղծութիւն և որ չուսով եմ ուչք չի դարձնիլ աչն տեսակ ծամածուութիւնների վերաջ, երբ, չանուն Պատկանեանի, Նալբանդեանի, Գուրեանի, Պեշլքթաշեանի, փորձ են փորձում ընդհանուր պարսաւանքով խեղդել և ստուէրի մէջ պահել մեր նոր բանաստեղծութեան համակրելի ներկայացուցիչներին: Անկեղծ վկայում եմ, մեծ. պ. Խմբագիր, որ սա մի աչագին մեծամասնութեան կարծիքն է, որ աչն բանաստեղծ-աշխատակիցները, որոնք տեղ են գտել Ձեր ամսագրում, իրանց վերաջ գրաւում են ընթերցող հասարակութեան ուշադրութիւնը և որ առնազը հասարակութեան աչգ մասը լրջութեամբ է հետևում «Մուրճ»-ի աչգ բաժնին: Յուս ունեմ, որ քաջալերական վկայութիւնների կարօտ չէք զում Գուք՝ Ձեր բունած ճանապարհով անսպթաք կերպով ընթանալու համար:

Ընդունեցէք իմ խորին չարգանքները Ձեր ամսագրի ուշագիր ընթերցողներից մէկից:

ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ:—Մեր ընթերցողներին մենք արդէն մի քանի անգամ առիթ ենք ունեցել խօսել «Մուրճ»-ի բանաստեղծութիւնների բաժնի մասին: Մենք արդէն չպտնել ենք, որ «Մուրճ»-ի աչգ բաժինը իրաւամբ գրաւել է ընթերցող հասարակութեան ուշադրութիւնը: Աչգ երևութը կարելի է բացատրել միմիաչն նորանով, որ, ինչպէս մենք ենք կարծում, «Մուրճ»-ում հիւրընկալող բանաստեղծ-աշխատակիցները պատկանում են աչնպիսի ուղղութեան, որով միաչն մեր բանաստեղծական գրականութեանը կարելի է զարկ տալ և չարգի հասցնել գրականութեան մի կարեւոր ճիւղ, որը գրեթէ զաղարել էր սնունդ առնել 60-ական թւականներից զէս: Աչս վերջին քսան տարիներում (մի կողմ թողած Գա-

մառ-Քաթիլապին) լույս էին տեսնում ոտանաւոր զրւածքներ, բայց փառք Աստուծոյ՝ գրքերը չեն կաղմում մի գրականութիւն. քանի որ բաւական չէ ոտանաւորներ գրել որ բանաստեղծական գրականութիւն ստեղծւի: Թէ չէ այս վերջին 20—25 տարիներում բաղմաթիւ ոտանաւոր զրւածքներ են լույս տեսել, բայց դժբա ընթերցող հասարակութիւն չը ստեղծեցին: Ի բաց առած Գամառ-Քաթիլապին, մինչ այս վերջին ժամանակներում չարտնւած երիտասարդ բանաստեղծական ոչութիւն, սկսած 60-ական թւականների վերջերքից, ոչ մի բանաստեղծ չը կպցրեց իւր անունը հաւոց գրականութեան հետ: Եւ նոյն իսկ ինքը Գամառ-Քաթիլապին իւր անունը սերտ կապած է 60-ական թւականներին: Ուրեմն նոր բանաստեղծական տաղանդների կողմից կարելի է համարձակ ասել, որ վերջին տարիները կատարեալ դատարկութիւն են ներկայացնում: Այդ տարիներում աստարէզը մնացել էր միմիայն մեր աշուղներին կամ աշուղանման ոտանաւորներ գրողներին, որոնք ոչնչով չէին կապւած հայկական գրականութեան նոր հասանքների հետ: Նոյն իսկ Բաֆֆին, իւր Փունջի առաջին հատորով չը կարողացաւ վերակենդանութիւն տալ 60-ական թւականներում ընդհատւած հաւոց բանաստեղծութեան զարգացմանը: Բաֆֆիի Փունջը մատնեց գրեթէ կատարեալ մոռացութեան: Բաֆֆին այլ գործ էր կատարում՝ նա պատրաստում էր հասարակութիւն վէպի համար և այդ նրան լաջողեց: Հիւսիսափայլի ժամանակ Բաֆֆիին ժամանակակից Գէորգ Բարխուդարեանը, լետազաչ տարիներում, 70-ական թւականներում, Քորձ ամսագրում տպւած իւր թարգմանական աշխատութիւններով՝ նշանւոր դանձ մտցնելով մեր բանաստեղծական գրականութեան մէջ, աջնուամենայնիւ զարկ չուեց հայկական բանաստեղծութեան: Գամառ-Քաթիլապի և Շահաղիզի անունների հետ կապւած հայկական նորագուն բանաստեղծական գրականութիւնը աղտոյիտով էլ մնաց առանց շարունակութեան: Այդ վաղուցւայ լուութիւնը համարձակ կարող ենք ասել, որ ընդհատեց մի առաջին անգամ պ. Յովհաննէս Յովհաննէսեանի գրքովով, 1888 թւականին, «Մորձ»-ի երևալուց փոքր ինչ առաջ: Պր. Յովհաննիսեանի գրքովի երևալը ընդհանրապէս սղեորութեամբ ողջունեց, որ շատ ընկած էր. դէն վերջապէս մէկը կարողութիւն ունեցաւ, հայկական քնարի արդէն շատ երկար տարիների լուութիւնից լետոյ՝ բանաստեղծական ձայներ լսեցնել հալ ընթերցողների ականջին: Շողոքորթութեան ձայներ չէին դուրս, այլ երկար տարիներով քաշած կարօտի ձայներ

Այդպիսի ձայներ չը լսեցին, երբ Բաֆֆին իւր Փունջի առաջին հատորը հրատարակեց, չը նաչած որ Բաֆֆիի անունը դեռ այն ժամանակ հմայական էր, մինչդեռ Յովհաննէս Յովհաննիսեանը դեռ ևս ոչ ոքին չպատնի չէր: «Մուրճ»-ի աշխատակից չէր նա, բայց «Մուրճ»-ը այդ նոր բանաստեղծին երկարօրէն քննադատելու պատիւը տւեց, որից դեռ չը պէտք է եզրակացնել, թէ «Մուրճ»-ը ուրացաւ Յովհաննիսեանի քանքարը, որպէս և նորա քանքարը ընդունելով՝ չը պէտք է կարծել թէ «Մուրճ»-ը երաշխաւորեց նորա ասլագան:

Գրեթէ միաժամանակ Յ. Յովհաննիսեանի գրքոյկի երեւուոն հետ, 1889-ի սկզբից, «Մուրճ»-ի երեւալով, երեան եկան մի շարք ոտանաւոր գրողներ, որոնց մէջ կալին այնպիսիներ, որոնք «Մուրճ»-ից առաջ մի մի աննշան փորձեր արել էին մեր ուրիշ հրատարակութիւններից մէկի կամ միւսի մէջ, իսկ միւսները նոր սկսեցին երեւալ ասպարիզի վերայ, բայց թէ առաջինները և թէ վերջիներս որ և է հրատարակութեան հետ կապած չէին իրանց անունը: Աթէ մենք թւելու լինենք այն բոլոր անձերի անունները, որոնք մեզ առաջարկել են իրանց ոտանաւորները տպագրելու, գուցէ «Մուրճ»-ի մի երեսը չը բաւէր. և ամենքին համահաւասար կերպով իրախոսելը մեր կոչումը չէինք համարում: Հարկաւոր էր, անհրաժեշտ էր ընտրութիւն անել: Այդ ընտրութիւնից գուցայել է այն, ինչ ալժամ կազ «Մուրճ»-ի երկու տարւալ տետրների մէջ: Այդ զաման գործի մէջ մենք, ընդհանուր առմամբ, որքան ենք չաջողել, ասլագան այդ մասին աւելի զրական պատասխան կը տալ. բայց արդէն մի բան շուտով պարզեց, որ մենք վկայել ենք և այսօր էլ կը վկայենք՝ հիմնւելով բաղմամբիւ ուրիշ վկայութիւնների վերայ, այդ այն է, որ ընթերցող հասարակութիւնը և մանաւանդ նորա ամենաքննադատական մասը անտարբեր չէ դէպի «Մուրճ»-ի այդ բաժինը. այդ բաժնի մէջ լուրջ հասարակութիւնը ընթերցանութեան մի առարկալ է գտել, որ նա զուր էր որոնում առաջ: Մենք որ անուններով առհասարակ չենք շլացիլ մեր ամսագրի միւս բաժինների նկատմամբ, չենք ընկել անունների լետեից նախ քան աստեղծութեան բաժնի նկատմամբ: «Մուրճ»-ը այլապէս վարել չէր կարող, նա՝ որ ի սկզբանէ չի ուզեցել հիմնել իւր գոյութիւնը պրոտեկցիալի վերայ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

ՊՐ. ՄԻՆԱՍ ԶԵՐԱԶ, Լոնդոնում հրատարակող անգլո-ֆրանսիական „l'Armenie“ կիսամյակայ թերթի տաղանդաւոր և եռանդոտ խմբագիր-հրատարակիչը, մի մասնաւոր նամակով, մեզ ուղղած, հաղորդում է, որ սեպտեմբեր ամսից ի վեր նա սկսել է հրատարակել հայկական ամսագիրների պարունակութիւնը անգլիական Review of Reviews (Տեսութիւն ամսագիրների) հանդէսի մէջ: ՎՐԻՊԱԿՆԵՐ «Մուրճ»-ի անցեալ № 11-ում: Առաջնորդողում, երես 1496 տող 13—14 պէտք է լինէր՝ պայմաններ կը ստեղծի տպագրում աւելի մեծ խնդիրներին հասունացած ինտելլիգենցիայի համար:

Թղթակցութիւններ արտասահմանից բաժնի մէջ, երես 1610, տպւած է Ֆրարսիայի պետական բիւջէտի վերաբերեալ, թէ

«1869 թւականին պետական ծախքն էր 1.847.000 Ֆր.»

1891 թւականին պետ. ծախք կը լինի 3.247.000 Ֆր.»

մինչդեռ այդ թւերից երեք դէրօներ պակաս են, այնպէս որ պէտք է լինէր՝ 1.847.000.000 (մի միլիարդ 847 միլիօն) և 3.247.000.000 (3 միլիարդ 247 միլիօն):

Թիֆլիսի մեծ տնտեսքերի ցուցակում, երես 1597 № 60-ը պէտք է լինէր Փիթոյեան կոնստանտին և ոչ Փիթոյեան Իսահակ:

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒՂԻՍԻ ՍՐ. ՇՄԱԻՈՆ ԵԿԵՂԵՑՈՒ համար հրաւիրում է քահանայ, առնւաղը Ներսիսիան զպրօցում աւարտածներից: Գիմել «Մուրճ»-ի խմբագրութեան:

ԿՈՒԻ ԳԻԻՏԻՆ վերաբերեալ չօղւածների շատութեան և նոցա տպագրութեան անլուսաձգելիութեան պատճառով, ներկայ № 12 ից ակամայ բաց թողնը այդ №-ի համար նշանակւած մի քանի գրւածքներ:

ՀԵՂԻՆԷ վէպի երկրորդ մասը կ'սկսի տպագրւել 1891 թ. № 1-ից: Կըրկնում ենք, որ նոր բաժանորդները ձրի կը ստանան Հեղինէի առաջին մասը, որ տպագրւած էր «Մուրճ»-ում՝ 1890 թւականի ընթացքում:

«ՄՈՒՐՃ» ԱՄՍԱԳՐԻ ՁՐԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐԱԵԼՈՒ ԽՆԴԻՐՔՆԵՐ ՍՈՂՆԵՐԻՆ,
որպէս անցեալ տարի, նոյնպէս և այժմ չպատարարում ենք
հետեւեալը. ձրի բաժանորդագրութիւն ամենեւին չի ընդունուում
«Մուրճ»-ի խմբագրութեան մէջ, մինչև որ բաժանորդագրու-
թիւնը չ'անցնի 650 թիւը: Ձրի բաժանորդ գրուելու խնդիրք-
ները կը պարզեն այն չափով միայն, որչափով խմբագրութիւնը
աւելորդ բաժանորդացներ ստացած կը լինի կողմնակի անձերից:

ՆԱՄԱԿՆԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑՄԱՅԻՆ ԳՐՆԱԳՐՈՂ «Մուրճ»-ում տպուող չարք
չօղւածները («Մուրճ», 1890 №№ 11 և 12), ծանօթաց-
նելով «Մուրճ»-ի ընթերցողներին ռուսաց պետական և
հասարակական կեանքի, դորա հետ մասին նաև պար-
բերական մամուլի վերջին 25—30 տարիների ամենազը-
խաւոր խնդիրների հետ, գալ 1891 թւականին կը փոխար-
կեն Ռուսաց քրոնիկի: Վերջինիս նշանակութիւնը կը
լինի «Մուրճ»-ի ընթերցողներին լընթացիկս պահել այն ամենի
հետ, ինչ կարևոր բան է կատարուում ռուսաց թէ պետական
ու հասարակական կեանքում և թէ զրականութեան ու պար-
բերական մամուլի մէջ:

ՆՈՐ ԳՐՔԵՐ: Վերջին ժամին ստացանք՝

ТИГРАНОВЪ, ЯКОВЪ.— „Къ вопросу объ административной юстиціи
въ Россіи“ (по поводу пересмотра Городоваго Положенія).
Приложение къ Протоколу № 17 засѣданія Кавказскаго Юри-
дическаго Общества.

СТУШИНЪ, А. Д. „Современный календарь на 1891-й годъ“. զինն է
15 կողէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

„ՄՈՒՐՃ“ ԱՄՍԱԳՐԻ

Երկրորդ տարւոյ:

(ԹԻԱԿԱՆ 1890 ԹԻԱԿԱՆ)

№ 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12 №

№ 1

| | |
|--|---|
| 1 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ ԱԻՆՏԻՔ . . . | 5 Գործերի զրութիւնը: |
| 2 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ ԼԵՒՈՆ . . . | 11 Կալ անգլին մի բան (բասաստ.): |
| 3 » » » . . . | 13 Ներքի ինձ... (բանաստեղծութ.): |
| 4 ԱՐՇԻՒԵԱՆ | 14 Գարուս զաւակը (բանաստեղծ.): |
| 5 » » » | 15 Հատարակաց մշակին (բանաստ.): |
| 6 ՆԱՄԱԼԵԱՆ ԱԼԷՔՍԱՆԴՐ . . . | 17 Պատրիկեանի նամակները: |
| 7 ԲԱԼՈՒՂԵԱՆՑ ԶԱԻԱԳ | 36 Լեռնցու հալ աղջկալ երգը (բան.): |
| 8 ԱԲԵՂԵԱՆ, Մ. | 38 Աղգակին վէպ (չարունակութիւն): |
| 9 ՊՈՕՇԵԱՆՑ ՊԵՐՃ | 50 Բղղէ (չարունակութիւն): |
| 10 ՍԱՐԳՍԵԱՆՑ ԼԵՒՈՆ | 84 Այց թիւրքաց Հալաստանին (չար.): |
| 11 Լ. Ս., Ա. Ա. | 102 Գրախօսութիւն: Մովսէս Խորենա- յու Հակիական Պատմութիւն. — Ե. Մ.' Փաւստոս Բուղանդ:—Նա- զարեանց՝ Օրացոյց 1890 թ.:— Աղանեանց՝ Հատուած. օրացոյց. — Զմչկեան Մ.' Ծոցի օրացոյց: — Աղանեանց՝ Օրացոյց: — Армянский календарь. |
| 12 ԼԷՅՕ | 113 Մեր կեանքից: |

| | |
|------------------------------|-----------------------------------|
| 13 ՂԱԶԱՐԵԱՆ ԵՐՈՒԱՆԴ. | 122 Բանւորների գրութիւնը Կարսում: |
| 14 | 131 Թղթակցութիւն. Արատասանմանից: |
| 15 Z. | 139 Քաղ. Տես.—Եւրոպան 1890 շէմք.: |
| 16 ԽՄԲ. | 154 Խմբագրութեան կողմից: |
| 17 | 155 Բողոք Սիւլիւկի դէմ: |

№ 2

| | |
|---------------------------------|---|
| 1 ՆԱՄԱԼԵԱՆ ԱԼԷՔՍԱՆԴՐ | 165 Պատրիկեանի նամակ. Օր. Նուարդ |
| 2 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ ԼԵՒՈՆ. | 174 Դիմակաւորին (բանաստեղծութ.): |
| 3 " " " | 175 Մանրուք (բանաստեղծութիւն): |
| 4 ԱՐԾԻԻԵԱՆ. | 176 Տխուրւորք (բանաստեղծութիւն): |
| 5 ՊՈՕՇԵԱՆՅ ՊԵՐՃ | 177 Բղղէ (չարունակութիւն): |
| 6 ՄԻԻԹԱՐԵԱՆՅ ԱՐՇԱԼՈՅՍ | 211 Ուսուցիչ (բանաստեղծութիւն): |
| 7 ԱԲԵՂԵԱՆ Մ. | 220 Ազգային լէպ (վերջ): |
| 8 ՀԱՅՆԷ-ԻԿ՝ ԱՐԾԻԻԵԱՆ | 237 Երգեր (բանաստեղծութիւն): |
| 9 ՍԱՐԳՍԵԱՆՅ ԼԵՒՈՆ. | 240 Այց թիւրքաց Հայաստանին (վերջ): |
| 10 ԱՐԱՍԽԱՆԵԱՆՅ ԱԻԵՏԻՔ. | 258 Թիֆլիսի սալօն: |
| 11 Ա. Ա., Ե. Ղ. | 276 Գրախօսութիւն: —Գրականութիւն Ֆիրդուսի: Արևելեան լիպաշխարհ, Ռուստէմ և Ջոհրաբ, թարգմ. Փ. Վարդանեանի:—Ազգայեան՝ Մուսիկի շանդատը: |
| 12 ԼՈՒՍԻՆԻ. | 285 Ամուսւղ Գրօնիկ.—(Ամուսիններ): |
| 13 ԼԼՕ | 295 Գաւառ. Գրօնիկ.—Մեր կեանքից: |
| 14 ԶԼԻՑԵԱՆ ԱԻԵՏԻՍ. | 306 Մարդաս. Ընկ. Ընդհան. ժողովր: |
| 15 Z. | 314 Վիլհելմ II-ի նոր հրովարտակաները: |

№ 3

| | |
|----------------------------------|-----------------------------------|
| 1 ԱՐԱՍԽԱՆԵԱՆՅ ԱԻԵՏԻՔ. | 323 Խրիմեանի 70-ամեակը: |
| 2 ՆԱՄԱԼԵԱՆ ԱԼԷՔՍԱՆԴՐ | 324 Պատրիկ. Նամ.—Արանեանի մօտ: |
| 3 ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՅ, Ս. | 337 Հայ գիւղացու սև օրը: |
| 4 ԱՐԾԻԻԵԱՆ. | 359 Սօնետ (բանաստեղծութիւն): |
| 5 ՉՄՇԿԵԱՆ ԳԷՈՐԳ. | 360 Թէ ինչպէս ես խելագարուեցի: |
| 6 ՄԻԻԹԱՐԵԱՆՅ ԱՐՇԱԼՈՅՍ | 377 Նւէր Մ. Արաբաջեանցին (բան.) |
| 7 " " " | 379 Ողջոյն հայրենիքին (բանաստեղ.) |
| 8 ՊՈՕՇԵԱՆՅ ՊԵՐՃ | 381 Բղղէ (չարունակութիւն): |
| 9 ՂԱԶԱՐԵԱՆՅ ԵՐՈՒԱՆԴ | 413 Մանկ. Ընթերց. Ղ. Ազգեանց: |

№ 5

| | | |
|----------------------------------|-----|---|
| 1 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ ԱԻԵՏԻՔ. | 635 | Թիւ և Ոչժ: |
| 2 ԱՐԾԻԻԵԱՆ. | 648 | Անքան դառն ցաւ ու վշտեր (բան.): |
| 3 ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ, Ս. | 649 | Հայ գիւղացու սև օրը (վերջ): |
| 4 ՄԻԹԱՐԵԱՆՑ ԱՐՇԱԼՈՅՍ. | 699 | Խղճի խալթ (բանաստ.): |
| 5 ՍԱՂԱԹԷԼԵԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ | 704 | Համայն. հող. Երևան. նահանգում: |
| 6 ԱՐԾԻԻԵԱՆ. | 718 | 10 Ապրիլի (բանաստ.): |
| 7 " | 719 | Ծաղիկներ և իղձեր (բանաստ.): |
| 8 ՎԱՐԳԱՆԵԱՆՑ ԳՐԻԳՈՐ | 720 | Աղքատները խնամատարութիւնը: |
| 9 ՏԷՐ-ՄԻՔԷԼԵԱՆ ԱՐՇԱԿ. | 735 | Գեր. դպր. զրութիւնը (չար.): |
| 10 Ա. Ա., ՎԱՆԿ. | 746 | Գրախօսութիւն: Երիցյան՝ Նիւթեր. Հալոց պատմութ. համար, գիրք Ա.—Մալումեան՝ մաքի մըշակը:—Տէր.Ղևոնդեանց՝ Օրիորդ Նաղիկ: |
| 11 ԼՈՒՍԻՆԻ. | 752 | Ամուսնի փրօնիկ:—Գ. Արծր. գործուն. 25 ամեակը. ժողովրդական ընթերցանութեան գործը: |
| 12 Ն*. | 757 | Բանւորները Անգլիայում: |
| 13 Յ. ԲԱՐԻՈՒԳԱՐԵԱՆՑ. | 761 | Մանկավարժ. բուժակ. վարժարան |
| 14 ԱՍՔԱՆԱԶԵԱՆՑ, Վ. | 762 | Կարինից. դպրոց. գործեր: |
| 15 Շ. | 767 | Քաղաք. Տես.—Բիսմարկ.—Գերմ. պիւնտր. օրինագիծ.—Ֆրանսիայի ներքին գործերը: |
| 16 ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆՑ ՏԻԳՐԱՆ. | 772 | Նամակ խմբագրին: |
| 17 ԽՄԲ. | 775 | Խմբագրութեան կողմից: |

№ 6

| | | |
|-----------------------------------|-----|-----------------------------|
| 1 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ ԱԻԵՏԻՔ. | 783 | Պանդխտութեան խնդիրը: II: |
| 2 ԼՕՆԳՅԷԼԼՕ-ից՝ ԱՐԾԻԻԵԱՆ. | 796 | Աղբիւր և ալիք (բանաստեղծ.): |
| 3 ՄԱՐԻՍԵԱՆ, Մ. | 797 | Հեղինէ (վէպ): |
| 4 ՊՈՒՇԿԻՆ-ից՝ Կ. ԿՐԱՍԻԼՆԻԿ. | 825 | Թէ թափառում կամ (բանաստ.): |
| 5 ԿՐԱՍԻԼՆԻԿԵԱՆ, Կ. | 827 | Նաղսօնին (բանաստեղծ.): |
| 6 " | 828 | Ննջել (բանաստեղծութիւն): |
| 7 ՊՈՅՇԵԱՆՑ ՊԵՐՃ | 829 | Բղղէ (չարունակութիւն): |
| 8 ՄԻԹԱՐԵԱՆՑ ԱՐՇԱԼՈՅՍ | 858 | Հնձւոր (բանաստեղծութիւն): |
| 09 " " | 860 | Անապատ (բանաստեղծութիւն): |
| Ա. Ա. | 861 | Լօրենց ֆօն Շտալն: |

11 ՏԷՐ-ՄԻՔԵԼԵԱՆ ԱՐՇԱԿ. 873 Գերմ. դպր. դրութիւնը (չար.):

12 Ա. ՔԼ., Լ. Ս., Ա. ՔԼ. 888 Գրախօսութիւն:—Նար-Գոտ' Աննա Սարոյեանց:—Սարկաւագ: Հաջի Դիմիտր: Ս. Կարաջա: Ազրապիլ: Շամիլի դատաստանը:—Դողէ' Բերլինի պաշարումը: Зелинский.-Объяснительный Словарь.

13 ԼՈՒՍԻՆԻ. 890 Ամուսաց Քրօնիկ:—Ռօսսին Թիֆլիսում: Ուսուցչական ուճիկներ:

14 ՏԱՐԱՏԻՆՈՎ, Վ. 903 Բամբակի մշակ. Երև. Նահ.

15 ՄԱԴԱԹԵԱՆ ԵՂԻՇԷ. 910 Գրական. աչքակապութիւն:

16 ԽՄԲ. 915 Խմբագրութեան կողմից:

№ 7

1 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ ԱԻԵՏԻՔ. 783 Հողալին խնդ. Անդրկովկասում Ս:

2 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ ԼԵՒՈՆ 945 Ծրածան (բանաստեղծութիւն):

3 " " 946 Չնծաղիկ (բանաստեղծ.):

4 " " 947 Մանրուք (բանաստեղծութիւն):

5 ՄԻԻԹԱՐԵԱՆՅ ԱՐՇԱԼՈՅՍ 948 Ողջուն քեզ, սենեակ (բանաստ.):

6 ՄԱՐԻՍԵԱՆ, Մ. 949 Հեղինէ (չարունակութիւն):

7 ՍԱՂԱԹԵԼԵԱՆ ՅՈՎՀ. 1001 Համալն. հոդ. Երևան. Նահ. (չար.):

8 Ա. ՔԼ., Ն. Ն. 1012 Գրախօսութիւն: Մելիք-Շահնազարեանց, Ս. Հաչ գիւղաց. սև օրը:—Սականիճի, Գուստաւ' Չինակական եղինճի մշակութիւնը:—Ռէլիս' Աչքացաւը զինւորների մէջ:—Տիկին Մարգարիտ' Գուստոսեմբերգ:

9 ԼՈՒՍԻՆԻ. 1017 Ամուսաց Քրոնիկ: Ուսուցչական ուճիկներ: Հալոց եկեղեց. ծխական ուսումնարանների տարեկան եկամուտները 1887/8 թւին:

10 ԼԷՕ. 1026 Մեր կեանքից:

11 Շ. 1037 Եւրոպան և Աֆրիկ. բաժանումը:

12 ԽՄԲ. 1050 Խմբագրութեան կողմից:

№ 8

1 ԳԱՐՇԻՆ-ԻԿ Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍ. 1055 Նկարիչներ:

2 ՄԻԻԹԱՐԵԱՆՅ, ԱՐՇԱԼՈՅՍ : 1078 Երկու ճանապարհ (բանաստեղծ.):

| | | | |
|----|----------------------------------|------|--|
| 3 | ՊԻՕՇԵԱՆՑ, ՊԵՐՃ. | 1087 | Բղղէ (վերջ): |
| 4 | ԱՐԾԻԻԵԱՆ. ԱԼԵՔ. | 1121 | Մայր (բանաստեղծութիւն): |
| 5 | » | » | » |
| 6 | » | » | » |
| 7 | ՀԱՅՆԷ՛-ԻԳ՝ Ջ. ԲԱԼՈՒՂԵԱՆ. | 1125 | Մի հաւատար (բանաստեղծութիւն): |
| 8 | ԿՐԱՍԻԼՆԻԿԵԱՆ, Կ. | 1127 | Սէրը (բանաստեղծութիւն): |
| 9 | ԼԷՕՊԱՐԳ՝-ԻԳ՝ ԿՐԱՍԻԼՆԻԿ. | 1128 | Ննջիր Վախտան (բանաստեղծ.): |
| 10 | ՏԷՐ-ՄԻՔԵԼԵԱՆ, ԱՐՇԱԿ | 1129 | Գերմանակ. դպր. դրութ. (վերջ): |
| 11 | Ա. ՔԷ. | 1140 | Գրախօսութիւն: Կուսիկեան՝ Մեր ճանանչները: |
| 12 | Ն. | 1144 | Թղթակց. Արասահմ.: Ստէնլէջ և Էմին փաշա: |
| 13 | ՍԻՐՈՒՆԻ, Մ. | 1164 | Ճանապարհորդի Վիշատակարանից: |
| 14 | ՄԱԳԱԹԵԱՆ, ԵՂԻՇԷ. | 1176 | «Արձագանք»-ի ճշմարտախօսութ.: |

№ 9

| | | | |
|----|----------------------------------|------|---|
| 1 | ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ, ԱԻԵՏԻՔ. | 1183 | Հողային խնդ. Անդրկովկասում III: |
| 2 | ՄԱՐԻՍԵԱՆ, Մ. | 1197 | Հեղինէ (վէսլ, շարունակութիւն): |
| 3 | ԱՐԾԻԻԵԱՆ, ԱԼԵՔ. | 1253 | Մանուկ (բանաստեղծ.): |
| 4 | » | » | *** (բանաստեղծութիւն): |
| 5 | » | » | » |
| 6 | ՓԱՓԱԶԵԱՆՑ, Վ. | 1256 | Խաթ-Սաբա: |
| 7 | ՀԱՅՆԷ՛-ԻԳ՝ Ջ. ԲԱԼՈՒՂԵԱՆ. | 1288 | Երեք բանաստեղծութիւններ: |
| 8 | ՂԱԶԱՐԵԱՆ, ԵՐՈՒԱՆԴ. | 1294 | Գաստիարակչ. մոլորութիւններ: |
| 9 | ԲԱՐԽՈՒԳԱՐԵԱՆ ՅՈՎՀ. | 1303 | Գերմանական համալսար. ոգին: |
| 10 | Ա. Ա., Ա. Ա. | 1313 | Գրախօսութիւն: Արարատ Ալիշա- նի: Հալոց սլամ. Պալասանեանի: |
| 11 | Շ. | 1320 | Քաղ. Տես.: Աֆրիկ. բաժանումը: |
| 12 | ԽՄԲ. | 1325 | Խմբագրութեան կողմից: |

№ 10

| | | | |
|---|-----------------------------|------|--------------------------------|
| 1 | ՎԱՐԳԱՆԵԱՆՑ, ԳՐԻԳՈՐ. | 1335 | Աղքատ. իրնամատարութիւնը, II: |
| 2 | ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ, ԼԵՒՈՆ. | 1356 | *** (բանաստեղծութիւն): |
| 3 | » | » | » |
| 4 | » | » | » |
| 5 | ՄԱՐԻՍԵԱՆ, Մ. | 1359 | Հեղինէ (վէսլ, շարունակութիւն): |
| 6 | ԱՐԾԻԻԵԱՆ, ԱԼԵՔ. | 1394 | Էլ մի խնդրի (բանաստեղծութիւն): |
| 7 | » | » | » |

| | | |
|-------------------------------|------|---|
| 8 ԱՐԾԻԻԵԱՆ, | 1396 | Երկու գիշեր (բանաստեղծ.): |
| 9 ՓԱՓԱԶԵԱՆՅ, Վ. | 1397 | Խաթ-Սաթա: |
| 10 ԱՐԾԻԻԵԱՆ, ԱԼ. | 1422 | Որբեր (բանաստեղծութիւն): |
| 11 " " | 1423 | Նենգուորին (բանաստեղծութիւն): |
| 12 ԿՈՂՈՉԻՍ ԱԴՐԻԱՆՕ. | 1424 | Բոշաները: |
| 13 ՍԱՂԱԹԵԼԵԱՆ, ՅՈՎ.Զ. | 1440 | Համ, հող, Երևան, Նաչ. (չար.): |
| 14 ԲԱՐԵԼԵԱՆ Ա. | 1450 | Հոսանքներ բնագիտութեան մէջ: |
| 15 Ն, Ք. | 1459 | Գրախօսութիւն: «Արաքս», Опис. Кавказск. выстав. |
| 16 ԼՈՒՍԻՆԻ. | 1471 | Ամուսյ Գրոնիկ: Գործի կենտրոն- ներ: Խորէն-Նարբէ: Պատրիարք. ընտրութեան խնդիրը և. Պօլսում: Թեմ. վերատեսչ. վերականգումը: |
| 17 ԽՄԲ. | 1776 | Խմբագրութեան կողմից: |

№ 11

| | | |
|-----------------------------------|------|---|
| 1 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ, ԱԻԵԻԻԲ | 1489 | Ժողովուրդը, որպէս քաղաք. ուժ: |
| 2 ՆԱՄԱԼԵԱՆ, ԱԼ. | 1501 | Հարևաններ (կեանքի գծեր): |
| 3 ՄԻԻԹԱՐԵԱՆ, ԱՐՇԱԼՈՅՍ. | 1513 | Արտասուղ ուռի (բանաստեղծ.): |
| 4 ՄԱՐԻՍԵԱՆ, Մ. | 1515 | Հեղինէ (վէպ, վերջ ա. մասի): |
| 5 ԲԱԼՈՂԵԱՆ, Զ. | 1535 | Աչըղի նէնիֆներից (բանաստ.): |
| 6 ԲԱԼԱՆԹԱՐ, ԱՆՈՒՇԱԻԱՆ | 1536 | Պանդխտութիւնը մեղանում, I: |
| 7 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ, Ա. | 1549 | Անտառները կողկասում: |
| 8 ՏՈՒԷՆ, ՄԱՐԿ | 1558 | Ուրլեամների վրդովմունքը: |
| 9 ԲԱԼԱՆԹԱՐ, ԱԼԵԲ. | 1567 | Արեը և բուսական. կովկասում: |
| 10 ԲԱՇԻՆՋԱՂԵԱՆ, ԳԷՈՐԳ | 1576 | Նկարչի նամակները, II: |
| 11 ԱՂԱՅԵԱՆՅ, ՂԱԶԱՐՈՍ. | 1586 | Սուրբ լեզու, I: |
| 12 Լ. Ա. | 1592 | Գրախօսութիւն: Լուսկեի՛ Պատիկ է, բայց չստիկ է: |
| 13 ԼՈՒՍԻՆԻ. | 1594 | Ամուսյ Գրոնիկ: Պատրիարքական ընտրութ. խնդիրը Պօլսում: Թիֆլ. քաղաք. վարչ. ընտրութ. Թիֆլիսի առաջին կարգի տնտէրերը: Բառւ կոչալսիլի: |
| 14 ՅՈՎ.ԶԱՆՆԻՍԵԱՆ, ՏԻԳՐԱՆ. | 1601 | Նամակներ Ռուսաստանից, I: |
| 15 ԹՂԹԱԿԻՅ | 1610 | Ֆրանսիայի պետական ծախքը: |
| 16 Շ. | 1614 | Առևտրական դաշինքների խնդիրը: |
| 17 ԽՄԲ. | 1623 | Խմբագրութեան կողմից: |

№ 12

- 1 ԽՄԲ. 1631 Հրաւէր բաժանորդադրութեան:
- 2 ՍԱՐԳՍԵԱՆՑ, Լ. 1636 Էժանագին դրադարանի փորձը:
- 3 ՏՈՒԷՆ, ՄԱՐԿ. 1645 Տիկին Ուիլեամսը և կազմակը:
- 4 ՄԻԻԹԱՐԵԱՆՑ, ԱՐՇԱԼՈՅՍ . 1654 Բարի ճանապարհ (բանաստեղծ.):
- 5 ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆ, Յ. 1655 Զմիւռնիայից-Ալեքսանդրապոլ:
- 6 ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆՑ, ՅԱՐ. 1682 Սև շեռնցիք:
- 7 ԲԱԼՈՒՂԵԱՆ, Զ. 1700 Անդրէկից (բանաստեղծ.):
- 8 ՔԱԼԱՆԹԱՐ, ԱՆՈՒՇ. 1701 Պանդխտութիւնը մեղանում, II:
- 9 ԱՂԱՅԵԱՆՑ, Ղ. 1713 Սուրբ լեզու, II:
- 10 ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ, Դ-Ր Գ. . 1722 Կոսի գիւար թորախտի դէմ:
- 11 ԲԱՐԵԼԵԱՆ, Ա. 1731 Կոսի հրատարակութիւնը:
- 12 ԲԱՐԵԼԵԱՆ, Ա. 1739 Պրոֆեսոր Բրեհտ Կոսի:
- 13 Ե., Ա. Քչ., Ն* 1742 Գրտխօսութիւն. — Փափաղեանց՝
Թոփալ, Ղաղարեանց՝ Գիւլէ, Մել-
Շահնաղար.՝ Շերամապահութիւն,
Գելըեր՝ Համլետ,
- 14 ԼՈՒՍԻՆԻ. 1750 Ամուտ քրոնիկ—Թիֆ. քաղաքա-
լին ընտրութիւնները. ընտրած-
ների ցուցակը: Հալոց թատերա-
սէրների ներկայացումը:
- 15 ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, ՏԻԳՐԱՆ. 1758 Նամակներ Ռուսաստանից, II:
- 16 ԹՂԹԱԿ. 1768 Թղթակց. Արտասահմանից:
- 17 Z. 1774 Քաղ. Տեսութիւն: Ընտրութ. Խա-
լիպում և Հիւս. Միաց. Նահանգ-
ներում: Լաւիժրի:—Պարնել և
Ղլաղստոն:
- 18 ԸՆԹԵՐՅՈՂ. 1789 Նամակ խմբադրին: Բանաստեղ-
ծութիւնը և «Մուրճ»-ը:
- 19 ԽՄԲ. 1793 Խմբագր. կողմից:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Խմբագիր-Հրատարակիչ՝ Ա.Ի.ՏԻՓ ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ

ԲԱՅԻԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԱՂԲԻԻՐ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԳՐԻ

ԻՆՆԵՐՈՐԳ ՏԱՐԻ

«ԱՂԲԻԻՐ»-ը կը հրատարակուի նոյն ուղղութեամբ, ծրագրով և նոյն աշխատակիցներէ մասնակցութեամբ:

Առաջին պրէմիան է մի գեղեցիկ օլէօգրաֆիա

ԱՆԱՌԱԿ ՈՐԴԻՆ

խող արածացնելու

Երկրորդ պրէմիան կը լինի՝ պ. Գէորգ Բաշինջաղեանի

ԱՆԱԶԱՆԻ ՀՈՎԻՏԸ

մեծադիր և շքեղ ձեւերով, որը վիճակ կը գցուի բաժանորդներէ մէջ սեպտեմբեր կամ հոկտեմբեր ամսին:

Երրորդ պրէմիան 1892 թ. համար գեկտեմբերի №-ի հետ կ'ուղարկուի մի պատի տախտակ և մի գրպանի փաթեղի օրացույց: Բացի զրանցից, տարւաչ ընթացքում կ'առաջարկուին հանելուկներ, լեբուսներ, սրճնցից վճռողները կ'ըստանան մրցանակներ:

«ԱՂԲԻԻՐ»-ի տարեկան բաժանորդադիւնն է 3 ռուբ. և պրէմիալի ճանապարհածախս՝ 28 կոպէկի փոստի մարկա:

Ապառիկ ոչ սքից չի ընդունուում:

Հասցէն՝ Тифлисе, редація „АГБИОРЪ“.

Արտասահմանից՝ Tiflis (Caucase), rédaction de la revue AGBUR.

„ԱՂԲԻԻՐ“-Ի ՅԱԻԵԼԻԱԾ

„Տ Ա Ր Ա Չ“

Երկրիծարանական — գեղարուեստական — գրական

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԵՄԲՆԱԹԱԹԵՐԹԸ

1891 թւականին հասցրած կը լինի նկարներէ կողմից մալրաքաղաքներում՝ հրատարակուող շաբաթաթերթերի՝ ճոխութեանը: Բովանդակութեան կողմից պատկերադարձ «Տարադ» շաբաթաթերթը նունպէս ճոխ կը լինի և բաղմակողմանի: Վիպական մասը, որ պատկերադարձ «Տարադ» շաբաթաթերթում նկարներէ հաւասար առաջին տեղը կը բռնէ, կը տպագրուին մի շաբթ պատմական և ժամանակակից վէպեր, հանդուցեալ Բաֆֆիի, Նրաթողած ձեւադիրներէից, պ. պ. Աղայեանի, Պոօշեանի, Լէօի, Վ. Փափագեանի և ուրիշներէ: Պատկերադարձ «Տարադ» շաբաթաթերթը լոյս կը տեսնի ամեն կիրակի օր այժմեան «Տարադ»-ի դիրքով իւրաքանչիւր համարը երկու թերթից: «ՏԱՐԱՉ»-ի գինն է ռուբլի, «ԱՂԲԻԻՐ»-ի հետ միասին 8 ռուբլի 28 կոպէկ, իսկ առանձին՝ 6 ռ.:

POUR TOUTES
LES
PERSONNES LISANT LE FRANÇAIS

le journal le plus complet, le plus intéressant et le meilleur
marché est

L'ÉDITION INTERNATIONALE

HEBDOMADAIRE

de l'Indépendance belge, la seule publication conçue au point de
vue véritablement cosmopolite et international et donnant dans

dix pages grand format

comme les grands journaux anglais et américains
le résumé complet du mouvement politique, littéraire, artistique, scien-
tifique et mondain de toutes les capitales du monde.

A chaque numéro est joint un

Supplément littéraire

réunissant la collaboration de tous les grands romanciers,
feuilletonistes, nouvellistes et chroniqueurs en vogue.

ABONNEMENT:

UN AN, **25** FRANCS. 6 MOIS, **15** FRANCS


Tout abonné d'un an pour **1891** recevra GRATUITEMENT
le journal jusqu'à la fin de l'année **1890**

Numéros spécimens GRATIS et FRANCO sur demande ad-
ressée à

L'ADMINISTRATION DE L'INDÉPENDANCE

17, RUE DES SABLES, BRUXELLES

Agent à Batoum } T. Nikoladzé
La Vente un Numéro 20 cop. } chez Efiandjiantz
à Tiflis.



„Մ Ո Ւ Ր Ճ“

ՔԱԳԱՔԱԿԱՆ -- ՀԱՍՍԱՐԱԿԱԿԱՆ -- ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԲԱՑԻԱԾ Է

Հրաւեր ենք կարդում հայ հասարակութեան՝ բաժանորդ գրել մեր միակ քաղաքական-հասարակական-գրական ամսագրին և միջոց տալ նրան զալ **1891** թվականին ցանկալի ճոխութեամբ հրատարակել:

ԳՐԻՆԷԼ ԿԱՐՆԷԼ Է

Թիֆլիսում՝

- 1) Խմբագրատան մէջ, 2) Կենտրոնական գրալաւոսանոցում,
- 3) Խիզէկէլի և 4) Մակար Չմշկեանի գրալաւոսական սլաւիլիօններում, 5) Նւանգուլովի տեղեկատու գրասենեակում:

Բաքուում՝

- 1) Թատայեանցի գրալաւոսանոցում, 2) պ. Աւետիք Գաւթեանցի մօտ (Մարդասիրական Ընկերութեան ընթերցարանում):

Երևանում՝

- 1) Սիրական Մարտիրոսեանցի գրասենեակում:

Խմբագրութիւնը գտանում է Վելիամինեան փողոց, տուն Թանդոջեանի, պրօզիմնաղի զիմաց:

Ուրիշ տեղերից պէտք է գրուի՝ Тифлисъ. Редакция журнала „МУРЧЪ“

ԱրասաՏմանից՝ Tiflis, Rédaction de la Revue MOURTCH.

